

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ  
ԲԱՔՎԻ ԵՎ ԵԼԻՉԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ  
1918-1920ԹԹ.

Փաստաթղթերի և նյութերի ժողովածու

Երևան 2003

ՀՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (2 Հ)  
Հ 249

Հրատարակվում է ՀՀ արխիվային  
գործի գործակալության գիտական  
խորհրդի որոշմամբ

Տպագրվում է Հայաստանի  
Հանրապետության առաջին տիկին  
**Բելլա Քոչարյանի** աջակցությամբ

Ժողովածուի նախապատրաստման  
աշխատանքներին աջակցել է «Գարդման»  
հայրենակցական միության վարչությունը

**Պատասխանատու խմբագիր՝ Անատունի Վիրաբյան** (պատմ. գիտութ. դոկտոր)

**Կազմողներ՝**

**Սոնյա Միրզոյան** (պատմ. գիտութ. թեկնածու)  
**Ալվարդ Ղազիյան** (բանաս. գիտութ. թեկնածու)

Հ 249 Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ.  
Պատ. խմբագիր՝ Վիրաբյան Ա., կազմողներ՝ Միրզոյան Ս., Ղազիյան Ա., - Եր.: ՀՀ  
պատմության արխիվ, 2003թ. 523 էջ:

ՀՀ պատմության արխիվը առաջին անգամ ամբողջական տեսքով  
հրատարակում է 1918-1920թթ. նախկին Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում  
թուրքական զորքերի և ադրբեջանական իշխանությունների կողմից հայ բնակչության  
նկատմամբ իրագործված զանգվածային կոտորածների մասին պատմող  
փաստաթղթեր ու նյութեր:

ISBN 99930-78-16-6

ԳՄԴ-63.3 (2 Հ)

© ՀՀ պատմության արխիվ, 2003

## Առաջաբան

Հայ ժողովրդի դեմ Թուրքիայի կիրառած ցեղասպանությունը չավարտվեց արևմտահայության զգալի մասի ոչնչացմամբ ու Արևմտյան Հայաստանի պարպումով: Այն իր շարունակությունն ունեցավ Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասի հայաբնակ այլ վայրերում:

1917թ. հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով ռուսական զորքը լքեց համաշխարհային պատերազմի կովկասյան ռազմաճակատը, գրավված տարածքները թողնելով Օզակումի, ապա Անդրկովկասի անկախությունը հռչակած Սեյմի զինված ուժերին: Ըստ որում, նորաստեղծ երեսունհազարանոց հայկական զորքը պաշտպանում էր ռազմաճակատի կենտրոնական և հարավային մասերը, իսկ վրացական շուրջ տաս հազարանոց ջոկատը՝ հյուսիսային: Ռազմական գործողությունների հենց սկզբից անդրկովկասյան թուրքերի զինված ջոկատները աջակցում ու օգնում էին թուրքական բանակի առաջխաղացմանը:

Պատերազմում պարտություն կրած Ռուսաստանը հոկտեմբերյան հեղաշրջումից անմիջապես հետո սկսեց հաշտության բանակցություններ վարել Գերմանիայի հետ: Սկզբում կողմերի միջև կնքվեց զինադադար, իսկ 1918թ. մարտի 3-ին՝ հայերի համար աղետաբեր Բրեստ-Լիտովսկյան պայմանագիրը: Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը ևս իր հերթին բանակցում էր Թուրքիայի հետ, որն ավարտվեց Երզնկայում զինադադարի վերաբերյալ համաձայնագրի ստորագրմամբ (18.12.1917թ.):

Չինադադարի մասին համաձայնագիրը Թուրքիայի համար արգելք չէր: Վարկավակ բռնելով գրավված տարածքներում «մուսուլմանների նկատմամբ գործադրված բռնությունները» ու օգտվելով ռազմաճակատում տիրող խառնաշփոթությունից, նա հարձակման անցավ ողջ ռազմաճակատով: 1918թ. փետրվարին ընկան Երզնկան ու Երզրումը, մարտին առանց մի կրակոցի հանձնվեց Կարսը: Թուրքիան ոչ միայն նվաճեց մինչև պատերազմն ունեցած տարածքները, այլև Բեռլինի 1878թ. վեհաժողովով Ռուսաստանին անցած Կարսի մարզը, Արդվինի ու Արդահանի շրջանները: Թուրքական բանակը միաժամանակ տիրացավ Երզրումում և Կարսում ռուսական բանակի կողմից թողած զենքի, պարենի ու հանդերձանքի պահեստներին, մի հանգամանք, որը նույնպես նպաստեց թուրքական բանակի հաջողություններին: 1918թ. մայիսի կեսերին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը և հայտնվեցին Արարատյան դաշտավայրում Երևանից 30 կմ հեռավորության վրա:

Ահա այս ռազմաքաղաքական պայմաններում, թուրքական զենքի հաջողություններով ոգևորված Անդրկովկասի թուրք պատգամավորների ջանքերով վերջնականապես փլուզվեց Անդրկովկասի Ֆեդերատիվ Դեմոկրատական Հանրապետությունը: Մայիսի 26-ին անկախություն հռչակեցին վրացիները, 27-ին՝ Արևելյան Անդրկովկասի թուրքերը, 28-ին՝ հայերը: Իսկ հենց այդ ժամանակ Բաթումիում բանակցություններ էին ընթանում Անդրկովկասի պատվիրակության և Թուրքիայի միջև: Երկու կողմերն էլ, իհարկե, իրագեկ էին տեղի ունեցած քաղաքական իրադարձություններին:

Մայիսին հայերի կողմից անսպասելիորեն կասեցվեց թուրքական բանակի հաղթական երթը Սարդարապատում, Բաշ-Ապարանում ու Ղարաքիլիսայում. կենաց ու մահու կռվի ելած հայ ժողովրդի միասնական կամքը ավելի հզոր եղավ, քան դարավոր ոստիկ հայաջինջ մոլուցքը:

1918թ. հունիսի 4-ին Հայաստանի և Թուրքիայի միջև կնքվեց պայմանագիր, ըստ որի նորաստեղծ հանրապետության տարածքը կազմեց շուրջ 10.000 քառ.վերստ, Թուրքիան դարձավ հիրավի 33 բախտի տնօրենը: Սույն պայմանագրով Հայաստանը պարտավորվում էր Բաքվից դուրս բերել բոլոր հայկական զինված կազմավորումները:

Թուրքիան չհապաղեց օգտագործել Բաթումի պայմանագրով իրեն ընձեռած հնարավորությունները: 1918թ. հունիսի սկզբին թուրքական զորքը մտավ Ելիզավետպոլ: Ձիմաթաի անելով քաղաքի հայկական մասը պաշտպանող ջոկատներին, համալրելով իր բանակը նոր ուժերով և ապահովելով թիկունքը, հունիսին թուրքերը արդեն Ելիզավետպոլի նահանգի Նուխի և Արեշ գավառներով շարժվում էին դեպի Բաքու՝ բուլղարիայի զինված ուժերին ընդառաջ: Բաքվի կոմունան էլ իր հերթին ձգտում էր իր իշխանությունը հաստատել ողջ երկրամասում: Այս հակամարտության մեջ Անդրկովկասի նորանկախ հանրապետություններից Ադրբեջանի և Վրաստանի համակրանքը Թուրքիայի կողմն էր: Ադրբեջանի աջակցությունը անթաքույց էր, իսկ Բաքվի կոմունայի բանակի հայ բարձրաստիճան զինվորականությունն ու զինվորները զիտակցում էին թուրքական արշավանքից բխող վտանգը, որը սպառնում էր արևելահայության ֆիզիկական գոյությանը:

Թուրքական արշավանքը Անդրկովկաս, Գերմանիայի հետ դաշնակցած ու նրա կողմից հրահանգվող, մասնավորապես Անդրկովկասն անկախ հայտարարելուց հետո, հետապնդում էր որոշակի նպատակներ, որոնք տեսանելի ու թափանցիկ էին ժամանակակիցների համար: Այդ հանգամանքը հաստատում են այդ օրերի մամուլում հրատարակված նյութերը, քաղաքական ու պետական այրերի ելույթները: Թուրքիայի նպատակն էր ինքնակոչ Ադրբեջանի Հանրապետության թափառող կառավարությունը հաստատել մայրաքաղաք հռչակված Բաքվում, գերմանացիների հետ միասին տիրանալ Բաքվի նավթին, դուրս մղելով Ռուսաստանին Կովկասից, միանալ Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի մահմեդականներին ու անարգել ուղի բացել դեպի Թուրանական աշխարհի և վերջնականապես վերացնել վերոհիշյալ խնդիրները լուծելու ճանապարհին ընկած ամենամեծ խոչընդոտը՝ հայությանը: Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի ճակատամարտերը, Բաքվի շուրջ երեքամսյա պաշտպանությունը խափանեցին թուրքական ծրագրերի իրագործումը:

Անդրկովկասի հայությունն օղակված էր իր բնօրրանում. Ալեքսանդրապոլ-Ջուլֆա, Ալեքսանդրապոլ-Ելիզավետպոլ երկաթգիծը տնօրինում էր Թուրքիան, մնում էր ընդամենը գրավել Բաքուն, Եվլախով մտնել Ղարաբաղ, Սյունիք, Նախիջևան և վերջնականապես լուծել հայության հարցը: Թուրքական բանակը հետզհետե համալրվում, հզորանում էր նորանոր ուժերով՝ տեղական թուրք հրոսակախմբերով, ապահովվում զինամթերքով ու պարենով, որը մեծ մասամբ կատարվում էր հայկական բնակավայրերի թալանի ճանապարհով, իսկ բուլղարիայից, նաև օգոստոսի 1-ից իշխանության գլուխն անցած Ցենտրոկասպիի Դիկտատուրայի զինված ուժերը մեկուսացված էին, կտրված կենտրոնից՝ խորհրդային Ռուսաստանից, շրջապատված թշնամի թուրք բնակչությանը, սննդամթերքի, զինամթերքի, դեղամիջոցների պակասի ու հատկապես ջրի բացակայությունից ավելի շատ զոհեր էին տալիս, քան թշնամու զնդակներից:

Ռազմական գործողությունների ընթացքում թուրքերը երեք անգամ գրոհեցին Բաքուն, բայց գրավել չկարողացան: Թուրք ու գերմանացի զորահրամանատարները մի քանի անգամ վերջնագիր ներկայացրին քաղաքի պաշտպաններին, որոնք մերժեցին: Հատկանշական է վերջինը: Այն ուղղված էր Բաքվի Հայոց Ազգային խորհրդին: Առաջարկվում էր քաղաքը կամովին հանձնել, անձնատուր լինել, հակառակ դեպքում սպառնում էին ոչնչացնել Բաքվի հայությանը: Բաքվի Ազգային խորհուրդը մերժեց այդ վերջնագիրը՝ ելնելով իր իրավական կարգավիճակից:

Ծանր, արյունահեղ մարտերից հետո, կոտրելով քաղաքի փոքրաթիվ պաշտպանների դիմադրությունը, 1918թ. սեպտեմբերի 15-ին առավոտյան թուրքական բանակը, տեղական հրոսակախմբերի ու թուրք խաժամուժի հետ միասին մտան Բաքու: Երեք օր անընդմեջ իշխանություն ու տեր չունեցող քաղաքը մատնվեց զավթիչների վայրագություններին ու անասնական կրքերին: Հիմնական թիրախը հայությունն էր. այլ ազգությունների զոհերը պատահականություններ էին սոսկ: Այդպես էր հրահանգված: Բոլոր առուններով Բաքվում կրկնվեց այն, ինչ տեղի էր ունեցել Արևմտյան Հայաստանի բնակավայրերում՝ Մուշում, Բիթլիսում, Կարինում, Երզնկայում, Ուրֆայում և այլուր: Կատարվածը բնութագրվեց իբրև Բաքվի Մեծ Սարսափներ:

Տակավին 1918թ., սեպտեմբերյան աղետից հետո թուրք ազգայնամուլների ու նրանց գերմանացի գաղափարակիցների կողմից հրապարակ հանվեց մի տեսակետ, ըստ որի թուրքերը լուծում են նույն թվականի մարտին հայերի ձեռքով կոտորած թուրքերի վրեժը: Այս, այսպես կոչված «թուրքերի գենոցիդը», վերջերս հրամանագրվեց Ադրբեջանի նախագահի կողմից:

Պատմական իրականությունն այն է, որ մարտին տեղի է ունեցել ընդհարում Բաքվի կոմունայի զինված ուժերի ու մուսավաթական զինված ջոկատների միջև, որը տևել է երեք օր, երկուստեք եղել են հարյուրավոր զոհեր: Ժամանակին իրենց իսկ թուրք հեղինակավոր գործիչները հրապարակորեն մերժել են այդ ընդհարման ազգային բնույթը: Հատկանշական է, որ ամեն անգամ թուրք-թաթարական բռնությունները, գազանությունները արդարացնելու համար վկայակոչվում է նման մի պատրվակ՝ դրանք դիտվում են իբրև փոխհատուցման, վրեժխնդրության գործողություններ:

Մինչդեռ 1917թ. վերջերին սկսած օգնության աղաղակներ էին լսվում Անդրկովկասի բոլոր հայաբնակ վայրերից, ներառյալ Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգները: Թուրքական բանակը Անդրկովկաս մտնելուց հետո, մասնավորապես Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգներում, մարեցին աղաղակները, քանզի հայ ողջ բնակչությունը սրի ու հրի մատնվեց, ունեցվածքը՝ ավերի ու թալանի, իսկ կենդանի մնացած խլյակները ապաստան գտան հեռու ու մոտիկ ավերում ու մեծ մասամբ զոհ գնացին համաճարակներին, սովին ու ցրտին:

Բաքվի անկման երրորդ օրը՝ սեպտեմբերի 18-ին ինքնակոչ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կառավարությունը ժամանեց Բաքու: Իսկ մինչ այդ, 16-ի երեկոյան քաղաք էր մտել թուրք-գերմանական զինվորական բանակի հրամանատարությունը:

Ի պատասխան Բաքվում տեղակայված չեզոք երկրների դիվանագիտական ներկայացուցիչների, ազդեցության իրական և իրավական լծակներից զուրկ հորհրդային Ռուսաստանի բողոքների նոտաների՝ հայերի զանգվածային կոտորածների ու բռնությունների կապակցությամբ, նաև համաշխարհային կարծիքը հանգստացնելու նպատակով մի քանի մանր-մունր բանդիտներ կախվեցին քաղաքի

\* Բ.Իշխանեան, Բագուի Մեծ Սարսափները, Անկետային ուսումնասիրութիւն սեպտեմբերեան անցքերի 1918թ., Թիֆլիս, 1920:

\*\* Քաղաքագետները այսպես կոչված Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ասպարեզ գալը Արևելյան Անդրկովկասում իրավամբ դիտում են իբրև այլ եթնիկ տարածքներում բնիկներին ոչնչացնելու ճանապարհով նոր թուրքական պետություն ստեղծելու նախակիպրյան առաջին փորձ: Տե՛ս А.Манасян, Карабахский конфликт в ракурсе правового подхода, Ереван, 1997, с.53-54. Л.Мелик-Шахназарян, Военные преступления Азербайджана против мирного населения Нагорно-Карабахской Республики. Ереван, 1997, с. 61.

փողոցներում: Կազմակերպիչները, ղեկավարներն ու իրագործողների խմբերը շարունակեցին իրենց գործը: Բաքվում հայասպան քաղաքականությունը ստացավ պետականորեն կազմակերպված ու նպատակային բնույթ:

Իսկ գավառներում հայության ոչնչացումը շարունակում էր նույն անսքող, անողորմ կերպով: Նույնիսկ հավատափոխությունը փրկություն չէր բերում: Բանտերն ու արգելավայրերը վեր էին ածվել հայ խաղաղ բնակչության ու ռազմագերիների տանջարանների ու գերեզմանների: Հարյուրավոր կանայք ու երեխաներ հեծում էին գերության մեջ՝ թուրքական գյուղերում: Սեպտեմբերյան Մեծ Սարսափների զոհերի թիվը Բաքվում ըստ հարցաթերթիկային հետազոտության կազմում է 30 հազար մարդ՝ քաղաքի հայ բնակչության 1/3 մասը:

1918թ. հոկտեմբերին առաջին աշխարհամարտը ավարտվեց Գերմանիայի ու Թուրքիայի պարտությամբ: Հոկտեմբերի 30-ին Մուղոսի զինադադարի մասին համաձայնագրի պահանջով, թուրքական զորքերը թողեցին Անդրկովկասը, այդ թվում և Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգները: Նրանք արդեն հասցրել էին հայերից թալանած անբավ հարստությունները վաճառքի հանել, առաքել Թուրքիա, մնացածը տարան իրենց հետ, տնտեսապես էլ քայքայելով ողջ մնացած հայութուն բեկորները:

Թուրքական բանակի հեռանալը Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգներից հայերի վիճակի մեջ փոփոխություն չմտցրեց: Ըստ էության Թուրքիան ու Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը հայերին բնաջիհջ անելու խնդրում միակամ ու դաշնակից էին, գործում էին ձեռք ձեռքի տված:

1918թ. նոյեմբերի 17-ին Դաշնակից տերությունները, ի դեմս անգլիական զինվորական իշխանությունների, մտան Բաքու: Հինգ օր անց հայտարարվեց թուրքական արշավանքի հետևանքով բնակչության կրած վնասները հաշվող հանձնաժողովի ստեղծման մասին, որի իրավասության շրջանակները ընդգրկում էին Բաքու քաղաքը:

Դաշնակից երկրների Վերահսկիչ հանձնաժողովի կողմից ընդունված վնասների գումարը՝ հաշվարկված խիստ սահմանափակ ժամանակամիջոցում, կազմեց 454 միլիոն ռուբլի, որը հեռու է իրականի վերաբերյալ ամբողջական պատկերացում տալուց: Հարցը քննարկվելու էր Փարիզի խաղաղարար վեհաժողովում և փոխհատուցումը պետք է տար Թուրքիան: Հատուկ հրահանգով վերադարձի իրավունք ստացան ողջ մնացած փախստականները: Սկսեցին գործել Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը, Ինքնօգնության կոմիտեն: Անգլիացիների առաջարկությամբ ու հորդորներով ինը հայ պատգամավորներ ուղարկվեցին պառլամենտ, երկու հայ մինիստր պաշտոնավարում էին գործող կառավարության մեջ:

Վերոհիշյալ հանգամանքները միայն մասամբ փոխեցին դրությունը, այն էլ միայն քաղաքում: Անգլիական զինվորական իշխանությունները Մերձավոր Արևելքում ունեին իրենց տնտեսական ու քաղաքական շահերը և Թուրքիայի ու վերջինիս կրտսեր եղբոր՝ Ադրբեջանի նկատմամբ վարում էին այդ շահերին համապատասխան քաղաքականություն, և որն ամենևին էլ հայամետ չէր: Անգամ գավառներից ստացված անկողմնակալ հայանպաստ զեկույցները, որոնց հեղինակներն Անգլիայի զինվորականներ էին, մնում էին անհետևանք: Ի վերջո անգլիական իշխանությունները

---

\* Այդպիսի մի հանձնաժողով, իշխանություններից գաղտնի, Բ.Իշխանյանի ղեկավարությամբ, գործում էր Բաքվի Հայոց Ազգային խորհրդին կից 1918թ. հոկտեմբերից: Թիֆլիսում իր հերթին Հայրենակցական Միությունների խորհուրդը ստեղծել էր մի մարմին, որը կոչվում էր Համաշխարհային Պատերազմից Հայ ժողովրդի Կրած Վնասների քննիչ հանձնաժողով՝ բանաստեղծ Հ.Թումանյանի գլխավորությամբ:

հայտարարեցին, որ չեն խառնվում Ադրբեջանի ներքին գործերին, հայերի դեմ կատարվող բռնությունները դիտել տալով իբրև Ադրբեջանի ներքին գործ:

Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության գոյության ողջ ընթացքում մինչև 1920թ. ապրիլի 28-ը՝ Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգներում ոչ մի օր չղաղարեցին հայերի դեմ գործադրվող հալածանքներն ու բռնությունները, սպանություններն ու կողոպուտները: Այդ կապակցությամբ ազգային-հասարակական կազմակերպությունների, հոգևոր առաջնորդների դիմումներն ու հուշագրերը, Բաքվում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի բողոքի նոտաները մնում էին բացարձակապես անհետևանք: Նույն հայաչինջ քաղաքականությունը հիմնականում ժառանգեցին Բաքվում հաստատված խորհրդային իշխանությունները: Ըստ էության ոչինչ չփոխվեց: Մուսավաթ կուսակցությունը արագ ու առանց դժվարության «կարմրեց», դարձավ բոլշևիկյան: Նարիմանով-Յուսեյինովի կառավարությունը Դաշնակցության դեմ պայքարի քողի տակ շարունակեց նախկին հայահալած քաղաքականությունը:

\*  
\*      \*

Ներկա ժողովածուն ընդգրկում է 1918թ. սկզբից մինչև 1920թ. վերջն ընկած ժամանակամիջոցում Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգների հայ խաղաղ բնակչության նկատմամբ իրագործված ցեղասպանության վերաբերող փաստաթղթեր ու նյութեր, որոնց գերակշիռ մասը քաղված է ՀՀ պատմության արխիվի ֆոնդերից, և մասամբ՝ ժամանակի մամուլից ու գիտական ժողովածուներից: Ընդգրկված փաստաթղթերն ու նյութերը ըստ բնույթի դասակարգվում են հետևյալ կերպ.

1. Շանախու թեմի առաջնորդի, Բաքվի և Ղարաբաղի հայոց ազգային խորհուրդների, Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգների զավառական հայրենակցական միությունների, համազգային հասարակական կազմակերպությունների գրություններ, դիմումներ, հայտարարություններ, բողոքագրեր, հուշագրեր:

2. ՀՀ կառավարության, Վրաստանում և Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների գրություններ, զեկույցներ, բողոքի նոտաներ, դիմումներ-հայտարարություններ, խնդրագրեր և այլ պաշտոնական փաստաթղթեր:

3. Ադրբեջանի հանրապետության կառավարության և դիվանագիտական ներկայացուցիչների գրություններ, հայտարարություններ, նոտաներ:

4. Այլ երկրների (Թուրքիա, Ռուսաստան, Գեմանիա) Անդրկովկասի հայ բնակչության կոտորածներին, իրավիճակին վերաբերող պաշտոնական գրություններ, զեկուցագրեր, վկայություններ:

5. Ջանազան կազմակերպությունների, առանձին անհատների, ականատեսների, անմիջական մասնակիցների իրավաբանորեն ձևակերպված վկայությունների արձանագրություններ:

6. Ընթացիկ մամուլի, այլ տպագիր աղբյուրներից քաղած նյութեր:

Ժողովածուում փաստաթղթերը և նյութերը զետեղված են բնագրերի լեզվով, նոր ուղղագրությամբ: Պահպանվել են բնագրերի առանձնահատկությունները, խմբագրական միջամտությունները չեն կատարվել, բացառությամբ անընչան կետադրական շտկումների ու բացահայտ ուղղագրական սխալների ուղղման: Համարակալվել ու փաստաթղթերը վերնագրվել են մեծ մասամբ կազմողների կողմից, այլ դեպքերում տողատակին նշում է արվել:

Ժողովածուում տպագրվում է երեք մասով. 1918թ., 1919թ. և 1920թ.: Յուրաքանչյուր մասում փաստաթղթերը դասակարգվում են ժամանակագրական կարգով:

Յուրաքանչյուր փաստաթղթի վերջում նշված են սկզբնաղբյուրը և նախկին հրատարակությունները:

1918թ.

N 1

**ՀՈՐԿԱԾ «ԱՆԻՇՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՎԱՌՈՒՄ»**

Այսպես կարելի է որակել այն դրությունը, որ ստեղծված է այժմ ամբողջ գավառում: Ձաքաթալա, Արեշ, Արդանուշ, Գանձակ, Եվլախ-Քյուրդամիր, Քյուրդամիր-Աղսու, Նուխի, Եվլախ-Շուշի, մի խոսքով՝ որտեղից որ այժմ հնարավոր է ստանալ տեղեկություններ, միայն օգնության ձայներ են լսվում: Ճանապարհները վտանգված, երթևեկությունը դադարեցված, ավազակություններ, թալաններ, սպանություններ-ահա այն պատկերը, որ այժմ ներկայացնում է իրենից գավառը: Գյուղացիությունը անճար, անօգնական-դիմում է անվերջ օգնության, բայց իզուր: Չկա այն ուժեղ, կտրուկ և համարձակ իշխանությունը, որը պիտի առաջն առնի այս սոսկալի դրության: Ավազակները վխտում են ամենուրեք, թալանում, սպանում և մնում անպատիժ և սրանից է, որ կարող են առաջ գալ համակրվկասյան նոր անակնկալներ:

Անիշխանության մատնված գավառը վաղը պիտի մատնվի մի ավելի սոսկալի վտանգի, այդ արդեն սովն է:

Ճանապարհներ չկան, տեր ու տիրական չկա և ոչ ոք չի կարող երաշխավորել, որ հնարավոր կլինի հաց հասցնել այն միլիոնավոր գյուղացիության, որին սպառնում է արդեն սովը:

Այս մթնոլորտը ստեղծելու է մի կացություն, որի հետևանքներն պիտի լինին հեղափոխության անկումն Կովկասում և մասնավորապես Անդրկովկասում: Այսօր, երբ հրամայական պահանջ է դառնում գոյության կռիվը, անձի ազատության, գույքի անձեռնմխելիության և վերջապես սովից ազատվելու խնդիրները, հեղափոխության բարիքները գյուղացիության համար կդառնան երկրորդական, եթե չասենք՝ երրորդական, չորրորդական: Գավառում ծայր առնող անիշխանությունը - հակահեղափոխական շարժում է-և դրա մասին պիտի մտածեն Կովկասի բոլոր հեղափոխական տարրերը: Վտանգի մեջ է Անդրկովկասի հեղափոխական տարրը- գյուղացիությունը Անդրկովկասում, ապա ուրեմն վտանգի մեջ է հեղափոխությունը:

Ստեղծված կացությունը կարող է հասցնել կորստյան եզերքին Կովկասյան աշխատավորությանը, զարկ տալ հակահեղափոխության, ապա ուրեմն որքան հնարավոր է պետք է ծայր առած անիշխանության առաջն առնել, գավառը վերականգնել: Պետք է շտապել, քանի ուշ չէ, քանի դեռ հակահեղափոխությունը ուժեղ չափերով չի զարգացել:

Գավառը ձեռքից գնում է...

Անդրի



**N 2**

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԱԽՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՈՒ ԹՈՒՐԲԵՐԻ ՄԻՋԵՎ  
ՎԱՅԱՑԱԾ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՌԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքապետության կոմիսար Տեր-Միքայելյանը, ի պատասխան իր հեռագրի, հետևյալ հեռագիրն է ստացել Շամախուց.

«Միացյալ ժողովը, Բագրատ եպիսկոպոսի և մուֆտի Մուստաֆա էֆենդու նախագահությամբ, հարթել է բոլոր խնդիրները: Փոքրիկ անհամաձայնություններ կային գարնիզոնի պատճառով: Հարցերը լուծված են, հետևանքները շատ բավարար: Հայերի և թուրքերի հարաբերությունները շատ լավ են: Ոչ մի թյուրիմացություններ տեղի չեն ունեցել ոչ քաղաքում, ոչ էլ գավառում»:

Արև, 11 հունվարի 1918 թ.

**N 3**

**ՀՈՂՎԱԾ «ԽՈՒՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎՎԱՍՈՒՄ»  
(ԱՎԱՆԱՏԵՍԻ ՊԱՏՄԱԾԻՑ)**

Հունվարի 15-ի առավոտյան մոտ ժ. 9-ին Բազվից ճանապարհվեցինք դեպի Թիֆլիս, փորձնական (пробный) գնացքով:

Առանց արկածի երեկոյան հասանք Լյաքի կայարանը: Այնտեղ մեզ ասացին, որ կարող են ճանապարհը փչացրած լինել, ուստի գիշերը մնացինք այդ կայարանում:

Առավոտյան ժ. 4-ին շարունակեցինք մեր ճանապարհը և նույնպես անփորձ ճանապարհորդեցինք մինչև Դալ-Մամեդլի, որ հասանք հետո ժ. 1-2-ին:

Այդ կայարանում գնացքը խուզարկության ենթարկվեց վաթսուներեքամասուն թուրք ավազակներից կազմված հրոսակախմբի կողմից:

Դրանցից մոտ քսան հոգի արդեն կայարանումն էին, երբ մեր գնացքը մոտեցավ, իսկ մնացածը դուրս եկան կայարանի դիմացի տնից:

Երբ գնացքը կանգ առավ, ավազակները զինված պահակ դրեցին մեքենավարի մոտ, որպեսզի գնացքը չքշի:

Միաժամանակ ավազակների մի մասը սկսեց թալանել զինվորների իրեղենները, տոպրակները, վրանները և այլն, իսկ մնացածները, յոթ-ութ հոգուց բաղկացած խմբերի բաժանված, սկսեցին խուզարկել վագոնները, պահանջելով, որ հրացանները և հայերին հանձնեն իրենց: Մի քանի հայի և նրանց հետ խառն մի քանի վրացու դուրս տարան վագոններից և մյուս ճանապարհորդների աչքի առջև ոտից գլուխ թալանեցին, մի հայի էլ շորահան անելուց հետո սպանեցին: Հինգ հոգու էլ տարան կայարանը: Ինչ արին նրան հայտնի չէ:

Ինչպես երևում է, նրանք սկզբում ուզում էին թալանել ամբողջ գնացքը, որովհետև նրանցից մի քանիսը թուրքերեն և բավական լավ ռուսերեն լեզվով պահանջում էին, որ բոլորը դուրս գան վագոններից, սակայն ճանապարհորդները դուրս չեկան:

Երբ մի խումբ ճանապարհորդների վագոնից դուրս էին տանում, նրանցից մեկը պնդում էր, թե ինքը հայ չէ: Այդ ժամանակ մի սպա ասաց, թե ինքը հայ է և կարող է հաստատ ասել, թե այդ մարդը հայ չէ: Այնուամենայնիվ բռնվածին բաց չթողեցին ու

թալանեցին: Ուզում էին նույնիսկ նրան էլ սպանել, բայց մի թուրք միլիցիոներ թույլ չտվեց:

Կայարանում կային հինգ-վեց թուրք միլիցիոներ, որոնք ոչ մի դիմադրություն չույց չտվին ավազակներին...

Արև, 19 հունվարի 1918 թ.

N 4

**ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ  
ՊԱՐՈՒՅՐ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ՝ ԳԱՎԱՌՈՒՄ ՏԻՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԱՐՎԱԾ ՎԻՃԱԿԻ, ՀԱՅ-ՍՈՒ-  
ՍՈՒՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՏԱՐԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**21 հունվարի 1918 թ.  
Շամախի**

Նամակաբեր պրապորշչիկ Միրզայանը գալիս է որոշ հանձնարարությամբ թիֆլիս, ես ևս իմ կողմից անհրաժեշտ համարեցի այս նամակովս մի քանի տեղեկություններ հաղորդել Ձեզ և խնդրել Ձեր աջակցությունը հանձնարարության հաջողության համար:

Մեզ մոտ Շամախում ևս մահմեդականները բարձրացրին զարմիզոնի խնդիր: Ինչպես Ձեզ արդեն հայտնի է, կովկասյան զինվորական իշխանության թույլտվությամբ տեղական հայ և մալական զինվորներից վերակազմվեց այստեղի զարմիզոնը. թուրքերին այդ խորթ թվաց. ժողովներ գումարեցին և բանակցություն սկսեցին. որ իրենց միլիցիոներներին ևս ընդունեն զարմիզոնի մեջ. սկզբից ևեթ հայ-թուրքական բնույթ ցանկացան տալ այդ խնդրին. հայտնեցինք, որ կառավարական կարգադրություն է, ոչ մի ազգային գույն չունի, այլ զինվորական իշխանությունն է կարգադրել թիֆլիզից, այնտեղ էլ պետք է դիմել թուրք միլիցիոներներին զարմիզոնի մեջ ընդունելու համար: Չէին ցանկանում համոզվել, ասելով թե բարձր իշխանություն չկա, ուստի և տեղական իշխանությունը պետք է կարգադրի: Այդ ժամանակ Քյուրդամիրում գեներալ գողություն եղավ և Շամախու զարմիզոնի համար թիֆլիզում ստացած գեներալի մի մասը Բազվի վրայով բերվեց այստեղ. այս երկու դեպքին ևս մահմեդական գործիչները ազգային գույն տվեցին, այլ կերպ սկսեցին բացատրել, զրգռել ամբոխը, որի հետևանքը ազգամիջյան ընդհարում ու արյունահեղություն պիտի լիներ, եթե չաշխատեինք շուտով առաջն առնել: Գյուղերից մեծ քանակությամբ զինված թուրք գյուղացիներ էին եկել, ցանկանում էին հարձակվել հայ թաղի և զարմիզոնի վրա: Կազմվեց *Объединенная комиссия*, որի մեջ մտան անդրկովկասյան մուֆտի Մուստաֆա էֆենդի, գավառական կոմիսար Ազար բեկ (թուրք), քաղաքագլուխ Թեմուր բեկ (թուրք), գավառական գործադիր կոմիտեի նախագահ Ուսուֆ բեկ (իրավաբան), թուրք ազգային միլիցիայի պետ Շիրին բեկ, հայերից, մալականներից և զարմիզոնից ևս ներկայացուցիչներ, իմ նախագահությամբ: Վերոհիշյալ թուրք գործիչները, որոնց մեջ նաև պրապ. Միրզայանի հետ եկող թուրք ներկայացուցիչ Բեդալ Յուլչին, բավական գրգռող դիրք էին բռնել: Ցանկանում էին զարմիզոնն իրենց (մահմեդականների) ձեռքը ձգել (ավելի շուտ զարմիզոնի ռազմամթերքը) : Շատ անգամ ասացինք, խորհուրդ տվեցինք դիմել թիֆլիզ զինվորական շտաբին, մենք սկզբունքով դեմ չենք մահմեդականների մասնակցության, բայց անհնարին եղավ համոզել: Ռազմաճակատի այժմյան վիճակում, միանգամայն անցանկալի, մինչև իսկ վնասակար համարելով թիկունքում բարդություն, մանավանդ ազգամիջյան ընդհարում, մենք ստիպված եղանք զարմիզոնի ներկայացուցիչների հետ համակերպվել, որ զարմիզոնի մի ռոտայի կեսը քրիստոնյա, կեսը մահմեդական լինի. դորանից հետո փոքր-ինչ հանդարտվեցին: Մանրամասնաբար Ձեզ կպատմի պ. Միրզայանը և կներկայացնի *Объединенная комиссия*-ի արձանագրությունները: Ցանկալի է համարվել, որ Շամախու (քաղաքի) զարմիզոնը լինի մի ռոտա-

յից՝ կեսը քրիստոնյա և կեսը մահմեդական. միջնորդում են, որպեսզի թուրք 125 (կես ռոտայի) միլիցիոներների ուտելիքը, հագուստն ու զենքը կառավարությունից տրվի. եթե այդտեղից թույլ չտրվի պատրաստվում են կրկին խռովություն անել. դժբախտաբար զսպող ուժ էլ չկա այժմ: Ինձ թվում է թիկունքի խաղաղություն և ազգամիջյան ընդհարման առաջն առնելու նպատակով, ցանկալի է հաջողեցնել, միայն թե մի անհրաժեշտ պայմանով, որ գարնիզոնում ծառայող միլիցիոներ թուրքերը համարվեն անպատճառ զորակոչի ենթակա, *военнообязанный*, մանավանդ որ անդրկովկասյան մուֆտին (սյունիների կրոնապետը) պաշտոնապես հայտնեց մեր ժողովում, որ անհրաժեշտության դեպքում կզնան ֆրոնտ (արձանագրված է հունվարի 8-ի ժողովում, որ բերում է պրապ. Միրզայանը): Ենթադրում են, որ այդպիսի կարգադրություն չի լինելու, այնինչ արդարությունը պահանջում է, որ, եթե այդպիսի պահանջ պաշտոնապես դրվի և առաջին իսկ դեպքում մի ամսից հետո պահանջվի մի ռոտան (կեսը քրիստոնյա, կեսը մահմեդական) ուղարկել ռազմաբեմ, փոխարենը տեղում նոր ռոտա կազմել նույն ձևով, թուրք միլիցիոներները չեն ցանկանա մտնել գարնիզոնը և իրենց գլխավորներն ևս հավանական է լռեն և այլևս պահանջներ չանեն: Մի այլ ավելի կարևոր հարց. ի նկատի ունենալով, որ այս շրջանում մեծամասնությունը թուրքական տարրն է և վերջերս թուրք ավագակների թիվը շատացել է ու անապահովություն է կյանքի ու գույքի, ռազմաբեմից եկող մեր բազմաթիվ զինվորներն այլևս չեն ցանկանում վերադառնալ դեպի կովկասյան ճակատ: Բացի այս, գիտեք, որ թուրքերին թույլ է տրված կազմակերպել իրենց ազգային զորքը, արդեն սկսել են ամենայն օր զինավարժությամբ մարզել քաղաքից դուրս հարյուրավոր երիտասարդներ, և, երևակայեցեք, վարժեցնողները տաճիկ գերի սպաներ են: Բազվից և «այլ» տեղերից հաճախ գալիս են տաճիկ ազենտներ, է-միսարներ, իհարկե գրգռելու նպատակով և համոզում ներշնչելու այստեղի թուրքերին որ շուտով տաճիկները Կովկաս են մտնելու: Փաստեր շատ կան: Այս թուրքական ուժը թիկունքում բավական կասկածելի ու վտանգավոր է հատկապես հայերիս համար: Այս առթիվ Շամախու հայ զինվորականների կոմիսիան մի քանի նիստեր ունեցավ ինձ մոտ և իրենց արձանագրություններն ուղարկել են նամակաբեր Միրզայանի հետ. որոշել են միջնորդել կովկասյան իշխանության առաջ, որ թույլ տրվի Շամախու գավառի գլխավոր մեծ հայ գյուղերում կազմել *Армянский запасной батальон в Шемах.* *езде:* Դա նախ կնպաստի կանոնավոր կերպով զորքեր ուղարկել զորաճակատ, վերջացնելով դասալիքությունը (*дезертирство*), երկրորդ թիկունքում կպահպանվի խաղաղություն և կլինի որպես հակակշիռ ուժ թուրքական ուժի: Արձանագրություններից կժանոթանաք մանրամասնության հետ: Խնդրում են չխնայեք Ձեր աջակցությունը և աշխատեք հաջողեցնել շուտով, որպեսզի անմիջապես կազմակերպվի և հաջողության համար սկզբի մի երկու ամսվա համար գոնե նշանակել տալ մի հայ փոխգնդապետ կամ կապիտան այդ կողմերից: Այս միջոցը կլինի միակ հիմնավորը հայ ազգաբնակչությանը թիկունքում ևս պաշտպանելու համար ամեն տեսակ անախորժ կամ ծանր անակնկալներից և զսպելու տաճկական դրոմամբ հառաջ եկող խռովությունները:

Քաղաքի գարնիզոնի մեծացումը գավառի հայ ազգաբնակչության համար մի առանձին ապահովություն չէ, մանավանդ որ գարնիզոնի բնակության տեղն էլ քաղաքի ծայրին այնպես ապահով ու հարմար չէ. այնինչ ընտրված գյուղերը (Քերբենջ, Սադրասա, Սադյան և Գյուրջևան) կենտրոնական գյուղեր են և շատ հարմար դիրք ունեն պաշտպանության տեսակետից: Պրապ. Միրզայանի հետ եկող թուրք Բեդալ Յուլչինը կոմիսարիատի մահմեդական անդամների (Ջաֆարովի, Խան Խոյսկու և մյուսների) օժանդակությամբ ցանկանում է աշխատել, որ իրենց ազգային զորքի համար ստանա զենք և հագուստ: Այժմյան կասկածելի պայմաններում հավատացած ենք՝ չեն ստանա, մանավանդ որ վարժվում են տաճիկ գերի սպաների ղեկավարությամբ որոշ ոգով, սակայն ավելիորդ չհամարեցի գրել Ձեզ, որ իմանաք և արգելք լինեք, եթե դիմելու լինեն:

Նույն թուրքը միջնորդելու է, որ Շամախու գարնիզոնի նաչալնիկի (Արզումանովի) փոխարեն մի թուրք սպա նշանակել, որ այժմ ծառայում է Բազու военный начальник-ի մոտ (կարծեմ օգնական է), սոցա միակ նպատակն է, որ գարնիզոնի զեմբերը ի վերջո ընկնեն թուրքերի ձեռքը, ուստի դիմում են այսպիսի միջոցների: Երկու օր առաջ հիշյալ թուրք սպային կանչել էին Բազվից երկու օրով. այդ սպայի մասին կպատմեմ նամակաբեր Միրզայանը: Խնդրում եմ աշխատեք չհաջողվի, եթե ոչ, դա ևս մի չարիք կլինի հայերի համար: Որպես թե դորա համար Շամախու դուման է միջնորդում, որը թուրքերից է բաղկացած, բացի մի քանիսից: Առայժմ այսքանը:

Ընդունեցեք հարգանքներս և ողջույններս՝  
**Բազրատ եպիսկոպոս**

**Գ. Գ.** Այս առթիվ նամակ եմ գրել նաև Ավետիս Ահարոնյանին:

**Մակազր.** «Մասնավոր՝ Ազգային խորհրդին. Շամախուն որոշված է կազմել մեկ բա-տալյոն, որը պետք է հանդիսանա Բազվի գնդի մասը»:  
**Պ. Լևոնյան**  
6/II 1918 թ.

ԳՅ ՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 109, թթ. 1-4: Ինքնագիր:

## N 5

### СТАТЬЯ С. ЕДИЕВСКОГО “ШАМХОРСКАЯ ТРАГЕДИЯ” (РАССКАЗ ОЧЕВИДЦА)

В своем рассказе я хочу привести голые факты, всю истину, которая, быть может, многим покажется фантазией, - всю правду пережитой мною трагедии.

8 января, в 12 часов дня, из Тифлиса в Баку отправился почтовый поезд №4, переполненный пассажирами. Это был первый поезд после долгого перерыва железнодорожного движения, и так был набит пассажирами, в особенности женщинами и детьми, что негде было стоять.

Все были довольны, что, наконец, едут, но никто не решался даже думать о том, что ждет его впереди.

До ст. Акстафа приехали спустя несколько часов, где и остались ночевать до следующего утра, 9 января. Но причину этой остановки мало кто понимал. Потом, однако, пассажирам объявили, что между станциями Долляр и Шамхор стоят несколько военных эшелонов, которые, будто-бы, из-за порчи пути не двигаются дальше до Баку.

Часть пассажиров нашего поезда решила вернуться в Тифлис, остальные же выразили желание ехать дальше.

Проехали благополучно до ст. Долляр. И здесь только мы узнали правду. Не порча пути была причиной остановки эшелонов, а стоявший впереди бронированный поезд, требовавший разоружения эшелонов.

Мы доехали на поезде №4 до самого хвоста последнего эшелона, за три версты до ст. Шамхор.

Сколько было эшелонов, я не знаю, но видел, что состав их тянулся на несколько верст вперед.

Еще на ст. Долляр были попытки со стороны татар требовать у проезжающих с нами в пассажирском поезде солдат сдачи оружия, причем татары предупреждали, что так или иначе оружие достанется им.

Было часа 3-4 после обеда. Мы стояли в открытом поле. Спустя некоторое время раздались первые одиночные выстрелы, вслед за тем густая пулеметная стрельба, опять выстрелы залпами, треск пулеметов и т.д. А затем, как будто в заключение, прогремело несколько выстрелов из орудий.

Никто из пассажиров, однако, не знал, в чем дело. Мы думали сначала, что эшелоны отбивают наступление татар. Было же не то. Происходил бой с бронированным поездом, и в результате броневик был разбит, убит его командир, перебита прислуга.

Это было начало пережитой трагедии. Наступила ночь. И в это время совершилось то, чего никто не ожидал. Наши эшелоны сдались... после того, как разбили броневик, шайкам разбойников...

До последнего момента мы не знали, что передние эшелоны сдаются. Мы все верили, что "наши" нас защитят. И когда часть шайки разбойников подошла к нашему поезду с требованием отдать оружие, солдаты нашего поезда отказались подчиниться.

Началась стрельба. Те, у кого было оружие, вышли из вагонов на насыпь и начали отстреливаться.

Но каково было тем пассажирам, которые остались в вагонах, женщинам и детям? Кто может представить себе их смятение и ужас?.. Это была кошмарная, ужасная ночь.

Когда защитники нашего поезда, группа самоотверженных солдат, принуждена была отдать оружие, мы потеряли надежду на спасение. Мы очутились в самом стане разбойников.

Нас было около 400 пассажиров. Мы думали, что со сдачей оружия все кончится. Но скоро убедились, что словам башибузуков верить нельзя. Спустя некоторое время, в заднем вагоне начался крик. Там начался пожар. Татары подожгли состав поезда, конечно, с целью грабежа.

Грабеж пассажиров начался, как мы после узнали, в отместку за то, что "наши" случайно выпустили снаряд в соседнее татарское селение. Не знаю, быть может и так.

Среди пламени горящих вагонов началась паника.

Происходило что-то невообразимое. С каждой минутой пожар в поезде усиливался. Кругом слышалась стрельба, плач, стон, раздавались крики о спасении!

Люди прыгали через окна вагонов со ступеней на насыпь, толкались: кто сильнее, шагал по слабым женщинам и детям. Многие оставили свои пожитки в вагонах. Многие татары там же около поезда грабили. Обирали до нитки, снимали сапоги, верхнее платье, не говорю про ручной багаж и деньги.

Беспощадно грабили солдат. Даже с убитых и раненых снимали все до рубашки.

До станции Шамхор оставалось версты три, и мы гурьбой, как стадо, потянулись туда. И по дороге татары грабили всех, у кого что-либо осталось. А позади - пожар, валяются трупы убитых, стонут раненые...

Многие шли впереди в одних рубашках, голодные, ограбленные, избитые... Состоятельные сделались нищими, здоровые потеряли здоровье, стали калеками. Только со стороны одних солдат насчитывались 600 убитых и раненых..

Так прошла ночь. С рассветом ушел первый санитарный поезд с ранеными в Елисаветполь; затем другой и третий. Затем двинулись эшелоны с остатками измученных, голодных, ограбленных людей...

Я уехал последним санитарным поездом в 12 час. дня. Все время я искал пропавшую во время пожара в поезде мою жену. Но тщетно, нигде ее не было. В самый момент отхода поезда шальная пуля убила наповал двух забравшихся на крышу вагона солдат, которые свалились с вагона у моих ног.

Этой ночи я никогда не забуду.

**Станислав Едиевский**

Баку, газета, 31 января 1918 г.

## **№ 6**

### **ИЗ ДОКЛАДА, ПРЕДСЕДАТЕЛЯ ВОЕННО-ИСТОРИЧЕСКОЙ КОМИССИИ ПО УЧАСТИЮ АРМЯН В ВОЙНЕ 1914-1918 ГГ. [А.П.КУЛЕБЯКИНА] ОТНОСИТЕЛЬНО БАКИНСКИХ СОБЫТИЙ МАРТА 1918 ГОДА**

**[1918]**

**Тифлис.**

...К началу января 1918 года настроение нафанатизированных провокацией татарских масс в отношении требования обещанного и необещанного оружия достигло апогея, и Закавказский Краевой Центр в Тифлисе телеграфировал в Елисаветполе Мусульманскому Национальному совету, что для вооружения вновь сформированных частей Мусульманского корпуса следует получить оружие от проходящих русских воинских эшелонов, т. е. иначе говоря, было фактически указано татарам самим разоружить русские войска, уходящие с фронта. Мусульманский совет принял эту телеграмму как прямой указ, а нетерпеливые массы, немедленно использовали его. К сожалению нам не удалось получить самый текст этого исторического распоряжения, но наличие его подтверждается другим документом, который приводим ниже. Посылку этой телеграммы в такой острый момент надо считать первым сигналом к самовольным действиям татар, первой искрой в порох, брошенной руками сознательных людей, которые не могли не знать, что русские эшелоны добровольно не сдадут оружия, которое может быть обращено против них же.

Приводим упомянутый нами подлинный документ:

“- ПРОТОКОЛ. 1918 года, января 11 дня. Представители эшелонов, Краевого Центра и Мусульманского Революционного Комитета, обсудив вопрос об обезоружении эшелонов согласно предписанию Краевого Центра, пришли к следующему соглашению: эшелоны дают одну полевую батарею со всеми принадлежащими ей частями, лошадьми и снарядами. Представитель Краевого Центра капитан Стрелковский дает слово, что Мусульманский корпус получит на днях из тифлисского арсенала одну горную батарею, в противном случае Мусульманский Национальный комитет по отношению будущих эшелонов действует автономно, и ответственность за могущие быть последствия падает на Краевой Центр. Подписали: председатель — полковник Магалов и члены: капитан Стрелковский, А. Сафикуртский, А. Ахвердов и другие подписи. С подлинным верно, в чем подписью и приложением /обществ./ печати удостоверяется 1918 года января 12 дня. Председатель Мусульманского Революционного Комитета Мусульманского Национального Совета/”.

Этот протокол был составлен в Елизаветполе на соединенном собрании делегаций от мусульман, Краевого Центра и проходивших русских частей, избиение которых на ж. д. участке Акстафа - Аджикабул и главным образом у станции Шамхор, тогда как раз происходило.

Прибыв на станцию Елизаветполь, делегация встретила начальника татарской туземной дивизии князя Магалова и других представителей. Собрание открыл князь Магалов, заявив, что события последних дней тяжелы для обеих сторон. Если бы мусульмане были уверены в спокойном прохождении войск, то они пропускали бы их вооруженными. Сафикюртский наоборот, не был столь миролюбив. Он сказал, что русская армия все время войны издавалась над мусульманами, стреляя иногда по мусульманской папаше, или же их баранте. Теперь, когда мусульмане получили право иметь свою армию, они должны иметь также и оружие. Мусульмане не виноваты, что вынуждены насильственным путем добывать оружие в то время, когда Правительство, в лице Комиссариата, не исполняет своих обязательств. "В то время, когда младшие наши братья армяне и грузины вооружены, старший брат Закавказья — мусульмане — не получил оружия". Они тем более имеют право на разоружение проходящих эшелонов, что имеют телеграмму от Краевого Центра за подписью Жордания, который предлагает для вооружения мусульманского корпуса воспользоваться оружием разоружаемых проходящих эшеленов.

Рустамбеков прибавил, что мусульмане могут пойти на уступки, оставив эшелон половину ружей и взяв себе вторую их половину ружей, артиллерию и пулеметы.

Стрелковский возразил, что признавая справедливым вооружение мусульманского корпуса, он, как председатель комиссии по распределению оружия, принимал и принимает меры, чтобы Мусульманский корпус получил его. Но он не может согласиться на разоружение эшелонов, т. к. послан в Елизаветполь Комиссариатом для обеспечения свободного их прохождения. Если имеет место телеграмма, о которой шла речь, то он прямо в лицо Комиссариату назовет подлостью такой образ действия, т. к. при указанных обстоятельствах, давая ему поручение, Комиссариат должен был поставить его в известность о существовании подобной телеграммы. Однако как бы там ни было, он обещает Мусульманскому корпусу батарею из артиллерийского склада. Если бы Комиссариат не разделил такой точки зрения, то он, Стрелковский, подаст в отставку и просит ему верить.

Рафибеков старший заявил, что верит слову Стрелковского, но опасается, что Комиссариат может с ним не согласиться. Кроме того, что же они скажут тем тысячам, которые собраны ими со всех уездов, стоят теперь здесь в ожидании обещанных им ружей. Массы могут сказать: - "Вы обещали нам много раз и все еще не даете". — Массам надо давать оружие, а не только обещания.

Представители эшелонов — солдаты заявили, что товарищи их не могут согласиться на разоружение, т. к. не уверены в своей безопасности. Совещанием были приняты меры для ликвидации происшествия безболезненно для обеих сторон. Отмечено было также, что трехдневный бой озлобил эшелоны и без боя они оружия не сдадут. В результате состоялось соглашение, по которому мусульманам передавалась одна полевая батарея с лошадьми и принадлежностями. Протокол этого соглашения приведен выше. Батарея была передана татарам, и скопившиеся эшелоны пропущены на Баку. Шамхорские избияния дорого обошлись и самим татарам, но жертвы русских эшелонов были несравненно больше и послужили поводом для огромного озлобления русских и армян против татар в Баку, куда сильную группу, ясно определившую свое антимусульманское настроение, в дальнейшем вылившееся в мартовские Бакинские события, о которых речь впереди.

Из предложенного краткого описания Шамхорских событий видно, что не имея непосредственной фактической связи с Бакинскими, они тем не менее имели значительное влияние на развитие последних, т. к. после Шамхора было утрачено

последнее равновесие между христианскими и мусульманскими партиями, открыто поднявшими знамя взаимной борьбы за обладание местной властью. Видно также вредное значение неумелой политики Закавказского Комиссариата, главным же образом Краевого Центра депутатских советов, в котором не было единой твердой и уравновешенной воли и планомерной системы фактического, а из словесного управления массами, а работала коллективная сводка разнообразных голосов, в общем больше занятых укреплением завоеваний революции путем воззваний, чем восстановлением нарушенного порядка в строгих рамках закона и дисциплины. При таком порядке естественно могла проскользнуть и телеграмма, подобная вышеупомянутой, последствия которой были так печальны.

Но, помимо всего вышесказанного, Шамхорские события, или вернее, их безнаказанность в отношении нападавшей стороны, наглядно показали вооруженному мусульманству значение его национальной сплоченности и смелой активности его партийных вождей перед лицом разрозненного и недружелюбного интернационала, заместившего в Закавказье разбитую старую власть. Закавказские татары имели в Тифлисском правительстве своих энергичных и твердых представителей главным образом из партии Мусават. Партия эта преследовала цели строго и последовательно национальные, выставляя социалистические лозунги на своем политическом знамени, лишь постольку, поскольку они способствовали мусульманам для закрепления ими за собою всех завоеваний революции в рядах других народностей Кавказа. Мусаватисты планомерно и неуклонно стремились к обособлению мусульман от христиан и определенно, хотя пока и в достаточной степени сдержанно выявляли т. н. турецкую ориентацию. Но после Шамхорских событий, особенно же после того, как турки 30 января 1918 года нарушили перемирие и двинули войска на Батум и Эрзерум, татары перестали скрывать свою тактику и напрягали все усилия для достижения одной цели поголовного вооружения всех закавказских мусульман, не останавливаясь в выборе средств до открытого насилия включительно. Кровавый опыт Шамхора не замедлил отразиться на усилении одиночных и массовых грабежей и убийств вдоль всей линии Закавказской железной дороги. Там, где нельзя было взять открытой силой, прибегли к ночным нападениям и порче рельсовых путей. Железная дорога почти закрылась для обычного проезда, и главным образом страдали армяне, т. к. все озлобление татарских масс обратилось на них. Последние эшелоны русских войск уже проходили, и хотя сзади еще оставались не ушедшие части /персидского района/, внимание татар к русским тогда уже в значительной степени притупилось, увеличившись в отношении армян. Вождям татар важно было всеми мерами ослабить военное противодействие туркам формировавшегося тогда Армянского и Грузинского корпусами, и они нарочно старались не пропускать в Закавказье солдат и других армян, которых было очень много. Волей неволей они скапливались в попутном Баку и увеличивали там собою массы христианской демократии, к тому времени совершенно охваченной большевизмом.

АИ РА, ф. 121, оп. 1, д. 29, лл. 8-11. Копия. Машинопись.

## **№ 7**

### **ОБРАЩЕНИЕ БАКИНСКОГО ОТДЕЛА АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА К АРМЯНАМ ВОЗДЕРЖАТЬСЯ ОТ ПОЕЗДОК В НАПРАВЛЕНИИ ТИФЛИСА**



**К сведению граждан-армян**

Бакинский отдел Армянского Национального совета предлагает гражданам-армянам в силу происходящих в Елисаветпольской и Бакинской губерниях событий, временно воздержаться от поездок по железной дороге в направлении Тифлиса.

Баку, 24 февраля 1918 г.

**N 8**

**ՆՈՒՆԻ-ԱՐԵՇԻ ԹԻՖԼԻՍԱԲՆԱԿ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՑ**

**25 փետրվարի 1918թ.  
Թիֆլիս**

Կովկասյանը Բարեգործականը ընկերության դահլիճում տեղի ունեցավ նուխարեշքիների ընդհանուր ժողովը, ուր ներկա էին մոտ 150 երկսեռ անձնավորություններ:

Ս.Շխյանը, բանալով ժողովը, առաջարկեց ընտրել նախագահ և քարտուղար: Թերթիկներով նախագահ ընտրվեց Հ.Մելիք-Ջհանյանը, իսկ քարտուղար՝ ուսուցիչ Արշակ Տեր-Հովսեփյանը:

Նախագահը հայտնեց ժողովականներին. Նուխում, փետրվարի 13-ին եղերական մահով զոհված՝ Ա.Մելիք-Ալլահվերդյանի, Մ.Պետրոսյանի, հայ միլիցիոներ Բախշի և Նազիմ-Բեգ Ամիրջանովի, Ալեքսանդրապոլում հասարակական պարտականություններ կատարելիս նույնպիսի զոհված Ե.Ասրիբեգյանի հիշատակը հարգենք ուղքի կանգնելով: Ժողովականները ոտնկա հարգեցին զոհվածների հիշատակը: Ապա մարտի մեկին նշանաըկվեց հոգեհանգիստ:

Ժողովի օրակարգն էր 1. Ձեկուցում ժամանակավոր կոմիտեի: 2. Ներկա թույն և մեր անելիքը: 3. Նոր կոմիտեի և վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունները:

Ժամանակավոր կոմիտեի նախագահ Սիմ-Շխյանը զեկուցեց մոտավորապես հետևյալը:

Մոտ երեք ամիս առաջ Նուխու և Արեշի գավառներում սկսվեց[ին] մինչև օրս չտեսնված ավազակային շարժումներ, մանավանդ Նուխի-Եվլախ, Նուխի-Ջաքաթալա ճանապարհներին, որոնց մանրամասնությունները հայտնի են ժողովականներին...

**Նախագահ՝ Հովսեփ Մելիք-Ջհանյան  
Քարտուղար՝ Արշակ Տեր-Հովսեփյան**

ՀՀ ՊԱ, ֆ.245, ց.1, գ.3, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:  
Հրատ. ԲՀԱ, 1990, N 1, էջ 158:

**N 9**

**ՀԱՂՈՐԴՈՒՄ «ԲԱԳՎԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ»՝ ԳԱՆՁԱԿՈՒՄ ՏԻ-  
ՐՈՂ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հինգշաբթի, ամսիս 22-ին կայացավ բանվ. և զին. խորհրդի հերթական նիստը:  
Մինչև օրակարգի խնդիրների քննության անցնելը դաշնակցության ֆրակցիայի կողմից հետևյալ հարցապնդումը տրվեց գործադիր կոմիտեին: «Հայտնի՞ է արդյոք գործադիր կոմիտեին, որ Գանձակուն թուրքաց Ազգային կոմիտեն հաց չի բաց թողնում հայկական մասի բնակչությանը: Հայերին ուլտիմատում է դրված վերադարձնել 279-րդ զնդի հայ զինվորների զենքերը: Հայտնի՞ է արդյոք, որ հայերը 10 օր շարունակ հաց չստանալով, սովի են մատնված և այնտեղ արդեն սովամահության դեպքեր են եղել: Եթե այդ բոլորը գործադիր կոմիտեն գիտե, ի՞նչ միջոցների է դիմել վերջ տալու այդ դրությանը, իսկ եթե որևէ միջոցի չի դիմած, դաշնակցական ֆրակցիան առաջարկում է ամենակարճ ժամանակում դիմել ամենախիստ միջոցների վերջ դնելու այդ ամոթալի երևույթին, որովհետև ֆրակցիան չի կարող պատասխանատու լինել այն բոլորի համար, ինչ որ կարող է առաջ գալ ստեղծված պայմաններում»:

Ի պատասխան հարցապնդման գործադիր կոմիտեի նախագահը հայտարարում է, որ այդ բոլորը հայտնի է կոմիտեին: Կոմիտեն արդեն կարգադրել է նաև պար[ենավորման] կոմիտեին մթերքների բաժանումն այնպես դասավորել, որ հացը զենք չծառայի բնակչության այս կամ այն մասին ճնշելու համար: Գործ. կոմիտեն դիմել է Գանձակի ազգային կոմիտեներին՝ անմիջապես վերջ տալ այդ դրությանը, որովհետև Բագվի խորհուրդը չի կարող հանդուրժել այդպիսի երևույթները:

Նախագահն առաջարկում է քննել այդ խնդիրը, կապելով այդ Կովկասյան ընդհանուր դրության հետ:

Էտեռների կողմից ընկ. Սահակյանը հարց է տալիս մուսավաթիստների ֆրակցիային, թե ինչն է նրանք մինչև այժմ ոչ մի միջոցի չեն դիմել այդ դեպքի առաջն առնելու համար:

Մուսավաթիստների կողմից պատասխանում են, որ նրանք մտադիր էին ներկայացուցիչներ ուղարկել, բայց մինչև այսօր չի հաջողվել:

Որոշվում է առանձին արտակարգ նիստում քննել Անդրկովկասյան դրության խնդիրը:

Ա.

Արև, 9 մարտի 1918 թ.

**N 10**

**ТЕЛЕГРАММА БАКИНСКОГО ОТДЕЛА АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА  
ГОСУДАРСТВЕННЫМ УЧРЕЖДЕНИЯМ И ОБЩЕСТВЕННЫМ ОРГАНИЗАЦИЯМ  
ЗАКАВКАЗЬЯ ОБ АРМЯНО-МУСУЛЬМАНСКИХ ОТНОШЕНИЯХ**

Местным отделом Армянского Национального совета послана следующая срочная телеграмма:

“Тифлис. Председателю Закавказского Сейма, копии председателю Закавказского Комиссариата, председателю Грузинского Национального совета, председателю Армянского Национального совета, председателю Русского Национального совета, председателю Центрального Мусульманского комитета, областным комитетам партий “Дашнакцутюн”, социал-демократов (меньшевиков), соц.-демократов (большевиков), социалистов-революционеров и председателям мусульманских социалистических фракций Сейма”.

“Вследствие двухмесячного закрытия железнодорожного движения Баку - Тифлис для армян и систематических насилий, чинимых над армянами на этом пути, в

Баку скопилось несколько тысяч вооруженных армян-солдат, возвращающихся с персидского фронта и западного фронта домой или направляющихся на Кавказский фронт. Вынужденное пребывание такой большой вооруженной массы здесь с каждым днем становится опаснее и грозит самыми тяжелыми последствиями. Кроме того, есть определенные данные, что дорога Баку-Тифлис закрыта с целью усилить анархию в тылу и тем самым затруднить защиту Кавказского фронта. Ввиду этого, бакинский отдел Армянского Национального совета обращается к вам с категорической просьбой принять самые решительные меры, какие необходимы для устранения препятствий, мешающих скорейшему открытию безопасного сообщения Баку-Тифлис. Эти меры необходимы как для спокойствия Восточного Закавказья, так и для успешной обороны края. О последующем покорнейше просим уведомить”.

Баку, 13 марта 1918 г.

N 11

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՎԶԱՅԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ  
ՏԵՂԻ ՌԻԵՅՑԱԾ ԿՈՂՈՊՈՒՏՆԵՐԻ, ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղալազյա, 4 մարտի. - Գյոկչայի գավառի դրոթյունը անտանելի է դարձել: Մինչև այժմ թուրք ավազակները հայերին միայն թալանում էին և կենդանի բաց թողնում, իսկ այժմ թալանելուց հետո նրանց սպանում են և դիակներն այլանդակում: Ամսույս երկուսին Գյոկչայից տուն վերադառնալիս բոզավանդեցի Ներսես Նալբանդյանցին սպանելով, վերցրել են նրանից 400 ռուբլի և 150 ռուբլու ապրանք, իսկ 3-ին սպանել են էլի նույն տեղում սուլթաննուխեցի (Արեշի գավառ) երկու հոգու, տանելով նրանցից մոտավորապես ութ հազար ռ. փող և երկու ձի: Բոզավանդեցիք իրենց դիակը տարել են, իսկ սուլթաննուխեցիների դիակները դեռ ընկած են Գյոկչայում, որովհետև ավազակների վախից չեն կարողանում գնալ և հավաքել: Հաղորդակցությունը Գյոկչայի հետ անգամ կտրված է: Թուրքերի վերաբերմունքը հայերի հետ շատ վատ է, որովհետև գավառիս թյուրք ասկյարները, որոնք գնացել էին Գանձակ, Թուրք և Շամխոր կայարանները թալանության, թալանի փոխարեն իրենցից մի մասի դիակներն են բերել, հայտարարելով, թե սրանց հայերն են կոտորել:

Այսօր պատահմամբ Բոզավանդ գյուղում պատահեցի մի լեզգու, որը իսկույն մոտեցավ և սկսեց սառնասիրտ պատմել ինձ հետևյալը. «Ես գալիս էի Մյուսիսլի կայարանից, ինքս չորբան են և, որովհետև ես մեծացել եմ հայերի մեջ և միշտ եղել եմ հայի չորբան, պարտ եմ համարում հայտնել, որ Մյուսիսլի և Ուջար կայարանների միջի տարածության վրա մոտավորապես հարյուր հայեր կան սպանված, որոնց թուրք ավազակները սպանել են վագոններում և լուսամուտներից դուրս շարտել»:

Ղալազեցի Մովսես Սանամյանցը Բազվից գյուղ գալու ժամանակ Ուջարի կայարանում փայտով սպանվելուց մի կերպ ազատվել է և մեծ կաշառքով տուն հասել, այնքան ծեծվել է, որ հույս չկա առողջանալու: Ղալազեցի Հայրապետ Հասրաթյանցի ներկայությամբ Սըղմի կայարանում մի քանի հայ են սպանում, իսկ իրեն էլ շատ ծեծելուց հետո թողնում են, կարծելով թե մեռած է: Ուշաթափված մի քանի ժամ մնալուց հետո ուշքի է գալիս և հինգ օր չարչարվելուց հետո մի կերպ հասնում գյուղը: Մարմնի վրա սաղ տեղ չկա, այնքան թակել են:

Այդպիսի դեպքեր անթիվ են:

Կինդրեիցը Հայոց Ազգային խորհրդին Թուրքաց Ազգային խորհրդի հետ միասին մի պատգամավորություն ուղարկել Գյոկչայի գավառը: Սոքա միգուցե կարող են գավառը ներշնչել:

Գավառի հայ գյուղերում բառիս բուն նշանակությամբ սով է և ոչ ոք էլ չի մտածում այդ չարիքի առաջն առնելու մասին:

Յ. Գ. - Ամսիս 9-ին մի քանի զինված թուրք ավազակներ հարձակվում են Գյուլ-չայից գյուղ վերադարձող Քալ Բանդ գյուղի ծխատեր Փառնակ քահանայի և նույն գյուղի տանուտերի վրա: Քահանային իսկույն սպանում են, իսկ տանուտերը մի կերպ ազատվելով փախչում է: Երկու ժամից հետո էլի նույն ճանապարհի վրա սպանել են չորս հայերի: Որտեղացի լինելը դեռ հայտնի չէ: Սպանվածների շապիկներն ու ոտաշո-րերն անգամ վերցրել են թողնելով մերկ դիակները:

Ա. ք. Մայիլյան  
Արև, 15 մարտի 1918թ.

N 12

### ՀՈՂՎԱԾ «ԹԻՖԼԻՍԻՑ ԲԱԳՈՒ» (ՃԱՆԱՊԱՐՅՈՐԴԻ ՊԱՏԱԾԻՑ) ԵՐԿԱԹՈՒՂՈՒՄ ՏԻՐՈՂ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամսիս 4-ին, գիշերվա ժամը 4-ին, N 4 գնացքով ճանապարհվեցինք Թիֆլիսից Բագու: Առավոտյան դեմ հասանք Աղստաֆա կայարանը, ուր մոտավորապես կային 400 զինված թուրք ավազակներ: Գնացքը կայարանում կանգնելուց անմիջապես հետո, թուրք ավազակները ներս մտան գնացքը և սկսեցին ճանապարհորդներին հարց ու փորձ անել, թե հայեր չկա՞ն արդյոք գնացքի մեջ: Մենք՝ չորս հայերս, զինվորականներ, թաքնվել էինք վերարկուների և զանազան իրերի տակ: Մեր ռուս ընկերները հայտնեցին, որ գնացքում հայեր չկան: Այնուհետև գնացքը շարժվեց դեպի Շամխոր կայարանը: Երբ գնացքը Շամխորում կանգ առավ, այստեղներս մտան 4 զինված թուրք ավազակներ և դարձյալ սկսեցին հարց ու փորձ անել՝ հայ գտնելու համար: Մեզանից 3 հոգի հայտնեցին, որ մենք հայ ենք, իսկ ես նրանց հարցին պատասխանեցի, որ ես «ասորի» եմ: Բայց ավազակները ինձ հանգիստ թողին, իսկ իմ երեք ընկերոջ վրա, որպես պահպաններ կանգնեցին չորս թուրք ավազակներ: Գնացքը շարժվեց: Թուրք ավազակները և մենք եկանք Գանձակ: Գնացքը Գանձակ հասնելուն պես թուրք ավազակները իմ երեք ընկերոջս և նրանց իրերը իջեցրին վագոնից ներքև, իսկ ես մնացի վագոնում միակ հայը: Մի քանի ռոպեից հետո ես վագոնի պատուհանից իմ աչքով տեսա, թե ինչպես իմ ընկեր բազմեցի Արամ Հարությունյանին հրացանազարկ արին: Արամ Հարությունյանը Բագվում ապրում է Բանդարնայա փողոցի 87 համարում: Ընկերներս իրար հասցե վերցրել էինք Թիֆլիսում, մտածելով, որ կարող է ճանապարհին մեզ մի փորձանք պատահել:

Տասը ռոպե չէր անցել, որ Գանձակի կայարանի մոտ 6 թուրք ավազակներ մտան մեր գնացքը և սկսեցին ինձ հարցաքննել:

Ես հրաժարվեցի հայ լինելուց և դարձյալ պնդեցի, որ «ասորի» եմ: Բայց նրանք ուշադրություն չդարձրին և ստիպեցին իրերս վերցնել և գնացքից դուրս իրենց հետ միասին: Նրանցից երկուսը վերցրին իրերը, իսկ մնացած 4-ն էլ վերցրին ինձ և տարան կայարանի արտաքնոցը, որտեղ ինձ խուզարկեցին՝ խլելով մոտս գտնված բոլոր դրուհուներն ու փողերը: Այս գործողությունից հետո ինձ պառկեցրին հատակի վրա և սկսեցին 7 հոգով թակել, ստիպելով խոստովանել հայ լինելու: Ես կրկին պնդեցի, որ «ասորի» եմ և խնդրեցի, որ կարդան դրուհուներս, որոնք բարեբախտաբար չկային, որովհետև նախքան այդ նրանցից մեկը վերցրել էր թղթերս և դուրս գնացել: Բավական թակելուց հետո, երբ տեսան, որ նման միջոցով չեն կարող իմանալ հայ լինելու, հարց ու փորձ արին, թե որտեղացի եմ: Ես պատասխանեցի, որ ծնվել եմ Կուբանյան շրջանի Կավկազակայա կայարանում, որտեղ ապրում են բավական թվով ասորիներ: Ձինված թուրք ավազակներից մի երկուսն հաստատեցին վերջին խոսքերս, որից հետո ինձ թույլ տվին մտնելու գնացքը:

Գանձակից եվլախ հասա բողոքովին ապահով: Սակայն եվլախում դարձյալ մի քանի թուրք ավազակներ մտան գնացքը և սկսեցին նորից հարցուփորձը: Այստեղ ռուս ընկերներս և մի քանի հրեաներ նրանց մի կերպ համոզեցին, որ ասորի եմ, որի շնորհիվ ինձ բաց թողին:

Այնուհետև մինչև Հաջի-Կաբուլն նույնպես անվտանգ հասա: Այս կայարանում էլ սկսեցին հայեր գտնելու խուզարկությունը: Ինձ իջեցրին կայարանը, որտեղ եկան հիշյալ ռուս ընկերներս և մի քանի հրեաներ, ուր էլի համոզեցին նրանց, որ ասորի եմ: Հաջի-Կաբուլից հետո կայարաններում այլևս խուզարկություններ չեղան և անվնաս հասա Բագու ամսիս 6-ին երեկոյան: Իսկ թե ինչ արին ավազակներն իմ իրերն Գանձակ կայարանում, չգիտեմ: Շորերիս մեջ եղել են N 33136-ով նագան ատրճանակս և Սուրբ Գեորգյան քաջության խաչերս 4-րդ (N 921606) և 3-րդ (N 672211) աստիճանի:

Գանձակի կայարանում իջեցրած երեք հայերից երկուսի վիճակն ինձ հայտնի չէ:

Ա. Բ.  
Արև, 21 մարտի 1918 թ.

N 13

**ТЕЛЕГРАММА Г.З-А. ТАГИЕВА\* ЗАКАВКАЗСКОМУ ПРАВИТЕЛЬСТВУ  
С ОЦЕНКОЙ МАРТОВСКИХ СОБЫТИЙ.**

27 марта 1918 г.

В Баку наступило успокоение. В интересах благосостояния края, я, лично, считаю своим долгом заявить всенародно, что бакинские события не носили характера армяно-татарских столкновений. За все время боев татары не трогали живущих в татарских кварталах армян. Армянские же части спасли и дали приют более 14000 мусульманам, которых вернули через посредство персидского консула. Поднимаю свой голос за немедленное прекращение повсеместно всяких расправ и враждебных действий. Полагая, что это соответствует общим интересам, очень прошу вас всячески содействовать поддержанию мира и спокойствия среди населения. Пусть все обратятся к своим мирным занятиям.

Знамя Труда, Тифлис, 29 марта 1918 г.

N 14

**ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՍՈՒՄԸ ՀԱՅԵՐԻՆ՝  
ՉԵՐԹԵՎԵԿԵԼ ԳԱՆՁԱԿԻ ՈՒՂՈՒԹՅԱՄ**

Թեև հայ և մուսուլման կազմակերպությունների միջև համաձայնություն է կայացել, որ հայերը կարողանան անարգել կերպով ճանապարհորդել Բագու-Թիֆլիսյան գծով, բայց և այնպես հայերի վրա շարունակում են հարձակվել և կողոպտել: Ամսիս 14-ին Գանձակից Բագու եկավ մի հայ ծերունի, որ ոտից գլուխ թալանվել էր Քյուրդամիր կայարանում և երկու անգամ ենթարկվել էր զինված թուրք ամբոխի ձեռքով սպանվելու վտանգին Քյուրդամիր կայարանում և Հաջի-Կաբուլի մոտ գտնվող Կարասու կիսակայանում: Միմիայն միլիցիայի միջամտության շնորհիվ է նա փրկվել:

\* Известный нефтпромышленник, благотворитель, член партии "Мусават" (прим.сост.).

Այդ պատճառով Հայոց Ազգային խորհրդի Բազլի մասնաճյուղը հայերին առաջարկում է առայժմ չուղևորվել Գանձակի ուղղությամբ:

Արև, 30 մարտի 1918 թ.

N 15

**ՆՈՒՄՈՒ ԵՎ ԱՐԵՇԻ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՀԱՐՑԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՂ՝ ՀԻՇՅԱԼ ԳԱՎԱՌՆԵՐԻ 65 ԳՅՈՒՂԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**6 ապրիլի 1918 թ.  
Ղայաքաշի**

**Արձանագրություն**

**հայկական ժողովի, որը կայացել է Նուխվա և Արեշի գավառների հայ գյուղերի վաթսուն և հինգ (65) ներկայացուցիչներից-պատգամավորներից ապրիլի 6-ին 1918 թվին Ղայաքաշի գյուղում:**

Ժողովը բաց արավ պողպուկովնիկ Բրեդիսը իր պատշաճ ճառով, որից հետո խնդրեց արապորշչիկ Գ. Տեր-Գրիգորյանին կառավարել ժողովը մինչև նախագահի ընտրությունը և առաջարկել ժողովին օրակարգը, որ է հետևյալը.

1. Մեր բռնելիք դիրքը ներկա մոմենտում:
2. Հայ գյուղերի կազմակերպությունը:
3. Նոր բազարի հարցը: Թալաններին և սպանությանց դեմ կռվելու հարցը:
4. Սովի դեմ շտապ միջոցներ:
5. Ձեկուցում ներկա դժվարին օրերի մասին և միջոցներ դրության թեթևացման մասին:

6. Ալազանի կամուրջի հարցը:  
Արտակարգ հայտարարություն:
7. Գաղթածներին տեղավորելը:

Պ. Տեր-Գրիգորյանը, բացատրելով և ծանոթացնելով պատգամավորներին ժողովի օրակարգի հետ, նաև ընդգծելով այն մեծ նշանակությունը, որը պետք է ունենան այս ժողովի բոլոր որոշումներն ու վճիռները բոլոր հայ գյուղերի ներկա և ապագա հասարակական կյանքի կանոնավորման և շինարարության մեծ գործում, առաջարկեց ժողովին նախ ընտրել նախագահ, երկու փոխնախագահներ, երեք քարտուղարներ և ապա անցնել գործի: Ժողովը միաձայն ընտրեց նախագահ պ. Տեր-Գրիգորյանին, փոխնախագահներ՝ Եղիշե քահ. Տեր-Հովսեփյանին և Աղեքսանդր Էսիբյանին, քարտուղարներ՝ պպ. Հայկ Սաֆարյանին, Քրիստափոր Տեր-Աբրահամյանին և Արշակ Մկրտչյանին: Նախքան օրակարգին անցնելը, նախագահի առաջարկությամբ ժողովը որոշեց տալ իր անհրաժեշտ խրատներն ու կարգադրությունները այն զինվորներին, որոնք գնում են ազատելու և զաղթեցնելու Քանդակ, Հավարիկ, Մազուրդու և Մամաթավա հայ գյուղերի բնակիչներին, որոնց վրա բռնանում են ու սպառնում են կոտորածով և ավերածություններով մուսուլման հրոսակախմբերը:

Ժողովը միաձայն կայացրեց որոշում՝ տալ զինվորներին հետևյալ խրատներն ու կարգադրությունները. ա. զինվորները պետք է անպայմանորեն լսեն և կատարեն իրենց վրա նշանակված պետերի հրամանները, բ. ոչ մի ժամանակ ոչ մի զինվոր չպետք է դառնա ընդհարման առաջին պատճառը թուրքերի հետ, հակառակ դեպքում մեղավորը խստորեն կպատժվի զինվորական օրենսդրության համաձայն, գ. եթե թուրքերի կողմից կլինի որևէ մի արգելք կամ հարձակում, զինվորները և նրանց մեծերը պարտավոր են նախ զգուշացնելու և բացատրելու իրենց նպատակը, խնդրելով արգելքներ և բարդություններ չստեղծելու, իսկ հակառակ դեպքում անվեհեր ու քաջ լինել կռվում

խստորեն պատժելու հանդուգն թշնամուն: Այս վերոհիշյալ կարգադրությունները գին-վորներին հայտնելու համար ժողովը ընդհատվեց 10 րոպեով:

Ընդհատումից հետո ժողովը անմիջապես անցավ օրակարգին, քննության առ-նելով առաջին հարցը, որ է՝ մեր բռնելիք դիրքը ներկա մոմենտում: Նախագահը, ման-րամասնորեն բացատրելով այդ հարցը, առաջարկում է ժողովականներին արտա-հայտվել: Երկարատև մտքերի փոխանակությունից հետո նախագահը այդ հարցի վե-րաբերյալ առաջարկում է հետևյալ բանաձևը. մեր ներկա հայկական ժողովը խորհր-դակցելով և քննելով «մեր բռնելիք դիրքը ներկա մոմենտում», ի նկատի է առնում հետ-ևյալ պայմանները. ա. ըմբռնելով որ իսլամիզմի կրոնական մոլեռանդությունը արդեն գլուխ է բարձրացրել, բ. մեր հարևան մուսուլման ազգերը շարունակում են թշնամա-բար վերաբերվել դեպի մեզ և ճանապարհները փակել են, գ. պատերազմը դեռ շարու-նակվում է, և օսմանցիք կարող են հաղթող հանդիսանալ և վերցնել մեր սահմանազ-խի կարևոր ամրությունները, իսկ մեր ռազմական ուժերը անկազմակերպ են և դասա-լիք, դ. մեր գյուղերը անկազմակերպ են և անիշխանական դրության մեջ են գտնվում, ե. սովը կարող է առաջ բերել արհավիրքներ և սոսկալի ավերածություններ հայ գյուղե-րում, վճռում է ձեռք առնել անմիջապես հետևյալ միջոցները. 1) միշտ պատրաստ լինել ամենայն մի պատահարի, արթուն լինել թշնամու վերաբերյալ և գինվել, 2) մահմեդա-կան մոլեռանդությանը նայել և վերաբերվել արհամարհանքով և օգնել այն գյուղերին, որոնք կվճարեն իսլամի այդ ֆանատիզմից, իսկ դորա համար կարելույն չափ լավ զինվել և պաշտպանողական դիրք բռնել, 3) առիթ չտալ մեր հարևաններին թշնամա-կան միտումներ ունենալու դեպի մեզ - լինել խաղաղասեր և ամեն կերպ աշխատել այդ ապացուցանել, 4) օսմանցիների վերաբերյալ լինել չեզոք և գինվորներ չուղարկել կոլկասյան ֆրոնտ, որպեսզի չգրգռել այդպիսով տեղական հարևան թուրքերին, 5) հայ գյուղերի անկազմակերպությանը վերջ տալ, ստեղծելով գյուղական հեղինակա-վոր ուժեղ իշխանություններ և 6) մոբիլիզացիայի ենթարկել գյուղերի ունևոր դասա-կարգի նյութական միջոցները և այդպիսով օգնել չունևորներին, քաղցածներին մինչև նոր հունձը: Այս բանաձևը ընդունվում է ժողովի կողմից միաձայն, իբրև վճիռ:

Նախագահը առաջարկում է քննության առնել օրակարգի երկրորդ հարցը. հայ գյուղերի կազմակերպությունը: Այս հարցը երկար քննելուց և ծեծելուց հետո, ժողովը, ի նկատի առնելով ներկա բացառիկ պայմանները և հայ գյուղերում կատարվելիք կա-մայականությունները մութ և բացահայտ ուժերի կողմից թագավորող անիշխանությու-նը, կայացրեց իր հետևյալ վճիռը. ստեղծել զորեղ և անասան հարատև իշխանություն ամենալայն իրավունքներով: Իշխանությունը պիտի ունենա երեք աստիճան. ա. գյու-ղական ազգային կոմիտե, բ. շրջանային կոմիտե և գ. Նուխվա և Արեշի գավառների հայկական մի կենտրոնական կոմիտե: Նախ և առաջ ընտրել կենտրոնական կոմիտե, որը լինի մնայուն և գտնվի միշտ այնտեղ, ուր կգտնվի Նուխվա հրացանաձիգ բատալ-յոնի շտաբը, որի հետ այս կոմիտեն մշտապես ունենում է ամենասերտ կապերը: Շրջա-նային կոմիտեները հենվում են նույն բատալյոնի վաշտերի-ռոտաների վրա և ունենում նրանց հետ ամենասերտ կապեր: Գյուղական ազգային կոմիտեները պետք է ստեղծ-վեն ամեն մի հայ գյուղում լայն իրավունքներով: Ստեղծվելիք իշխանությունը իրա-վունք ունի հանցավորներին ենթարկելու ամենայն տեսակ պատիժների, բացի մահա-պատժից. օրինակ՝ թեթև և ծանր տուգանքի (շտրաֆի), ծեծի, բանտարկության, խու-զարկության, զինաթափման, գյուղից աքսորելու, կայքի գրավման հօգուտ հասարա-կության և այլ տեսակի չնախատեսված բայց անհրաժեշտ պատիժների: Կենտրոնա-կան և շրջանային կոմիտեները իրենց ուժը ստանում են բատալյոնից: Կենտրոնական կոմիտեն գոյություն է ունենում մինչև ընդհանուր քաղաքական պայմանների փոխվե-լը: Կենտրոնական կոմիտեն կազմվում է երեք անդամից, որոնց իրավունք է տրվում ընտրել իրենց համար 3 օգնականներ: Ժողովը քվեարկեց հետևյալ անձանց.

1. Սուրգունովը	-	ստացավ	-	ընտրվեց միաձայն:
2. Սաֆարյանը	-	-, -	-	23 ձայն

3. Ստեփանյանցը	-, -, -	21 -, -, -
4. Եղ. քահ. Տեր-Յովսեփյանը	-, -, -	21 -, -, -
5. Տեր-Աբրահամյանցը	-, -, -	26 -, -, -
6. Գեներալ Աիլիկյանը	-, -, -	16 -, -, -
7. Տեր-Հարությունյանը	-, -, -	9 -, -, -
8. Ս. Հակոբյանը	-, -, -	2 -, -, -
9. Թ. Բաղայանը	-, -, -	26 -, -, -
10. Տեր-Գրիգորյանը ընտրված է միաձայն:		

Հիշյալ աղյուսակից երևում է, որ միաձայն ընտրված են. Սուրբունովը և Գ.Տեր-Գրիգորյանը, իսկ Բաղայանի և Տեր-Աբրահամյանի թեկնածությունները քվեարկվեցին, որովհետև ստացել էին հավասար ձայնի քանակ: Քվեարկությունից հետո Բաղայանը ընտրվեց: Գյուղերը կազմակերպելու, շրջանային և գյուղական կոմիտեներ ընտրելու և հաստատելու համար, ժողովը ընտրեց երկու չորեքական հոգուց բաղկացած հանձնաժողովներ. արևելյան և արևմտյան: Առաջինում մտան հետևյալ անձինք. ա. Եփրեմ Փաշանյան, Եղիշե քահ. Տեր-Յովսեփյան, Արշակ Սկրտչյան և Հայկ Կակոյան: Այդ անձինք պարտավոր են գնալ ու շրջել Յաղուբու գյուղից դեպի արևելք գտնվող բոլոր հայ գյուղերը, որոնց կազմակերպելուց հետո պարտավոր են գեկուցանել կենտրոնական կոմիտեին: Արևմտյան հանձնաժողովը ունի հետևյալ կազմը. ա. Աբգար Մուսայեյան, Բախշի Բաղյանց, Սաղիան Սարգսյանց և Սարգիս Ջավադյանց: Այդ հանձնաժողովը ունի նույն լիազորությունները, ինչ որ և արևելյանը:

Նախագահը առաջարկում է քննելու երրորդ հարցը. նոր բազարի հարցը: Ժողովը այս հարցը քննելուց հետո վճռեց հետևյալը. ի նկատի առնելով այն, որ հայերիս համար փակված են Փաղառի, Հաջալուի, Ջաֆարաբադի և մյուս տեղերի բազարները թուրքերի շնորհիվ, ուստի անհրաժեշտ է հիմնել նոր հայոց բազար մի կենտրոնավայրում: Այդպիսի վայր ճանաչվեց ժողովի կողմից Ջառաֆ գյուղը, ուր մոտակա օրերում հիմնվելու է այդ բազարը, որի օրը նշանակվեց չորեքշաբթի:

Նախագահը առաջարկում է թալանների և սպանությունների դեմ կռվելու հարցը: Այդ հարցի վերաբերյալ ժողովը միաձայն վճռեց ձեռք առնել հետևյալ միջոցները թալանների և սպանությունների դեմ կռվելու. օժծ, կայքի և գույքի գրավում հօգուտ թալանվածի և հասարակության, ծանր տուգանքներ, աքսոր և այլ միջոցներ, բացի մահապատժից: Մարդասպաններին ենթարկել ամենայն տեսակի անձնական պատիժների, բացի մահապատժից, և աշխատել դաստիարակչական միջոցներով ուղղել: Այս բոլոր միջոցները պետք է գործադրեն չարիքների դեմ գյուղական և շրջանային կոմիտեները:

Նախագահը առաջարկում է հարևան ազգերի հետ հաշտ ապրելու հարցը, որի վերաբերյալ ժողովը միաձայն վճռեց, հայերի ներկայացուցիչները պետք է գնան թուրքերի մեջ քարոզելու և բարեկամական կապեր հաստատելու: Նախագահը առաջարկեց սովի հարցը, որի վերաբերյալ ժողովը միաձայն վճռեց, ունևոր դասակարգին մոբիլիզացիայի ենթարկել չունևոր դասակարգին օգնելու մինչև նոր հունձ: Պարենավորման գործը լիովին ստանձնվում է գյուղական կոմիտեներին, որոնք լիազորվում են իրենց կողմից նշանակել պարենավորման կոմիտեներ լայն իրավունքներով, մինչև իսկ ռևիզիայի ենթարկելու իրավունքով: Պարենավորման գործում կարելույն չափ պետք է ընդառաջ գնալ կարտային սիստեմայի մտցնելուն:

Նախագահը առաջարկում է Ալազանի կամուրջի հարցը, որի վերաբերյալ ժողովը միաձայն վճռեց. Ալազան գետի վրայով պետք է ձգել կամուրջ: Այդ գործը ստանձնվում է Գյոգ Բուլաղի, Դաշբուլաղի և Սաբաթլուի բնակիչներին: Նուխվա և Արեշի մնացած բոլոր հայ գյուղերը պարտավոր են նյութապես աջակցել այդ գործին: Կամուրջը շինելու համար ընտրվում է հանձնաժողով հետևյալ անձերից. ա. Հովսեփ Սոֆիանից և Միրզա Քոչարյանից:



Նախագահը առաջարկում է օրակարգի վերջին հարցը. գաղթած հայ գյուղերի բնակիչներին տեղավորելը: Ժողովը քննելով այդ հարցը, միաձայն վճռեց. նախ ի նկատի առնել գաղթականների իրենց որտեղ բնակվելու ցանկությունը և ապա ի նկատի առնել տեղագրական և ռազմագիտական հանգամանքներն ու պայմանները, որպեսզի կարելի լինի ապահովել գլխավոր, ամենակարևոր նշանակություն ունեցող հայոց ճանապարհները: Սրանով վերջանում են օրակարգի բոլոր հարցերը և ժողովը փակվում է:

Ժողովի նախագահ՝ **Գ.Տեր-Գրիգորյան**  
Փոխնախագահներ՝ **Ա. Էսիբյան**  
**Հայկ Սաֆարյան**  
Քարտուղարներ՝ **Արշակ Մկրտչյան**  
**Ք.Տեր-Արրահամյան**

ՀՀ ՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 24, թթ. 32-34: Բնագիր: Ձեռագիր:

**N 16**

**ԳՈՐԹԱՆ ԳԱՎԱՌԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԹԻՖԼԻՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ` ԶԱՔԱԹԱԼԱՅԻ ՅԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ՄԻՋՈՑՆԵՐ ԶԵՈՔ ԱՈՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 349**

**7 ապրիլի 1918 թ.  
Թիֆլիս**

Ի նկատի առնելով Ձաքաթալայում մոտ 200 ընտանիք կազմող մեր հայրենակիցների ներկա օրհասական դրությունը, նաև նրանց ֆիզիկական գոյությանը սպառնացող աղետավոր հետևանքը՝ ծրագրված շրջանի մահմեդականության կողմից, ապացույց են, որ 3-րդ ամիսն է այդտեղի հայերին չի թույլատրվում իսպառ գործով կամ այլ նպատակով դուրս գալու նույնիսկ քաղաքից դուրս և որպես պատանդ պահվում է այդտեղ ամենօրյա սպառնալիքների և ահաբեկումների տակ, որի ընթացքում և եղել են կանանց պատվին ձեռնամուխ լինելու դեպքեր, նաև այն, որ հայերի բոլոր ապրանքներն ու գույքերը կնքված են ու պարբերաբար վաճառքի են հանվում, իսկ գոյացած դրամը հատկացնում տեղումս մահմեդականներից կազմված զորքերի պետքերին. ուստի Գողթան գավառի ապահովության կոմիտեն այսու աղերսագին դիմում է Հայոց Ազգային խորհրդին շուտափույթ միջնորդել ու հարկն է՝ արտակարգ միջոցներ ձեռք առնելու այդ 200 չափ ընտանիքների կյանքն ու գույքն փրկելու, քանի դեռ ուշ չէ:

Նախագահ՝ **բժ. Ստ. Զարգարյան**  
Քարտուղար՝ **Կ. Տեր-Նիկողոսյան**

Մակագր. «Հայտնել այդ մասին նախարարներին (Գեգեչկորի, Կարճիկյան, Ռամիշվիլի) և խնդրել անմիջական կարգադրություններ»: Տ[իգրան] Բեզ[գադյան]

ՀՀ ՊԱ ֆ. 276, ց.1, գ.4, թ.41: Բնագիր: Ձեռագիր:

N 17

**ԲԱԶՎԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՅԵՆՏՐԱԿԱՆ ՍԵՅՄԻՆ՝ ՄԱՐՏՅԱՆ ԻՐԱՂԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ԲԱԶՎԻ ԴԵՄԿՐԱՏԻԱՆ՝ ՍԵՅՄԻՆ**

Բազվից հետևյալ անթել հեռագիրն է ուղարկված:

«Թիֆլիս, Սեյմի նախագահ Չխեիծեից:

Թիֆլիսի Խորհրդին: Ամենքին: Ամենքին:

Բազու քաղաքում վայրի դիվիզիան, ղոչիական հրոսակախմբերը և այլ հակահեղափոխական տարրեր մուսուլմաններից և ռուս հակահեղափոխական սպաներից հրապարակ եկան Խորհրդային իշխանության դեմ:

Խորհրդի զինված ուժերի և Բազվում գտնված զորամասերի միացյալ ջանքերով այդ հակահեղափոխական ըմբոստացումը ջախջախվեց: Շարժումը դուրս չեկավ քաղաքացիական կռվի շրջանակից: Նավթահանքերում խաղաղությունը չխանգարվեց: Այժմ քաղաքում էլ հանգիստ է: Մուսուլման ազգաբնակչությունը, բացի վերին խավից, համախմբվում է ու կազմակերպվում Խորհրդի և մուսուլման սոցիալիստական կուսակցությունների հատուկ կազմված բյուրոյի շուրջ: Մոտակա գյուղերում հանգիստ է: Խաղաղությանը սպառնում էր միմիայն Դաղստանյան գունդը, որ բանակ է դրել Խուրդալանում, ամբողջ մուսուլման ազգաբնակչության ցանկության հակառակ՝ չի ուզում հետ գնալ և այսօր պատերազմական գործողություններ է սկսել: Մեր տեղեկությունների համաձայն, Սեյմը ուզում է Բազվի Խորհրդի թշնամիների կողմն անցնել: Բազվի բանվորների անունից, առանց ազգի և կուսակցության խտրության, նախագուշացնում ենք ձեզ, որ այդ հանցանքը չգործեք»:

Խորհրդի նախագահ՝ **ՋԱՓԱՐԻՉԵ**  
Բոլշևիկների Բազվի կոմիտեի նախագահ՝ **ՆԱՆԵՅՇՎԻԼԻ**  
Ձախակողմյան էսեռների նախագահ՝ **ՍՈՒՄԱՐՑԵԿ**  
Էսեռների նախագահ՝ **ՍԱՂԱԿՅԱՆ**  
Դաշնակցականների նախագահ՝ **ԳՅՈՒԼԽԱՆՂԱՆՅԱՆ»**

- Մենշևիկները չստորագրեցին այդ հեռագիրը, այլ հետևյալ հեռագիրն ուղարկեցին իրենց կողմից.

«Թիֆլիս: Սեյմի նախագահ Չխեիծեից

Բազվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը (մենշևիկյան), անկախ այն վերաբերմունքից, որ ինքն ունի դեպի Բազվի պատգամավորական Խորհրդի դեկավարիչ մեծամասնության տակտիկան, իր պարտքն է համարել և համարում է գորավիզ լինել Խորհրդին այն կռվի մեջ, որ նա վարում է հակահեղափոխության դեմ»:

Արև, 11 ապրիլի 1918 թ.

N 18

**ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԱԶՎԻ ՄԱՍՆԱԾՅՈՒԴԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏՅԱՆ  
ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՍՈՒՍՈՒԼՄԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՑՈՒՅՑ ՏՐՎԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

... Այդպիսի պայմաններ ստեղծվելուց հետո Հայոց Ազգային խորհուրդը ստիպված էր բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնել քաղաքի հայկական մասում կարգը պահպանելու և բռնկած հրդեհը կղզիացնելու համար: Միևնույն ժամանակ Հայոց Ազգային խորհուրդը վճռեց նորից փորձ անել արյունահեղ կռիվը դադարեցնելու: Այդ նպատակով կիրակի երեկոյան Ազգային խորհուրդը երկու պատգամավորություն ընտրեց, որոնցից մեկը պիտի բանակցություններ վարեր Ջինվորական-հեղափոխական կոմիտեի, իսկ մյուսը՝ մուսուլման կազմակերպությունների հետ:

Հայոց պատգամավորությունը պայմանավորվեց տեսակցել մուսուլմանականի հետ «Մետրոպոլ» հյուրանոցում, նույն երեկո ժամի տասին: Բայց որովհետև այդ հյուրանոցը ենթակա էր անընդհատ ներհակ հրացանածգության, պատգամավորներին չաջողեց ժամադրավայրը հասնել: Եվ ապարոյուն կերպով մինչև գիշերվա ժամի երեքը «Եվրոպա» հյուրանոցում սպասելուց հետո, հայ պատգամավորությունը ստիպված եղավ վերադառնալ առանց մուսուլման պատգամավորների հետ հանդիպելու:

Հայոց Ազգային խորհուրդը հայտնել էր Ջինվորական-հեղափոխական կոմիտեին, որ ինքը արյունհեղությանը շուտափույթ վերջ տալու նպատակով ցանկանում է տեսակցել մուսուլմանների ներկայացուցիչների հետ, և շատ խնդրել էր, որ նա էլ իր կողմից ամեն միջոց ձեռք առներ նույն նպատակին հասնելու համար:

Երկուշաբթի առավոտյան դեմ պատերազմական գործողությունները չափազանց սաստկացան: Խորհրդի գորախմբերը սկսեցին հարձակում գործել և մեկ առ մեկ գրավել մուսուլմանների դիրքերը: Եվ արդեն կեսօրի մոտերքը Հեղափոխական պաշտպանության կոմիտեն վերջնապահանջ ուղարկեց մուսուլման կազմակերպություններին, որոնք ցերեկվա ժամի երեքի մոտերքը համաձայնություն հայտնեցին ընդունելու Կոմիտեի առաջարկած բոլոր պայմանները: Երբ մուսուլման պատգամավորությունը զնաց Հեղափոխական պաշտպանության կոմիտեն հաշտության պայմանները ստորագրելու համար, Հայոց Ազգային խորհուրդը հարկավոր համարեց այնտեղ ուղարկել նաև իր ներկայացուցիչներին, որպեսզի ամեն կերպ աջակցեին երկու կողմերին ազգաբնակչությունը խաղաղացնելու գործի մեջ:

Դժբախտաբար, չնայած, որ հաշտությունը կնքված էր, այնուամենայնիվ պատերազմական գործողությունները շարունակվում էին նաև երկուշաբթի լույս երեքշաբթի գիշերը, ամբողջ երեքշաբթի օրը և լույս չորեքշաբթի գիշերը, ակներևաբար շնորհիվ այն բանի, որ հնարավորություն չկար անհրաժեշտ արագությամբ իմաց տալու ամբողջ ազգաբնակչությանը և համոզել բոլորին, որ հաշտությունը կնքված է:

Այդ պատճառով Հեղափոխական պաշտպանության կոմիտեն մի քանի հաշտարար պատգամավորություններ կազմակերպեց, ի միջի այլոց նաև Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչների մասնակցությամբ, որպեսզի ժողովրդի լայն խավերին տեղեկացնեին, որ հաշտությունը արդեն կնքված է:

Այդ պատգամավորություններից մեկին մասնակցում էր նաև Հայոց Ազգային խորհրդի անդամ բժիշկ Լևոն Աթաբեկյանը: Դավաճան զնդակների զոհ դարձան այդ խառն պատգամավորության մի քանի անդամներ և նրանց թվում բժիշկ Լ. Աթաբեկյանը, Դենեժկինը և մուսուլմանների մեջ հայտնի մի սեյիդ:

Չնայելով իր լավագույն անդամներից մեկի ծանր կորուստին, Հայոց Ազգային խորհուրդը վճռեց մասնակցել նաև հետագա հաշտարար պատգամավորությանը նավաստիների հետ միասին: Այդ պատգամավորությանը հաջողեց հասնել մուսուլմանների խրամատներին: Պատգամավորությունը ամեն տեղ հայտնում էր, որ հաշտությունը արդեն կնքված է, և հորդորում էր դադարեցնել հրացանածգությունը:

Ի նկատի ունենալով դրության ծայրահեղ լրջությունը, Հայոց Ազգային խորհուրդը վճռեց չբավականանալ դրանով և արտակարգ միջոցներ ձեռք առնել հրացանածգությունը դադարեցնելու և թալանչիների ու ավարառուների դեմ մաքառելու համար: Այդ նպատակով նա իր գորամասերին պատվիրեց շղթա կազմել քաղաքի հայկական մասի շուրջը Պարապետի գծովը, որպեսզի նրանք ստիպեին հրացանածգությունը

դադարեցնել և թալանչիներին ու ավարառուներին զրկելից քաղաքի հայկական մասից թուրքականը անցնելու հնարավորությունից: Շնորհիվ այդ միջոցների, որ Ազգային խորհուրդը Հեղափոխական պաշտպանության կոմիտեի հետ համաձայնության գալով ձեռք առավ, չորեքշաբթի օրը ցերեկվա ժամի մեկին հրացանածությունը վերջնականապես դադարեց քաղաքում, եթե հաշվելու չլինենք այստեղ-այնտեղ հատ-հատ լսվող պայթյունները: Հայոց Ազգային խորհրդին, հերոսական ջանքեր գործ դնելուց հետո, հաջողեց նաև վերջ տալ ավարառության ու թալաններին:

Արյունահեղ դեպքերի սկզբից ի վեր Հայոց Ազգային խորհուրդը վճռական միջոցներ ձեռք առավ հայկական մասում ապրող կամ այդ արյունոտ օրերին այդ մասը ընկած մուսուլմանների կյանքի և գույքի պաշտպանության համար: Որպեսզի այդ մուսուլմանները զինված ամբոխի զոհ չդառնային, Հայոց Ազգային խորհուրդը, Հ. Յ. Դաշնակցության գործոն աջակցությամբ, նրանց իր հովանավորության ու պաշտպանության ներքո առավ: Այդ նպատակով նա մուսուլմանների հատուկ խնամատար-կոմիսար նշանակեց քաղաքի հայկական մասում և վճռեց այդ բոլոր մուսուլմաններին հավաքել որոշյալ կետերում, որպեսզի հեշտ լինել նրանց պաշտպանել հնարավոր բռնություններից:

Մուսուլմաններին Ազգային խորհուրդը գետեղեց հետևյալ վայրերում. 1) Մայիլյանների թատրոնում 3500 հոգի, որոնցից 700-ը պարսկահպատակ, 2) «Ռեկորդ» թատրոնում 2690 հոգի, 3) «Ռամզեյ» թատրոնում 579 հոգի, 4) Եֆիմովի ցիրկում 800 հոգի, 5) Վոկզալնայա և Տելեֆոննայա փողոցների անկյունի տանը 58 հոգի, 6) Բուդադյանի անվան դպրոցում 218 հոգի, 7) Սիրոնովի բաղնիքում 306 հոգի, 8) Մոսկովյան բաղնիքում 263 հոգի, 9) ութերորդ միլիցիական վարչատանը 117 հոգի, 10) յոթերորդ միլիցիական վարչատանը 72 հոգի, 11) Մալայա Մորսկայա փողոցի N 15 տանը 95 հոգի, 12) երրորդ գիմնազիայում 201 հոգի, 13) Հայոց Կուլտուրական միության տանը 18 հոգի, 14) քաղաքային սալանոցում 2530 հոգի, 15) իններորդ միլիցիական վարչատանը 200 հոգի, 16) Հայկավանում 79 հոգի: Ընդամենը 11726 հոգի: Բացի այդ վայրերից գանազան հայերի տներում ապաստան էին գտել մոտ 1500 մուսուլմաններ: Այնպես որ ընդհանուր առմամբ Հայոց Ազգային խորհրդի և ՀՀ Դաշնակցության հովանավորության ու պաշտպանության ներքո գտնվում էին մոտ 13000 մուսուլմաններ: Այդ բոլոր անձինք, հնարավորության սահմաններում, սնունդ և բժշկական օգնություն էին ստանում: Նրանցից մեծ մասին փրկել էին հայ լավագույն ռազմիկները և կուսակցական գործիչները, իրենց կյանքը զոհելով:

Հենց որ հանգստությունը վերականգնվեց, Հայոց Ազգային խորհուրդը իր խնամատարության ներքո գտնվող բոլոր մուսուլմաններին պահապանների ուղեկցությամբ փոխադրեց քաղաքի մուսուլմանական մասը:

Վերոհիշյալ վայրերում պահվող մուսուլմանների թվի մասին արձանագրություններ կազմվեցին, որոնք ստորագրեցին Բազվի պարսից հյուպատոսի քարտուղարը և տեղական մուսուլմանների ներկայացուցիչները: Այդ արձանագրությունները պահվում են Հայոց Ազգային խորհրդի դիվանատանը:

**Հայոց Ազգային խորհրդի Բազվի մասնաճյուղ**  
Արև, 11 ապրիլի 1918 թ.

**N 19**

**ТЕЛЕГРАММА ЗАКАТАЛЬСКОГО ЖЕНСКОГО СОЮЗА АРМЯНСКОМУ НАЦИОНАЛЬНОМУ СОВЕТУ О ТЯЖЕЛЕЙШЕМ ПОЛОЖЕНИИ АРМЯН ЗАКАТАЛЬСКОГО ОКРУГА И НЕОБХОДИМОСТИ ИХ СРОЧНОЙ ЭВАКУАЦИИ**

Армянскому Национальному Совету телеграмма из Закаталы: “Мы, Закаतालский Армянский женский союз, под влиянием переживаемого нами ужасающего и плачевного положения, обращаемся к вам за спасением от угрожающей нам опасности быть подвергнутыми поголовной резне со стороны мусульман. Умоляем вас оказать нам помощь, чтобы иметь возможность переселиться из Закаतालского округа, ибо мы терроризированы, и все дороги для армян закрыты; производится систематический захват имущества армян. Отказ в неотлагательной помощи армянскому народу в переселении из Закаतालского округа равен подписанию смертного приговора тысячам душ армян”.

Знамя труда, 13 апреля 1918 г.

N 20

### ՀՈՂՎԱԾ «ՂԵՊՔԵՐԸ ՇԱՍԱԽԻՈՒՄ»

Բեզ ու աղալարները հանգիստ չեն ոչ մի տեղ. նրանք գործում են ամենուրեք: Մասսան լարված է և հուզված: Անմասն չմնաց այս կողմից նաև Շամախին, ուր մոտիկ հարևանության մեջ են ապրում հայերը, թուրքերն ու ռուսները: Տաճկական-բեզական օրհենտացիան գլուխ բարձրացրած, տաճիկ սպա ագենտների հետ միասին շրջում ու կազմակերպում էին դավադիր ծրագիրներ, հակահեղափոխական շարժումներ: Սակայն ակտիվ կերպով հրապարակ գալու համար հարկավոր էին առիթներ և գտնվեցին:

Սկսվեցին երկաթուղային գծի վրա սիստեմատիկ հարձակումներ ռազմաճակատներից վերադարձող զինվորների վրա, հաղորդակցությունն անկանոն դարձավ. ավազակային խմբերով հարձակումներ արին գյուղերի վրա, թալանեցին ու քշեցին գյուղերից տավար ու ոչխար: Այս բոլորի հետ միասին սկսվեց և սովորական «արևելյան» քաղաքականությունը: Թուրք բեզերն ամենուրեք և ամեն օր ուղարկում էին հայերի մոտ պատգամավորություններ, հաշտարար կոմիսիաներ եղբայրական սիրո և համերաշխության քարոզներով և հաճախ գրգռում սրանց միասին դուրս գալ Կովկասում տեղ գտած օտարազգի՝ ռուս գաղթականության դեմ, իսկ վերջիններին էլ գաղտնի դիմումներ էին անում և լարում նրանց հայերի դեմ:

Սակայն այս բոլորը հակառակ արդյունքը տվին. հայերն ու ռուսները ընդհակառակը ավելի սերտ կապերով կապվեցին իրար:

Շամախին բավական օրեր լարված հուզմունքի օրեր ապրեց: Մարտի 13-ին տեղական մուսուլմանները հանկարծակի զինաթափ արին զարմիզոնի հայ զինվորներին, խլեցին դրա հետ միասին 140000 պատրոն, ճանապարհին էլ Մադրասա հայկական գյուղում փորձ արին զինաթափ անելու 600 զինվորի, սակայն անհաջողության հանդիպեցին և թուրքերը դժգոհ իրենց անհաջողությունից իրենց թույնը թափեցին Շամախու խաղաղ ազգաբնակչության վրա, առաջ բերելով պագրոն և հրդեհներ. այրեցին երեք տուն:

Ամսույս 14-ին ամբողջ օրը կատաղի կռիվը շարունակվում էր երկու կողմերի մեջ: Պարտված թուրքերը հաշտության առաջարկ արին. սակայն մադրասեցիներն ու մալականները, որ այդ ժամանակ կազմակերպված էին և ունեին իրենց զինվորական շտաբը Ջաբանի գյուղում, չընդունեցին հաշտության պայմանները մինչև որ չհանձնվեն թալան ու հարձակում կազմակերպող ղեկավարները և զինաթափ չլինեն ավազակային բանդաները. սրանց հետ միասին պիտի հանձնվեին և այն տաճկական չորս սպաները, որոնք գործում էին հիշյալ հարձակման ժամանակ թուրքերի հետ միասին:

Այս պայմանների հետ չհամաձայնեցին թուրքերը և մադրասեցիներն ու ջաբանիցիները մերժում ստանալով հակառակ կողմից՝ մարտի 17-ին կրակ բացին Շամախի քաղաքի վրա:

Թուրքերի կողմից կռվին մասնակցում էին մոտ 4000 մարդ, հայերի և ռուսների կողմից ընդամենը մի հազար:

Տեսնելով խնդիրը լուրջ կերպարանք է առնում, թուրքերը նորից սպիտակ դրոշակ բարձրացրին Շամախում: Կրկնվում է նորից նույն պահանջը՝ զինաթափ լինել, որի հետ այս անգամ համաձայնեցին թուրքերը և հանձնեցին 200-ի չափ բերդաններ և դրոբովիկներ, մինչդեռ նրանց զինված կռվողների թիվը հաշվում էին 4000 հոգի, գլխավորներն անշուշտ փախան կռվի վայրից:

Նորից հուզված դրություն. շամախեցիների պատիվը փրկելու համար զանազան կողմերից լուրեր հասան, թե՛ Ղուբայի, Գյոքչայի և Գանձակի շրջաններից գալիս են օգնության թուրք զինված խմբեր:

Եվ այս զինված խմբերի առաջին զոհերը եղան Սաղյան և Ջարխո գյուղերը, այնուհետև իրենց ուժերը ուղղեցին դեպի Մադրասա գյուղը, ուր հավաքված էին շրջակա Գելախանի, Դարաքերն, Քերքեջ, Ալպաուտ, Դուերիշեն, Մեյսարի և Ջարխոյի գյուղացիությունը: Սկսվեց կատաղի կռիվ մարտի 23-ից. թուրքերն իրենց հետ բերել էին և արտիլերիա:

Հիշատակության արժանի է մի կարևոր հանգամանք, որ նախքան կռվի սկսելը Մադրասում գտնված բոլոր հայ կանայք ու երեխաներ հեռացվեցին գյուղից և հյուրընկալեցին Չուխուրիդա, Շաբանի, Աստրախանկա և Խելմելի ռուսական գյուղերում: Շամախուց երբ հեռացան հայերը, թուրքերը քաղաքում այրեցին ու թալանի տվին բոլոր քրիստոնյաների տները:

Ազգամիջյան կռիվը ծայր տվեց ամբողջ Ղուբայի և Գյոքչայի գավառներում: Կռիվը շարունակվում է. ըստ երևույթին թնդամոթային օգնություն հասցվել է Գանձակի շրջանից:

Արյուն է հոսում երկու կողմերում էլ, իսկ ո՞վ է օգտվելու այս անմիտ արյունհեղությունից, անշուշտ նորից բեկությունն ու աղալարությունը:

Ճանապարհների հաղորդակցությունը կտրված է, չեն երթևեկում ոչ երկաթուղային գծով և ոչ էլ խճուղիներով: Անհրաժեշտ է միջամտություն, որպեսզի վերջ դրվի այս եղբայրասպան կռվին:

Անշուշտ այս համատարած աղետի ժամանակ դաշտային աշխատանքների մասին խոսք անգամ չի կարող լինել. հայ, ռուս և թուրք գյուղերը կանգնած են սովի ուրվականի առաջ և արդեն իսկ նրանց գլխին իշխում է ինքը սովը իր բովանդակ ճնշիչ ճիրաններով:

Կազմակերպված միջամտությունը հնար կունենա կանխելու այս անմիտ ազգամիջյան կռվի սոսկալի հետևանքները, մի կռիվ, որ արդյունք է թուրք արկածախնդիր բեկերի և աղալարների և գուցե այդ միջամտությունը կբանա վարագույրը և հրապարակ կհանի իսկական մեղսակիցներին, որոնց դեմ պիտի ուղղվի իրոք իսկական կռիվը:

**Յն. Թ.**

Արև, 13 ապրիլի 1918 թ.

**N 21**

### **СТАТЬЯ “УЛЬТИМАТУМ ВЫПОЛНЯЕТСЯ” (О ПАДЕНИИ СЕЛА МАДРАСА ШЕМАХИНСКОГО УЕЗДА)**

Из Шемахи получено потрясающее известие. После двухнедельной осады зиахановскими полчищами пало крупнейшее селение уезда Матраса. Пало при трагических условиях. В течение двух недель матрасцы просили Баку о присылке патронов, запас которых был на исходе. Патроны были посланы, но тогда, когда от Матрасы и ближайших селений не осталось и следа.

Матрасинской трагедией решается участь и того 50-тысячного крестьянского населения Шемахинского и Геокчайского уездов, которые придерживались так называемой русской ориентации. Это население постигнет участь Мугани. Оно будет разграблено и вырезано.

Итак, ультиматум, подписанный г.г. топчибашевыми, выполняется по пунктам. Дикая дивизия выведена из Баку - она орудует в Шемахе. Дорога на Петровск и Елисаветполь открыта - она перевозит Дагестанский полк и зиатхановские банды для подавления Бакинского Совета.

Нужно было быть наивнейшим из наивных, чтобы от г.г. топчибашевых ждать иного отношения к своему слову. Они подписали все требования, предъявленные Советом. Подписали без всяких разговоров. Было ясно, что они желают выиграть время. Так они поступают тогда, когда чувствуют себя побежденными. Они склоняют свою голову для того, чтобы потом выше поднять ее. Этого, к сожалению, мы не хотим понять. И в результате топчибашевы и зиатхановы целы и невредимы, а трудовое крестьянство - мусульманское, армянское, русское гибнет без конца.

Нужно, наконец, всему этому позорному состоянию положить конец. Нужно приняться за беспощадное искоренение зла в преступных буржуазно-помещичьих гнездах. Довольно, сколько пролито невинной крови трудового народа.

Бакинский рабочий, газета, 14 апреля 1918 г.  
N 22

### **ПИСЬМО АГДАШСКОГО МУСУЛЬМАНСКОГО НАЦИОНАЛЬНОГО ИСПОЛНИТЕЛЬНОГО КОМИТЕТА КАЯБАШСКОМУ ГРАЖДАНСКОМУ КОМИТЕТУ О СУДЬБЕ НАМЕДАБАДСКИХ АРМЯН, О ПРЕДЛОЖЕНИИ СОВМЕСТНО ОБСУДИТЬ ЖИЗНЕННО ВАЖНЫЕ ВОПРОСЫ**

**N 766**

**17 апреля 1918 г.  
Агдаш**

Намедабадский комиссар представил в Агдашский Мусульманский Национальный комитет письмо на его имя от солдат-намедабадцев Арутюна Арутюнянца, Абкара Амирянца и др., которые просят комиссара сообщить им, где находятся намедабадские армяне и будут ли они отпущены.

Мусульманский Национальный комитет уведомляет армянский комитет: во 1) о том, что намедабадское несчастье совершалось кучкой преступных лиц, увлекшей за собой толпу разнузданных людей, непризнающих никакой власти и действовавшие вопреки категорическим воспрещениям и запретам Национального комитета во 2) как только дошла до Комитета весть об ужасном намедабадском событии, Национальный комитет принял все от него зависящие меры к сохранению жизни и чести разбежавшихся по разным селам армян-намедабадцев и, по собранным сведениям, намедабадские армяне нашли приют в нескольких селениях и, благодаря воздействию местных почетных лиц, а также мерами Комитета, жизнь их обезопасена; в 3) дальнейшее пребывание их в мусульманских селениях и доставление их в армянские села будет зависеть как от дальнейшего поведения армянских банд, совершивших за последнее время немало и не менее, чем мусульманские преступные элементы, ужасных деяний в отношении жизни и имущества мусульман, как равно и от того, насколько Национальный комитет сумеет и успеет внушить своим темным элементам недопустимость дальнейших осложнений и необходимость как по шариату, так и по закону сохранения жизни приютившихся у мусульман армян и возвращения их к мирному сожительству своими вековыми соседями.

В этих видах Агдашский Национальный комитет двукратно посылал Каябашскому комитету письменные приглашения - прислать своих представителей в указанное

место для совместного обсуждения жизненного для обеих соседей вопроса о немедленном прекращении дальнейших осложнений межнациональной розни, но, к сожалению, на приглашение наше никакого ответа от вас не последовало. Поэтому и оставаясь на точке зрения безусловной необходимости решительно и быстро положить конец диким проявлениям межнациональной розни, Агдашский Национальный комитет приглашает ваших представителей в сел. Агджиазы 23-го числа сего апреля месяца и присовокупляет, что выходки, так называемых армянских "солдат" могут вызвать неудержимый мусульманский народный гнев, готовый разразиться страшной бурей над армянским населением.

Председатель-**М.Эфендизаде**

АИ РА, ф.221, оп.1, д.24, лл.42-43 об. Автограф.

#### N 23

### ПИСЬМО НАМЕДАБАДСКОГО КОМИССАРА СОЛДАТАМ-НАМЕДАБАДЦАМ - АРМЯНАМ О СУДЬБЕ ИХ ПРОПАВШИХ СООТЕЧЕСТВЕННИКОВ

[апрель] 1918 г.  
[Агдаш]

Солдатам-наметабадцам Арутюну Арут[юн] яну, Апкару Амиряну и другим.

На письмо ваше о том, где находятся ваши армяне, сообщая вам, что они разбежались по разным селам и по нашим сведениям сельчане-мусульмане приняли их в своих домах и кормят. Когда они будут отпущены, тогда я вам напишу. Я и почетные мусульмане по приказанию Агдашского Национального совета стараемся, чтобы ваши армяне были живы. Когда найдем всех, тогда напишу вам. Мы тоже не хотим кровопролития. Но если придется, то мы думаем, что скорее погибнете вы.

От Наметабадского комиссара **Расула Мамедоглы.**

АИ РА, ф.221, оп.1, д.24, л.48. Автограф.

#### N 24

ՄԵԾ ԱՅՈՂՈՒԹԼՈՒ ԳՅՈՒՂԻ ԳՈՐԾԱՂԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ ՆՈՒՒՆՈՒ ԵՎ ԱՐԵՇԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ԱՂԴԱՇԻ ՍՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18 ապրիլի 1918 թ.  
Մեծ Սյոզուբլու

Սորանով առաջի առնելով կենտրոնական կոմիտեիդ Աղդաշի Մուսուլմանական Ազգային կոմիտեի սույն թվի 8 ապրիլի N 711 գրությունը, որով ցանկություն են



հայտնում եղբայրական հաշտություն կայացնել երկու հարևան ազգությունների մեջ, խնդրում ենք որքան հնարավոր է աշխատել գյուղիդ երիտասարդներին ևս հրավիրել այդ օգտավետ գործին. և շուտափույթ միջոցներ ձեռք առնել հիշյալ ազգությունների մեջ վերացնել եղբայրասպան և կործանարար թշնամանքի, ևս հաշտության տեղը նշանակել ոչ թե Աղդժիազի, այլ Թարքյաշ թուրք գյուղը (Նուխ. գավ.), որոնք մինչև այժմ դեռևս մեզ հետ մտերիմ հարևանության մեջ են ապրում: Որովհետև նամակաբերս վաղը ժամը 8-ին պիտի գնա, հետևաբար խնդրում ենք այսօր ևեթ Աղդաշի մուսուլմանական կոմիտեի գրության ձեր պատասխանը մեզ հասցնեք այստեղից Աղդաշ ուղարկելու:

Նախագահ Մեծ Սյոգուբլուի գործադիր կոմիտեի՝ **Եղիշե քահանայ**  
Քարտուղար

ՀՀ ՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 24, ք. 45 շրջ.: Բնագիր: Չեռագիր:

N 25

**РАДИОТЕЛЕГРАММА БАКИНСКОГО КОМИТЕТА ПАРТИИ “ДАШНАКЦУТЮН”  
ПРЕДСЕДАТЕЛЮ ЗАКАВКАЗСКОГО СЕЙМА И БЮРО ПАРТИИ ДАШНАКЦУТЮН  
В ТИФЛИСЕ О НЕМЕДЛЕННОМ ОТЗЫВЕ С БАКИНСКОГО НАПРАВЛЕНИЯ МУ-  
СУЛЬМАНСКИХ ВОИНСКИХ ЧАСТЕЙ, ПОДЧИНЕННЫХ СЕЙМУ, УНИЧТОЖИВ-  
ШИХ АРМЯНСКИЕ И РУССКИЕ СЕЛА ШЕМАХИНСКОГО УЕЗДА**

По полученным здесь сведениям, в числе надвигающихся на Баку вооруженных сил находятся и некоторые, подчиненные Сейму воинские части, а также бронированный поезд. Считая недопустимым участие Сейма в вооруженной борьбе, начатой против Бакинского Совета, грозящей превратиться в межнациональную войну, Бакинский комитет Армянской революционной партии “Дашнакцютюн” требует, чтобы Вы приняли решительные меры, чтобы Закавказское правительство отозвало подчиненные ему войска и впредь отказалось от посылки на Баку каких-либо воинских сил.

Считаем нужным прибавить, что вооруженные мусульманские части уничтожили в Шемахинском уезде все армянские и русские села и что волна 30-ти тысяч беженцев движется по направлению к Баку.

Председатель Бак. комитета партии Дашнакцютюн-**Гюльханданян**.  
Бакинский рабочий, 18 апреля 1918 г.

N 26

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԽԱՉՄԱԶԻ ԴԵՊՔԵՐԸ» ԸՍՏ ԱՎԱՆԱՏԵՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԻ**

Խմբագրությունը մտան խաչմազից փախած երեք ճանապարհորդներ, որ Բազու են հասել ամսիս 6-ին, երեկոյան դեմ և պատմեցին հետևյալը:

Մարտի 20-ին մեզ տեղեկություն տվին, որ խաչմազի շրջանի և ընդհանրապես Ղուբա գավառի թուրք գյուղացիները զինված հավաքվում են խաչմազ կայարանը:

\* Ստորագրությունը անընթեռնելի է (ժանոթ. կազմ.):

մենք այդ բանն անձամբ ստուգեցինք: Տների տանիքներից նկատելի էր, թե ինչպես զինված խմբերը զանազան տեղերից ձգվում են դեպի կայարան:

Նույն օրը կեսօրվա մոտերքը խաչմազ կայարանի թուրք կոմիսարը գալիս է գյուղը և հայտնում հայերին, որ գյուղից չփախչեն և չզնան մոտակա ռուս գյուղը, որովհետև միևնույն գյուղը շրջապատված է, ճանապարհներն էլ կտրված:

Ժամը 4-ին եկավ մեզ մոտ շիխլարցի Չասան բեկը, ասում է պատմողը, նույնպես մեզ հայտնեց մեր շրջապատված լինելը և խնդրեց, որ նույնիսկ տներից դուրս չգանք, երաշխավորելով, որ հայերին ձեռք չեն տա: Այս գյուղում ապրող թուրքերից մեզ վրա պահակներ նշանակեց, որպեսզի դրսից հարձակումներ չլինեն: Այդ բոլորից հետո հիշյալ Չասան բեկն անցավ գյուղի թուրքաց մասը: Հենց այդ ժամանակ նրանց մատում լավեց հրացանի մի ձայն, որն առիթ տվավ թուրք պահակներին թողնելու մեզ և հեռանալու: Պահակների հեռանալուց հետո բոլոր մեր ընտանիքներով հավաքվեցինք Սարգիս Առաքելյանի տունը:

Քիչ անց ամեն կողմից գյուղն են խուժում զինված թուրքերի բազմաթիվ խմբեր, ղեկավարությամբ դուբեցի Իդայաթ Չաջի Շուքուր օղլու, գերությունից փախած տաճկական մի սպայի, շիխլարցի Մահմեդ Սուլթանբեկի, Իբրահիմ Խալիլի և այլն: Հիշյալները անմիջապես մտան Առաքելյանի տունը և հայտնեցին, որ իրենց գլխավոր նպատակն է հայերին զինաթափ անել, պատճառաբանելով, որ Բազվում կռիվ է և իրենց զենք է պետք, որպեսզի Բազվի թուրքերին օգնության հասնեն: Մենք ստիպված եղանք մեզ մոտ գտնված հին ձկի մի քանի հրացաններ հանձնել նրանց, որոնք, սակայն, մեզ վերադարձրին, ասելով, որ իրենք կարծել են, թե հայերի մոտ կան նոր սիստեմի լավ զենքեր և նույնիսկ զնդացիներ: Վերադարձնելով մեզ մեր «փիստոնի» հրացանները, նրանք միևնույն ժամանակ ուժով մեզնից խլում են պատահած բոլոր մոսիս հրացանները:

Մեզ զինաթափ անելուց հետո իրիկնադեմին, Ժ. 7-ին հեռանում են, ղմիլցիներից պահակներ թողնելով հայերի մոտ: Դրա հետ միասին թալանում են գյուղի հայկական մասի վերին թաղը և եկեղեցին:

Երեկոյան Ժ. 9-ին Շիխլարսկի Մուրսալ բեկն ուղարկում է մեզ մոտ նարաջանցի Նուսրաթին՝ հայտնելու, որ հայերին ձեռք չեն տալու: Այդ ժամանակ կանչեցինք մեր գյուղի կոմիսար Արտեմ Յաղուբյանին, նրա հետ խորհրդակցելու համար մեր դրության մասին: Վերջինս և Նուսրաթը նորից մեզ միամտեցնում են և հեռանում: Քիչ հետո մենք արդեն իմանում ենք, որ կոմիսար Յաղուբյանը և ուրիշ տասը հայեր Նուսրաթի հետ գյուղից փախել են Նարաջան թուրքական գյուղը:

Տեսնելով, որ դրությունը լուրջ է և կատակ անել չի կարելի, մենք էլ երեք հոգով մյուս օրը, մարտի 21-ին, լուսաբացին գյուղից փախանք մոտակա անտառը: Փախչելու րոպեին իմացանք, որ շիխլարցի Իբրահիմ բեկը զնացել է Դերբենտ նոր զինված ուժեր բերելու համար: Անտառի մեր թաքստյան տեղից օրվա ժամը 4-ին տեսանք, որ Դերբենտից կայարան ժամանեցին զինված չեչենների և թուրքերի երկու էշելոններ, որոնք կես ժամից հետո սկսում են կոտորել խաչմազ գյուղի բոլոր հայերին:

Կոտորածից հետո մենք գիշերով անտառից էլ փախչում ենք 12 վերստի վրա գտնվող Միխայլովկա (Նիզավոյ) ռուսական գյուղը, մեր ծանոթների տները: Այստեղ էլ հայտնում են, որ չեն կարող թաքցնել մեզ, որովհետև թուրքերը խիստ հետևում և փնտրում են փախած հայերին: Միևնույն ժամանակ ասում են, որ զավառական կոմիսար Ալիբեկ Ջիզիկսկին այդ մասին պաշտոնապես հրաման է բաց թողել, որի մեջ զգուշացնում է, թե հայեր թաքցնող ռուսական գյուղը նույնպես կենթարկվի խաչմազի վիճակին:

Ամբողջ 14 օր մենք մնացինք հիշյալ գյուղում: Ապրիլի 3-ին Միխայլովկա է հասնում Բազվից ուղարկված նավը 120 զինվորներով, զնդացիներով և թնդանոթներով ռուս գյուղացիներին տեղափոխելու համար Բազու:

Ռուսների տեղափոխությունը պետք է կատարվեր մյուս օրը, ապրիլի 4-ին, բայց մենք 3 հոգով նույն օրն ենք տեղավորվում նավում: Գիշերը լույս 4-ի, թուրքերը, տեղեկանալով եկած նավի մասին, շրջապատում են Միխայլովկան և լուսաբացին վերևում հիշած բեկերի ղեկավարությամբ հարձակվում են գյուղի վրա: Նավի բերած զինվորների, զննացիրների և թնդանոթների միջոցով հաջողվում է թուրքերին փախցնել և ռուսներին տեղավորել նավում:

Ապրիլի 4-ին, երեկոյան ժամը 5-ին մենք ճանապարհվում ենք և Բագու հասնում ամսիս 6-ին, իրիկնադեմին:

Միխայլովկայից նավը հեռանալու ժամանակ մեզ լուր տվին, որ հիշյալ գյուղից փախած բեկերը և զինված ամբոխը ավերում են Ելենովկա, Ալեքսանդրովկա, Ալեքսենկա և այլ ռուսական գյուղերը:

Մենք իմացանք նաև, որ Նուսրաթի հետ Նարաջան թուրքական գյուղը փախած Արտ. Յաղուբյանը, Խաչմազի քահանան և մնացածները նույնպես սպանվել են ծովափին, Միխայլովկայից երկու վերստի վրա: Նրանցից մեկը, չկամենալով մեռնել կատաղի ամբոխի ձեռքով, իրեն ծովն է նետել, որի դիակն ալիքներն ափ են հանել:

Բացի մեր պատմածի մեջ հիշած ղեկավարներից, հիշյալ ջարդերի կազմակերպման գլխավոր հանցավորներից են նաև ալիանցի բեյ Բալաբեզը, նախկին պրիստավ Ջանգիևը, դոնադբենդցի Մայիլ Յուզբաշին, լաջաթցի Մուսաբեկը և ուրիշները, որոնք ղեկավարում են թուրք անգիտակից մասսային:

**Շ. Յ. , Մ. Մ. և Մ. Ա.\***

Արև, 23 ապրիլի 1918 թ.

**N 27**

### **ОБМЕН РАДИОТЕЛЕГРАММАМИ МЕЖДУ ЧЛЕНАМИ ЗАКАВКАЗСКОГО СЕЙМА И КОМИТЕТОМ РЕВОЛЮЦИОННОЙ ОБОРОНЫ Г. БАКУ И ЕГО РАЙОНОВ С ОЦЕНКОЙ МАРТОВСКИХ СОБЫТИЙ В БАКУ**

**От члена Сейма Рамишвили**

Председателю Исп. Ком. ССР и М. Деп. Под моим председательством высылается делегация для содействия прекращению братоубийственной войны. В делегацию входят члены социалистических фракций Сейма, а также делегаты краевого Исполнительного Комитета Советов солдатских, рабочих и крестьянских депутатов. Выработаны некоторые условия мира. Прошу немедленно сообщить, не встречается ли с Вашей стороны препятствий и гарантирован ли свободный пропуск в районах, занятых вашими войсками.

Гумметисты здешние изъявляют согласие на такую делегацию и гарантируют безопасный пропуск. Сами в делегации участия не принимают. Жду скорого ответа.

**Исидор Рамишвили.**

Едет мирная делегация в Баку под моим председательством. Прошу гарантировать свободный пропуск.

Жду срочно ответа.

Член Сейма

**Исидор Рамишвили**

\* Պատմածի տակ ստորագրել են երեք ճանապարհորդներն էլ (ծանոթ. կազմ.)

Получено сообщение об аресте члена Сейма Закавказского правительства Ибрагим бек Гейдарова. В интересах обороны и умиротворения необходимо его немедленное освобождение. О принятых вами мерах прошу уведомить, а равно о положении дел в Бакинском районе.

Министр внутр. дел  
**Ной Рамишвили**

**Ответ комитета Революционной обороны члену Сейма Исидору Рамишвили**

По поводу намерения прислать из Тифлиса мирную делегацию в Баку во главе с Исидором Рамишвили Комитет Революционной обороны города Баку и его районов заявляет, что в никаких мирных делегациях надобности не имеется. Никакой братоубийственной войны в Баку не было, была и продолжается уже за пределами Баку гражданская война против контрреволюционных беков и ханов, поднявшихся против Советской власти и с ними никакого мира и соглашения не может быть у бакинского пролетариата. Бакинские рабочие без различия национальностей, в том числе и мусульмане рабочие, во всех промысловых районах объединившиеся вокруг Совета, достаточно сильны, чтобы раздавить врагов Советской власти. Так называемые социалистические фракции Сейма и поддерживающий их Краевой Совет сами являются виновниками контрреволюционного пожара, начавшегося в Елисаветпольской губернии и перебросившегося в Баку. Делегация, выработавшая, как сообщается в телеграмме Рамишвили, некоторые условия мира, хочет, очевидно, оказать новые услуги бекским и ханским бандам, вооруженным благодаря стараниям Закавказского Комиссариата и идущим теперь против Бакинской Советской власти, если бы в Сейме имелись действительно социалистические партии, они предлагали бы не мир с контрреволюционерами, а вооруженную помощь Бакинскому революционному Совету. Бакинский пролетариат встретил бы мирную делегацию с чувством глубокого возмущения и презрения, а потому Комитет Революционной обороны гор. Баку и его районов просит делегацию не беспокоиться и не утруждать себя приездом.

Члены Комитета Революционной обороны гор. Баку и его районов: **Шаумян, Джапаридзе, Корганов, Сухарцев, Сако Саакян и Нариманов.**

Бакинский рабочий, 23 апреля 1918 г.

**N 28**

**ОТВЕТ БАКИНСКОГО АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА КОМИТЕТУ РЕВОЛЮЦИОННОЙ ОБОРОНЫ Г.БАКУ И ЕГО РАЙОНОВ О КОМПЕТЕНЦИИ НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА И СУДЬБЕ АРМЯНСКИХ ВОИНСКИХ ЧАСТЕЙ**

В ответ на ваше письмо, от 18 апреля, за № 396, затрагивающее вопрос о дальнейшем существовании армянских воинских частей и вопрос о компетенции Армянского Национального совета, считаем необходимым сообщить следующее:

Бакинский отдел Армянского Национального совета, во время последних событий в гор. Баку, не желая с своей стороны давать каких-либо поводов к провоцированию национальных страстей и не желая также, чтобы борьба за власть приняла характер национальной борьбы, еще 21 марта принял условие относительно национальных воинских частей, предложенное Военно-Революционным Комитетом одновременно с ультиматумом, предъявленным мусульманским национальным организациям. Условие

это, заключавшееся в пункте 2 упомянутого ультиматума, гласило “другие национальные мусульманские воинские части, также как и армянские, должны быть выведены из города или подчинены всецело Совету рабочих, солдатских и матросских депутатов”.

Заявляя и теперь о своей готовности исполнить названное условие, Бакинский отд. Армянского Национального совета просит указать время и назначить лиц, чтобы совместно с нашими представителями осуществить принятое нами условие.

Что касается другого пункта вашего письма, гласящего: “Национальные советы, как органы власти должны прекратить свое существование”, мы заявляем: Бак. отд. Армянского Национального совета был призван к жизни главным образом для содействия делу защиты фронта. Он не является органом власти и не претендует совершенно на таковую. Он не производил ни арестов, ни обысков. Реквизиции же, производившиеся нами, делались с разрешения Исполнительного комитета совета рабочих, солдатских и матросских депутатов.

Бакинский рабочий, 23 апреля, 1918 г.

**N 29**

**ՔԱՂՎԱԾՔ «ՂՈՒՔԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ» ՀԵՌԱԳՐԻՑ**

**ՁԻՆ. Հեղ. կոմիտեի նախագահ Կորգանովին**

Այսօր, ապրիլի 24-ին, ես ազատեցի 115 հայերի, որոնք կալանավորված էին Ղուբայի բանտում: Նրանք զրկվել էին իրենց ամբողջ գույքից: Ես միջոցներ ձեռք առա վերադարձնելու նրանց իրենց գույքը: Նրանք դրամական օգնություն են խնդրում Հայոց Ազգային խորհրդից: Շուտափույթ ուղարկեցեք իմ հասցեով, նրանց նյութական դրությունը կրիտիկական է:

... Բացի Ղուբա քաղաքից ուրիշ տեղերում գերված հայեր կան: Միջոցներ են ձեռք առնում նրանց ազատելու համար:

Ղուբա քաղաքի ու գավառի կոմիսար՝ **Գելովանի**  
Արև, 27 ապրիլի 1918 թ.

**N 30**

**ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ.ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ՝ ԶԱՐԳՅԱՐԱՆ ԵՎ ԲԱՍԽԱՆ ԱՅՈՒՂԵՐԻ ԿՈՂՈՊՈՒՄԻ, ԶԻՆԱԹԱՓՄԱՆ, ԿՈՏՈՐԱԾԻ, ԳՅՈՎՉԱՅԻ ՈՒ ՇԱՄԱԽՈՒ ՀԱՅ ԳՅՈՒՂԵՐԻ ԾԱՆՐ ՈՒ ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

**29 ապրիլի 1918 թ.  
Խիլմիլի**

Այս տարի Ջարգարան գյուղում ես դպրոց կար 1917 թ. սեպտեմբերից մինչև 1918 թ. մարտի 16-ը, երբ ամբողջ գավառում խռովություններ սկսվեցին: Ջարգարան

գյուղի հայերի վրա մի խումբ զինված թուրքեր մարտի 31-ին հարձակվել են և զինաթափ են արել. զարգյարանցիք փախել են մոտակա թերջան և Բասխալ թրքաբնակ գյուղերը. մինչև ապրիլի 20-ը թերջան գյուղում մի կերպ ապրում են մոտ 150 զարգյարանցիք. հետևյալ օրը՝ ապրիլ 21-ին կոտորում են մոտ 130 հոգի, իսկ 20-ի չափ հայեր կարողանում են փախչել ազատվել: Բասխալ գյուղում մնացողներին ևս (մոտ 650 մարդ, կին, երեխա) հավանականաբար կոտորեին, եթե ժամանակին թ. Ամիրովի խումբը չհասներ, չշրջապատեր Բասխալը և չազատեր նոցա: Այդ 650 ազատվածներից մեկը՝ նամակաբեր ուսուցիչ Խաչատուր Մարուքյան Սահակյանցն է յուր քրոջ հետ: Մանրամասնությունները կպատմի Ձեզ նամակաբեր ուսուցիչը, ուսուցիչը վարձված է եղել վեց հարյուր ռուբլով. ստացել է ըստ յուր ասության 310 ռուբլի միայն: Այժմ խնդրում են Ձեզ, եթե հնարավոր կհամարեք, բարեհաճեցեք վճարել 150-200 ռուբլի, քանի որ նեղ վիճակի մեջ է, մինչև որ դպրոցի հոգաբարձությունից լրիվ տեղեկություն ստանամ և հայտնեն Ձեզ:

Մի քանի օրից հետո անձամբ գնալու են մեր գյուղերը, դեպի ուր ուղարկում ենք այժմ մեր գյուղացիներին: Եթե լավ կազմակերպված զինական ուժ լինի, հնարավոր է փոքրիշատե ապահով ու անվտանգ ապրել, հակառակ դեպքում վտանգված կարելի է համարել հայերի դրությունը, եթե մանավանդ հաստատվի թուրքական զորքի հառաջխաղացումը:

Շամախու գավառի հայ գյուղացիները ապրում են ծանր պայմանների մեջ, հատկապես աղքատ ու ջքավոր դասակարգը, որն այժմյան կացության մեջ ո՛չ մի աշխատանք չունի: Գյուկչայի գավառի հայ գյուղերն ևս վերջերս հաճախ թրքական զինված խմբերի հարձակումների են ենթարկվում և շատ տուժում. այնտեղ ևս դժբախտաբար գյուղերի մի մասը թալանված-այրված է: Վիճակը շատ ծանր է այժմ, մոտիկ ապագան էլ ոչ հուսատու, եթե չասեն հուսահատական: Համենայնդեպս ապրում ենք հուսով:

Ընդունեցեք ողջույններս և հարգանքներս  
**Ձեր՝ Բագրատ Եպիսկոպոս**

ՀՀ ՊԱ, ֆ. 27, ց. 1, գ. 338, թթ. 67-68: Ինքնագիր:

**N 31**

**ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՍԱԿԸ ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՆՈՐՉՐԴԻ ՆԱՆԱԳԱՂ Հ.ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ՝ ՇԱՄԱՆՈՒ ԳԱՎԱՌԻ ՀԱՅ ԳԱՂՁԱԿԱՆՆԵՐԻ  
ՐԻ ՇԱՆՐ ՎԻՃԱԿԻ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ Ա. ԵՎ Ա.ՎԱՆՅԱՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

**[Ապրիլ] 1918 թ.  
Շամախի**

Շամախու գավառի հայ գաղթականներին, որոնք ժամանակավորապես մի կերպ տեղավորված էին անհյուրընկալ Խիլմիլի մալական գյուղում, հետզհետե ուղարկում ենք Մեյսարի, Քյալախանի, Քերքեմջ, Մադրասա, Սադյան և այլ հայ գյուղերը: Հայ գյուղերում թեպետև քիչ տներ կան, քանի որ տների մեծ մասն այրված է, սակայն ի նկատի ունենալով, որ Խիլմիլի գյուղում շատ վատ և միանգամայն հակառողջապահական պայմանների շնորհիվ տարափոխիկ հիվանդություններ (ծաղիկ, բժավոր տիֆ, ստամոքսային հիվանդություններ) տարածվել են և բազմաթիվ զոհեր են տանում (200-ից անց), ուստի աշխատում ենք արագ տեղափոխել առողջներին թեթև հիվանդների հետ դեպի հայ գյուղեր, որտեղ օդն ու ջուրը լավ է: Շամախիի քաղաքացիների մեծ մասը դեռ մնում են այստեղ և աշխատում են շուտով փոխադրվիլ Բագու, ինչպես և մի քանի ապահով մադրասեցիք ու սադյանցիք:

Նամակաբերը Մադրասայի ուսուցիչ Աղաբեկ Վանյանը յուր կնոջ վարժուհի Սաթենիկ Վանյանի հետ հիլմիլիից գալիս է Բագու: Մադրասայի հոգաբարձությունը չի կարողացել տալ վերջին երկու ամսվա ռոճիկը, ուստի նյութական ծանր վիճակի մեջ են Վանյանց անուսիները: Բագու գալու համար չունենին ճանապարհածախս, ստիպված էի տալ չքավոր գաղթականներին բաժանվելիք նպաստագումարից հարյուր քսան ռուբլի (120 ռ.) փոխարինաբար: Խնդրում են Ձեզանից, եթե հնարավոր է, Մադրասայի դպրոցի անունով հատկացնել երեք հարյուր (300) ռուբլի, վճարելով այդ գումարը Վանյանց անուսիներին ի հաշիվ ռոճկի. որով դոցա ևս նեղ դրությունից ազատած կլինեք: Այդ 300 ռուբլի գումարից 120 ռուբլին Աղեքսանդր Սերեբրակյանի միջոցով պետք է փոխադրվի այստեղ կամ Շամախի իմ անունով գաղթականներին բաժանելու համար: Երկու-երեք օրից հետո գնալու են մեր գյուղերը շրջելու, որոնք գտնվում են շատ ծանր պայմանների մեջ. բոլոր եկեղեցիները թալանված, շատերն այրված են, բնակության համար հարմարավոր տներ չունեն, կյանքը շեղվել է բնական ընթացքից, մեծամասնությունը դարձել է թալանչի, բարոյական ցավալի պատկեր է ներկայացնում. մեծ, շատ մեծ աշխատանք է պետք ընկած վիճակից ժողովրդին բարձրացնելու և ժողովրդական կյանքը տանելի կերպով կազմակերպելու համար:

Ողջույններով և հարգանքներով  
Ձեր՝ **Բագրատ եպիսկոպոս**

ՀՀ ՊԱ, ֆ. 27, ց. 1, գ. 338, ք. 65 շրջ.: Ինքնագիր:  
**N 32**

**ПИСЬМО МУСУЛЬМАНО-АРМЯНСКОЙ КОНФЕРЕНЦИИ ГУБЕРНАТОРУ-КОМИССАРУ ЕЛИЗАВЕТПОЛЯ ЗИАТХАНОВУ О ДОГОВОРЕННОСТИ В ОТНОШЕНИИ ОБМЕНА СЕЛ КЕНДЕК И ГАВАРЛЫ НУХИНСКОГО И АРЕШСКОГО УЕЗДОВ НА СЕЛЕНИЕ ДЖАГУРЛЫ**

**N 391**

**4 мая 1918 г.  
Каябаш**

Падарская мусульmano-армянская мирная конференция 3 мая с.г. в присутствии Закавказского муфтия Эфенди Мустафа Эфендазаде и представителя от гор. Нухи и 32 сел. от Нух. и Арешского уездов единогласно выразила пожелание - населить сел. Джагурлю (жители коего оставили село и переселились в пустые арм. селения) беженцами-армянами из сел. Гаварлы-Кендек. Селения Гаварлы и Кендек уже населены мусульманами - частью жителями сел. Джагурлы.

Не имея времени для исполнения формальностей по делу замены селениями - сим честь имею довести до Вашего сведения, что мною сделано распоряжение о занятии ненаселенного села Джагурлы беженцами из Кендека и Гаварлы. Со стороны кендекцев и гаварлинцев нет препятствий к тому, чтоб и джагирлинцы заняли села Кендек и Гаварлы.

Я надеюсь, что Вы сделаете все зависящее от Вас для успокоения взволнованных темными силами мусульманских масс и вместе способствуете к сближению двух братских народов, веками мирно живших бок о бок, но враждебно настроенных интригами темных людей.

Председатель Центр. исп. ком.  
арм. нас. Нух. и Ар. уездов **Тер-Григорян**

АИ РА, ф.221, оп.1, д.24, л.49 об. Черновик. Рукопись.

N 33

**ՋԱՐԱԲԱԿ ԳՅՈՒՂԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԿՈՄԻՍԱՐԻ ԴԻՍՈՒՄԸ ԴԱՅԱԲԱՇԻ ԳՅՈՒՂԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱԴՐԻՆ՝ ՀԱՄԱԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

**30 մայիսի 1918 թ.  
Ջարաբա**

*Ղայաբաշոց և գյուղերի նախագահ Տեր-Գրիգորյանցին*

*Հայտնություն*

Նախ խոնարհաբար հայտնում են ձեզ, որ ահա այսօր 3 օր է մեր քահանան գնացել է Պաղարա գյուղը ցորեն առնելու, չի վերադարձել. լսելով թե բռնել են, միգուցե թե սպանված է, բացի դորանից այսօր ամսիս 30-ին մեր գյուղից 6 տղա Վարդաշեն գնալիս ճանապարհիցը Ղարաբալդուրի կողքիցը բռնել տարել են, բռնողները եղել է լազգիներ: Արդեն մեր տղայքը ուզում են որ Ղարաբալդուր գյուղը շրջապատեն, ես՝ կամիսերս մի կերպ պահել են, հայտնելով ձեզ՝ նախագահին շուտ մեզ օգնություն, զինվորներիցը ևս օգնություն տվեք Չայքանդ գյուղիցը: Որ ունի. սպասում ենք:

Կոմիտներ՝ **1. Ակոբ Սևյանց**  
**2. Կարապետ Քոչարով**  
**3. Հարություն Սիմոնյանց**  
Ձառափա կամիսեր՝ **Պետրոս Մուսայելյանց**

ՀՀ ՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 24, թթ. 50 շրջ.: Բնագիր: Չեռագիր:

N 34

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԱԿՈՒՄ»  
ՀԱՅԵՐԻ ԼԱՐՎԱԾ ՈՒ ՄՊԱՍՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Գանձակի ազգաբնակչությունը ներկայումս ծանր օրեր է ապրում: Խրամատային աշխատանքները վերջացած են Գյանջանկայի մոտ: Ազգաբնակչության մեծ մասը զինված սպասողական վիճակի մեջ է: Ունի որ քաղաքացիներն արդեն վաղուց քաշվել են սարերը իրենց ընտանիքների հետ: Ռուսներն ու լեհերը հեռացել են:

Գանձակի նահանգի հայերը հնարավորություն չունեն հայրենիքի պաշտպանության համար տեղից շարժվելու: Հինգ-վեց ամիս է արդեն քաղաքի հայկական մասը բոլորովին կտրված է աշխարհից. 3 ամիս է, որ պարենավորման վարչությունները չեն ստանում ամենամահրաժեշտ կենսամթերքները - հաց և շաքար:

Արև, 2 հունիսի 1918 թ.

N 35

**ԱՐՑԱՆԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԸ  
ԹԻՖԼԻՍՈՒՄ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԱՂԻԲԵՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ**



**ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼԻՍ ԴԱՐԱԲԱՂԸ ԵՎ ԱՅՈՒՆԻՔԸ ԻՐԻԵՎ ԱՆՎԱԽ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԵՐ ՆԵՐՎԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**12 հունիսի 1918 թ.  
Թիֆլիս**

Արցախի և Սյունիքի Հայրենակցական միության վարչությունը, ի նկատի ունենալով, որ ներկայումս որոշվում է այս երկու հայաշատ երկիրների վիճակը, պարտք համարեց գումարել Թիֆլիսում գտնվող ձեռնհաս հայրենակիցներից մի խորհրդակցություն, որ սույն հունիսի 6-ին ժողովվելով Թիֆլիս Վաճառականական բանկի մեջ, պ.Տիգրան Բեկզադյանի նախագահությամբ բազմակողմանի քննության ենթարկեց այս հարցը և ի նկատի առնելով, որ չկա ոչ մի պատմական, աշխարհագրական, քաղաքական և ազգագրական հանգամանք, որ զորավոր լիներ Արցախի և Սյունիքի հայաբնակ մասերը Հայաստանի անկախ հանրապետությունից կտրելու համար, միաձայն որոշեց. - անպայման անհրաժեշտ համարելով, որ Հայոց երկրի վերոհիշյալ մասերը միացվեն Հայաստանին, խնդրել Ազգային խորհրդից, որ նա Ադրբեջանի Ազգային խորհրդի հետ մղած բանակցությունների մեջ անպայման պահանջե, որ այժմյան Ղարաբաղը իր բոլոր հայաբնակ գավառներով (Ջրաբերդ, Խաչեն, Վարանդա, Դիզակ և Գյուլիստան) և Ջանգեզուրը համարվեն անկախ Հայաստանի անբաժանելի մասն:

Այս մասին Վարչությունն պատիվ ունի հայտնելու Ձեզ, ավելացնելով որ միևնույն ժողովում ընտրված է երեք հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որի պաշտոնը պիտի լինի աջակցել Ազգային խորհրդին այս հարցի վերաբերյալ տեղեկություններով: Ընտրված են Գերասիմ Շահնազարյան (Շուշու քաղաքագլուխ), Առաքել Բաբախանյան և Միքայել Ղարաբեկյան:

Նախագահ վարչության՝ **Ա. Բաբախանյան**

ՀՀ ՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, քք. 41-42: Ինքնագիր:

**N 36**

**ПИСЬМО ЕЛИЗАВЕТПОЛЬСКОГО ГРАЖДАНСКОГО КОМИТЕТА В АРМЯНСКИЙ  
НАЦИОНАЛЬНЫЙ СОВЕТ Г. ТИФЛИСА О ТЯЖЕЛОМ СОСТОЯНИИ АРМЯНСКОГО  
НАСЕЛЕНИЯ ГОРОДА ЕЛИЗАВЕТПОЛЯ И УЕЗДА**

**N 1726**

**20 июня 1918 г.  
Елизаветполь**

Вследствие воцарившейся в Елизаветпольской губернии и в частности в гор. Елизаветполе сильной анархии, прекращения путей сообщения, армяно-мусульманских трений и по некоторым другим причинам армянское население гор. Елизаветполя оказалось оторванным не только от всего внешнего мира, но даже центров Закавказья-Тифлиса и Баку.

В течение нескольких месяцев армянское население, живя как бы в осажденной крепости, переживало все ужасы такого положения. Кроме немногих торговцев и ремесленников все поголовно, не имея возможности заниматься своими обычными делами, естественно лишились обычного заработка. Цены на хлеб и другие предметы первой необходимости поднялись до невероятных размеров. Чтобы поддерживать свое существование, многие продавали свои домашние вещи.

Условия жизни в уезде оказались не более сносными. Сельский пролетариат, не имея возможности поддерживать свое существование, стремился к центру - в город.

Одною из главнейших забот Елисаветпольского Армянского Гражданского комитета было всемерно заботиться о продовольствии 15-18000 населения, которое не имело возможности кормиться своими средствами.

Дабы это население не оказалось обреченным на голодную смерть и во избежание голодных бунтов при Гражданском комитете была учреждена продовольственная секция с необходимым штатом служащих. В распоряжение созданного таким образом специального аппарата отпускалась большая часть материальных средств Гражданского комитета, в том числе и 500000руб. продовольственной ссуды, разрешенной бывшим Закавказским Сеймом. В течение четырех только последних месяцев, начиная с 1 февраля сего года, на продовольствие населения как города, так и уезда, было отпущено 859000 руб. получено в возврате 96000 руб., в итоге понесено убытков на 763000 руб. И при всем том бедному классу населения не было возможности отпускать хлеб более четверти фунта на душу. По настоящее время нельзя было увеличить сказанный рацион хлеба из смеси пшеницы с ячменем хотя бы до полуфунта. С февраля месяца армянскому населению не отпускается из продовольственных учреждений следуемый на его долю сахар. В настоящее время, если не будет более или менее значительной материальной помощи извне, большая часть армянского населения гор. Елисаветполя и многих сельских обществ Елисаветпольского уезда окажется обреченным на голодную смерть, так как, за недостатком материальных средств, продовольственная секция будет распущена и население будет предоставлено самому себе.

Доводя об изложенном до сведения Армянского Национального совета, Елисаветпольский Армянский Национальный комитет имеет честь покорнейше просить отпустить в распоряжение продовольственной секции Гражданского комитета по крайней мере полмиллиона рублей на продовольственные нужды голодающего населения города и уезда.

В заключение Гражданский комитет почтительно просит Национальный совет не отказать поспешить с отпуском означенных средств ввиду того, что временным правительством Азербайджанской республики сделано распоряжение об аннулировании тех кредитных денежных знаков бывшего Закавказского правительства, которые в самом непродолжительном времени будут представлены названному Правительству для зафиксирования путем заштемпелевания их.

Председатель совета: **М. Малхазов**

Члены совета: **И.Ходжаян**

**Л.Мелик-Мнацаканян**

**М.М.Арустамов**

**Л.Мелик-Шахназаров**

Секретарь: **С.Захарян**

АИ РА, ф. 276, оп.1, д. 4, л. 79-80. Подлинник. Машинопись.

№ 37

**ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՎԿԱՍՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ» ՀՈՂՎԱԾԻՑ.**  
**ԱՂԻԲԵՋԱՆԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ**

**23 հունիսի 1918 թ.**  
**Գաճճակ**

Անցյալ անգամ մեր հողվածը վերջացրինք այսպես. - Ադրբեջանի նոր կաբինետը հաստատվեց ժողովին մասնակցող մուսավաթիստների, անկուսակցական և Ռուսաստանի մահմեդականների ներկայացուցիչների 13 ծայնով: (Դահլիճից հեռացել էին 11 սոցիալիստական ներկայացուցիչներ) տեսնենք թե ի՞նչ հեղինակություն կունենա թուրք բեգ ու խաների բուրժուական տարրերի ձայնով ընտրված «Ադրբեջանի հանրապետության» նոր կաբինետը:

Այդ կաբինետն արդեն խոսեց և խոսեց չափազանց վերամբարձ ոճով, առանց հաշվի առնելու թե թուրք դեմոկրատիան հանձինս սոցիալիստական կուսակցությունների ամենևին չի ուզում ճանաչել այդ կաբինետը և նրա հեղինակությունը:

Առաջ ենք բերում այդ վերամբարձ ոճով գրված պատմական ու կարևոր փաստաթուղթը. -Ադրբեջանի նոր կառավարության կոչը

«Ադրբեջանի հանրապետության քաղաքացիներ!

Ադրբեջանի անկախության տենչանքներն արդեն իրականություն են ստացել:

Մենք խորապես հավատում ենք, որ մեր ժողովրդի անընկճելի կամքի և մեր ցեղակից ու հավատակից օտոմանյան կայսրության աջակցության շնորհիվ մեր հայրենիքի երջանիկ ապագան արդեն ապահովված է:

Բայց և այնպես ներկա վայրկյանին, մեր մատաղ հայրենիքին սպառնում է վտանգ թե ներսից և թե դրսից:

Ի նկատի ունենալով կատարվող արտակարգ դեպքերը, որոնցով ապրում է ներկայիս մեր շրջապատը շնորհիվ արտաքին և ներքին աննորմալ և չափազանց խճճված պայմանների, Ադրբեջանի Ազգային խորհուրդը, հայրենասիրական բարձր զգացումից դրդված, հունիսի 17-ին ընդունեց նախկին կառավարության հրաժարականը, կազմեց նոր կառավարություն, հանձնեց նրան կառավարական բովանդակ իշխանությունը և հայտարարեց ազգային խորհուրդը ցրված, հանձնարարելով նոր կառավարությանը 6 ամսից ոչ ուշ գումարել Սահմանադիր ժողով:

Այսպիսի մի պատասխանատու վայրկյանին ստանձնելով երկրի կառավարական ծանր դեկը, Ադրբեջանի կառավարությունը կոչ է անում բոլոր քաղաքացիներին վերադառնալ իրենց նախկին նորմալ աշխատանքներին և չխառնվել երկրի վարչական գործերին, որպեսզի հնարավորություն տրվի կառավարությանը կանոնավորել պետական ապարատը և կենտրոնացնել վստահելի մարդկանց ձեռքին. դրա համար կառավարությունն անհրաժեշտ է գտնում նախազգուշացնելու, որ հանուն հայրենիքի բախտավորության և նրա փրկության, նա չի դանդաղի ձեռք առնելու ամենակտրուկ միջոցներ նրանց նկատմամբ, որոնք չեն հնազանդվի նոր կառավարության կարգադրություններին...

...Մենք հավատացած ենք, որ բոլորը, առանց ազգի խտրության, հանուն հայրենիքի բարիքի և երջանկության, ամուր հենարան կհանդիսանան կառավարությանը իրագործելու մեր ցանկությունները և մատնանշած ծրագիրը:

Մենք հավատում ենք, որ Մեծ Թուրանի ավագ զավակների՝ մեր ցեղակից և հավատակից եղբայրների շնորհիվ և աջակցությամբ մեր հայրենիքը կլինի երջանիկ և ուժեղ:

Հավատացած Աստծու օգնության և Ադրբեջանի բոլոր քաղաքացիների ջերմ աջակցության վրա, մենք ձեռնարկում ենք մեր պատասխանատու աշխատանքներին»:

**Խան Խոյսկի**

Արև, 18 օգոստոսի 1918 թ.

**N 38**

**ИЗ БЮЛЛЕТЕНИ ИНФОРМАЦИОННОГО БЮРО ПРИ АРМЯНСКОЙ ДИПЛОМАТИЧЕСКОЙ МИССИИ В ГРУЗИИ О МЕРАХ, ПРЕДПРИНИМАЕМЫХ ГЕРМАНСКИМ**

**ПРЕДСТАВИТЕЛЬСТВОМ ДЛЯ МИРНОЙ ЛИКВИДАЦИИ ТУРЕЦКОГО ПРОДВИЖЕНИЯ НА БАКУ**

**21 июня 1918 г.  
Тифлис**

Германское дипломатическое представительство на Кавказе прилагает все усилия, чтобы привести турецкое продвижение на Баку к мирной ликвидации, без каких-либо столкновений и осложнений. Недавно германское дипломатическое представительство вело относительно Баку переговоры с Энвер пашой, который признал справедливость германских представлений и дал обещание прекратить наступление турецкого отряда на Баку. Предполагается установить в соответствующих районах демаркационные линии и установить так, чтобы явилась возможность открыть сообщение между Тифлисом и Баку. Вообще, в представительстве царит полная уверенность, что вопрос о Баку получит окончательное разрешение только на конференции в Константинополе.

Борьба, Тифлис, 5 июля 1918г.

АИ РА, ф.200, оп.1, д.57, л.3. Заверенная копия. Машинопись.

**N 39**

**ԳԱՆՁԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԼԵՎՈՆ ՎԱՐՂԱՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե-ԻՆ՝ ԳԱՆՁԱԿԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՍԱՍԻՆ՝**

**N 109**

**25/12 հունիսի 1918 թ.  
Գանձակ**

Այս տարվա ապրիլի սկզբին խոսվում էր, որ տաճիկ ասկյարներ պիտի գան Գանձակ և ապրեն նորա թրքական մասում: Սոցա գալու լուրը, ինչպես և նպատակը գաղտնիք էր, երբ տաճիկական զորքը դեռևս շատ հեռու էր: Բավարարող ենթադրությունը այն էր, որ սոքա պիտի գան Կովկասի ընդհանուր խռովահույզ և անտիրական կացության վախճան տալու և կարգ ու կանոն հաստատելու համար առհասարակ, և ի մասնավորի, առավելապես հայ-թրքական թշնամական հարաբերությունը մեղմացնելու, որը այդ ժամանակ բորբոքման գագաթնակետի ծայրին էր հասել և քիչ բան պետք էր բոցավառվելու: Ըստ որում Բաքվից և Թիֆլիզից եկած խաղաղարար խառն պատգամավորությունները այս հարաբերության փոքր չափով մեղմացման համար ոչինչ կարողացան անել, թեև կարծեցին, որ, ռուսական զորքի հանդերձեղենից թուրքերին բաժին հանելու բարոյական ստիպմամբ, կնվազացնեն թշնամության սաստկությունը և բաժին հանեցին:

Բաքվի պատգամավորության հայ անդամ Հայկ Բողդանիչ Տեր-Միքայելյանցը, չերաշխավորելով հանդերձ, որ, այս բաժինը ստանալով, թուրքերը հայերին կմոտենան և կբարեկամանան և կամ առավել պահանջներ չեն հայտնի նաև մյուս բաների համար ևս, այնուամենայնիվ կողմնակից էր թուրքերի պահանջը կատարելուն և ասում էր, որ հայերը առիթ տված չլինեն, նամանավանդ որ պահանջը վերաբերում է հանդերձեղենին և ոչ թե զենքերին: Թիֆլիզի պատգամավորությունը հայտարարեց, որ, այո, հան-

\* Տպագրվում է կրճատումներով (ծանոթ. կազմ.):

դերձեղենը հանձնելով, հայերը կշահեն թուրքերի բարեկամական հարևանությունը և այս հայտարարությունը հրապարակվեց ի լուր բոլորի: Սակայն թուրքերը շարունակեցին պաշարումը: Այս միջոցին, հիրավի, եկան ասկյարները: Սոցա ներկայությունը և քաղաքավարի վերաբերմունքը որոշ հանգստություն մտցրեց և վստահություն տվեց, որ հայը, մանավանդ չքավոր դասակարգը, ի դեպ Ձատկական տոները մոտենում էին, սիրտ առավ և կանաց-կանաց այցելել սկսեց թրքական մասը հանապազօրյա կարիքների հոգացողության համար:

Միայն երևաց, որ ասկյարները նախակարապետներն էին տաճկական զորամասերի շարժման դեպի Գանձակ, որոնց նախորդեցին, նախ, Նազիմ բեյը և, ապա, Նուրի փաշան, էնվեր փաշայի միջնակ եղբայրը, որին դիմավորելու համար հայոց Քաղաքացիական կոմիտեի խորհուրդը շտապել է թուրքաց մասը և, ապա, կայարան ընդառաջ: Հայոց կողմից արտասանված ողջույնի խոսքին, թե հայերը վստահ են, որ Տաճկաստանը, իբրև չեզոք պետություն, երևնալով այս կողմերում կարգ ու կանոն կհաստատի և անարխիան կվերացնի, պատասխանել է. «Իշ Ալլահ, Աստուծով»:

Նուրի փաշան գալով Գանձակ և, ծանոթանալով երկու ազգությանց մեջ գոյություն ունեցող գժտությանց և նոցա պատճառների հետ, հայերը պահանջում են երկաթուղու գիծը բանալ իրենց առաջ, որը թուրքերը փակել էին 1917 թվի նոյեմբերից, տալ իրենց բաժին ուտելիքը պարենավորման շտեմարանից. թուրքերի բացումն «Քոչի» ճանապարհի, որը հայ գյուղերի միջով է անցնում, սկսեց գողությունների և սպանությունների հարցերով զբաղվել: Թուրքերը գերմանական գաղութում սպանել են գետաշենցի հայեր և հայ կին գերել: հայերը փոխարենը 2000 ոչխար են տարել թուրքաց մասից: Նուրի փաշան պահանջել է հորհրդից, հայերը ոչխարների արժեքը հատուցանեն, որպեսզի ինքը հայ կնոջը հանձնի հայերին: Ապա հետևեցին թուրքաց մասից նախիրի գողությունը և վաճառումը, որի հարցին ևս նա միջամտեց, պահանջելով նախիրի արժեքը և այս չհաջողվելու դեպքում, գողացված տավար գնող հայերը տուգանվեցին և տավարը խլվեց նոցանից և հանձնվեց թուրքերին: Նա միջամտեց արդեն «Քոչի» թուրքերի այս վերջուտ հարցին, պայման դնելով, որ հայերը բանան ճանապարհ թուրքերին դեպի լեռները, իսկ թուրքերը երկաթուղու գիծը բանան հայերին և հանձնեն հայերին հասանելի պարենը, թուրքերին ուղղելով խոսքեր թե անթույլատրելի է մի ժողովուրդ քաղցի ենթարկել: Նա զբաղվեց նման խաղաղասիրական հարցերով, միաժամանակ կենտրոնացնելով տաճկական զորքերը Գանձակ:

Մայիսի կեսերին՝ նա յուր մոտ հրավիրեց հայերից ախսաղքալներին, և Քաղաքացիական կոմիտեն յուր միջից ընտրեց հետևյալ անձանց. Արշակ Մալխասյանց, Հովսեփ Մելիք-Բեգլարյանց, Պողոս Տեր-Ներսիսյանց, Իսահակ Խոջայանց, Լևոն Մելիք-Մնացականյանց, Խորեն Համասփյուռ, Մովսես Մելքոնյանց, որոնք մյուս օրը ներկայացան փաշային, որի հետ և ունեցան զրուցատրություն հիշատակյալ հարցերի շուրջը: Հայք, ընդհանրապես, հայտնել են, որ հայ ժողովուրդը միշտ խաղաղասիրական նկատումներով է առաջնորդվել դեպի հարևան թուրքերը և հարձակողական քայլեր չի արել: մինչդեռ թուրքերը, օգտվելով իրենց քանակական առավելություններից, ցանկացել են միշտ հարվածել հայերին և հարվածել են, առավելապես վերջին 7-8 ամիսները պաշարողական կացության մեջ պահելով հայ քաղաքամասը: Նուրի փաշան ասել է, որ ինքը այս հարցը կկանոնավորի շուտով: արդեն ձեռնարկել է թուրքերի զենքակցության, որը կատարվում է առ այժմ փողոցներում, ամենելով զենքերը բոլորից, որպեսզի դուրսը, բացի միլիցիայից և ասկյարներից, ոչ ոք զենք չունենա վերան. ասել է, որ հայկական մասում ևս զինվորված մարդիկ չերևան, բացի ի պաշտոնե զենք կրելու պար-

\*\* Ինչպես հայտնի է Նուրի փաշան էնվերի հետ ոչ մի ազգակցական կապ չունի (ծանոթ.հեղ.):

\* Փաստաթղթում անաթվերը հին տոմարով են (ծանոթ.կազմ.):

տավորություն ունեցողներից: Ասել է և այս, որ հայերը «Քոչի» ճանապարհ տան թուրքերին. թուրքերը ևս երկաթուղու գիծը կբանան հայերի առաջ և պարենը կհանձնեն: Առաջարկել է, որ, եթե հայերը կարիք ունեն, ինքը պահակներ կկարգի նաև հայոց մասուն հանձնի մի օֆիցերի և մի քանի ասկյարների արտաքին կարգապահության համար:

Այնուհետև, Նուրի փաշան ցանկացել է, որ հայերը խանգարող շարժումներ չանեն տաճիկ զորքի թիկունքում, որը արշավանքներ պիտի սկսի Գանձակից ճոնաբեռների դեմ դեպի Բաքու, ինչպես Աղեքսանդրապոլից արդեն տաճիկ զորքը արշավում է Նախիջևան: Չուղա անգլիացոց վերա: Եթե, ավելացրել է նա, ինքը կարևոր քանակությամբ զորք ունենար Գանձակում, հայերից չէր խնդրի խանգարող շարժումներ չանելու և հանգստություն պահպանելու համար: Սակայն, ասել է նա, երեք կոռալուս զորք ինքը կստանա շուտով: Ընդհանուր առմամբ, եզրափակել է նա, ինքը ոչ մի ի տարապարտուց քայլ չի թույլ տա թուրքերի կամ հայերի կողմից միմյանց դեմ: Նուրի փաշան հիշատակել է և այս, որ հայերը ռուսի վերա հույս չդնեն, որովհետև Մոսկվան, այսինքն Ռուսաստանը, կործանված է: Իսկ այս պատգամավորության մի անդամին մասնավոր կերպով ասել է, որ տաճիկահայոց կործանման համար հանցավորը քրիստոնյա մեծ պետություններն են, մանավանդ Անգլիան և Ռուսաստանը, որոնք իրենց շահերի համար շարունակ վառ և զրգռող դրության մեջ պահում էին հայկական հարցը, որպեսզի առիթ ունենան Տաճկաստանի ներքին գործերին խառնվելու. հանցավոր են և հայերը, որ խաղալիք դարձան այս տերություններին, սկսեցին ապստամբողական շարժումներ և իրենց դեմ առաջ բերին զսպիչ ձեռնարկություններ և անբաղդացան. հանցավոր են և կամավորներ տալով այս պատերազմին. մինչդեռ հայերը այնպիսի արտոնություններ վայելում էին Տաճկաստանում ըստ ամենայն մասանց, և այս արտոնությունները հայերը չեն ունեցել Ռուսաստանում, որոնց շնորհիվ պետական ամբողջ դեկը նոցա ձեռքին է եղել, սկսած առևտուրից մինչև նախարարություն: Իհարկե, Տաճկաստանը չի հիշելու այժմ այդ շարժումները:

Նույն օրվա երեկոյան Քաղաքացիական կոմիտեի շենքի մեջ, մեծ բազմության ներկայությամբ, զեկուցվեց տեսակցության արդյունքը և կոչ արվեց զգուշանալ թշնամական ամեն տեսակի քայլերից դեպի թուրքերը, ի նկատի ունենալով, այժմ առավելապես, դժվարին դրությունը ի ներկայության տաճիկ զորքի: Մյուս գնացողներից ոմանք զեկուցին իրենց կոմիսարության ճյուղին վերաբերող հարցերից: Երդվյալ հավատարմատար Գովսեփ Մելիք-Բեգլարյանցը վիրավորական արտահայտություններով գովաբանեց փաշայի արտաքինը և պատմել սկսեց յուր անձնական տպավորությունները համենելով դոքա համեմատություններով, սակայն բազմությունը նորան լռեցրեց: Այս զեկուցումը վերջացավ, բայց բազմությունը, թեև արդեն գիշերվա ժամը 11-ից անց էր, չէր հեռանում, այլ շատ մեծ կենդանությամբ մեկնաբանում էր այս տեսակցության արդյունքը:

Այս տեսակցությունը, արված զեկուցման ձևը և, ապա, տեսակցողներից ոմանց նկարագրությունը Նուրի փաշայի արտաքինից և բարեկիր շարժումներից, որոնցից նոքա հմայված են և հիացած ուղղակի, հայ հասարակության հոգեբանության մեջ ստեղծեց զորեղ բեկումն, առաջ բերեց կասկածանք և երկյուղ զինաթափության մասին: Հայ հասարակության տիրեց մի անպատմելի տխրություն ապագայի անորոշության վերաբերյալ և նա զգում էր, որ այդ անորոշությունը յուր մեջ պարունակում է մի չարագուշակ խորհուրդ և պետք է լուծվի այն հանգույցը, որի մեջ ինքը 8 երկար ու ձիգ ամիսներ անօգնական տքնում էր, ապավինած յուր թույլ ուժերին, այլևս չհավատալով որևէ շուտափույթ օգնության և օգնականության դրսից և փրկության: Եվ այս հոգեկան բեկումը հայ հասարակության աստիճանաբար ընտելացնում էր այն մտքին թե նա, թեև ծանր զգացումով, սակայն գոյության պահպանության բնազդով, կընդունի այն առաջարկությունը, որը կկտրի այս հանգույցը: Եվ այս նախազգացումը շուտով մարմնացավ: Մայիսի 28-ին, երեկոյան ժամը 7-ի մոտերքը որոտացին տաճկական չլցված

թնդանոթները թուրքաց մասում մի քանի անգամ. հայ ժողովուրդը վազեց փողոց: Սա ազդանշան էր գալոցի: Եվ այդ այսպես: 1918 թվի մայիսի 29-ին, հունիսի 11-ին, առավոտյան ժամը 8-ին քաղաքացիներից ոմանք, Լ. Լաչինյանց, որը կառք էր բերել, Զ. Իսահակյանց և այլք, եկան ինձ մոտ և հայտնեցին, որ Քաղաքացիական կոմիտեայի խորհուրդը ժամը 6-ին Նուրի փաշայի հրամանով գնացել է նորա մոտ հայկական մասի զինաթափության առթիվ և նորա նախագահ Արշակ Մալխասյանցը խնդրել է, որ ես երթամ Քաղաքացիական կոմիտեայի շենքը 10 կամ 15 մարդկանց հետ և հանգստացնեմ այնտեղ լեցված բազմությունը, որը լսել է զինաթափվելու պահանջը և ալեկոծվում է, մինչև իրենց վերադարձը և հեռախոսով գնացողների հետ կապ պահպանեմ: 6-7 հոգու ուղեկցությամբ անհապաղ գնացի ասված վայրը և տեսա ալեկոծվող հոծ բազմություն ամեն կարգի, դիրքի, կրթության տեր անձինքներից, որը վիճում էր, կարծիքներ էր հայտնում, հերքում հակառակ կարծիքները և մի անասելի տրամադրություն էր ստեղծվել, որը կարող էր մի ամբոխավար ամենայն ազատությամբ և առանց դժվարության յուր ցանկացած ուղղությամբ օգտագործել: Բայց և այնպես, ոչ ոք չտվեց ինձ գոհացուցիչ պատասխան, նախ, ինչո՞ւ համար հիշյալ անձինք կանչվել են փաշայի մոտ. երկրորդ, ի՞նչ հաստատ լուր կա, որ անպատճառ զինաթափություն պիտի պահանջի փաշան հայերից: Այլ միայն լսվում էր. զենքը չենք տա, կմեռնենք չենք տա: Ըստ որում անպակաս էին և անձինք, որոնք առավել, ևս առավել գուրգուրում էին այս ալեկոծությունը վտանգալից դարձվածքներով: Լուր ստացվեց, որ խորհուրդը վերադարձել է քաղաքամասերի սահմանագծի վերա, հայոց թաղում գտնվող նահանգական կառավարությունը և այստեղ խորհրդակցում է Նուրի փաշայի ներկայացուցիչ զորականի հետ, որը պահանջում է հայ ազգաբնակչության զինաթափությունը և կարիք կա Քաղաքացիական կոմիտեայի ամբողջ կազմի մասնակցության: Ես և Քաղաք. կոմիտեայի առձեռն գտնվող անդամները ուղևորվեցինք ցույց տրված վայրը, սակայն ճանապարհին իմանալով, որ խորհուրդը արդեն վերադարձել է և գտնվում է Ի.Ն.Խոջայանցի տանը, գնացինք այնտեղ ու այսպես էլ գտանք: Խորհուրդը ասաց, որ փաշան պահանջում է անպայման զինաթափություն և ժամանակ է դրել մինչև ժամի 10-ը և, եթե պայմանաժամը անցնի և զենքերը չհանձնվին, պետք է ռմբակոծվի հայկական մասը: Եվ ժամը 10-ին փաշայի ներկայացուցիչը պիտի գա հիշյալ նահանգական կառավարությունը մի ժամից հետո պատասխան ստանալու: Ուրեմն, նա պիտի գար ժամը 9-ին, իսկ արդեն ժամը 8-ից անց էր: Բոլորս միասին վերադարձանք Քաղաքացիական կոմիտեայի շենքը, որտեղ բազմությունը, եռապատկված և ավելի մեծությամբ քան առավոտյան, սպասում էր խորհրդի և մյուսներիս վերադարձին: Մի փոքրիկ խորհրդակցությունը այս հետևանքը տվեց. մի մասը վճռողաբար դեմ էր զենքակցության, ինչպիսի սպառնալիքներ էլ որ ի կատար ածվելու չլինեին Գանձակի հայության և նորա արվարձանի գլխին, որոնց երկուսի բնակչությունը 18-20 հազար է, որովհետև զենքակցությունից հետո տաճիկ զորքը և տեղական թուրք ամբոխը կոտորած կանեն հայոց մեջ և ավերածություն. մյուս մասը բարվոք համարեց խնդրելու, որ հայ ազգաբնակչությունը զինաթափ չլինի, որովհետև զենքը տաճիկ զորքին ընդդիմանալու համար չի պատրաստված, այլ հարևան թուրքերից ինքնապաշտպանվելու համար: Թող տաճիկ զորքը մտնի նաև հայ մասը, հայերը կպահպանեն վստահության արժանի վերաբերմունք դեպի զորքը, առանց տեղիք տալու որևէ տարածայնությանց զորքի կողմից. երրորդ մասը, ի նկատի ունենալով ռազմական պաշարի պակասությունը, որը, ըստ վկայության զիտակ անձանց և իրազեկության, հազիվ կբավականանա երկու օր. ապա հացի, ուտելիքի և այլն ընթացիկ կենսական պիտույքների կատարյալ պակասությունը մի կողմից, մյուս կողմից, որ հարևան թուրքերը, որոնք երկաթուղու գծի փակման օրից, 1917 թվի նոյեմբերից, մասնավոր եղանակով գիշերները վաճառում էին թխած հաց, ցորեն, ալյուր, կարող են տաճիկ զորքի հրամանով բոլորովին դադարեցնել ուտելիքի վաճառումը հայերին, որպես մի միջոց հայոց մասի հանձնումը արագացնելու. այլև ի նկատի առած սոսկալի անարխիան, որը դիմադրության վստահություն չէր տալիս, բարվոք հա-

մարեց բանակցության մեջ մտնել Նուրի փաշայի հետ զենքակցության ժամանակը երկարացնելու համար և միաժամանակ սկսել զինաթափությունը, նախապես ապահովելով կոտորած և կողոպուտ թուրք խուժանի, նույնիսկ զորքի կողմից, որպեսզի հայ քաղաքամասը ազատվի կործանումից և կոտորածից ռմբակոծության միջոցով: Սակայն այս թեր և դեմ կարծիքներով լի խորհրդածությունը չտվեց դրական արդյունք և այսպիսի անորոշությամբ էլ բազմությունը հրավիրվեց բակը և նորան պաշտոնապես հայտարարվեց փաշայի առաջարկությունը ի քննություն:

Բազմության կարծիքներն ևս եղան հիշյալ երեք ուղղությամբ, սակայն երիտասարդությունը չտալու կողմնակից էր ինտելիգենցիայի մի մասի հետ. առաջ եկան և այն անորոշ կարծիք հայտնողներ, որ թե զենքակցությունը վտանգավոր է տեղական թուրքերից կոտորվելու և կողոպտվելու տեսակետից և թե զենք չտալը, ուրիշ խոսքով տաճիկ զորքին պատերազմ հայտարարելը, որովհետև հաղթող զորքը կարող է նաև կործանումն և արյունհեղություն ստեղծել. և այս երկյուղը ոչ այնքան տաճիկ զորքից էր, որքան տեղական թուրք խուժանից, ընդհանրապես թուրքերից: Որպեսզի, այսպես կամ այնպես մտածելու ժամանակ ձեռք բերվի, ընդունվեց միաձայն պնդադեսպաններ ուղարկելու կարծիքը պոլկովնիկ Ջեմիլ Ջահիր բեյի մոտ, որը գերմանական Ելենեն-դորֆ կոլոնիայի և Գանձակի մեջի արքունական պողոտայի վերան է յուր շտաբով և ոչ թե պատասխան տալ տաճիկ զորականին, որը մի ժամից հետո պիտի գար նահանգական կառավարությունը դորա համար:

Այստեղ կարևոր է հիշատակել, որ միայն առավոտյան հայտնի եղավ, որ 28-ի գիշերը, թնդանթածությունից հետո տաճիկ զորքը շրջապատել է Գանձակի հայկական մասը և մոտի արվարձանը պատերազմական կարգով՝ առանց դուրս կամ ներս թողնելու զնացողներին և եկողներին և այս ապահովությունը յուր համար, իսկ հանկարծակիի բերող զործողությունը հայոց համար ստեղծելուց հետո, նա սկսել է յուր ուլտիմատումները դնել հայոց առաջ: Եվ այս հանգամանքը հիասթափեցրեց մինչև իսկ Նուրի փաշայից հիացողներին և հմայվածներին:

Պնդադեսպաններ ընտրվեցին, փոխանորդ Լևոն վարդապետ, Անդրեաս բեգ Սեռեբոյակյանց, Գեորգ Մելիք-Շահնազարյանց: Իսմայիլ խան Ջիատխանովի միջոցով այս որոշման և ընտրության մասին հաղորդվեց Նուրի փաշային, որը զինաթափության և նորա հետ պայմանավորված հարցերի լուծումը հանձնել է Ջեմիլ բեյին, ինչպես ժամույց Ջիատխանովը: Երբ ընտրվածներս պատրաստվում էինք ճանապարհ ընկնելու, Ջամալ բեյի՝ կողմից եկան կոլոնիա Շույլցը, յուր օգնականի հետ պատասխանի համար այլայլված տրամադրությամբ և ասացին, որ, որովհետև ժամի 10-ը արդեն լրացել է և պատասխան չկա հայերի կողմից, ուստի Ջամալ բեյը պատրաստվել է հայ մասը ռմբակոծելու և ուժով այն առնելու, իրենք խնդրել են հետաձգել և եկել են Գանձակ այս առթիվ: Վերստին հայտնվեց փաշային Իսմայիլ խանի միջոցով, որ պնդադեսպանները դուրս եկան և խնդրվեց ի գիտություն հայտնել Ջամալ բեյին, որ սպասի:

Մենք երեքս, գերմանացիք և մի հայ սպա սպիտակ դրոշակով հուղի ընկանք դեպի կոլոնիա և ժամը 10 1/2-ին հասանք: Ջեմիլ բեյը ընդունեց մեզ քաղաքավարությամբ արքունական պողոտայի վերա, մի փոքր կամրջի մոտ, առվի ափին, բաց դաշտում և հրավիրեց նստելու կանաչապատ գետնի վերա: Ինքը նստավ ծալապատիկ: Սովորական ողջույններից հետո, մեզանից Գեորգ Մելիք-Շահնազարյանցը, ըստ մեր կանխագույն փոխադարձ համաձայնության, պատմեց մեր առաքելության նպատակը այսպես, Նուրի փաշայի հայերի հետ ունեցած խոսակցությունը նախորդ օրերը այնքան սիրավիր է եղել, Նուրի փաշան այնքան բարի տրամադրություն է ցույց տվել հայերին երեկ, խոստանալով նաև անմիջապես արձակել գերեվարված հայերին, որ այժմ-

\* Ջեմիլը և Ջամալը նույն անձնավորությունն է (ծանոթ.կազմ.):



վա նորա պահանջը զենքերը հանձնելու մասին, և այն այդքան քիչ ժամանակի մեջ, և սպառնալիքը, հակառակ դեպքում քաղաքը ռմբակոծելու նկատմամբ, միանգամայն անսպասելի են և հայ հասարակությունը մնացել է տարակուսած, ժամանակ չունենալով մտածելու յուր անելիքը:

Առավելապես անսպասելի էր, որ տաճիկ զորքը զիշերը հանկարծակի պաշարել է քաղաքը, դրել թնդանոթները, առանց որևէ նախազգուշացման զենքակցության համար խաղաղ ճանապարհով: Այդ պաշարումը ևս յուր զորեղ բացասական տպավորությունը թողել է հայ հասարակության վերա, մինչդեռ այս միջոցը պիտի գործադրվեր բոլոր հնարավորությունները սպառելուց հետո և մինչդեռ տաճիկ կառավարությունը թուրքերի հետ վարվում է բոլորովին հակառակ կերպով: Տաճիկ զորքի մեջ կան նաև տեղական զինված թուրքերից, որոնք առաջապահ մասն են կազմում այժմ և հասել են քաղաքի տակը: այդ թուրքերը հայերի դիսակալներն են. նոքա արդեն պիտի և կոտորեն, և կողոպտեն: Ուստի, թուրքերը պիտի անպատճառ և առանց հապաղման հեռացվին տաճիկ զորքի շարքերից, որպեսզի ավելորդ գրգռող տարր չլինի: Ընդհանրապես հայ ժողովուրդը, ի մասնավորի Գանձակի հայ հասարակությունը սպառազինվել են հարևան թուրքերից պաշտպանվելու համար դեռևս 1905, 1906, 1907 թվականներից սկսած և, այս զինավառությունը ունենալու համար, հայ մարդը վաճառել է նույնիսկ յուր ստացվածքը, կովը, եզը, կապերտը և այլն և այժմ այս ժողովրդի համար մահացու դժվար է այս եղանակով ձեռք բերված զենքից հրաժարվելու: Յետո, հայ ժողովրդի մտքով չի անցել և այժմս էլ չի անցնում, որ այդ զենքը կարող է գործադրվել երբևիցե տաճիկ զորքի դեմ: Պնդադեսպանությունը վստահ է, որ, շարունակեց Գ. Մ. Շահնագարյանը, տաճիկ կառավարությունը կապահովի Գանձակի հայության կյանքը և զույքը, որոնք անվտանգ չեն տեղական թուրքերի երեսից: Նուրի փաշան, մինչև ժամի 10-ը ժամանակ տալով զենքերը հանձնելու համար նման սպառնալիքներով, միանգամայն անտանելի վիճակ է ստեղծել և երկյուղ ձգել ժողովրդի սիրտը: Պնդադեսպանությունը հավատացած է, որ Ջեմիլ բեյը, այս հանգամանքները ի նկատի ունենալով, ժամանակ կտա խորհելու, ժողովրդին հասկացնելու պահանջը և որի ընթացքում տաճիկ զորքը ակտիվ գործողություններ չի սկսի հայ քաղաքամասի դեմ:

Ջեմիլ բեյը, նախ, ցավակցություն հայտնեց, որ հայերը առավոտյանից կրակում են տաճիկ զորքի դեմ, որից կան մի քանի հոգի սպանվածներ, մինչդեռ տաճիկ զորքը բոլորովին կրակ չի արծակել հայերի դեմ. ինքը վշտացած է, որ հայերը, զենքերը ժամադրյալ ժամանակին չհանձնելով հանդերձ, հրացան են պարպում զորքի վերա: Ապա, ինչ մնաց զենքերը հանձնելուն, հայերը պետք է այդ անեն անխոս, որպեսզի ավելորդ տեղը հայ քաղաքամասի կործանումը և անմեղ մարդկանց արյունահեղությունը կանխեն և ինքը ժամանակ կտա մինչև ցերեկվա ժամի մեկը: Եթե այդ ժամանակամիջոցում զենքերը չհանձնվեն, ռմբակոծությունը անխուսափելի է: Յիրավի, որ այս հարցի լուծումը Նուրի փաշան իրեն է հանձնել, այնուհանդերձ ինքը չի կարող երկար սպասել: Առ այս Գ. Մելիք-Շահնագարյանը և ապա դեսպանության մյուս անդամները առարկեցին վերստին. նախ, ժամանակի չափազանց սակավությունը այս գործողության համար. երկրորդ, երաշխավորության անհրաժեշտությունը, որ զենքերը հանձնելու դեպքում, կապահովվի հայոց կյանքը և գույքը. երրորդ, կգսպվին տեղական թուրքերը, որոնք տաճիկ զորքի շարքը մտած, սպասում են կողոպուտի և սպանության: Ջեմիլ բեյը պատասխանեց, որ այսքան ժամանակը բավական է, որպեսզի հայերը մի սալ զենք բերեն բանակ: Այս կհամարվի նշան, որ հայերը ուզում են զինաթափվել և ժամանակը ինքնին կավելացնվի ու երկրորդ, հայերի սխալը այն է, որ տաճիկ կառավարության վերա անվստահելիորեն նայում են, որպես կոտորողի տաճկահայ ժողովրդի, մինչդեռ տաճկահայոց պատմությունը այլ բան է ասում. առաջինը, հայերը տաճկաց տիրապետության ներքո շատ ավելի լավ և արտոնյալ կացություն ունեցել են, քան տաճիկները, քան ռուսահայերը, վայելելով կուլտուրական, կրոնական-հոգևոր, բարեգործական, դպրոցական արտոնություններ, օրինակ Ազգային Սահմանադրությունը. մյուս կողմից,

հայ նախարարներ, փաշաներ, բեյեր, մեծատուններ, դեսպաններ, որոնք, լավ հայ մնալով հանդերձ, միաժամանակ եղել են նաև պետական հավատարիմ պաշտոնյաներ և որոնք վայելել են կառավարության աչքում հավասարազոր վստահություն ի շարք տաճիկ պաշտոնյաների: Հայերի դեմ հալածանք սկսվեց այն ժամանակից, երբ հայերը, եվրոպական քրիստոնյա մեծ պետությունների սին հույսերից խաբված, մանավանդ Անգլիայի և Ռուսաստանի, սկսեցին ֆիդայիներ ուղարկել Տաճկաստան ապստամբության համար, որի գլուխը անցնելով, դաշնակցությունը ակտիվ գործողությունների ձեռնարկեց: Տաճիկ կառավարությունը, յուր ապահովության համար, հարկադրվեց հայերին զսպել. ուղիղ է, եղան կոտորածներ, զրկանքներ. համենայն դեպս հանցավորը հայերը եղան հանձին դաշնակցության, խաղալիք դառնալով եվրոպական մեծ տերությունների ձեռքին: Այնուհետև, այս պատերազմի ընթացքում ևս ավելորդ տեղը հայերը կամավորներ տվին. Անդրանիկը կամավորներին տարավ տաճիկ գործի դեմ, տաճկահայերը շարժվեցին, հետևելով Ռուսաստանին: Ինքը - Ջեմիլ բեյը չի թողել գաղթելու Ղարսի, Ալեքսանդրապոլի և Ճանապարհին եղող հայ գյուղերի բնակչությունը, այլ նստեցրել է իրենց տեղերում, ապահովելով նոցա կյանքը և գույքը: Սակայն ի գուր տեղը հեռացան շատ հայեր Ղարսից և Աղեքսանդրապոլից և ավերվեցին: Այնպես որ եզրափակեց Ջամալ բեյը, հայ կուսակցությունները, նամանավանդ Դաշնակցությունը, որոնք լավ ճանաչում է ինքը, եղել է մեջերը, իրար հետ կռվելով, քայքայեցին նաև տաճկահայ ժողովուրդը և այսօր դուք վախենում եք, որ տաճիկները ձեզ կկոտորեն: Ես, ասաց Ջամալ բեյը, մուրհակ կտամ այս րոպեիս, որ, զինաթափության դեպքում, մի հայի մազի թելին չի կաշվի և մինչև իսկ թուղթ պահանջեց, որ տա այս գրավոր երաշխավորությունը. թուրքերի վերաբերմամբ հայերի երկյուղը կարող է հիմնավոր լինել, շարունակեց նա, սակայն նոքա կզսպվին իսկույն և նոցա ներկայությունը չպետք է շփոթեցնի հայ ժողովրդին: Արդեն երեկոյան թուրքեր չկային բանակում և ճանապարհին:

Հայ դեսպանությունը վերստին պնդեց ժամանակի երկարության վերա: Ջեմիլ բեյը հայտնեց, որ մի ժամ ևս կտա և մինչև ժամի 2-ը կսպասի զենքերի գոնե մասամբ հանձնմանը, որպեսզի չհարկադրվի դիմելու ռմբակոծության ծանր զինվորական պատասխանատվության և շտապեցրեց մեզ քաղաք: Եվ, ոտի վերա կանգնած, հետևյալ պայմանը կրկնեց. 2-ին իրեն ուղարկվի գոնե մի սայլ զենք և, ապա, զան յուր մոտ մնալու համար, որպես պատանդներ, մինչև զենքնկեցության վախճանը, հետևյալ անձինք քաղաքից, որոնց անունները կարդաց տաճկերեն լեզվով գրած ցուցակից. Արշակ Մալխասյանց, երդ. հավատ., նախագահ Քաղ. կոմ. խորհրդի, Հովսեփ Մելիք-Բեգլարյանց, երդվյալ հավատարմատար, Լևոն Մելիք-Մնացականյանց, կալվածատեր և կոմիսար, Աղաբեգ Մելիք-Շահնազարյանց, կալվածատեր, Գեորգ Մելիք-Շահնազարյանց, կոմիսար, Իսահակ Խոջայանց, երդվյալ հավատարմատար, Սարգիս Տեր-Իսրայելյանց, կոմիսար, Եվզենի Մելիքյանց, երդվյալ հավատարմատար, Պողոս Ավալյանց, մասնավոր երդվյալ հավատարմատար, Սուբիասյանց, վաճառական, Խորեն Համասփյուռ, իրավաբան, Նիկողայոս Բաբաբյխանց, երդվյալ հավատարմատար, Խաչատուր Ղարախանյանց, առևտրական, Հովհաննես Մալյանց, առևտրական և ուրիշներ, թվով 17 հոգի: Վերադարձանք քաղաք: Խռնված բազմության և երկու գերմանացոց ներկայությամբ, Գ.Մելիք-Շահնազարյանցը պատմեց Ջամալ բեյի հետ մեր ունեցած բանակցության արդյունքը և առաջարկեց քննել հարցը: Բազմությունը լուռ էր, մի երիտասարդ հակառակ խոսեց զենքնկեցության և, ապա, սույն ուղղությամբ խոսեցին մի քանի զինվորներ, որոնց առաջարկությամբ հայ զորականին հեռացավ, բողոքելով զենքնկեցության դեմ և ասելով. «Լավ է պատվով մեռնենք և տաճիկը հետո մտնի հայի մասը, քան թե «անճամուռ» կերպով մեր զենքերը մեր ձեռքով ինքներս հանձնենք թշնամուն»: Մնացողներին գերմանացիք հորդորեցին զենքերը տալու անհրաժեշտությանը, ի խոյս հայ քաղաքամասի ավերածության և արյունահեղության, որոնք իրենց - գերմանացոց ևս չեն խնայելու և այն առավելապես տեղական թուրքերի ձեռքով, ինչպես շարունակ

վշտաբեկությամբ կրկնում էին իրենք: Տիրում էր տատանումն: Բոլորին հուսահատեցնողը և հոգեպես զինաթափ անողը հայ գորականիի այն անպատրաստ կացությունն էր ըստ անենայնի և, նամանավանդ, պատերազմական պաշարի կողմից, որը նաև ըստ վկայության քաղաքի և շրջանի պաշտպանության գլխավորի երկու օրվա կռվի բավական էր և հացի կատարյալ բացակայությունը: Իսկ այս բանը չէր ուզում ըմբռնել հայ զորքը և կռվող ուժը. նա ասում էր. ինչքան կարող ենք՝ կրթվենք, հետո զենքը ցած կդնենք, առանց մտածելու, որ բռնությամբ քաղաքը առնելուց հետո, տաճիկ զորքը և թուրք խուժանը ազատ էին որևէ սահմանափակումից իրենց գործողությունների մեջ:

Կատարվեց մասնավոր խորհրդածություն. արդյոք շարունակել՝ բանակցությունը Ձեմիլ բեյի հետ և երթալ նորա մոտ թե՛ ոչ, ուրեմն սկսել պատերազմ հայոց և տաճկաց մեջ: Խորհրդածությունը կարևոր դատեց շարունակել բանակցությունը և անհրաժեշտություն համարեց, որ պահանջված անձինք երթան բանակատեղին: Եվ, որովհետև ժամը մոտենում էր 2-ին, ուստի Գեորգ Մելիք-Շահնագարյանցը բարձրաձայն կարողաց Ձեմիլ բեյի ցուցակը: Հովսեփ Մելիք-Բեգլարյանցը, որ կանգնած էր այդտեղ, հրաժարվեց երթալուց, ասելով. «Այս հասակիս մեջ ես պատանդ չեմ լինի և չեմ երթա», և չգնաց, այլ հեռացավ: Արշակ Մալխայանց և Գեորգ Մելիք-Շահնագարյանցը, որպես խորհրդի անդամներ, հարկ սեպեցին մնալու քաղաքում այդ կրիտիկական թուրքին և այդպես էլ էր: Մյուսներից ոմանք առանց պատճառաբանության հեռացան, ոմանք էլ բացակա էին: Պողոս Տեր-Ներսիսյանցը ասաց. «Թեև իմ անունը չկա ցուցակի մեջ, բայց ես գնում եմ»: Իսահակ Խոջայանցը ասաց. «Հարկավոր է երթալ և ես գնում եմ». Լևոն Մելիք-Մնացականյանցը ասաց. «Ես կերթամ, եթե իմ ներկայությունը այստեղ կարևոր չէ»: Հոժարություն տվին երթալու Սարգիս Տեր-Իսրայելյանց և Մարտիրոս Մելիք-Առստամյանց, իրավաբան, որի անունը ևս չկար ցուցակի մեջ: Ես հայտնեցի, որ թեև անունս չկա ցուցակի մեջ, սակայն կգնամ ժողովրդի այս նեղ թուրքին իբրև հայ հոգևորական. Խաչատուր Ղարախանյանցը ևս պատրաստվեց գալու: Այսպիսով պատգամավորությունը կազմվեց. 1. Իսահակ Խոջայանցից, 2. Լևոն Մելիք-Մնացականյանցից, 3. Սարգիս Տեր-Իսրայելյանցից, 4. Մարտիրոս Մելիք-Առստամյանցից, 5. Պողոս Տեր-Ներսիսյանցից, 6. Աղաբեգ Մելիք-Շահնագարյանցից, որը ապրում էր կոլոնիայում և եկել էր Ջամալ բեյի մոտ և պահվեց այնտեղ. 7. ինձանից:

Սկստելով, որ պատանդներս ուշանում ենք հավաքվելու և ճանապարհվելու համար և, երկյուղ անելով, որ պատանդների համեցումը կարող է հիմք լինել ռմբակոծության, Պողոս Տեր-Ներսիսյանցը միայնակ շտապեց Ջամալ բեյի մոտ գերմանացիների հետ, որպեսզի հայտնի թե մնացածները ևս շուտով կգան: Ժամի 3-ն էր, որ հավաքվեցինք և ճանապարհ ընկանք և ճանապարհին երկյուղալի ուշադրությամբ սպասելով, որ արդյոք չենք ուշանում և չի սկսվի ռմբակոծությունը. ճանապարհին մի քանի դիրքերի մոտ, հայերը, առավելապես զինվորները, կանգնեցնում էին և տեղեկություն հարցնում անցուղարձի շուրջը և ասում, որ զենք չեն տա, այլ կկռվեն: Հասանք: Ձեմիլ բեյը նստած էր նույն թունրի վերա. երևում էր, որ զայրացած է: Երբ մենք մոտեցանք, տեղից չվերկացավ, այլ բարևեց նստած: Մենք նստանք թունրի վերա ծանր վիրավորանքը սրտերիս մեջ այդ վարմունքից: Ձեմիլ բեյը լուռ էր. մերոնք էլ չէին խոսում: Մի քանի թուրքից հետո Լևոն Մելիք-Մնացականյանցը խոսք բաց արավ. Ջամալ բեյը մռայլած հարցրեց ուշանալու և զենքեր չբերելու պատճառները. Մ. Մնացականյանցը պատասխանեց, որ պատանդներս ուշ հավաքվեցինք զանազան տեղերում ցրված լինելու շնորհիվ. զենքեր չբերելու պատճառը այն է, որ զինակիրները ցրված են դիրքերում և ցերեկը դժվար է ի մի ժողովել և բացատրել դրությունը ու պահանջը: Պատգամավորությունը խնդրում է երկարացնել ժամանակը, որպեսզի հնարավոր լինի մեծ ժողով գումարել, նամանավանդ զինվորներին հավաքել, որը հնարավոր է անել միայն երեկոյան: Ջամալ բեյը զայրացած ծայրով, թեև հանգիստ եղանակով, ասաց, որ ինքը չի կարող ժամանակ տալ, ինքը ևս պատասխանատու է, որպես զինվորական, զինվորական իշխանության առաջ: Կիրամայի սկսել ռմբակոծությունը: Մելիք-Մնացականյանցը և ա-

պա գերմանացիք վերստին խնդրեցին ժամանակ և Ջեմիլ բեյը դժվարությամբ հոժա-րեց սպասել ևս մինչև ժամի 5-ը և ապա մինչև 5 1/2 և հայտարարեց, որ դա վերջնա-կան ժամադրություն է, խնդրելով մարդ ուղարկել քաղաք մինչև ժամադրյալ միջոցը գեներալի մի մասը հանձնելու և զենքնակեցությունը սկսելու համար: Մելիք-Մնացական-յանցը խնդրեց զինաթափ չանել հայ գյուղացիներին, որոնք, լսած չլինելով կատար-վածը, միամտաբար կարող են քաղաք գալ անձնական գործերով, որպեսզի գյուղացիք չերկնջեն ավելորդ տեղը և գործից հետ չընկնեն այս աշխատանքի ժամանակ և ցույց տվեց քարտեզի վերա գյուղերի դիրքը: Ջեմիլ բեյը ասաց, որ գյուղացիք չեն զինա-թափվելու, նուցա ձեռք տվող չի լինի և գծեց զորքի բռնած տարածությունը: Պատգա-մավորության կողմից Լ. Մելիք-Մնացականյանցը երկար կանգ առավ հայոց սպառա-զինման պատմության և պատճառների վերա և խնդրեց, որ զինված խմբերին թույլ տրվի դուրս գալ քաղաքից և երթալ Արարատյան հանրապետություն, այն ժամանակ զենքնակեցությունը ինքնին կատարված կլինի և տաճիկ զորքը առանց որևէ արգելքի կմտնի հայ մասը: Ջեմիլ բեյը մերժեց զինյալ խմբերին հեռանալու դիմումը քաղաքից, որոնք կարող են հեռանալ առանց զենքի: Պ.Տեր-Ներսիսյանցը Քաղաքացիական կո-միտեի խորհրդի վերա գրեց մոտավորապես հետևյալը. զենքերը մասամբ հանձնելու և զենքնակեցության գործողությունը սկսելու համար ժամանակ տրվեց մինչև 5 1/2-ը. պայմանը չկատարվելու դեպքում, պիտի սկսվին պատերազմական գործողություննե-րը. անհրաժեշտ է զենքնակեցությունը ի խույս տարապարտաց կործանման և արյունհե-ղության: Նամակի ներքևում ստորագրեցին բոլորը բացի ինձանից, որը ես ու իիշյալ գերմանացիք բերինք քաղաք ժամը 4 1/2-ին: Քաղաքացիական կոմիտեի շենքում կար մեծ բազմություն, որին և կարդաց Գեորգ Մելիք-Շահնազարյանցը նամակը: Ձո-րականները հայտնեցին, որ հոժարությամբ չեն հանձնի զենքերը, այլ կկռվեն մինչև վերջը և պատվով կմեռնեն և հեռացան շենքից: Ժողովուրդը հասարակությունը հաշտ-վել էին, նամանավանդ բնիկ քաղաքացիք, զինաթափության, սակայն տատանումը այն երաշխավորության մասին էր, որ զենքնակեցությունից հետո հայ ազգաբնակչության կյանքը և գույքը կխնայվի: Երկու գերմանացիք և Անդրեաս Սեռեբոյանյանցը զնացին, վերջինս մինչև կամուրջ, տեսնվելու Նուրի փաշայի հետ հետաձգումը խնդրելու հա-մար և նախապես տեսնվել են Իսմայիլ խան Ջիատիխանովի հետ: Սա ասել է, որ ինքը չի կարող միջամտել այս նկատմամբ, իսկ փաշան գնացել է գորածակատ, այսինքն այնտեղ, ուր պնդադեսպանությունը և հայ պատգամավորները գնացին Ջամալ բեյի մոտ:

Գեորգ Մելիք-Շահնազարյանցը, ըստ իմ ցուցման, որ անհրաժեշտ է ներկա ծանր թույլին գրություն-պատասխան, թեև բանավոր ես կհայտնեմ ժողովրդի ցանկու-թյունը, պատրաստեց նամակ հայ պատգամավորներին, որ հնարավոր չէ դիրքերից ժո-ղովել զինվորներին, հարկավոր է զենքնակեցությունը թողնել մինչև վաղը, այսինքն մա-յիսի 30-ը, 12 հունիսի, իսկ զիշերը կհավաքվի և ժողովուրդը և զինակիր մարդը: Վերա-դարձանք գորածակատ ես և գերմանացիք և հասանք ժամի 6-ի մոտերքը: Նուրի փա-շան այստեղ էր և զորամասից հեռու նստած էր կանաչ արտի տակ մենակ: Հայ պատ-գամավորները և տեղական թուրքերից ոմանք կանգնած էին պողոտայի վերա և զրու-ցում: Աղաբեզ Մելիք-Շահնազարյանցը ընդառաջեց, ստացավ նամակը և տարավ փա-շային, որը և, իսկույն թարգմանել տալով այն, ասել է սորան. ինքը այլևս չի համբերի, հարկադրված է ուժով առնելու հայ քաղաքամասը. հայերը դիտավորյալ կերպով ձգձգում են զենքնակեցությունը նպատակ ունենալով որոշյալ գործողություններ սկսե-լու զորքի դեմ, որոնք ինքը ստիպված է կանխելու, հանցավորներ են այս եկող պատ-գամավորները, որոնք, եթե ուզեն, կարող են ժողովրդին համոզել զենքերը տալու հա-մար, ավելացնելով, որ ինքը կմտածի անելիքը:

Մելիք-Շահնազարյանցից լսելով, որ փաշան զենքնակեցության ամբողջ պա-տասխանատվությունը ուզում է մեր - պատգամավորներիս վերա ծանրացնել, ես խնդրեցի մեզ հետ եղող գերմանացիներից հասկացնել փաշային, որ մեզանից չի

կախված զենքակրությունը. մինչև իսկ, եթե ուզենանք էլ, անկարող ենք որևէ մեկից բռնությամբ զենք առնել, մյուս կողմից, դա կստեղծե ազգամիջյան ընդհարում հայոց մեջ, որը շատ վատ հետևանքներ կունենա, որ գերմանացիք իրենք ամբողջ օրը ակամատես են ժողովրդի խուճուկը բազմության խռովահույզ տրամադրության դեպի այս հարցը: Հայտնեցին, որ ժողովրդի տրամադրությունը իրենք տեսել են արդեն և գնացին փաշայի մոտ այս հաղորդելու: Փաշան նոցա ասել է, որ ինքը կմտածի:

Քիչ անցած մի ասկյար մեզ, պատգամավորներին առաջնորդեց հարձան Գումմելի այգին և դուռը ծածկեց, քիչ հետո բերեց երեք ասկյար և մեր կողքին նստեցրեց: Անկասկած էր, որ մենք հսկողության ներքո ենք բոլոր պատգամավորներս: 25-30 թույն մնացինք այս դրության - արգելման մեջ, երբ եկավ Ջեմիլ բեյը և հանեց մեզ այգուց և ասաց փաշայի կողմից, որ ես՝ մահրասա մի ասկյարի առաջնորդությամբ քաղաք երթամ, իսկ մյուսները մնան: Ըստ որում փաշայի կողմից ասաց, եթե գիշերը հայ խմբերը զենքերով քաղաքից հեռանան, եթե տաճիկ զորքի վերա կրակ բանան հայերը, եթե հայերը զենքակրեց չլինեն, փաշան վաղը առավոտից սկսելու է հայ քաղաքամասի ռմբակոծությունը և բանակցությունները ավելորդ կլինեն այն ժամանակ: Մի ասկյար իսկույն խուզարկեց մյուս պատգամավորներին: Եվ այս բոլորը այնպիսի փութուտությամբ էր կատարել տալիս Ջեմիլ բեյը, որ հազիվհազ ինձ թարգմանեցին պատգամավորները թուրքերեն ասված այս խոսքերը:

Պատգամավորներին հեռացրին, իսկ ես ասկյարի ուղեկցությամբ ժամը 7-ի մոտերըը ճանապարհվեցի դեպի քաղաք: Գնապարհին յուրաքանչյուր 1/4 վերստի վերա նստած էին պատերազմական պատրաստությամբ 35-40 հոգի ասկյարներ:

Վերջին այս խումբ ասկյարների երկու օֆիցեռ կանգնեցրին ինձ և հարցուփորձի ենթարկեցին: Մայրենի - Նոր-Նախիջևանի բարբառից պոկած տաճկերեն խոսքեր, շաղախած ռուսերենի հետ, կատարելապես գոհացրին ով լինելուս և այստեղ գտնվելուս պատճառների նկատմամբ, որոնք և հրավիրեցին ինձ ասկյարների կողքին նստելու և սպասելու, որովհետև շուտով Նուրի փաշան պիտի անցնի և իրենք նորան ուղեկցելու են և հեռացան դեպի քաղաք, առնելով հետները նաև ինձ ուղեկցող ասկյարին: Հարկադրված նստա, մանավանդ որ չափազանց հոգնած էի ֆիզիկապես և հոգեպես, ամբողջ օրը ոչինչ կերած լինելով և առավոտյան ժամը 6-ից մինչև այդ թույն տանջվելով: Մի ասկյար փորձեց հետս խոսել ժպտադեմ երեսով կես տաճկերեն, կես շարժումներով, կես դիմագոծերով, որպիսի ձևերով և իմ պատասխանները ընդունել. սակայն իմ մտածողությունը այն էր, թե երբ պետք է քաղաք հասնեմ, որպեսզի հնար լինի մի բան անելու, ժողովուրդը փորձանքից ազատելու: Քիչ անցած, հիրավի, փաշան եկավ և, զինվորական կարգով ինձ ողջունելով, անցավ երկու ասկյարի հետ: Նա երևի թե մտածեց, որ ես հանգստանալու համար եմ նստած, իբրև ոտավոր: Անցավ ևս 25-30 թույն և դարձյալ ինձ բան չէն ասում քաղաք ուղևորվելու համար: Համբերությունս կտրված, զորամասի գլխավորից խնդրեցի ասկյար նշանակել ինձ դեպի քաղաք ուղեկցելու համար: Նա ասաց, որ ինքը այդ իրավունքը չունի, որ ես պիտի սպասեմ օֆիցեռների վերադարձին, որովհետև արդեն մթնել է և իրենք պատասխանատու են ինձ դժբախտություն պատահելու դեպքում, մանավանդ որ թուրք էլ չկա: Ասի, որ ինձ դժբախտություն չի պատահի և ցավեցի, որ թղթի համար այսքան ուշ են հայտնում ինձ:

Վերադարձիս պահուն Քաղաքացիական կոմիտեի շենքումն էին Ազգային խորհրդի կողմից եկած պատգամավորներ Արզումանյանցը և Մարտիրոս Հարություն-

\* Բոլորին տեղափոխում են թուրքաց մասը այդ գիշեր և պահում մինչև լույս մի բացօթյա վայրում և առավոտյան փոխադրում քաղաք: Նոքա արձակվեցին հունիսի 3-ի գիշերը: Ինչպես պատմեց նոցանից մեկը, նոքա վտանգի ներկա եղել են, դիրքապահ թուրքերի կողմից, միայն պահապան ասկյարների զգաստությունը փրկել է նոցա (ճանոթ.հեղ.):

յանցը, որոնք, ինչպես իրենք հայտնեցին, խմբապետների, շրջանապետների հետ խորհուրդ էին անում զենքերի հանձնման մասին: Սոցա ներկայությունը և այս հարցով զբաղվելը բոլորովին անակնուկն էր և, որովհետև դեռևս մայիսի 31-ի նամակով Ազգային խորհուրդը, հորդորելով հարևանների հետ սիրով ու խաղաղությամբ վարվել, տեղիք չտալ խռովությանց և այլն, որովհետև ժամանակը չար է, պատվիրում էր ոչ մի դեպքում զինաթափ չլինել, այլ զենքը պահել և այս պատվերը նամակի մեջ երկու տեղում կրկնված էր:

Այս խորհրդածության տրամադրությունը զեննկեցության օգտին էր. հակառակ առարկությունները ավելի ձևի համար էին, քան թե արդյունք հաստատուն որոշման և աննկուն համոզմունքի: Չէին լսվում ամբողջ օրը շարունակվող բացականչություններ, հայհոյանքներ և մակդիրներ սորա կամ նորա հասցեին. խոստումներ և դրդումներ պատվով մեռնելու, բայց երբեք զենքից չբաժանվելու համար: Ընդհակառակը, նկատելի էր մեծ լրջություն, հնազանդ լսողություն և հարգանք դեպի խոսողները: Սա առավոտյան նույն ժողովուրդն էր, որ մինչև երեկո գառնացել էր: Թվում էր, որ բոլորի մեջ այս սուր բեկումը առաջ բերողը էին. մեր երեք անգամ գնալ-գալը, լարված սպասողական դրությունը, դիմադրության հակառակ խոսված ճառերը և կռվելու պատրաստությանց կատարյալ բացակայությունը, տաճիկ զորքի պաշարումը: Ի դեպ բանի, հարկ է հիշել, որ հայ ինտելիգենցիան, չափազանց լուրջ համարելով ըրպեն, առավոտից մինչև երեկո աշխատում էր հանգստացնել ժողովուրդը և մատաղ սերունդը - երիտասարդությունը, ներշնչել բոլորին յուրաքանչյուրի պատասխանատվությունը վտանգի հանդեպ, մանավանդ գյուղատնտես Երիցյանցը, որը համարձակությամբ դրությունը բացատրեց ժողովրդին և հետո էլ արժանացավ ֆիզիկական վիրավորանքի և մահվան սպառնալիքի և այս ինտելիգենցիան այս ուղղությամբ էլ շարունակեց մինչև վերջը և որով կոտորեց սկզբնական ուղղագիծ ոգին և շնորհիվ նորա այս մաքուր աշխատանքի էր, որ ժողովուրդը, մանավանդ ամբարտապան, սակայն ունայն զինվորական մասը խոնարհվեցին: Երևաց և այս, որ Ազգային խորհրդի միջամտությունը յուր որոշ նշանակությունը ուներ:

Արզումանյանցը, դառնալով ինձ, հայտնեց, որ խորհրդակցությունը զինաթափության մասին է, և խնդրեց, որ ես պատմեմ փաշայի մոտ կատարվածը: Պատմեցի: Շարունակվեց խորհրդակցությունը: Արզումանյանցը առաջարկեց հայկական բատալիոնի հրամանատար Պետրոսյանցին վաղը ներկայացնել փաշային բատալիոնի զենքերը: Պետրոսյանցը հրաժարվեց հանձնելու, ասելով, որ ինքը զենքերալ Նազարբեգյանից առ այս հրաման ունի, որի համաձայն, որևէ մեկին զենք հանձնել չի կարող: Արզումանյանցը ասաց, որ ինքը և Մարտիրոս Չարությունյանցը լիազորված են Ազգային խորհրդի կողմից զինաթափության հարցի համար, որը նախատեսված է Բաթումի կոնֆերենցիայում, որին մասնակցել են և հայ պատգամավորները և համաձայնություն տվել: Ինքը պաշտոնապես կհայտնի Պետրոսյանցին Ազգային խորհրդի թուղթը և կպահանջի բատալիոնի զենքերի հանձնումը: Կարևոր սեպվեց առանց ուշացնելու դիրքերը մարդիկ ուղարկել և զենքերը ստանալ և մի ժողովական առաջարկեց պատգամավորություն կազմել այս նպատակով դիրքերը ուղարկելու համար՝ ինձանից և ուրիշ պատվավոր անձինքներից, որպեսզի հավատան այնտեղ և առանց դժվարության զենքերը տան: Ես հրաժարվեցի, ասելով, որ շատ հոգնած եմ և վերադարձա առաջնորդարան գիշերվա ժամը 2-ից անց:

Rusland 97a, Ruisch-Asien, Kaukasus. Bd. 27, A 43318: Պատճեն:

**N 82**

**ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻ ԶԵԿՈՒՅՅՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝ ԲԱՔԿԻ ԱՆԿՄԱՆ ՈՒ ՀԱՅ ԽԱՂԱՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ**

**N 792**

**21 սեպտեմբերի 1918 թ.**

\* Ուղարկված է նաև Կ.Պոլիս, այնտեղ գտնվող ՀՀ պատվիրակությանը: (Ժանոթ.կազմ.):

Բազվա առման մասին իմ հեռագիրը արդեն ստացած կլինեք: Առման լուրին ամենքս վերաբերվում էինք թերահավատությամբ, որովհետև անմիջապես Բազվից որևէ տեղեկություն չէր ստացվում, իսկ պ. Ջաֆարովի Գանձակից ստացած տեղեկությունները մի քանի հանգամանքների պատճառով անհիմն էին թվում:

Այսօր խալիլ փաշայի և նրա գերմանացի օֆիցերների մեկի հետ ունեցած խոսակցությունն բավական լույս սփռեց Բազվա իրադարձությունների վրա:

Ըստ խալիլ փաշայի տված տեղեկությունների Բազվում եղել են ընդամենը 2000 անգլիացի: Դրանց մի մասը կանգնած է եղել Բալաջարի տակ, իսկ մի մասը *Волчье Борота*-ի մոտ: Դրանց արանքի դիրքերումն են եղել քաղաքի հայ ու ռուս պաշտպանները: Թյուրքերը անգլիական երկու հատվածների մեջտեղն են սկսում իրենց զորոճությունները, զրավում միանգամից երեք շարք խրամատները և դուրս գալիս Բալաջարիի անգլիացիների թիկունքը: Վերջիններս գրեթե բոլորն էլ սպանվում են կամ վիրավորվում: Դրանից հետո մնացած պաշտպանները ցրվում են, իսկ *Волчье Борота*-ի մոտ գտնված անգլիացիք նստում են նավերը և փախչում: Թյուրքերի ձեռքն են անցել մոտ 100 բոլորովին նոր սավառակ և ահագին քանակությամբ ռազմամթերք: Խալիլի ասելով անգլիացիք լավ էին կռվում, իսկ մնացածները թույլ:

Իմ հարցին թե արդյոք առման միջոցին կամ հետո էքսցեսներ չեն եղել, նա պատասխանեց, որ մինչև կանոնավոր զորքերի քաղաք մտնելը տեղական թուրք խուժանը կոտորածներ է սարքել. ես ինքս տեսա մի քանի տասնյակ դիակներ, սակայն ասացին, որ տներում էլ են կոտորածներ արել, այնպես որ զոհերի թիվը մի քանի հարյուր պետք է հաշվել: Սակայն երբ կանոնավոր զորքը մտնում է քաղաք, Նուրի փաշան պահակներ է դնում փողոցներում, իսկույն կախել տալիս 40-50 հոգի տեղական թուրքերից և կարգը վերահաստատում:

Արդեն խալիլ փաշայի խոսակցության տոնից երևում էր, որ լուրջ խժոճություններ են եղել Բազվում, սակայն հետո ակնհայտ էր վկայությամբ պարզվեց ամեն ինչ:

Որովհետև ժամանակի սղության պատճառով ես չէի կարող խալիլ փաշային փոխայցելություն տալ, ես գնացի կայարան: Նրան ճանապարհ դնելու: Խալիլը դեռ չէր եկել և կայարանում նրան սպասում էր իր գերմանացի սպաներից մեկը, որ խալիլի հետ Բագու էր գնացել: Ես հարցրի վերջինիս, թե ինչպես անցավ Բազվի առումը: Նա պատասխանեց, որ քաղաքը առնելը ոչինչ հաջող էր, բայց այն բարբարոսությունը, որ տեղի ունեցավ այնտեղ, անկարելի է նկարագրել: «Ո՛չ, լինես քրիստոնյա և եվրոպացի և ստիպված լինես այսպես խժոճություններ տեսնել և լսել - դա վեր է իմ ուժերից, և ես այս երեկո ևեթ պետք է իմ հրաժարականն տամ խալիլ փաշային»: - Սպանվածների ճիշտ թիվը չեմ կարող ասել. գուցե այդ թիվը շատ էլ մեծ չլինի, բայց մարդիկ սպանված են անենաբարբարոս ձևերով և որ գլխավորն է՝ քաղաքը ամբողջովին թալանված է: - Ես տեսա մի փողոցում 20-35 հայ կապված թոկերով ու մոտն էլ պահակ դրած: Նրանց վախճանը ինձ համար պարզ էր և ես ահագին ջանք գործ դրի մինչև կարողացա ազատել նրանց: Բայց այդպիսի քանի քանի դեպքեր են եղել մեր տեսողությունից դուրս... Փողոցներից շարունակ անցնելիս տներից օգնության ձայներ էինք լսում. մի քանի տեղ հասանք, բայց միայն մի քանի տեղ... Մենք այնտեղ ընդամենը չորս գերմանացի էինք. օգնել շատ չէինք կարող, որովհետև վերաբերմունքը դեպի մեզ ուղղակի գարշելի է: - Խալիլ փաշան անմիջական մեղք չունի կոտորածների մեջ. ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Նուրի փաշայի և նրա շտաբի վրա. սրանք եթե կամենային, կարող էին արգելել կոտորածը և թալանը: Պետք է ասեմ որ կոտորած ու թալան եղել են ոչ միայն զորքը քաղաք մտնելուց առաջ, այլև հետո: Իմ տպավորությունն է, որ կոտորածը նախամտածված էր և դրա համար էլ ամեն ինչ արին, որ գերմանական զորքը չմասնակցի էքսպեդիցիային»:

Առայժմ ուրիշ մանրամասնություններ չունեն Բազլի դեպքերի մասին: Այսօր պետք է տեսնվեն ֆոն Կրեսի հետ այն միջոցների մասին, որ պետք է ձեռք առնել էքսցեսների կրկնությունը արգելելու համար: Մ.Չարությունյանը և Մ.Արզումանյանը, որ Բազու գնալու համար մեկնել էին Գանձակ, մնացել են այնտեղ, որովհետև ըստ երևույթին թույլ չեն տվել Բազու անցնել: Այսօր կարգադրեցի որ վերադառնան տեղս:

Նուրի փաշան երեկ Գանձակից մեկնել է Ալեքսանդրապոլ:  
Խորին հարգանք՝ **Ա. Ջամալյան**  
Հավատարմատար Հայաստանի հանրապետության Վրաստանում

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թթ. 5-6: Բնագիր: Չեռագիր:  
**N 83**

**ТЕЛЕГРАММА ПОВЕРЕННОМУ В ДЕЛАХ АРМЕНИИ В ГРУЗИИ О КОЛИЧЕСТВЕ  
УБИТЫХ И АРЕСТОВАННЫХ АРМЯН В БАКУ**

**22 сентября 1918 г.  
Тифлис**

В Баку, при взятии его турками, перебито 38 человек видных армян и до 2000 встречных. Арестованы еще главари, списки которых, также как и списки убитых 38 человек, находятся в миссии Азера при Грузии. Часть города покамест находится под обстрелом англичан. Из Баку требуют вагоны для вывоза чего-то.

Резолюция: "Завести особую секретную папку для негласных сведений. М. Туманов, 23/1 X - 918".

АИ РА, ф.276, оп.1, д.30, л.14. Копия. Машинопись.

**N 84**

**ДОКЛАДНАЯ ЗАПИСКА ОСОБОУПНОМОЧЕННОГО ГЛАВНОГО СОВЕТА ОБЪЕДИНЕННЫХ АРМЯНСКИХ БЕЖЕНСКИХ ОРГАНИЗАЦИЙ ПОВЕРЕННОМУ В ДЕЛАХ АРМЕНИИ В ГРУЗИИ О БЕДСТВЕННОМ ПОЛОЖЕНИИ НУХИ-АРЕШСКИХ БЕЖЕНЦЕВ ДО И ПОСЛЕ 15 СЕНТЯБРЯ**

**23 сентября 1918 г.  
Тифлис**

В начале июля бакинские большевистские войска, продвинувшись в сторону Геокчая, столкнулись с турецкими вооруженными силами, благодаря чему весь Геокчайский уезд и прилегающие к нему части Арешского и Нухинского уездов стали ареной военных действий. Мирное население сел, расположенных в зоне военных действий, снявшись со своих мест частью расположилось в более безопасных селах, частью продвинулось в более отдаленные села Нухинского уезда - в глубокий тыл. Жители селений: Ягублы, Согутлы, Ахплекент, Зарав, Чаргат, Гейбулаг, Сабатлы и др., охваченные паникой, также пустились в бегство и дошли до реки Алазани, естественной границы Грузии с Азербейджаном. Таким образом, у реки Алазани скопилось десяти-

тысячное беженство, которое перешло в Алазань, дав немало жертв ее волнам, и очутилось на территории Грузии, где поголовно было обезоружено грузинскими властями. Сдав оружие, беженцы продвинулись дальше по Ширакской степи, где подвергшись нападению со стороны эльдарских татар, пробились в сел. Нижние и Верхние Кеди и урочище Царские Колодцы Сигнахского уезда.

Осведомившись по появлении беженцев в урочище Царские Колодцы, армянские беженские организации приняли на себя заботы об оказании им продовольственной и медико-санитарной помощи, а также устройства их в будущем. Ясно предвидя опасность, грозящую мирному населению ввиду открытия военных действий в Геокчайском уезде и прилегающих к нему частях Арешского и Нухинского уездов, представители общественных организаций в течение месяца не раз обращались лично или через официальные лица к представителям Республики Грузии об оставлении беженцев в районе Царских Колодцев впредь до представления возможности переселить их в другое более безопасное место. 22 июля в Тифлисе было получено принципиальное согласие министра внутренних дел республики Грузии об оставлении беженцев на своих местах ввиду невыясненного положения в Баку и отказа Северного Кавказа принять беженцев.

Успокоившись на этом, представители организаций энергично принялись за работу, которая опять была прервана предложениями Чрезвычайной Сигнахской уездной комиссии о немедленном выдворении беженцев из пределов Грузии ввиду распространения ими болезней и способствования вздорожанию жизни. Комиссией был разработан маршрут передвижения беженцев группами по 500 человек и назначен день водворения 8 августа. Мотивы Комиссии не имели тогда и не имеют и теперь под собой никакой почвы, что мы можем доказать с фактами в руках. Люди умирали от голода и недоедания, так как ставились препятствия в покупке хлеба.

Несмотря на неоднократные заявления и просьбы со стороны представителей общественных организаций и выставленные доводы, что до получения от турецкого командования ответа, гарантирующего личную и имущественную безопасность возвращающимся, нельзя выдворять беженцев в пустыню, голую, безводную, местами болотистую, в которой благодаря ее отдаленности от населенных пунктов невозможно будет организовать подвоз продуктов и подачу медико-санитарной помощи, что такое выселение равносильно полному истреблению уцелевших остатков несчастных беженцев, 4 августа в 20 часов, после сильного двухчасового ливня, беженцы были сорваны со своих мест принудительными мерами, пущенными в ход: свистели плети, гремели выстрелы и действовали приклады.

Беженцы прекрасно понимали, что их гонят на верную смерть, так как не было получено официального ответа от турецкого командования. Но принудительные меры сделали свое дело...

Уступая грубой силе, беженцы снялись со своих мест, и с плачем и воем насильственно были выдворены на берег Алазани. Сопровождающая беженцев охрана во главе со своим помощником уездного комиссара господина Ткемаладзе, доведя беженцев на берег Алазани и не добившись результатов о размещении их по родным местам, бросила беззащитных и обезоруженных беженцев на произвол судьбы и вернулась обратно. С этого момента началось широкое поле для деятельности вооруженных татарских банд, перешедших на территорию Грузии и производящих всякого рода насилия над беженцами, оказавшимися окруженными со всех сторон вооруженными бандами и не имеющие возможности бежать куда бы то ни было. По возвращении комиссара обратно в Царские Колодцы ему было предъявлено телеграфное распоряжение министра внутренних дел за №916 от 7 августа об оставлении беженцев на своих местах. Наши старания и просьбы, обращенные к комиссару, а впоследствии к министру внутренних дел об обратном переселении беженцев в урочище - в Царские Колодцы оказались тщетными.



Между тем, окруженные со всех сторон вооруженными татарами, лишенные возможности получить откуда бы то ни было продовольствие, если не считать два транспорта, отправленные нами с риском для жизни сопровождающих их лиц, беженцы, прожив на пустом песчанном берегу Алазани дней 10, были приняты Нухинской смешанной делегацией, составленной в Нухе местными общественными деятелями, и размещены в сел. Сабатлы.

С этого времени начинается новый период в жизни беженцев Нухинского и Арешского уездов. Беженцы, лишенные куска хлеба и жилищ, так как их поля были убраны татарами ближайших сел, а дома сожжены, кое-как восстановили развалины и, приютились в них, в намерении предаться обычным своим занятиям и полевым работам. Однако через несколько дней везде и всюду появились вооруженные татарские банды, которые совершали на них нападения: в начале под видом правительственного распоряжения потребовали у каждого села определенное число арб с тремя молодыми людьми и отправили их неизвестно куда; затем угнали весь наличный скот, ограбили все домашнее имущество, избивали мужчин и женщин с требованием указать, как места скрывающихся богатых крестьян, так и скрытое ими имущество, систематически уводили женщин, девушек и детей, глумлялись над человеческой личностью. Нередки случаи массовых расстрелов видных крестьян и общественных деятелей. Такое положение, созданное не только в пределах Сабатлы, но и по всем селам Нухинского и Арешского уездов, завершилось поголовным избиением всех без различия пола и возраста, считая с 10-15 сентября, о чем я телеграфировал Вам и председателю республики Грузии, прося вмешательства в дело прекращения ужасов.

С 17 сентября из разных сел стали прибывать в Царские Колодцы перебежчики, молодые люди в возрасте 18-30 лет, спасшиеся от кровавой бойни и рассказывающие об ужасах, творимых вооруженными бандами и носящих систематический характер. Так, Карапет Бадалов, житель села Каябаши, Ованес Григоров, житель села Варташен, Самсон Мануков, жители сел. Сабатлы и масса других своими письменными показаниями подтверждают вышеизложенное. Достижшие Царских Колодцев 19 сентября уже в сопровождении детей и женщин в количестве 49 душ, как очевидцы и живые свидетели, рассказывают, что сотни женщин и детей сгонялись в помещения, которые обкладывались соломой и поджигались: намеревающиеся спастись в дверь или окно расстреливались; мужчин привязывали веревкой друг к другу, в затылок по 10 человек и через них пропускали лишь одну пулю, заявляя громогласно, что нужно жалеть патроны, при этом убитые в цепи, падая, влекли за собой живых, которых другие "герои" добивали палками и кинжалами. В настоящее время в Царских Колодцах находятся два лица, притворившиеся мертвыми и спасшиеся под трупами, на теле их на плечевой связке у локтя правой руки видны ссадины от туго натянутой веревки, а на теле кинжальные раны. Детей убивали топорами, вилами, а подчас и просто каблуками. Подобных и еще более душураздирающих картин описано много, но и из приведенного ясно видно, что все живое и ценное селений Нухинского и Арешского уездов предано огню и мечу, что унижены и оскорблены несчастные и беззащитные женщины и девушки и истреблены ни в чем не повинные дети. Герои этого побоища известны крестьянам по имени и фамилии, и до сего дня пользуются благами жизни и быть может продолжат свое гнусное дело.

Досадно, что при представившейся возможности не удалось сохранить 10-тысячное беженство, приютившегося в пределах Демократической республики Грузии.

Больно, что руководящие круги Азербейджана своевременно не сдержали разнузданные страсти разъяренных, вооруженных банд, не дающих себе отчета в том, что сами творят, уничтожая своих братьев - крестьян.

Доводя о вышеизложенном до Вашего сведения от имени всех организаций, работающих в Царских Колодцах, имею честь просить Вас принять все зависящие и

срочные меры и ходатайствовать перед кем следует о прекращении дальнейших ужасов во имя спасения уцелевших вдов и сирот.

Кроме того, прошу Вас ходатайствовать перед правительством республики Грузии о предоставлении возможности приютить в Царских Колодцах незначительное количество новых беженцев, случайно спасшихся после ужасного дня 15 сентября.

Особый уполномоченный  
**М. Заргарян**

Резолюция: "Копию препровождать Н. И. Рамишвили с просьбой оставить остальных на груз. терр.; переводы посланы Крессу, Франкенштейну и Халил паше. М. Туманов".

АИ РА, ф. 276, оп.1, д.14, лл.60-62. Подлинник. Машинопись.  
**N 85**

**ՔԱՂՎԱԾՔ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱՍԱՐԻ  
ՁԵԿՈՒՅՅԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ  
ՄԻՆԻՍՏՐԻՆ՝ ԲԱՔՎԻ ԱՈՒԱՆ ՄԱՍԻՆ**

**N 841**

**24 սեպտեմբերի 1918 թ.  
Թիֆլիս**

Բազվի մասին այստեղ ամենահակասական լուրեր են շրջում դեռևս: Մի կողմից պ.Ջաֆարովը լրագիրները հեղեղում է այնպիսի տեղեկություններով, որոնք ոչ մի կասկած չեն թողնում, որ քաղաքը գտնվում է Ադրբեջանի իշխանության տակ, իսկ մյուս կողմից որոշ տվյալներ կան, որ Բազվում ադրբեջանցիք դեռ չեն կարողացել վերջնականապես հաստատվել:

Նախ և առաջ մեզ համար անորոշ են մնում մի քանի հարցեր. ի՞նչն է պատճառը, որ Խալիլ և Նուրի փաշաները հազիվ ոտքը Բազու դրած՝ վերադառնում են ֆրոնտից՝ Խալիլը Ալեքսանդրապոլ, իսկ Նուրին՝ Գանձակ: Երկրորդ՝ ինչպե՞ս է պատահել, որ անգլիացիք չեն ոչնչացրել նավթահանքերը կամ առնվազն հրդեհել նավթի և բենզինի պահեստները, այլ թողել են այդ հարստությունները թշնամիների ձեռքին: Վերջապես երրորդ՝ ինչո՞ւ մինչև հիմա անմիջապես Բազվից հաղորդագրություն չի ստացվում քաղաքի վիճակի մասին, կամ ինչո՞ւ հաղորդակցությունը Գանձակի և Բազվի մեջ չի վերականգնվում:

Վերոհիշյալ հարցերի անորոշությունը արդեն կասկածներ է հարուցանում պ.Ջաֆարովի հաղորդագրությունների դեմ: Այս կասկածը զորեղանում է երկու տեղեկությամբ, որ մենք ստացել ենք հատուկ ճանապարհներով անցյալ օրը և երեկ: Ըստ առաջին տեղեկության Բազվի մի մասը գտնվում է անգլիացիների ռմբակոծության տակ:

Խորին հարգանքը՝ Ա. Ջամալյան, հավատարմատար  
Հայաստանի հանրապետության Վրաստանում

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 7 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

**N 86**

**ԲԱՐՈՆ ՖՈՆ ԴԵՐ ԳՈԼՑԸ՝ ՖՈՆ ԿՐԵՍԻՆ**

Գերմանական պատվիրակություն  
Թիֆլիս

1. Դրությունը Բաքվում

...Սկսվում է հայերի պարբերաբար հետապնդում. հայ մտավորականներից ում գտնում, ձերբակալում են: Երեկ տարան շղթայակալ քսան այդպիսի մարդկանց: Սալյանի զորանոցներում կան բանտարկյալների և գերիների մի մեծ կայան, մեկ կամ մի քանի պատժաճամբար: Ըստ օգնություն փնտրող հայերի և հրեաների տվյալների, ճամբարներից մեկի պետը մի գերմանական սպա է, շեկ բեղերով, այսինքն, գերմանացու արտաքինով թուրք: Հոլանդական արտահաստիքային հյուպատոս Վան դեր Փֆլազը այս խայտառակ ճամբարի վրա հրավիրեց Նազըմ բեյի ուշադրությունը: Ձերբակալված հայ մտավորականների նկատմամբ, հավանաբար դատավարության անվան տակ, միջոցներ են ձեռք առնվելու (հայկական մարտյան ջարդերի քննությունը): Կալանավորված արական բնակչությունը (այդ թվում՝ ինժեներներ, տեխնիկներ, բանվորներ) շուտով կուղարկվի հարկադիր աշխատանքների (երկաթուղու շինարարություն Լենքորանից Նախիջևան, երկաթգծի պաստառի մեծ մասը ռուսների կողմից արդեն պատրաստված է) : Չորս արտահաստիքային հյուպատոսները, որոնց չեզոք խիղճն ու անձնական շահերը չեն կարող համակերպվել թուրքերի կամայականությանը, մտածում են այսօր բողոք ներկայացնել, որ բոլոր հայ մտավորականների հեռացումով տնտեսական կյանքին անհաղթահարելի հարված է հասցվում...

Բարոն ֆոն դեր Գոլց

Rusland 97a, Ruisch-Asien, Kaukasus. Bd.:

N 87

**ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝ ԲԱՔՎԻ ԱՌԱՆ ԵՎ ՀԱՅ ԽԱՂԱՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ԿԻՐԱՌՎԱԾ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

N 848

25 սեպտեմբեր 1918 թ.  
Թիֆլիս

Գանձակից վերադարձած պ. Մ. Հարությունյանը այսօր պատմեց ինձ հետևյալը Բազվի առման մասին.\*

«Քաղաքը գրավվել է սեպտ. 15-ին: Նույն օրը առավոտյան Ադրբեջանի կառավարությունը Նուրի փաշայից հեռագիր ստացավ, որով նա հրավիրվում էր անմիջապես մեկնել՝ հաջորդ օրը Բազու մուտք գործելու համար: Կառավարությունը մեկնեց ամսիս 16-ին: Սեպ. 15-ին մենք տեսնվեցինք նախագահ Ֆ.Խ.Խոյսկու հետ և խնդրեցինք այժմ գոնե մեզ յուր հետ տանել Բազու, զուցե մենք այնտեղ հարկավորվենք մտքերը խաղաղացնելու համար: Նա մեզ խոստացավ երեք օրից հետո հեռագրով

\* Մ.Հարությունյանի նամակի բնագիրը տես ՀՀ ՊԱ, ֆ.276, ց.1, գ.31, թթ.99-101 (ծանոթ.կազմ.):

կանչել: Նա մեզ չկանչեց և միայն սեպտ. 21-ին, երբ նա վերադարձավ Գանձակ, մենք կարողացանք նրա հետ տեսնվել և իմանալ, որ մեր գնալու կարիքը չկա, քանի որ տեղական հայերը արդեն կազմել են կոմիտեներ և անում են, ինչ որ հարկավոր է:

Թե խան խոյսկու հետ գրուցելով և թե մանավանդ մի քանի օր նրանից առաջ Գանձակ եկած Բազվի անցքերին մասնակցելուց հետո թուրք սպաներին հարց ու փորձ անելով մենք կազմեցինք հետեյալ պատկերը:

Երկուսուկես օր քաղաքը մատնված է եղել ամբոխի և ասկերների քմահաճույքին. նրանք կոտորել են, մանավանդ՝ կողոպտել: Խան խոյսկու ասելով սպանված կլինի մինչև 1000 մարդ: Նույն անձի ասելով կողոպտված են թե խանութները և թե տները: Հանքերը, գործարանները և տները չեն այրած: Հայերը՝ որ սկզբի օրերը թաքնված են եղել, նրա այնտեղ եղած վերջին օրերը արդեն դուրս էին գալիս թաքստատեղերից և շրջում քաղաքում, մինչև անգամ լինում թուրքաց մասում: Միայն երրորդ օրը մուտք է գործում կառավարությունը և Նուրի փաշան: Խան խոյսկու ասելով՝ իր խիստ պահանջի համաձայն Նուրի փաշան ձեռք է առնում կտրուկ միջոցներ՝ կախադառնով և գնդակահարությամբ հաստատում է կարգը քաղաքում: Նա մարդիկ է կախում զանազան փողոցներում: Սպաների ասելով, յուրաքանչյուր փողոցում մի քանի հարյուր դիակ է թափված. իսկ մեկը պատմում էր, որ իր էսկադրոնը չկարողացավ առաջ շարժվել դիակների պատճառով: Հայերից շատերը հեռացած են եղել քաղաքից դեռ շատ վաղ, իսկ շատերն էլ այդ օրերն են հեռացել և գտնվում են Նարզին կղզում, Պետրովսկ, Էնգելի և մասամբ նավերով հաժում են ծովի վրա: Սրանք պատգամավորություն են ուղարկել՝ խնդրելով թույլտվություն վերադառնալու և ստացել են իրավունք: Ձինված ուժը՝ թե անգլիացի և թե հայ, հեռացել են քաղաքից. ըստ լուրերի՝ անգլիացիք բանկերից տարել են բոլոր արժեքները, բոլոր բենզինը և շատ բան, ինչ որ իրենց հարկավոր է:

Հայերի կողմից մի պատգամավորություն՝ Դաստակով, Թաղիանոսյան և Ղուկասով ներկայացել է խան խոյսկուն և օգնություն խնդրել աղետյալների համար և պատասխան է ստացել, որ իրենք առայժմ սկսեն գործել սեփական միջոցներով՝ մինչև կառավարությունը օգնության կգա:

Այս հատուկտոր տեղեկությունները հնարավորություն չեն տալիս իսկական պատկերը գծելու համար: Բայց ես համարձակվում եմ մտածել, որ քաղաքը կռվով չէ վերցրած. և այն պաշտոնական հայտարարությունը, որ քաղաքը վերցված է 36 ժամվա համառ կռվից հետո՝ ոչ այլ ինչ է, եթե ոչ դիտավորություն՝ կոտորածը և կողոպուտը կռվի անվան տակ հրապարակ բերել: Ըստ մեր տեղեկությունների Բազվում կոտորված են մինչև 2000 հոգի և գնդակահարված 40 ականավոր հայեր: Դեռևս Գանձակում մենք լսեցինք, որ սպանված հայերից են. բժ. Աղամիրզյան, Այվազով և Հարությունով (վերջիններից՝ հայտնի գործիչներ քաղաքային ինքնավարության) իրենց ընտանիքներով»:

Խորին հարգանքը՝ **Ա. Զամալյան**, հավատարմատար  
Հայաստանի հանրապետության Վրաստանում:

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 8 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 88

ՊԱՅԵՍՏԻ ԼԵՅՏԵՆԱՆՏ Վ. ԼԵԵՐՍԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

25 սեպտեմբերի 1918 թ.  
Թիֆլիս

Ջորջի շտաբի դատարան  
Երկա են պահեստի լեյտենանտ Շտայնը՝ որպես իրավաբան-սպա  
եֆրեյտոր Վայցելը՝ որպես դատարանի գրագիր:

Դատակոչով ներկայանում է պ. լեյտենանտ Լեերսը, ականանետային վաշտ N 176: Բացատրվեց, որ նրանից կարող են երդում պահանջել իր ցուցմունքի համար: Նա տվեց հետևյալ ցուցմունքը արձանագրման համար.

Անձի վերաբերյալ. Անունն Վալդեմար Լեերս է, ծնվ. 1893 թ. մարտի 8-ին, կրոնը՝ ավետարանական: Պահեստի լեյտենանտ և ականանետային N 176 վաշտի հրամանատար:

Գործի վերաբերյալ. Սեպտեմբերի 16-ի երեկոյան ժամը 12-ին Նուրի փաշային ուղղված պ. գեներալ ֆոն Կրեսի նամակով որպես սուրիանդակ մեկնեցի Ելիզավետպոլ: Ունեի միայն թուրքերեն լեզվով վկայական մինչև Ելիզավետպոլ՝ նամակն անձամբ Նուրի փաշային հանձնելու հանձնարարությամբ...

Երբ ամսի 18-ի առավոտյան լուր եկավ, որ Նուրի փաշան մնում է Բաքվում, փորձեցի Չեֆիկ բեյից Բաքու գնալու թույլտվություն ստանալ: Չեֆիկ բեյը հրաման ուներ ոչ մի զինվորական (կամ քաղաքացիական) անձի Բաքու չթողնել...

Տպավորությունս այն էր, որ թուրքական ստորին իշխանությունները ուզում էին ուշացնել ինձ, որպեսզի չթողնեին, որ գերմանացի որևէ սպա այս օրերին Բաքու մտնի: Ինձ հայտնի չէ, թե դա վերադաս իշխանությունների ցուցումով էր արվում, թե ոչ:

Rusland 97a, Ruisch-Asien, Kaukasus, Bd. 27, A 48812: Բնագիր:

N 89

**ИЗ ПИСЬМА ДЕЛЕГАЦИИ АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКИ В БЕРЛИНЕ АРМЯНСКОЙ  
МИРНОЙ ДЕЛЕГАЦИИ В КОНСТАНТИНОПОЛЕ О ТУРЕЦКО-ГЕРМАНСКИХ  
И РУССКИХ ПЕРЕГОВОРАХ ПО СОБЛЮДЕНИЮ БРЕСТСКОГО ДОГОВОРА, ОБ  
ОТВОДЕ ТУРЕЦКИХ ВОЙСК ИЗ ВСЕГО ЗАКАВКАЗЬЯ И БАКУ**

N 69

26 сентября 1918 г.  
Берлин

Дорогие друзья! Сегодня выезжаю в 3 часа пополудни. Пишу в последний раз из Берлина. Талаат выехал отсюда 24-го вечером. От него вы уже имеете некоторые сведения. Тем не менее считаю нужным сообщить вам все мне известное, ибо, как определилось здесь, Талаат в разных местах говорил разное и делал неодинаковые отношения. В общем и в целом, его позиция одна вам известна из писем Амо. Он до последней минуты твердил, что с армянами он почти что поладил, что это дело легкое (из-за чего только мир столько времени бьется!), а вот с грузинами (я бы прибавил и с русскими) дело потяжелее.

В общем и в целом, как вам известно из нашей телеграммы, под которой совершенно случайно не было моей подписи, турки согласились отойти до брестских границ, очищают и Баку, конечно, Лосов, у которого я был вчера с прощальным визитом, уверен, что турки выполняют эти обещания, ибо у них создалось очень тяжелое политическое положение. Однако настоящее положение не так просто, как кажется. Со взятием Баку большевистская власть выступила очень резко и активно, и теперь

приходится Турции и Германии считаться с новым, привходящим, так сказать, фактором. Это вы можете увидеть из прилагаемой радиотелеграммы Чичерина в Константинополь. (Документ этот передан мне лично конфиденциально, прошу это принять во внимание). Кроме того, я был третьего дня, т.е. в день отъезда Талаата и Иоффе и вот наша беседа. Талаат у него сидел с 10 ч. утра до 1 часа пополудня. Это было его третье посещение, причем все эти встречи имели своим главным вопросом почти исключительно нарушения Брестского договора и занятия Баку. Вечером я был у него и в моем присутствии он, в течение более часа, говорил по телефону с Кричче (т.м.и.д.) о создавшемся положении, причем Кричче просил все время отказаться от взятого курса.

Талаату предъявлено было отойти незамедлительно к брестским границам, под угрозой разрыва дипломатических и мирных отношений. Талаат согласился, но в свою очередь заявил, что в Армении на железных дорогах они оставляют патруль. Иоффе категорически ему в этом отказал, заявив, что пока хоть один турецкий солдат находится на российской территории, до той поры Брестский договор будет считаться нарушенным. Кроме того, большевики, что очень важно, требуют, чтобы турки, эвакуируя Закавказье, передавали бы все шаг за шагом большевистским властям, которые придут туда в лице комиссаров и пр. Когда Талаат заявил о независимости, то Иоффе сказал, что об этом вопросе не может быть никакой речи до тех пор, пока турецкие отряды и администрация не очистили занятых незаконно территорий. Талаат обещал ответить из Константинополя на эти пункты, кроме брестских границ, которые он безоговорочно признает и реализует”.

**А. Зурабов**

АИ РА, ф.200, оп.1, д.80, л.92-93. Автограф.

**N 90**

**ՓՈԽԳՆՎԱՊԵՏ ՊԱՐՎԵՆԸ ԳԵՆԵՐԱԼ ՖՈՆ ԶԵՆՔԹԻՆ՝  
ԲԱՔՎԻ ԴԵՊԵՐՏԻ ՄԱՍԻՆ**

**26 սեպտեմբերի 1918 թ.  
Թիֆլիս**

*Թուրքական բանակի խումբ «Արևելք»  
Գլխավոր շտաբի պետ  
փոխգնդապետ Պարակեն*

**Նորին գերագանցություն  
գեներալ-լեյտենանտ Ֆոն Զենքթին,  
Դեպքերը Բաքվում (քաղաքի) գրավումից հետո 1918-ի  
սեպտեմբեր 16-ին և 17-ին**

...Քաղաքի միջով ռազմադաշտ գնալիս տարօրինակ տեսարանի հանդիպեցինք: Փողոցներում գրեթե մարդ չկար: Խանութներն ու տները գրեթե առանց բացառության թալանված էին: Տարբեր տեղերում դիզված էին գողոնի կույտեր, որոնք ըստ երևույթին թալանել էին թաթարական կողոպտիչները: Մասամբ դրանց հսկում էին թուրքական զինվորները: Ինքնանպատակ բռնագրավումը, սակայն, ցանկալի արդյունք չունեցավ, քանի որ զինվորներն ու թաթարներն անարգել քրքրում էին կույտերը և տանում, ինչ որ ուզում էին: Այդ ուղևորության ժամանակ երևացին ծանր հանցագոր-

ծությունների ակնհայտ հետքեր: Ճանապարհին ընկած էին երկու սպանված երեխա, անմիջապես մեր կողքին, մի նրբանցքում կրակոց հնչեց, մի պատուհանից կանայք ծայրահեղ հուսահատությամբ օգնության էին կանչում: Մեր մեքենաները կանգնեցնելով, շտապ մտանք շենքը, բայց չարագործները փախել էին հետնամուտքից: Այն ժամանակ արդեն իշխում էր այն համընդհանուր համոզմունքը, որ քաղաքում չկա կարգ ու կանոն և որ քրիստոնյա բնակչությունը թալանվել, բռնաբարվել ու սպանվել է: Շարունակեցինք մեր ճանապարհը դեպի ռազմադաշտ, որտեղ կայացավ վեց հետևակային զնդերի և այլ զորատեսակների շքերթ...

1) Օգոստոսի 23-ին Մյուրգել փաշան ինձ ասաց Գյուսդեկում, որ թաթարները բացահայտ հայտարարում են, որ խոշտանգելու են հայերին, հենց որ թուրքերը Բաքուն վերցնեն: Ես այս հայտարարության մասին հաղորդել եմ Նուրի փաշային և ժամանակին մի քանի անգամ խնդրել նրան նախապես միջոցներ ձեռք առնել:

2) Ինչպես Մյուրգել, այնպես էլ Նուրի փաշային ես նկարագրել եմ թե Բեդեկերի և Բաքվի քաղաքային պլանի հիման վրա ինչպիսի միջոցներ պետք է ձեռք առնվեն մեծ քաղաքը գրավելիս՝ նախ, սեփական անվտանգության, ապա՝ ուրիշների կյանքի և ունեցվածքի պաշտպանության համար: Ես առաջարկել եմ պատրաստել և բազմացնել քաղաքի պլանը և զնդերին ճշգրիտ ծանոթացնել իրենց խնդիրներին: Այս ամենից ոչինչ չի արվել:

3) Թաթարների մեծ մասն ապրում է Բաքվում, 2 կմ երկարության բարձր պարիսպով շրջապատված թաղամասում: Մուտքերն զբաղեցնելուց ավելի հեշտ բան չի մեղ չէր կարող: Դրանով մարդասպանների ամբոխի մի մեծ մաս զրկված կլիներ վայրագություններ անելու հնարավորությունից: Այդ միջոցառումը մինչև վերջ չի էլ իրագործվել:

4) Հավանաբար հենց սկզբից Գենջեում՝ կամ Կ. Պոլսում պլակատներ են պատրաստվել, որոնք ռազմական դրություն էին հայտարարում և մահվան սպառնալիք՝ կողոպուտների համար: Երբ ջարդերը առանց նվազելու շարունակվեցին նաև երրորդ օրը, վերջապես այդ միջոցառումն ղիմելու վճիռ կայացվեց:

5) Երբ մենք հավաքված էինք «Մետրոպոլ» հյուրանոցի սրահում, ամեն կողմից մեզ հեղեղեցին օգնության կանչերով (հեռախոսով և տեղում անձամբ): Հայտնվեցին չեզոք հյուպատոսները, դանիականի գլխավորությամբ և դառը խոսքերով բողոքեցին թուրքերի անգործությունից, որը շարունակվող կոտորածի և կողոպուտի միակ պատճառն էր: Դանիական հյուպատոսը ցույց տվեց Նազըմ բեյին և հարցրեց ինձ, թե ո՞վ է այդ պարոնը: Երբ ես նրան ասացի, որ Նուրիի գլխավոր շտաբի պետն է, այդ, անշուշտ, անբասիր վկան ասաց. «Սա վտանգավոր մարդ է: Նա չի ուզում գործել և միշտ մեզ դեմ է»: Բնականաբար, բոլոր գերմանացիներն ու գերմանացիների հովանավորության տակ գտնվող անձինք դիմեցին ինձ, բայց հյուպատոսներն ու այլ անձինք ևս խնդրեցին ինձ, որպես գերմանացու, միջամտել և օգնել: Ես այդ մասին տեղեկացրի Նուրի փաշային: Ամենից առաջ, քանի որ չկար ոչ մի գերմանացի պաշտոնական ներկայացուցիչ, ես խնդրեցի պաշտպանել գերմանացիների կյանքն ու ունեցվածքը: Խնդրեցի, որ գերմանացիների բնակարանների առաջ անմիջապես պահակներ կանգնեցվեն:

8) ...Չեմ կարող չհիշատակել բազմիցս բացահայտորեն արտահայտված կարծիքը, որ թուրքական ղեկավարությունն ուզում էր թաթարներին հայերից վրեժ առնելու առիթ տալ: Այն, որ Նուրին հակառակն է պնդում, դա ոչինչ չի ապացուցում: Ես այնքան հաճախ եմ տեսել, թե ինչպես են թուրքական սպաներն առանց աչքը թարթելու ստում, որ խոսքերին չեն վստահում:

Երեկոյան ժամը 5-ի և 6-ի միջև «Մետրոպոլ» հյուրանոցի սրահ եկավ շատ հուզված դանիական հյուպատոսը և հաղորդեց ինձ, որ գերմանացիների տները նորից թալանվում են, իսկ բնակիչներին սպառնում են զենքով: Ես մոտեցա Նուրի փաշային և

\* Գյանջա (ծանոթ.կազմ.):

բարձրաձայն ասացի նրան մոտավորապես հետևյալը. «Ձերդ գերազանցություն, խնդրում եմ Ձեզ վերջապես ազդու միջոցներ ձեռք առնել գերմանացիներին պաշտպանելու համար: Հակառակ դեպքում ստիպված կլինեն հաղորդել գերմանական դեսպանությանը Կ. Պոլսում, թե որքան քիչ եք Դուք պաշտպանում գերմանացիների կյանքն ու ունեցվածքը»: Նուրի՛ն մի քիչ զարմացած պատասխանեց, որ ամեն ինչ արել է: Ես պատասխանեցի, որ դա այդպես չէ, և որ շքերթ են անցկացրել այն ժամանակ, երբ սպանություն ու կոդոպուտ է տեղի ունենում...

Հաջորդ առավոտ, սեպտեմբերի 17-ին, կոդոպուտը շարունակվեց: Այնժամ մեր հյուրանոցի առաջ մի կոդոպուտիչ կախաղան բարձրացվեց: Թուրքերը պատմեցին մեզ, որ կոդոպուտիչներին ահաբեկելու համար նաև ուրիշ մահապատիժներ են կայացվում: Երբ ես սեպտեմբերի 17-ի երեկոյան թողեցի Բաքուն, կայարանի մոտակայքում դեռևս աշխուժորեն կրակում էին: Կարգ ու կանոնը քաղաքում դեռ հաստատված չէր:

Գազանությունները մեծ մասամբ կատարվում էին տների ներսում: Այդ պատճառով փողոցներում համեմատաբար քիչ դիակներ կային: Դրանք գերազանցապես անկյուններում էին դարսված, այնպես որ հաճախ միայն հոտից կարելի էր իմանալ: Մի տեղում ես իրար վրա դարսած 7 դիակ տեսա՝ այդ թվում մի քանի երեխա...

Գրեթե բոլոր դիակները ծածկված էին կապտուկներով, որոնք առաջացել էին հրացանների խզակոթերի հարվածներից և խողխողումներից: Նկուղներից դիպիտ էր փչում: Պետք է շեշտեն, որ ես միայն քիչ ժամանակ ունեի կոտորածի հետքերով գնալու համար, որովհետև ամեն կողմից օգնության կանչեր էին լսվում: Սակայն իմ այս կարճ ճանապարհին ջարդերի հետևյալ ակնհայտ ապացույցներին հանդիպեցի: Փողոցներով անցնելիս այն տպավորությունն էի ստանում, որ տների ամբողջ շարքեր են կոդոպուտված՝ նկուղից մինչև ձեղնահարկ: Երբ ամսի 17-ի երեկոյան թևֆիկ բեյը քաղաքում շրջելուց հետո վերադարձավ, առանց հարցիս սպասելու ինձ ասաց. «Դուք իրավացի եք, քաղաքում սարսափելի բաներ են տեղի ունեցել: Դա հնարավոր չէ ժխտել»: Այլ վկաների ներկայությամբ մի գերմանացի պատմեց ինձ, որ Նուրի փաշայի համհարզի հետ մի տուն է մտել, որտեղ (առանց սեռի կամ տարիքի խտրության) սպանված, ընկած էին տասներեք վրացի: Երբ նա ուշադրություն է հրավիրել այն բանի վրա, որ վրացիներ են, այսինքն գերմանացիների հովանավորության տակ գտնվող անձինք, Նուրիի համհարզը ուսերը թոթվելով ասել է. «Նրանց պարզապես հայերի տեղ են դրել»:

Դանդիական հյուպատոսը ջանացել է բացահայտել երկու գերմանացիների սպանությունը: Նրանց տանը պաշտպանվելիս են եղել հայ զինվորներ, որոնք թուրքերի մոտենալուն պես փախել են: Թեև երկուսն էլ անզեն են եղել և ասել են, թե գերմանացի են, առանց իրողությունը պարզելու, նրանց գնդակահարել են:

Բազմաթիվ ողբերգական իրադարձություններից և ցնցող տպավորություններից կուզենայի մի դեպք առանձնացնել: Երեք աղջիկ ունեցող մի գերմանուհի հաղորդեց ինձ, որ իր փեսային՝ ազգությամբ հայի, սպանել են, իսկ իր դստերը՝ ազգությամբ գերմանուհու, երկու երեխաների հետ քշել-տարել: Քանի որ ես հույս ունեի, որ նրանք գուցե կգտնվեն այն ճամբարներից մեկում, ուր ամսի 17-ի առավոտից, հրացանների խզակոթերի և մտրակների հարվածներով, հայերին անասունների նման ներս էին քշել և փակել, այդ կնոջ հետ գնացի ճամբարից ճամբար: Կորածներին չգտանք: Տուն վերադառնալիս կինը լացով ասաց ինձ. «Եթե Վիլիելմ հայրիկը տեսներ մեր քշված վիճակը, մեզ անշուշտ գերմանական օգնություն կուղարկեր»: Այս խոսքն արտացոլում է Բաքվի ամենալայն, կարելի է ասել, բոլոր ոչ թուրքական և թաթարական շրջանների տրամադրությունը:

Բազմաթիվ վկաների թվից, որոնք ինձնից շատ ավելի լավ կարող են պատմել ժամը հանցագործությունների մասին, կուզենայի նշել դանդիական, շվեդական և իրանական հյուպատոսներին, ոմն պ. Դասելին՝ բազմաթիվ այլ գերմանացիների կողքին, որոնց անունները չեն հիշում, ապա մայրը Հարթմանին, մայրը Մայռին, շտաբի զլխա-



վոր բժիշկ Բրոքեյնանին, բավար (ական) դ 15 եգերական գնդի լեյտենանտ Ութերմարկին...

Փոխգնդապետ Պարակեն

Rusland 97a, Ruisch-Asien, Kaukasus, Bd. 27, A 44385: Պատճեն:  
N 91

**ТЕЛЕГРАММА ОСОБОУПНОМОЧЕННОГО МОСКОВСКОГО АРМЯНСКОГО КОМИТЕТА ДИПЛОМАТИЧЕСКОМУ ПРЕДСТАВИТЕЛЮ АРМЕНИИ В ГРУЗИИ ОБ ИЗБИЕНИИ НУХИНСКИХ БЕЖЕНЦЕВ**

**N 298**

**28 сентября 1918 г.  
Царские Колодцы**

Сведения об избииении большей части беженцев Нухинского уезда подтверждаются новыми показаниями спасшихся. Эти сведения известны также местной администрации тем не менее Сигнахский уездком Гелашвили снова распорядился об обратном выселении их в Азербейджан. Прошу вас принять меры предупреждения дабы избежать второй Алазани.

Особоуполномоченный Московского Армянского комитета **Гянджеянц**

Մակագրութիւն. «Այս մասին գրել Վրաց արտաքին գործերի մինիստրին և պատճենը՝ թէ հեռագրի և թէ մեր գրութիւնը հայ գաղթականության մասին: 30/IX»:

АИ РА, ф.276, оп.1, д.55, л.70-71. Телеграфный бланк. Подлинник.

**N 92**

**ПИСЬМО ВИКОНТА БРАЙСА БАЛФОРУ ОБ ОЦЕНКЕ РОЛИ АРМЯН ПРИ ПАДЕНИИ БАКУ**

**30 сентября 1918 г.  
Хиндлип  
Форист роу, Суссекс**

**Мой дорогой Балфор,**

Погос Нубар Паша (сын старика Нубара), руководитель Армянского Национального совета в Париже, послал мне копию сообщения, которое этот Совет адресовал Вам, прося о поддержке с моей стороны его просьбы о том, чтобы правительство Его Величества сделало бы, если это возможно, что-нибудь для устранения тягостного впечатления, возникшего в результате заявления относительно поведения армян в Баку. Это сообщение также очень причиняет страдания армянам в Англии.

Я не считаю нужным перечислять аргументы, указанные в письме Армянской национальной делегации, но могу заметить, что в течение войны армянский народ боролся и страдал, чем и заслужил нашу симпатию и внимание.

Более 700000 армян было убито только из-за того, что турки и немцы считали, что армяне находятся в полном согласии с Союзниками.

Они поступали на военную службу как во Франции, так и в Америке и многие из них очень желали служить в отряде, который одновременно думали высадить у Александретты, в окрестностях которой проживало много армян, сейчас почти истребленных.

Во французской армии они отличались исключительной доблестью. В течение первых годов войны они были лучшими воинами русской армии на Кавказе и особенно способствовали захвату Эрзерума.

И когда большевики покинули Кавказ, они держались героически, покинутые русскими отрядами, обороняясь до тех пор, пока подавляющие вражеские силы не принудили их пойти на соглашение в Эривань, где они остались совсем без поддержки. Я уверен, что там, и в Баку, они имели мало или вообще не имели артиллерии.

Это было бы бесславной могилой для армян как Франции, так и Европейской России, которые делают все для Союзников, думать (предполагать), что опозорило всю армянскую нацию.

Искренне Ваш **Брайс**

АИ РА, ф. 276, д.3, лл.45-46. Перевод с английского. Машинопись.

**№ 93**

**РАССКАЗ ПОСТРАДАВШЕЙ МЕЛИК-МЕЖЛУМЯНЦ ОБ УБИЙСТВЕ  
ЕЕ МУЖА, СЫНОВЕЙ, ОГРАБЛЕНИИ ЕЕ КВАРТИРЫ 16 И 18  
СЕНТЯБРЯ 1918 Г. В БАКУ И О ПОМОЩИ ПЕРСИДСКОГО КОНСУЛА**

**[Конец сентября], 1918 г.  
Баку**

Считаю нужным в нескольких словах описать все то, что произошло с мужем моим и моими четырьмя сыновьями 16 и 18 сентября сего 1918 года, чтобы показать как велико несчастье, постигшее меня и моих двух беспомощных дочерей и как был разрушен подлыми людьми - зверями - очаг и уголок семейного счастья нашего, созданный упорным сороколетним трудом труженика мужа моего Межлума Мелик-Межлумянца, одного из самых первых очистительных мастеров на керосиновых заводах Черного города.

В воскресенье утром в 6 часов утра мы со всем семейством отправились на пристань, но не находя место на пароходе, вернулись обратно домой. Караульщики завода, татары, сказали нам, что они нас спасут. Нас всех спрятали под кубами, а муж остался на квартире. В понедельник утром один из караульщиков-татар пришел ко мне и просил выкуп за мужа, говоря, что муж на улице и его убивают, требуя денег. Я отдала ему 3000 рублей, но, увы, мужа моего уже не было в живых. Во вторник утром часов в 7 или 8 один из сторожей сказал: "Мы вас больше не будем прятать, выдадим татарам-туркам, дайте нам денег". Я отдала ему последние сбережения сороколетнего труженика - 4000 рублей. Получив деньги, сторожа в 10 часов утра позвали с улицы турко-татар. Татары в количестве 25 человек отыскивали нас и вывели на улицу. Тут на наших глазах расстреляли моих сыновей, затем взяв у моих дочерей кресты с цепочками, нас вели неизвестно куда, на дороге навстречу вышла другая толпа турко-татар, которая сказала ведущей нам толпе: "Заклучен мир с армянами и потому пустите их". Таким образом я с двумя дочерьми была ими отпущена. Мы побоялись пойти домой, отправились к персидскому консулу. Переночевав вторник у консула, в среду консул дал 2 человека, в сопровождении которых я отправилась домой в Черный город, собрала холодные трупы моих погибших во цвете лет юношей, взяла домой, заперла их там, а сама с этими людьми пришла обратно в консульство. В среду, когда я пришла домой, на квартире ничего не нашла, вся обстановка и домашние вещи были похищены ими.

N 94

ԲԱՐՈՆ ՖՈՆ ԿՐԵՍԻ ԴՅՈՒԳԻՐԸ ՈԱՅԽՍԿԱՆՑԼԵՐԻՆ

N 7505

2 հոկտեմբերի 1918թ.

*Հեռագիր*

*Ուազմի դաշտից, ամսի <...>*

*Ստացվել է 1918 թ. հոկտեմբերի 2-ին, ժամը 10. 30-ին:*

Ռայխսկանցլերին

Հուլիս գաղտնի, սպայից սպայի:

Հուլիս գաղտնի: Բ (ամակի) Գ (լիսավոր) Զ (րամանատարին):

Հուլիս գաղտնի:

... Քաղաք մտնելուց անմիջապես հետո թաթարներն սկսեցին կողոպուտն ու ջարդերը, որոնց հետագայում մասնակցում էին թուրքական զորամասերը: Սպանվել են նաև գերմանացիներ և գերմանացիների հովանավորության տակ գտնվող անձինք: Կողոպտվել են գերմանացիների մի քանի տներ: Չնայած Պարակենի և չեզոք հյուպատոսների պահանջներին, Նուրին ժամանակին միջոցներ ձեռք չառավ դադարեցնելու կողոպուտն ու ջարդերը: Պարակենի մեկնելու օրը, 17-ի երեկոյան, կարգ ու կանոնը արդեն վերականգնված էր: Հալիլը Պարակենին հանեց Գլխավոր շտաբի պետի պաշտոնից, որովհետև սա պաշտպանելով գերմանական շահերը, բազմաթիվ վկաների ներկայությամբ նորից վճռականորեն պահանջել է ազդեցիկ միջոցներ ձեռք առնել գերմանացիներին պաշտպանելու համար: Ըստ իս, Պարակենի հեռացումից հետո մյուս գերմանացի սպաների մնալը Հալիլի շտաբում անհնար է...

Բարոն ֆոն Կրես

Rusland 97a, Ruisch-Asien, Kaukasus, Bd. 26, A 41274: Բնագիր:

N 95

СООБЩЕНИЕ ИНФОРМАЦИОННОГО БЮРО ПРИ ДИПЛОМАТИЧЕСКОЙ МИССИИ АРМЕНИИ В ГРУЗИИ ПОВЕРЕННОМУ В ДЕЛАХ АРМЕНИИ В ГРУЗИИ О СОБЫТИЯХ В БАКУ

N 125

2 октября 1918г.

Тифлис

Начатое ночью 14 сентября наступление турок на Баку окончилось падением последнего. Крупные войсковые части до этого успели погрузиться на пароходы и уйти, и защищал город лишь небольшой отряд, который был разбит турками. Первыми в город вступили местные мусульмане, которые совместно с хулиганствующими элементами города начали резню и разгром мирного армянского населения, не прини-

мавшего участия в войсковых частях. Очевидцы показывают, что погромщики якобы утверждали, что им дано три дня на сведение счетов с армянами и что, действительно, погромный кошмар продолжался три дня. Регулярные турецкие войска почему-то вступали в город небольшими частями и в первые дни никаких мер для прекращения беспорядков не принимали, наоборот, те же очевидцы указывают, что из первых отрядов многие принимали участие в погроме и турецкое командование впоследствии принуждено было повесить несколько аскеров, чтобы прекратить бесчинства. Результаты погрома ужасны: жертвы, в числе которых женщины и дети и видные общественные деятели, исчисляются тысячами и доходят, как утверждают очевидцы ("Борьба" N182), до 20 тысяч человек. Пострадало исключительно армянское население, лиц других национальностей не трогали. Имущество, дома, магазины и торговые предприятия армян разграблены и разгромлены. Армянское население терроризировано и всячески стремится выехать из города, но власти выезжать армянам не разрешают. Даже те армяне, которые считают себя подданными Грузии и те выехать не могут, так как, согласно заявлению министра внутренних дел Азербейджана, выезд для них обставлен большими затруднениями, чтобы "преступные элементы" не могли бы скрыться. Проверка выезжающих будет происходить не только по документам, но и "по внешнему виду, выражению глаз, строению черепа" и т.д. и таким образом будут устанавливаться "преступные элементы" ("Борьба" N182). В городе производятся массовые аресты и обыски, задержано много лиц из армян, которые ни по своему общественному положению, ни по прошлой своей деятельности быть причисленными к какому-либо "преступному элементу" не могут.

По сведениям, имеющимся в германской миссии, жизнь в городе замерла. Магазины и предприятия, несмотря на приказы коменданта города, не функционируют, население прячется в домах, на улицах пустынно, ибо картины ужасов при взятии города еще не забыты.

Начальник Информационного бюро при Армянской  
дипломатической миссии в Грузии **Малхазов**  
**Секретарь \***

АИ РА, ф. 276, оп.1, д.34, л.10, об. Подлинник. Машинопись.

**N 96**

**ՎՐԱՍՏԱՆՈՒ ՅԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՍԻԱՅԻՆ՝ ՆՈՒՆՈՒ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ 30000 Ռ. ՓՈՒՍԿՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 869**

**2 հոկտեմբերի 1918 թ.  
Թիֆլիս**

Ի պատասխան Ձեր ս/թ հոկտեմբերի 1-ի N 967 գրության, Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի գաղթականական բաժնին այսու պատիվ ունի հաղորդել Ձեզ, որ Նովիվա հայ գաղթականների օգնության համար Գաղթ. բաժնիս հատկացված 30000 ռուբլին արդեն փոխադրված է 30 սեպտեմբերի Նովիսի փոխանակագրով վստահելի անձանց միջոցով:

Նախագահ գաղթ. բաժնի **Հ. Արղության**

\* Подпис неразборчива (прим.сост.).

N 97

**ОТВЕТНОЕ ПИСЬМО РОБЕРТА СЕСИЛЯ ЛОРДУ БРАЙСУ ПО  
ПОВОДУ РОЛИ АРМЯН В ПАДЕНИИ БАКУ**

3 октября 1918 г.

Министерство иностранных дел [Лондон]

**Мой дорогой лорд Брайс,**

Мистер Балфор озабочен мнением Погос Нубар паши, высказанным в письме последнего к нему, на которое Вы ссылаетесь, рассматривая сообщение о событиях в Баку и просит меня ответить от его имени.

Бакинские армяне были не только изолированы, но, без сомнения, их задача с самого начала стала невозможной (неосуществимой) из-за существующего беспорядка, который открывал туркам Закавказскую железную дорогу, ведущую к воротам города. Чтобы ни случилось в Баку, ответственность не может быть приписана армянскому народу.

Национальная Делегация, получившая поручение в 1913 г. от Его высочества Католикоса, добиться от цивилизованного мира справедливости для Армении, которая была отсрочена с ужасными последствиями дала ряд доказательств под отличным председательством его превосходительства Погоса Нубар Паши о их преданности делу Союзников, которое является делом всего народа, борющегося за мир против угнетения.

Городской совет г. Эривани, прорвался через брешь, оставленную русскими в Азии и после организации сопротивления туркам на Кавказе с февраля по июнь этого года был наконец вынужден главными силами приостановить военные действия. Великобритания и ее союзники понимают безжалостную необходимость, которая принудила армян пойти на этот шаг и ожидать того времени, возможно не очень долго, когда победа Союзников поможет им избавиться от незаслуженного несчастья.

Между тем служба армян в общем деле, о котором Вы упоминаете в Вашем письме, конечно, не была забыта; я отмечаю четыре пункта обещания, которые армяне, по-моему, получили от Союзников в деле борьбы за свое освобождение.

1. Осенью 1914 г. турки послали эмиссаров на Национальный конгресс турецких армян, заседавший в Эрзеруме для того, чтобы предложить им автономию, если они будут активно помогать Турции в войне. Армяне ответили, что они сделают все, что входит в их обязанности, особенно по османскому вопросу, но что касается нации, они не будут работать в пользу Турции и ее союзников.

2. Частично из-за этого мужественного отказа, турецкие армяне в 1915 г. систематически подвергались резне со стороны турецкого правительства. Две третьих населения было истреблено самым хладнокровным и дьявольским методом - более чем 700000 человек мужчин, женщин и детей было истреблено этим методом.

3. С самого начала войны та часть армянской нации, которая была под суверенитетом России, организовала добровольческие силы и во главе с их героическим

---

\*\* Ստորագրությունը անընթեռնելի է (ծանոթ.վագձ):

вождем Андраником выдержала главный удар самого тяжелого боя Кавказской компании.

4. После развала русской армии в конце прошлого года эти армянские силы приняли на себя кавказский фронт и в течение пяти месяцев препятствовали наступлению турок, этим самым оказав важную услугу британской армии в Мессопотамии. Эти операции в районе Александрополя и Эривани были, конечно, не связаны с событиями в Баку.

АИ РА, ф.276, оп.1, д.3, л.47. Перевод с английского. Машинопись.

**N 98**

**ПИСЬМО ПОВЕРЕННОГО В ДЕЛАХ АРМЕНИИ В ГРУЗИИ ГЛАВНОКОМАНДУЮЩЕМУ ГРУППОЙ ОТТОМАНСКИХ ВОЙСК НА ВОСТОКЕ ГЕНЕРАЛУ ХАЛИЛ ПАШЕ О ПОГРОМЕ АРМЯНСКОГО МИРНОГО НАСЕЛЕНИЯ В Г.БАКУ**

**N 1007**

**3 октября 1918г.  
Тифлис**

Вопреки нашим ожиданиям погромы и человеческие жертвы в Баку, к несчастью, далеко превосходили те размеры и цифры, о которых было доведено до Вашего сведения и о которых Вы сообщили мне здесь. Единогласное свидетельство, как русских, так и мусульман, приезжающих из Баку, подтверждает, что число человеческих жертв армян от погромов простирается до 30 тысяч человек. Большинство жертв приходится на долю беззащитных женщин, детей и беженцев, которые подвергались неслыханным насилиям после того, как город был покинут его защитниками.

В настоящее время, по тем же сведениям, армяне сосредоточиваются в определенных пунктах, где их ожидает голодная смерть. Кроме того, передают, что арестовано много граждан-армян, которым грозит военный суд.

Сообщая об этом, я убедительно прошу Ваше превосходительство, во имя той дружбы, которую Вы всегда стремились восстановить между нашими нациями, во имя будущего мирного сожительства этих народов, употребить все Ваше влияние, чтобы: 1) немедленно были отпущены на свободу все армяне, которые были арестованы оттоманскими или азербейджанскими властями; 2) понесли суровое наказание все участники бакинской резни, которая по своей чудовищности не имеет себе равной, даже в несчастной истории армян и 3) была бы гарантирована жизнь и имущество уцелевших бакинских армян.

Я не сомневаюсь, Ваше превосходительство, что Вами будут использованы и Ваше высокое положение, и Ваше личное влияние для исполнения той светлой миссии, - восстановления попорченной справедливости, к которой я Вас призываю во имя человеколюбия и сближения наших народов.

**Джамалян**

Поверенный в делах Республики Армении при правительстве Грузии

АИ РА, ф. 200, оп.1, д.12 об. Заверенная копия. Машинопись.

4 հոկտեմբերի 1918 թ.  
ԲաքուԳերմանական կայզերական պատվիրակություն Կովկասում  
Բաքվի ներկայացուցչություն  
Բաքու, թուրքերի վերաբերյալ**Ձեկուցագիր N 13**

Թուրքերի և ադրբեջանցիների կողմից Բաքվի գրավման ժամանակ տեղի ունեցած դեպքերն իրազեկ ականատեսների կարծիքով պարզապես կասկածից վեր է, որ թուրքական հրամանատարները հայերին բնաջնջելու և նվաճված քաղաքը կողոպտելու համար թաթարներին 3 օրով լիակատար ազատություն էին տվել: Որքան էլ այդ անըմբռնելի լինի մեզ համար, սխալ կլիներ այս փաստը գնահատել միայն եվրոպական չափանիշներով:

...Գրավման ժամանակ յուրաքանչյուր թուրք սպա և տղամարդ կարծում էր, որ իրավունք ունի վերցնելու, ինչ որ ուզենա: Բնակիչներից, անկախ նրանց ազգությունից, պարզապես խլում էին կանխիկ դրամ, ժամացույցներ, մատանիներ, արժեքավոր իրեր և նպարեղեն: Շատ մարդիկ այդպիսով զրկվել են իրենց ողջ ունեցվածքից: Դրանից հատկապես տուժել են հայերը: Նրանք ոչ միայն զրկված են անձնական իրավունքից, այլև նրանց մասնավոր սեփականությունն առանց վերապահումների պատկանում է թուրքերին:

Այդ կողոպուտներն այսօր էլ դեռ մեթոդիկ ձևով շարունակվում են: Սպաները մի քանի զինվորների հետ տնից տուն են գնում և առանց ավելորդ ձևականությունների, իրենց հետ բերված բեռնատար մեքենաներին են բարձում այն, ինչ իրենց դուր է գալիս: Թուրքերը պարզապես խենթանում են կահույքի համար: Բաքվում ապրած բազմաթիվ հարուստ մարդկանց լավ կահավորված տներից նրանք հավաքել են կահավորանքի առարկաների հսկայական պաշարներ և հիմա էլ դեռ տեսնում են, թե ինչպես են նույնը շարունակում: Ավարը կապարադրոշմ վագոններով տանում են Ելիզավետպոլ և այնտեղ վաճառում բարձր գներով կամ էլ այնտեղից ուղարկում դեպի Արևմուտք: Ասում են, թե սկզբում թուրքերը դատարկել էին Բաթումը, Կարսն ու Արդահանը և ավարն ուղարկել Անատոլիա: Չետո դեպի Արևելք հետագա առաջխաղացման ժամանակ այդ թալանված շրջանները վերակահավորվել են Ելիզավետպոլի պաշարներից, բնակիչների հաշվին և թանկ գներով...

Ոչ թուրքերին, ոչ էլ ադրբեջանցիներին ընդունակ չեն համարում Բաքվի նավթարդյունաբերությունը նորից գործի գցելու:

**Բարոն ֆոն դեր Գուլց**

Rusland 97a, Rusish-Kaukasus, Bd. 27, A 745: Բնագիր:

**ПИСЬМО ПОВЕРЕННОГО В ДЕЛАХ АРМЕНИИ В ГРУЗИИ ИСПОЛНЯЮЩЕМУ ОБЯЗАННОСТИ МИНИСТРА ИНОСТРАННЫХ ДЕЛ ГРУЗИИ Н. В. РАМИШВИЛИ О**

**ВРЕМЕННОМ ПРИОСТАНОВЛЕНИИ ВЫСЕЛЕНИЯ НУХИ-АРЕШСКИХ БЕЖЕНЦЕВ  
ИЗ ГРУЗИИ**

**N 1042**

**4 октября 1918 г.  
Тифлис**

Препровождая при этом копию с доклада Особоуполномоченного Главного совета армянских беженских организаций - Заргарянца прошу Вас обратить внимание Вашего правительства на ужасающее положение недопущенных в пределы Грузии жителей Нухинского и Арешского уездов и сообщить, не найдет ли правительство возможным приостановить выселение оставшихся еще в Алазанском районе беженцев впредь до создания условий, гарантирующих их жизнь в Азербейджанской республике.

Прошу Вас, господин министр, принять уверения в совершенном уважении и искренней преданности.

АИ РА, ф.276, оп.1, д.14, л.96. Отпуск. Машинопись.

**N 101**

**ИЗ БЮЛЛЕТЕНИ ИНФОРМАЦИОННОГО БЮРО ПРИ ДИПЛОМАТИЧЕСКОЙ МИССИИ АРМЕНИИ В ГРУЗИИ О ПРОТЕСТЕ ПО ПОВОДУ ОБРАЩЕНИЯ  
ХАН ХОЙСКОГО К ГЕНЕРАЛУ ФОН КРЕССУ В СВЯЗИ  
С ПРИТЕСНЕНИЯМИ БОРЧАЛИНСКИХ ТАТАР**

**4 октября 1918 г.  
Тифлис**

Мне удалось бежать и, несмотря на произведенные вслед выстрелы, я, благодаря наступившей темноте, успел спрятаться в ближайших кустарниках. Спустя некоторое время по той же дороге из селения Хашам повели другую партию моих односельчан, которых неподалеку от меня расстреляли. В тот же вечер в той же местности мусульмане расстреляли и третью партию моих односельчан. Из своего убежища я пробрался через Ханабатский лес в армянское селение Согутлы, куда и прибыл на третий день. Здесь я находился около трех недель, в течение которых сюда прибывали некоторые из бывших со мною односельцев, а именно: Мелик Никогосов, Баграг Никогосов и др., всего 4, которые сообщили, что они были в 4 различных партиях и что товарищей их аскеры и местные татары всех расстреляли, не щадя женщин и детей. В селение Согутлы я пробыл около двух недель, в течение которых аскеры и татары окрестных селений непрерывно грабили население. Сюда же, за этот период времени, из Дагестана прибыла какая-то кавалерийская часть, состоявшая из лезгин. Лезгины эти три дня, за счет местных жителей, непрерывно кутили, после чего собрали всех мужчин, как местных жителей, так и беженцев-армян в заезжий двор, где продержали два дня; мне же удалось спрятаться в одном из колодцев. Из указанного двора те же лезгины вывели всех армян числом до 3 тысяч человек, в какое-то ущелье за селом, где и расстреляли их... Добавлю, что на второй день после ареста мужчин, лезгины задержали также всех женщин и детей, которых собрали в другом дворе. Таким образом, общее количество арестованных доходило до 3 тысяч. Сперва расстреляли мужчин, а, затем, женщин и детей; об этом мне говорила какая-то женщина, спасшаяся от смерти и бежавшая с места расстрела. Некоторые жители успели, как и я, спастись, укрывшись в колодцах, и других уединенных местах; сколько было спасшихся - я не знаю. Из селения Согутлы я, совместно с группой некоторых спасшихся жителей, числом 17 человек, благополучно добрался до грузинской территории в селение Нижние Кеды. По пути мы прошли лишь через армянское селение Гейбулаг, которое оказалось сожженным. Остальные селения мы, из предосторожности, оставляли в стороне, чтобы не встретиться с мусульманами. По пути между селениями Гейбулаг и Чаркат верстах в 30 от грузинской территории, мы видели до 15 трупов убитых армян-мужчин; такие же трупы от времени до времени попадались нам и на протяжении остального пути. Больше показать не имею. Зачеркнуто: здесь, сын, армянских, описанных, человек, человек в течение, так же; надписано: обещал, состоявшая из местных жителей. Подпись свидетеля на армянском языке.



N 226

**ԲԱԶՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ-  
ՆԻՍՏՐ-ՆԱԽԱԳԱՂԻՆ՝ ԽՈՐՀՐԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՂԻ ՄՈՏ  
ԳՏՆՎՈՂ 1600000 Ռ. ԳՈՒՄԱՐԸ ԱՂԵՏՅԱԼՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 110

8 մարտի 1919 թ.  
Բաքու

Արտասահմանի հայությունից հայ զորամասերի վերակազմության համար, որոնք սեպտեմբերին գտնվում էին Էնգելիում Բազվի նախկին Ազգային խորհուրդի անունով ստացել էր Պարսկաստանում 1600000 ռուբլու չափ գումար: Որովհետև այդ զորամասերն այլևս գոյություն չունեն, Ազգային խորհուրդը գտնում է, որ այդ գումարը դրվելու է Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ, որը այժմ միակ ղեկավարն է հայ զորքերի: Այդ գումարը դեռևս չէ ուղարկված Երևան և գտնվում է նախկին խորհրդի նախագահի տրամադրության տակ:

Բազվի այժմյան Ազգային խորհուրդը, որը տեղվույս որբերի ու կարոտյալների համար ծախսում է օրական մոտ 50000 ռուբլի, գտնվում է այժմ նյութական անելանելի ու ողբերգական դրության մեջ: Նոյեմբերից սկսած մինչև այժմ նա ծախսել է իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները և պարտք ունի կես միլիոնից ավելի առանց եկամտուտի որևէ ակնհայտ աղբյուր ունենալու: Մինչև այժմ խորհուրդս հույս էր դրել անգլիական օգնության վրա, սակայն մինչև այժմ ստացվել է անգլիացիներից նպաստ՝ սննդատու կայանի համար միայն 100000 ռուբլի: Խորհրդիս ֆինանսական անելանելի դրության մասին երկու օր առաջ մանրամասն զեկուցում տրվեց գեներալ Բիչին, սակայն նա պատասխանեց, որ դրամական օգնության գործը հանձնված է ամերիկացիներին:

Խորհուրդս ամեն միջոց ձեռք է առնում, որ նպաստ ստանա Դաշնակիցներից: Օգնության կարիքը մեծ է ու անհետաձգելի: Խորհուրդս կանգնած է մեծ ճգնաժամի առաջ և եթե շուտափույթ կերպով չկարողանա նպաստ ստանալ՝ ստիպված է լինելու դադարեցնել օգնությունը և փակել իր որբանոցներն ու հիվանդանոցները: Այդպիսի քայլ անելն անշուշտ անհանդուրժելի է: Խորհուրդս հույս ունի որևէ օգնություն ստանալու ամերիկացիներից: Սակայն այդ օգնությունն ուշանալու դեպքում անկարելի պիտի լինի պահպանել եղած հիմնարկությունները, որովհետև եթե անմիջապես պարտքերը չվճարվեն և ընթացիկ ծախսերը կանոնավոր կերպով չծածկվեն՝ օգնության համար ո՛չ հաց կստացվի, ո՛չ էլ սնունդ:

Ի նկատի առնելով տեղումս ստեղծված ճգնաժամային դրությունը՝ Խորհուրդս խոնարհաբար խնդրում է վերոհիշյալ 1600000 ռուբլին դնել նրա տրամադրության տակ, որպես ռեզերվ և վերջին մի ապաստան ու ծախսելու գումար նպաստի որևէ աղբյուրի բացակայության դեպքում: Այլապես սոսկալի ճգնաժամը կարող է անխուսափելի դառնալ:

Համաձայնության դեպքում խնդրում ենք անմիջապես հեռագրել մեզ, որ խնդրված գումարը դնում եք խորհրդիս տրամադրության տակ:

Ինչպես Ձեզ հայտնի պիտի լինի, Խորհրդիս նախագահ Ա. Դաստակյանը բանակցել է Թիֆլիսում պր. պր. Քաջագունու և Վերմիշյանի հետ Անդրկասպյան երկրում Երևանի համար ցորեն առնելու առաջարկի մասին: Այդ նպատակի համար որոշվել է ան-

միջապես փոխադրել այստեղ 5000000 ռուբլի, սակայն այդ գումարը մինչև այժմ դեռ չէ ստացված: Խորհուրդս խնդրում է, որ շտապեցնեք հիշյալ գումարի փոխադրությունը: Հակառակ դեպքում եղած ցորենը կարող է անցնել ուրիշների ձեռքը:

Նախագահ խորհրդի՝  
Խորհրդի գործերի կառավարիչ **Յ. Մանանդյան**  
Քարտուղար-անդամ խորհրդի՝ **Բ. Իշխանյան**

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 51, ք. 27: Վավերացված պատճեն: Չեռազիր:

N 227

**ОБРАЩЕНИЕ ЦЕНТРАЛЬНОГО СОВЕТА ЗЕМЛЯЧЕСКИХ СОЮЗОВ В АМЕРИКАНСКИЙ КОМИТЕТ ПОМОЩИ БЕЖЕНЦАМ И ПОСТРАДАВШИМ ОТ ВОЙНЫ НА КАВКАЗЕ**

Начало марта 1919 г.  
Тифлис

Следствием нашествия турко-татарских сил на Кавказе явилась, между прочим, картина разорения некогда цветущего в культурном и экономическом отношении, района Ареш-Нухи, населенного армянами. По достоверным сведениям, поступающим из местных источников, большая часть мирного, трудолюбивого армянского населения Нухи-Арешского уездов оказалось вырезанной турко-татарскими бандами, имущество армян сделалось предметом разгрома и расхищения, цветущие села и богатые местности, преданные огню и мечу, ныне превращены в развалины и печальную пустыню. Но еще более трагической представляется участь тех несчастных армян, в числе около 3000, которые уцелели от разгрома, смерти и уничтожения, так как все они в настоящее время пребывают в ужасном положении: женщины и дети состоят в плену у татар, осужденные на беспрекословное подчинение произволу татар; многие из них обращены в ислам; мужчины, находясь в состоянии рабства в полном смысле этого слова, исполняют для своих господ предписанную последними работу, не получая за это ни вознаграждения, ни же какой-либо другой компенсации. Население это не имеет фактической возможности избавиться от описанного положения вещей и выбраться на свободу, так как все дороги перед ними закрыты и помимо того, ему татары угрожают смертью в случае попытки бегства.

Если же к изложенному присовокупить, что армяне в Нухинском и Арешском уездах обречены на голод и холод, что сироты десятками гибнут в условиях отсутствия всякого за ними надзора, что смертность среди голодающего населения все более и более увеличивается и что возможность скорой помощи может явиться для них фактом спасения, станет очевидным, что положение несчастных остатков армян в означенных районах более чем печальное и даже трагическое.

Поступившие недавно достоверные сведения рисуют точно такое же положение армян, уцелевших от турко-татарского бича и в Шамахинском и Геокчайском уездах. Здесь армяне - женщины и дети - находятся в плену, мужчины обречены на принудительные работы: все они совершенно изолированы от внешнего мира и влечат жалкое существование, претерпевая холод и голод и представляя массу жертв.

Обсудив вопрос о мерах скорейшей помощи армянам означенных уездов и возможности их избавления из создавшихся условий, Центральный Совет Земляческих союзов признал, что первой задачей и неотложнейшей мерой является скорейшая ма-

териальная помощь армянам Нухинского - Арешского, Шамахинского и Геокчайского уездов, что наиболее целесообразно и ощутительно помощь эту может оказать лишь Американский комитет и что командирование последним в означенные уезды специальных делегаций может несомненно прояснить сгустившуюся атмосферу и облегчить участь армянского населения.

Ввиду сего и принимая во внимание, что комитет уже обратил свое внимание на участь бедствующего армянского населения в означенных районах посылкой туда делегации и денег, и что также и впредь Комитет сочтет своим нравственным долгом продолжать начатое им дело гуманности. Центральный Совет Земляческих союзов в соответствии с письменным обращением Нухинско-Арешского и Шамахинско-Геокчайского армянских землячеств настоящим имеет честь почтительно просить Комитет не отказать посылать возможно немедленно в Нухи-Ареш и Шамахи-Геокчай соответствующую делегацию и на месте же оказать плененному армянскому населению материальную помощь.

Председатель совета  
Секретарь

АИ РА ф.221, оп.1, д.143, лл.13-14 об. Копия. Машинопись.

**N 228**

**ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՁԼԱՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԲԱՔՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ, ՏԵՂԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՂՆԱԺԱՄԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ, ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՏՈՒԿ ՆԱԿԵՐՈՎ ԲԱՔՈՒ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**10 մարտի 1919 թ.  
Ղզլար**

Գրաբերներս՝ Ավագյանց Համայակ, Վարդանյանց Սեդրակ, Աղիբեգյանց Աշոտ, Ներսիսյանց Հովակիմ և Հակովբյանց Բագրատը Ղզլարի մոտ 3000 դժբախտ գաղթականների ներկայացուցիչներն են ընտրված իրենց բախտակիցների կողմից խնդրելու, տեղիդ իշխանության աջակցությունը հնարավորություն տալու վերադառնալու իրենց ավեր տները. ուստի Ղզլարի ՀՀ Դաշնակցության կոմիտեն խնդրում է ձեզ, ընկերներ, չխնայել ոչ մի միջոց հնարավորություն ստեղծելու տեղափոխելու տեղիս գաղթականներին, տրամադրելով դորա համար առանձին նավեր: Ավելորդ չենք համարում հայտնել, որ քաղաքս շնորհիվ անցուդարձերի ապրում է չտեսնված սննդյան պակասություն ամեն ինչից, իսկ հացից խոսք լինել չէ կարող՝ ոչ միայն գաղթականներն են սովում, այլ ամբողջ բնակչությունը, օրերով մնալով առանց հացի. պարզ է, որ զրիչը անկարող է նկարագրել գաղթածների դրությունը:

Իտ. նախագահ կոմիտեի՝ **Մ. Հարությունյանց**  
Ի տ. քարտուղար  
ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 80, թ. 55: Բնագիր: Ձեռագիր:

**N 229**

**ԴՁԼԱՐԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՔԿԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 3000 ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ, ՊԱՏՎԻՐԱԿ-**

\* Ստորագրությունն անընթեռնելի է (ծանոթ.կազմ.):

**ՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՊԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵ-  
ՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**12 մարտի 1919 թ.  
Ղզլար**

Կոմիտեն կամենալով ամեն կերպ օգնած լինել Ղզլարի հայ գաղթականության, սրանով ուղարկում է ղեկեզատներ և խնդրում է ձեզ, հարգելի պարոններ, չզլանալ օգնության հասնել մեզ: Ղզլարում ներկայումս կան 3000 ավել գաղթականներ մերկ, դժվար կարոտության մեջ, իսկ քաղաքը այնպիսի քայքայման մեջ է, որ ոչ մի կերպ չի կարողանում օգնել գործին, բավական է ասել, որ հաց չկա բառիս իսկական իմաստով, չկա վառելիք նավթ և այլ կարևոր նյութեր: Չքավորությանը, սննդի պակասությունը գաղթականներից շատերին գերեզման է տարել, օրինակ յոթը մարդուց բաղկացած ընտանիքից մնացել է մի հոգի: Կան բազմաթիվ որբեր: Եթե լայն հասարակական օգնություն չլինի, դրությունը ծանրանում է: Կառավարությունը նույնիսկ մտադիր է փոխադրել գաղթականներին Կուբանի մահանգը, եթե դուք չգաք օգնության:

Ուղարկելով այդ ղեկեզատներին կոմիտեն հույս ունի որ դուք չեք խնայիլ ձեր օգնությունը մեզանից: Մեր ուղարկված անձնավորությունները կհայտնեն ձեզ շատ մանրամասնություններ մեր վիճակի մասին:

Նախագահ՝ **Միսակ Ջավադյանց**  
Քարտուղար՝ **Համբարձում Զանազանյանց**

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 80, թ. 56: Բնագիր: Ձեռագիր:

**N 230**

**ՍԱՄՍՈՆ ՍԱՐԿԻՍՈՎԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՂՂԱՇԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾԻ, ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՐԱԾ ԻՐ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻ, ՌՈՒԿ ԲԺՇԿԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՎԵԼՈՒ ԵՎ ԻՐ ՓՈՔԻ ԵՂԲՈՐԸ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

**14 մարտի 1919 թ.  
Բաքու**

1919 թ. մարտի 14 պ. Սամսոն Սարգսյանը պատմեց Բազվի Ազգային խորհրդին հետևյալը:

«Ես աշխատում էի Թիֆլիս, իսկ իմ մայրը և հայրը ապրում էին Աղդաշում. երբ հայրս մեռավ, մայրս ինձ նամակով հայտնեց, որ ինքը անկարող է մեծակ ապրել և կանչեց ինձ Աղդաշ: Ես գնացի այնտեղ և աշխատեցի ամբողջ 7 ամիս, մինչև թուրք զորքերի ներս խուժվելը Կովկաս: Երբ թուրքերը եկան Մամադթավա, իմ մայրիկիս հոր գյուղը, որտեղ տեղափոխվել էի և ես, ես փախա Ղարամանլու, որի ժամանակ հետևիցս շարունակ կրակում էին ինձ վրա: Ղարամանլու թուրքական գյուղում ինձ գերեց Բաբլի

\*\* Բաբլի Հայոց Ազգային խորհուրդը 7/IV.1919թ. դիմել է Բրիտանական շտաբին Ստարոտերեչնայա նավ ուղարկելու, գաղթականներին Բաքու տեղափոխելու համար: Տես ՀՀ ՊԱ, ֆ.223, ց.1, գ.80, թ.58 (ծանոթ.կազմ.):

անունով մի թուրք, որի տունը ես մնացի ամբողջ 8 ամիս: Այդ 8 ամսում ես կրել եմ ամենասուսկալի տանջանքները: Ինձ շարունակ գանակոծում էին, և ստիպում աշխատել օրական 18 ժամից ավել: Հագիս ունեի մի մեշուկի րուբաշկա և նույն կտորից մի բոյուկ: Երբ որ ես հիվանդացա, ամբողջ 15 օր ինձ համարյա թե չկերակրեցին: Եվ դեռ չառողջացած սաստիկ ինձ թակելով ստիպեցին կատարել շատ ծանր և սոսկալի աշխատանքներ: Երբ որ Ղարամանլու եկան մի ռուս բժիշկ և երկու ֆելդշերներ, հարկավոր զգացվեց թարգմանչի ռուսերեն լեզվի: Որովհետև այդ գյուղում բացի ինձնից ոչ ոք չգիտեր ռուսերեն, ինձ կանչեցին որպես թարգմանչի: Ռուս բժիշկը և ֆելդշերները ինձ ազատեցին և իրանց ծախքով բերին ինձ Բագու:

Մամադթավայում բնակչությունից 70 տուն ազատվեցան միայն 20-25 հոգի, իմ մայրիկիս և մի եղբորս նույնպես թուրքերը սպանել էին, իսկ մյուս, փոքր՝ 10 տարեկան եղբայրը մինչև այժմ գտնվում է գերության մեջ Աղդաշում, Մուխթար անունով թուրքի մոտ: Շատ խնդրում եմ Ազգային խորհրդին, միջոց ձեռք առնեն, եղբորս ազատելու համար»:

**Սամսոն Սարկիսով**

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 118, ք. 2: Բնագիր: Չեռագիր:

**N 231**

**ДОКЛАДНАЯ ЗАПИСКА ГЕНЕРАЛ-МАЙОРА БАГРАМОВА  
О МАРТОВСКИХ СОБЫТИЯХ 1918 Г. В Г.БАКУ**

**14 марта 1919 г.  
Ереван**

6 февраля 1918 года в Баку прибыл из Петрограда вполне оборудованный санитарный поезд, назначенный в распоряжение Армянского Национального совета в Тифлисе. Поезд этот имел назначение обслуживать Кавказский фронт военных действий. По прибытии в Баку, поезд дальше не был пропущен местными кавказскими татарами, среди которых явно господствовало туркофильское направление, противное направлению армянского народа, который держался всецело политики союзных государств (Англии, Франции, России).

В городе Баку между армянами и татарами, благодаря их совершенно противоположным направлениям, ясно чувствовалась затаенная вражда, могущая вылиться в столкновение. Это обстоятельство заставило Бакинский отдел Армянского Национального совета немедленно принять все меры к обороне и охранению местного армянского населения, если татары начнут активные действия.

С этой целью армянская часть города Баку была разделена на участки, были назначены начальники этих участков, определены сборные пункты, куда должно было собраться вооруженное население участка и пр., кроме того в Баку в это время, в распоряжении Бакинского отдела Армянского Национального совета находились армянские военные части: дружина Амазаспа, второй запасный армянский пехотный полк и одна батарея. Для этих частей в окрестностях города были выбраны позиции, назначены их начальники, и была выбрана позиция для артиллерии, которая в случае столкновения с татарами должна была обстреливать все дороги, ведущие в город с окрестных татарских сел и тем самым не допускать оттуда татар в город. Наконец, при местном отделе Национального совета был организован штаб обороны.

Таким образом, были приняты все меры для должной обороны, в случае, если татары нападут на местных армян.

В это время вся власть в городе Баку и Бакинской губернии находилась в руках Советской власти, единственной организации русской власти в Закавказском крае. С этой Советской властью Бакинский отдел Армянского Национального совета работал в согласии, во-первых потому, что Советская власть, единственная русская власть, которую армяне признавали, а кроме того, все необходимое продовольствие, снаряжение, вооружение и пр. находились в руках Советской власти, от которой и зависела выдача всего указанного. В распоряжении Советской власти была своя вооруженная сила. Весь военный флот Каспийского моря, своя достаточная артиллерия и пехотные части, так называемая Красная Армия.

Комплектование этой армии производилось вербовкой, т.е. наймом солдат, которым Советской властью платилось большое жалованье, благодаря чему в эту армию поступали очень охотно. В Красной Армии было очень много солдат-армян, прибывших из Западного русского фронта, из Персии и Северного Кавказа. Затем многие солдаты, благодаря высоким окладам, перебежали и из местных армянских частей. Борьба с этим злом было невозможно Бакинскому отделу Армянского Национального совета, так как таких денег отдел платить не мог.

Мусульманскую организацию в гор.Баку изображал "Мусават", который с Бакинским отделом Армянского Национального совета внешне поддерживал добрососедское отношение, благодаря, корректности и добросердечному отношению к мусавату Бакинского отдела, но тайное враждебное отношение мусавата к Армянским организациям чувствовалось очень, ибо туркофильская политика явно поддерживалась мусаватом, находящимся в постоянных сношениях с мусульманскими организациями в Елизаветполе и в Дагестане, также стремящимся примкнуть к Турции. Как сказано выше, вся власть в Баку находилась в руках Советской власти, которую Мусават признавать, в сущности, не хотел, хотя внешне якобы и подчинялся. Отношение между этими организациями было враждебное и крайне напряженное. Столкновение между ними можно было ожидать каждую данную минуту, нужен был лишь самый ничтожный к тому повод. Таковой повод не замедлил и явиться.

В первых числах марта 1918 года в Ленкорани нечаянно застрелился сын местного известного татарина-богача, офицер так называемой Дикой дивизии Тагиев. Тело его было морем перевезено в Баку. Тело это сопровождал караул из 43-48 вооруженных этой дивизии. Сдавши тело по назначению, этот караул должен был вернуться обратно. Как только караул сел на судно, тотчас же он был по распоряжению Советской властью разоружен.

Это обстоятельство вызвало целую бурю негодования со стороны Мусавата и последний заявил, чтобы отнятое оружие немедленно было возвращено караулу. Начались по этому поводу переговоры между Мусаватом и Советской властью, при этом Бакинский отдел Армянского Национального совета принимал все меры к тому, чтобы примирить обе стороны. Он даже предложил Мусавату взамен отобранных Советом винтовок выдать свои винтовки, лишь бы мирно покончить этот неприятный вопрос. Однако ничего из этого не вышло и напряженное состояние продолжалось и взрыва можно было бы ожидать каждую минуту.

Окончательным сроком переговоров между Советской властью и мусаватом было назначено в 6 часов вечера 17 марта. Однако не дождавшись этого срока, самими татарами в 5 часов вечера того же дня были открыты враждебные действия. Несмотря на это, Бакинский отдел Армянского Национального совета тем не менее принимал все меры к тому, чтобы прекратить этот крайне нежелательный инцидент, но цели своей так достичь и не мог. Начались враждебные действия, которые продолжались день и ночь, начиная с 5 часов 17 марта и вплоть, кажется, до утра 20 марта, когда действия эти прекратились полным поражением татар.

Артиллерией Каспийского флота была разгромлена татарская часть города; много улиц было забаррикадировано и сделаны окопы, занятые Советскими войсками, которыми обстреливались продольно улицы. Артиллерийский, пулеметный и ружейный огонь трещал все время, как в городе, так и в окрестностях его. Татары, отстреливаясь, постепенно отступали и в конце концов покинули город и окрестности его и разбежались по деревням. Мусават также разбежался. Члены его частью уехали в Елизаветполь, а частью по окрестным татарским деревням, чтобы там поднять народ. Армянские войсковые части никакого участия в этих делах не принимали и стояли лишь на указанных им позициях и следили за тем, чтобы не было нападения татар на армянскую часть города и на армянское население. Армянская батарея стояла также на указанной ей позиции и орудия были направлены на дороги, ведущие к городу из окрестных татарских деревень, чтобы таким образом не допустить оттуда татар к городу и тем самым не продлить это нежелательное явление.

В этих боях, по некоторым данным, пострадало около 2 тысяч татар и несколько сот армян, главным образом из числа служащих в Советских войсках. Затем в течение этих трех дней боев армянскими организациями было взято под свое попечение (укрыто) и спасено от Советских властей, таким образом, масса персидскоподанных и масса местных татар, всего до 14 тысяч человек: мужчин, женщин и детей. Затем было спасено много и местной татарской интеллигенции, из коих один (местный богач Тагиев) выразил даже печатно свою благодарность по адресу армян. Несмотря на такое, однако отношение армян к татарскому населению, Мусават и присные ему все-таки агитировали в том смысле, что виной всему армяне и это дело якобы их рук. Конечно, это можно пожалуй объяснить лишь тем, что в число советских властителей входили кроме русских и армяне, но туда входили также и грузины и даже сами татары (большевики). Тем не менее этот упорный и предвзятый взгляд против армян поддерживался и распространялся татарской интеллигенцией среди своего населения. Конечно, немалое участие в этом принимали и скрытые представители турецкой власти, поддерживающей сочувствующих им татар.

Казалось бы, что этим все должно было бы окончиться. Однако через неделю после того получены были сведения, что из Дагестана и из окрестных татарских сел надвигается масса в Баку в помощь местным татарам. Действительно эта масса появилась, но, встреченная бакинскими войсками, она была рассеяна и разбежалась по своим местам. Этим мартовские события в Баку окончились. Уверенности, однако, в том, что события эти облагоразумят татар, конечно, не было, тем более, что очень определенно сказывались влияние и агитация турок. Поэтому уже в Бакинском Национальном совете было решено: занять своими войсками Елизаветполь - это главное гнездо турко-татар, открыть тем самым железную дорогу для подвоза всевозможного снабжения войскам, действующим на фронте против турок и оставив часть в Елизаветполе, для поддержания там порядка и разоружения населения, а остальных двинуть на фронт на подкрепление.

В этом смысле начались усиленные подготовительные работы. Был организован значительный отряд, войдено в соглашение с Советской властью об отпуске всевозможного довольствия и снаряжения и отряд этот должен был выступить из Баку на второй день Св.Пасхи.

Однако отправить этот отряд не удалось, ибо в это время были получены сведения о том, что масса вооруженных чеченцев напала на железную дорогу между Петровском и Червленной и не пропускает поездов с Северного Кавказа. Советская власть в Баку потребовала отложить на некоторое время экспедицию на Елизаветполь и выслать отряд на север. Бакинский отдел Армянского Национального совета, находясь в зависимости, в смысле отпуска продовольствия и снаряжения, от Советской власти, принужден был согласиться на требование этой организации и тогда же был командирован отряд к Петровску.

Самое главное, что вслед за этим в Баку была получена телеграмма из Тифлиса о том, что в Батуме состоялось соглашение о прекращении всех военных действий на фронте, а значит и в тылу и потому необходимо прекратить всякие военные предприятия.

Благодаря этому и вся работа, к великому сожалению, по организации экспедиции на Елизаветполь была прекращена. Конечно, турко-татары, поддержанные членами-татарами Закавказского Сейма, восторжествовали.

"Получено от генерал-майора Баграмова. 14/111919, г. Эриван  
Капитан Абазов".

АИ РА, ф.121, оп.2, д.94, л.103-105. Подлинник. Машинопись.

**N 232**

**ԱՂՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԻ  
ՆԱՍԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ՝  
ՇԱՄԱԽՈՒ, ԳՅՈՎԶԱՅԻ, ԱՐԵՇԻ ԵՎ ՆՈՒԽՈՒ ԲԱՔՎՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱՂՁԱԿԱՆՆԵՐԻՆ  
ԻՐԵՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՊՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ  
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 13**

**21 մարտի 1919 թ.  
Բաքու**

Ծանոթանալով թե Բազվում խմբված գաղթականների և թե Շամախու, Գյոքչայի, Արեշի և Նուխու գավառներում մնացած հայ ժողովուրդի մնացորդի արդի վիճակի հետ՝ պիտի հայտնեմ, որ իսպառ զրկված տնտեսությունից և ունեցվածքից նոքա այժմ հազիվ կարողանում են քարշ տալ իրանց թշվառ գոյությունը:

Գավառում մնացած ժողովուրդի կյանքի և զույքի ապահովության ոչ մի երաշխիք չկա, մինչդեռ քաղաքումս խմբված գաղթականներն էլ շարունակ դիմումներ են անում մեր ազգային հաստատություններին, խնդրելով միջոցներ ձեռք առնել օր առաջ իրանց նախկին բնակավայրերը տեղափոխելու, որպեսզի հնարավորություն ունենան գարնանային գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելու և առաջիկա տարվա համար անհրաժեշտ կենսամթերքների նախապատրաստություններ տեսնելու: Գավառառաջի գաղթականները գիտակցում են, որ եթե ներկա անորոշ և աննախանձելի դրությունը շարունակվի՝ առաջիկա տարին ևս նոքա չքավորության ու մուրացկանության առաջ պիտի կանգնած լինեն: Տարաբախտաբար գավառում եղածներն էլ զուրկ են տարրական հարմարություններից և անհրաժեշտ ապահովությունից, որպեսզի կարողանան խաղաղ աշխատանքով զբաղվելու:

Այս պայմաններում ես կարծում եմ, որ քաղաքում խմբված գաղթականներին գավառ տեղափոխելը ոչ մի միտք չունի:

Ընդհակառակը միջոցներ պիտի ստեղծել նրանց այստեղ պահելու, իբրև առավել ապահով վայր, և հոգ տանել կազմակերպելու վերև հիշված գավառների բնակչության մնացորդների հետ մեր երկրի մի առավել ապահով և խաղաղ վայր տեղափոխելու: Տեղափոխության դեպքում անշուշտ ի նկատի կառնվեն նոցա նախկին բնակատեղերի կլիմայական ու տեղագրական պայմանները:

Գաղթականությունը պահպանելու և խնամելու համար Ազգային խորհուրդը պետական օժանդակության կարիք է զգում, որովհետև տեղական միջոցներով անկարելի է 20000 չափ գաղթականություն խնամել այստեղ:



Թե Ազգային խորհուրդին պետական օժանդակություն հասցնելու հնարավորության և թե հիշածս գավառների ժողովուրդին Հայաստան տեղափոխելու խնդրի մասին խնդրում եմ կառավարության կարգադրությունը:

Դիվանագիտական ներկայացուցիչ՝ **Տիգ. Բեզզադյան**

Մակագրություն. «Պատասխանել. խորհուրդը իրավունք ունի պետական օժանդակություն ստանալու, բայց երբ կարոտյալները ազերբայջանցի են, այդ օժանդակությունը պետք է Ազերբայջանի Հանրապետությունը հայաթաթթե: Այս մասին գրվել է Ձեզ N 881, 27/ III: Շամախու, Գյոկչայի, Արեշի և Նուխու հայ ժողովուրդը Հայաստան տեղափոխելու խնդիրը կդրվի Մինիստրների խորհրդին ի քննություն: 1/ IV»:

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, ք. 118 շրջ.: Բնագիր: Չեռագիր:

**N 233**

**ԲԱՔՎԱԲՆԱԿ ՇԱՄԱԽԵՑԻՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՎԶԱՑԻՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԽՈՐՀՐԴՊԻՄ ՄԵԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ**

**23 մարտի 1919 թ.  
Բաքու**

Բազվում այժմս բնակվում եմ մեծ թվով շամախեցիք և գյոգչայցիք, որոնք Ազգային խորհուրդում ոչ մի ներկայացուցիչ չունեն, չնայած, որ երկու գավառն էլ Բազվում ունեն իր[ենց] հայրենակցական միությունները, ուստի խնդրում եմք հիշյալ խորհուրդում երկու տեղ տալ՝ մեկը Շամախու գավառի, իսկ մյուս Գեյոգչայի գավառի համար:

**Հ. Մաթևոսյան  
Խ. Մարգարյան  
Տ. Սերեբրազյան  
Ա. Գալստյան  
Սիրգայան  
Ս. Մովսիսյան  
Պողոս Ե. Մատթեոսյան  
Պ. Ներսիսյան  
Ա. Ղուլբանդյան**

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 80, ք. 1: Բնագիր: Չեռագիր:

**N 234**

**ԳՅՈՎԶԱ ԳԱՎԱՌԻ ԲԱՔՎԱԲՆԱԿ ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՑՈՒՄԸ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԳՅՈՎԶԱ ԳԱՎԱՌԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԿՈՏՈՐԱՇՆԵՐԻ, ԹԱԼԱՆԻ, ԳԱՂԹԻ, ԳԱՂԹԱԿԱՆ-**

ՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ՎԵՐԱՂԱՐՉԻ, ՆՐԱՆՑ ԿՅԱՆՔԻ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՌԻՆԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԵՐԱԿԱՆՁՆԵԼՈՒ ԱՆՅՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝

24 մարտի 1919 թ.  
Բաքու

Ղարամարգանի հայտնի ու դժբախտ դեպքերից հետո, որ Բազվա գորքերը ստիպված հետ նահանջեցին դեպի Շամախի, մեր գավառի արևմտյան մասը տեղյակ չլինելով այդ նահանջի մասին մնաց տեղում:

Նահանջը կատարվել էր անսպասելի ու արագ: Գաղթել էր այդ գորքի հետ Դավաբաթան ձորի արևելյան մասի գյուղացիությունը հետևյալ գյուղերի. Նոր-շեն, Շուքուրչու, Գյուզուման, Կիրք, Փաթաբլու, Գարմախանի, Թոբիշեն, Ավանաշեն, Աղբուլաղ, Դյամադաղլու, Մեծ Գանձակ, Քաղբանց և Քեշիուրդ գյուղերը մոտ 11000 ազգաբնակչություն: Երբ որ Ղարամարգանի գորքը հետ էր նահանջում արագ կերպով, այդ նույն ժամանակ Ամիրովի բատալյոնը դեռ նոր էր բարձրանում Արեշու գավառի Գերցացուլ գյուղի բարձրունքը, որտեղից տիրապետում էր Գյոկչային մի քանի ժամով: Այդ էր մեծ պատճառը, որ Դավաբաթան ձորի արևմուտք ընկած գյուղերը հանգիստ նստած են լինում իրանց տեղերը, ինչպիսիք են Ուշտալ, Նոր-շեն, Ղալագան, Բոզուկանց, Վանք, Ռուշանաշեն ու Փոքր Գանձակ. թվով մոտ 7500 հոգի:

Ամիրովի նահանջը այնպիսի արագությամբ է կատարվում, որ անտեղյակ գյուղացիք հնար չեն ունենում միանալ գորքին: Հաջողվում է մասամբ գաղթելը Ղալագայ, Նոր-շեն ու Ուշտալ գյուղերից, որտեղով անցնում է գորքը Իվանովկա մականյան գյուղի վրայով անցնում ձորը համարյա գիշերվա կեսին: Անտեղյակ են մնում Վանքը, Ռուշանաշենը, Փոքր Գանձակը և Բոզուկանցը. գորքից հետ մնացածներից մի քանիսը չի կարողանալով հասնել իրենց մասերին, անցնում են Վանք, հանկարծակի եկած գյուղացիք հավաքվում են մյուս գյուղերի հետ և շտապում են որ հասնեն նահանջող գորքերին:

Բայց ավաղ, խեղճերը այստեղ ևս ենթարկվում են երկաթի օղակի հենց իրենց հարևան մականյանների կողմից, որոնք զենքը ձեռներին դուրս են գալիս գաղթող և սարսափահար ժողովուրդի դեմ: Թույլ չեն տալիս անցնելու, պահանջում են հետ դառնալ գյուղերը: Ինչ կարող էին անել ու հետ են գալիս. սրանցից անցնում են ընդամենը Վանքից 36 հոգի, 1200 հոգուց և Ռուշանաշեն, Փոքր Գանձակից 60-1000 հոգուց, մնացած գյուղերից գաղթել են ոչ ավելի քան 1500 հոգի: Մինչդեռ թուրքերը արդեն հասած են լինում Իվանովկա Դավաբաթան ձորից: Գյուղացիներին ոչինչ չէր մնում անելու քան հետ գալու պատրաստվել ինքնապաշտպանության, այդպես էլ անում են մնացած գյուղացիք: Ժողովուրդը հավաքվում են Վանք գյուղը որպես մի ամուր տեղ: Այդտեղ են հավաքվում նաև Արիշու գավառի մոտ 10 գյուղից հայ ժողովուրդը, ինչպես օրինակ Ամիրվան, Բլեղ, Բեզլարքենդ, Սերթեն Գիղա, Չանաղ Բուլաղ, Գերցացուլ և այլն. հավաքվածների թիվն հասնում է 10-12. 000-ի, որոնք կազմակերպում են ինքնապաշտպանության գործը, դիմադրությունը լինում է օրհասական, արդեն շրջապատած թուրք գորքի ու տեղական ամբոխի կողմից: Դիմադրությունը տևում է 4 օր, որի ընթացքում հայերը միշտ հաղթող են լինում: Խորամանկ թուրքերը տեսնելով, որ գյուղը վերցնելը այնքան արժան չի պետք է նստի, դիմում են իրենց սովորական արհեստին: Կառավարության անունից հայտարարում են ամնիստիա և ցրում հավաքված խուժանը. ճարը կտրած և անդեկավար ու անտեր հայ ժողովուրդին բան չէր մնում անելու, քան կասկած սրտում

\* Ձեկուցման մեկական օրինակներն ուղարկվել են Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, տեղեկատու քյուրոյին, պարլամենտական խմբակցությանը: Տե՛ս ԶՅ ՊԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թթ. 45-48 (ծանոթ. կազմ.):

ու հավատը կորցրած, որևէ տեղից օգնություն ստանալ, ենթարկվում են խաբուսիկ խոսքերին, մանավանդ որ լինում են կառավարության ներկայացուցիչները և այդպես ցրվում են իրենց գյուղերը պարապելու և հնձելու ցանգալի արտերը, որին գյուղացիք սոված դրության սպասել են մի ամբողջ տարի: Մանավանդ այդ տարվա արտերը մի չտեսնված բերք էին տվել, որին գյուղացիք «զլխակեր» արտեր են անվանել և իսկապես բանից դուրս է գալիս, որ ներումն մի խաղ էր անփորձ գյուղացիների զլխին: Թուրքերին հարկավոր էր հասած ցորենը հավաքել և այդ հնարավորությունն են տալիս հավաքելու այդ չտեսնված առատ ցորենը:

Գյուղացիք ավելի քան միամիտանում են տեսնելով ժամանակով հանգստություն: Բայց ավաղ, հագիվ կալերը վերջացրել էին պետք է տեղավորեին իրանց հույս կյանքի պարենը, որով շատ էին ուրախ գյուղացիք, որ սովի ճանկերից կազատվեն, բայց գյուղացուն չէր վիճակված իրա դառը քրտինքի արդյունքը և ահա ճիշտ ժամանակին ներկայանում են թուրք էմիսարները և պահանջում պատրաստված ու կալսած ցորենը, դրա հետ միասին հարկ համարելու միշտ ազատելու հայ գյուղացուն սովի ու ընդհանրապես կյանքի բոլոր կարիքներից ընդմիշտ վերջ տալու նրա ֆիզիքական գոյության: Օգոստոսի սկզբներին էր. թուրք չավուշը գալիս է Վանք գյուղը, հրամայում է հավաքվել եկեղեցու բակը հայտարարելով որ կարևոր խոսելիք կա իօգուտ գյուղացիների համար: Գյուղի երիտասարդները վատ բանի հոտ են քաշում և ուզում են պատսպարվեն անտառները, բայց մեծերը հակառակ են լինում, առարկելով, որ դրանով կասկածի ու կոտորածի առիթ կտան: Գյուղացիք չեն հավատում չավուշին, բայց և այնպես հավաքվում են մեծ ու փոքր եկեղեցու բակը: Մի տեղ որ փախչելու ոչ մի հնար չկա, չորս կողմը անդունդ է, մի տեղ ունի որ չավուշը մարդիկներն են պահում, մինչև այդ հավաքում են նախօրոք պատրաստված գազանացած ամբոխը, սկսում իրանց դժոխային ծրագիրը. նախ ջոկում են տիկին, աղջիկ ու փոքրահասակ երեխաներին ու սկսում կապոտել մնացողներին, որպեսզի տանում են Իվանովկա գյուղը փաշի մոտ, և հագիվ դուրս բերելով գյուղից, սկսում են տանջել ու կոտորում են: Շատ քչերին է հաջողվում ազատվելու այդ սպանդանոցից, որից հետո սկսում են թալանել ամբողջ գյուղը, նույն վիճակին են ենթարկվում և մնացած գյուղերը, բայց այն որ տեսել է Վանք գյուղը, Աստված հեռու տանի: Չմոռանամ ասելու, որ կալսած-պատրաստված ցորենը տարել է կառավարությունը:

Մեր գավառը վերջնական բնաջնջումից առաջ մի անգամ ևս ենթարկվել էր հարձակման 1918 թվին Ջատիկ կյուրակի երեկոյան: Թաթախման գիշերը Գանձակից եկած ինչ-որ թուրք ղեկավարների դրոմամբ և ղեկավարությամբ հարձակվում են Նոր-շեն և Շուկուրչու, Կիրք Գյուզորան և Քաթարքու գյուղերի վերա: Թալանվում է Նոր-շեն, Շուկուրչու ու Քաթարքու գյուղերը տալով բավականի սպանված և վիրավոր, փախցնում են և կանայք. Կիրք գյուղը վերահաս ավերմունքից ազատվում է շնորհիվ մի խումբ զինված գյուղացիների, որոնք գնալիս էին եղել Բազվից իրենց տները: Դրանց մեծ մասը ֆրոնտից եկած զինվորներ էին:

Ահա այդ խումբը պատահմամբ հանդիպելով Կիրք գյուղացիներին կռվի բռնված թուրքերի հարձակումներից հետ մղելով շրջապատեցին ու հետ շարտում գյուղից. օգնության գալու և մյուս գյուղերին: Այդ միևնույն ժամանակ եկած են լինում մի մեծ խումբ Գեյոքչայից թուրքեր, կանոնավոր զինված, պահանջում են Ղալազիյա գյուղացիք զինաթափ լինել, բայց ստանալով կտրուկ պատասխան պատրաստ դիմադրելու, հետ են գնում թողնելով հանգիստ գյուղը. երկրորդ անգամ Ղալազիյայի վրա հարձակվում են Ղարամարգյանի ճակատամարտից մի քանի օր առաջ: Այս անգամ արդեն հարձակվողները լինում են տաճկական կանոնավոր զորք, որոնց դիմադրում են գյուղացիք անհավասար կռվով. մի օր որից հետո տաճիկ զորքը մտնում է գյուղ, այրում է մի քանի տներ: Բնակչությունը փախչում է մի քանի գյուղեր. վերահաս օգնություն մոտիկ գյուղացիների և տեղում եղած զորամասի ստիպում է տաճիկներին թողնելու գյուղը: Այդ կռվում գյուղացիք տալիս են մոտ 60 սպանված ու վիրավոր: Ահա այդ բոլորից

հետո որ տաճիկները տիրելով այդ գավառի հայկական մասն, որից նա ստացել էր կանոնավոր դիմադրություն, բնաջնջում է մնացող հայությունը: Շատ քչերին է հաջողվում ազատվել այդ դժոխքից, այն էլ երևի պատմելու համար այն բոլոր գազանային ու սարսափների ու սոսկումների մասին, որը կատարվել է եկող տաճիկների ու տեղական բեկերի ղեկավարությամբ:

Տաճիկները տիրելով այդ շրջանին, վերջապես տիրեցին նաև Բագվին. այդ ժամանակ Բագվում գտնվում էր մի բազմություն Շամախու ու Գյոքչայի գաղթականությունից: Տաճիկ կառավարությունը հավաքում է սրանցից 6500 հոգի, ուղարկում է իրենց գյուղերը: Այս ուղարկած գաղթականությունից 3000 հոգի Գյոքչայի գյուղացիներից էին (թե ինչ նեղություններ են քաշել սրանք, իրա հերթին թողնենք մի ուրիշ անգամը):

Այստեղից գնացողները և թե գեղը մնացողները ենթակա են եղել սոսկալի տանջանքների ու զրկանքների. զուրկ լինելով ապրելու ամենատարրական միջոցներից, հացից, հագուստից, նույնիսկ ապրելու հարմար բնակարաններից, ենթակա են եղել սոսկալի չարչարանքների՝ սովի, հիվանդության ու մահացության, մանավանդ նախքան անգլիացիների գալը, ամեն մի ճանապարհորդ՝ թուրք, լինի պաշտոնյա թե հասարակ ճանապարհորդ, պարտք էր համարում իրեն մտնելու պատահած հայ գյուղը, վերցնելու ինչ սիրտը կուզեր ու կամենար: Հայ գյուղացին լինելով իրավագուրկ և ապա իրավունք չի համարել ծայր հանելու ավելի խիստ չպատժվելու համար, չէ որ անտեր, անպաշտպան ժողովուրդ է, մանավանդ տաճիկները հայտարարել էին հայերին կռվող կողմը և հաղթված:

Այժմ դրությունը ավելի քան անմխիթար է, մեր ունեցած տեղեկություններից այժմ պարզվում է, որ զանազան գյուղերում ապրում են մոտ 2300 հոգի, մի այդքան էլ կլինեն Բագու, որոնց դրությունը ևս լավ չէ, սոված և անգործ թափառում են փողոցներում, ըստ առաջի հնարավորության կգնային իրենց գյուղերը, եթե տեղում ստեղծվի կյանքի և զույքի ապահովություն, որով հնար կունենան վերականգնելու իրենց ավերված տնտեսությունը, ու աշխատիլ իրագործելու հետևյալ միջոցները:

1. Գյուղում եղածները ապրում են անմխիթար դրության մեջ, զուրկ լինելով կյանքի և զույքի ապահովությունից: Եթե կան մարդիկ, որոնք հնարավորություն կունենան գնելու տնտեսության համար որևէ անասուն չեն կարող, վատահ չլինելով, որ այսօրվա գնածը վաղը չեն գալ ու չեն տանիլ, զրկելով գյուղացուն թե անասունից և թե փողից: Գյուղացին դորանցից ոչ մի միջոց չունի պաշտպանվելու ինքն անգեմ, իսկ տանողը զինված և անպատասխանատու:

2. Հացի կարիքը այնքան մեծ է, որ գյուղացիները թողած իրենց ավերված տնտեսությունը գնում են հարևան թուրք գյուղերը հացիփոր, առանց կոպեկի՝ ձրի ծառայություններ անում: Կան դեպքեր, որ նույնիսկ հայ կանայք ինքնակամ գնում են թուրքերի մոտ որոշ ծառայություններ անելու: Քիչ չեն և սովամահության դեպքերը:

3. Մեր գյուղերը նախքան դեպքերը եղել են բարեկեցիկ, ապահով և հարուստ: Մեր գավառի թվով մոտ 18000 հայ ժողովրդից օտարության մեջ եղել են ոչ ավել քան 1500 հոգի, այն էլ նոքա, որոնք իրենց տներում եղել են ավելորդ ձեռքեր և արհեստավոր: Սոցա մեծ մասը ամառվա աշխատանքի ամիսներում գալիս է եղել տուն՝ իրեն տնտեսությանը հավաքմանը օգնելու: Մեր գավառի հայկական մասը պարապվում էր հողագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ և մասամբ էլ խաշնարածությամբ ու մեղվաբուծությամբ: Վար ու ցանքսը կատարվում էր նահապետական ձևով, քիչ չէին տներ, որոնք սեփական գութան էին լծում և ամեն մի գութանում լծում էին 4-5 զույգ գոմեշ կամ եգ: Ամենապակասը ունեցել է մի զույգ լծկան, մի կով և մի բեռ-

\* Բնագրում ճանապարհով (ծանոթ.կազմ.):

նակիր անասուն: Չնայած, որ գործը կատարվում էր հին ձևով, բայց այդ դեպքում բնությունն օգնության էր գալիս, հողը լինելով սևահող, առատ բերք էր տալիս և գյուղացին վարձատրվում էր իր աշխատանքի համար լի ու լի: Այգիները անջրդի են և բերրի, գյուղացուն էլ ինչ էր մնում:

Ահա այս հսկա տնտեսությունը, հազարավոր դեսյատին այգիները, որը հարյուրավոր տարիների հայ գյուղացու տոկուն և համառ աշխատանքի արդյունքն էր, ձեռքից գնացել է: Երեկվա ապահով, նույնիսկ հազարավոր մարդկանց կերակրող գյուղացին մնացել է ձեռքը ծոցին, չոր հացի կարոտ, հարազատները կորցրած, վիզը ծուռ, սպասում է որևէ տեղից օգնություն: Այդ հսկա տնտեսությունն այսօր չկա: Ավերված է կոպիտ և բռնի ավերակների սիրահար բեյերի ձեռքով: Այդ ավերված տնտեսությունը, որն արդյունք է եղել հայ գյուղացու տոկուն ու համառ աշխատանքի, պետք է վերականգնել ազատելու համար մի բուն ժողովրդի վերջնական կորուստից, այդ հնարավոր է և անհրաժեշտ, եթե հացի հետ գյուղացուն տրվի լծկաններ և սերմացու: Գոնյա ամեն մի տանը տալ մի եգ, համապատասխան սերմացու, եթե այդ հնարավոր չէ գոնյա ամեն մի գյուղին 4-20 գույգ եգ, համայնական ձևով աշխատելու պայմանով, այս կարիքը կլինի միմիայն առաջին տարվա համար, իսկ 2-րդ տարին՝ գյուղացին ուղքի կկանգնի և կարիք չի ունենալ դրսի օգնության: Պաշար պետք է հասցնել այն գյուղացիներին, որոնք ցրված են թուրք գյուղերում, որով և հնարավորություն տված կլինենք նրանց վերադարձնել՝ վերականգնելու իրենց ավերած տնտեսությունը, մանավանդ որ այժմ այգիների վերաշինության ժամանակն է: Եթե այս գարնանը հնարավորություն չտանք գյուղացուն գարնանացան անելու և այգիները կարգի բերելու, պետք է իսպառ ձեռք բաշել դրանցից, որոնք սովից կկոտորվեն և որոնք էլ կցրվեն թուրք գյուղը և կլուծվեն նրանց մեջ:

4. Մեզանից վերև սարերում ապրում են խաշնապահ լեզգիները, որոնք տարվա որոշ ժամանակներում իրենց ոչխարները իջեցնում են դաշտ արածացնել: Սովորական ժամանակներում, երբ ույծերի փոխհարաբերությունը գերակշռում էր հայերի կողմը, մանավանդ իրավական կողմից: Լեզգիները չէին համարձակվում արածացնելու առանց համաձայնության, որևէ գյուղի դաշտ, թեկուզ ինչքան փոքր գյուղ լիներ: Այն ժամանակներն օրենք ևս կար, որը հարկավոր դեպքում օգնության էր գալիս, թեև կարիք էլ չէր լինում դիմելու օրենքին: Եթե գյուղը համաձայնվեր կծախեր որոշ հողամաս, իսկ եթե ոչ կանցնեին առաջ: Հաճախ ծախված հողամասի արժեքը հասնում էր 10 և ավել հազարի: Վայ թե խաշները անցնեին որոշած սահմանից մեկին 10 տուգանք կառնեին: Քիչ չէր, որ խաշնարածները որևէ գյուղից հողամաս գնելու համար դիմեն զանազան միջոցներով, կաշառելով գյուղի ազդեցիկներին: Այժմ հանգամանքները փոխվել է, տերը չի կարող խոսել, որովհետև իրավունք չունի և օրենք էլ չկա, տիրում կամայականություն: Ուռնակոխ են լինում ոչ թե դաշտերը, այլ և այգիները: Ղաթափաթա լեզգին այժմ նստած է Ղալազյա գյուղում և չեն կարողանում հեռացնել: Մեր ստացած վերջին տեղեկությունների համաձայն լեզգիները ավելի են կողոպտում հայերին, քան թե մեր հարևան թուրքերը և եթե այդպես շարունակվի, այս տարի, ոչ արտ կլինի, ոչ խոտ և ոչ խաղող, բոլորը ուռնակոխ կլինին:

5. Գյուղացիք մերկ են բառիս բուն նշանակությամբ: Վերջին երկու տարին գյուղացին հնար չի ունեցել շորեր գնելու, իսկ մնացածներն էլ թուրքերը կողոպտել են, թողնելով ցրտի և անձրևի տակ: Որպեսզի հնարավորություն տրվի գյուղացուն դաշտային աշխատանքին գնալու, նրանց մերկությունը պետք է մի որևիցե բանով ծածկել: Անհրաժեշտ է գնել դրա համար ինչ տեսակ ուզում է լինել կտորներ, մանավանդ կանանց, որոնք դաշտային աշխատանքներում պետք է փոխարինեն տղամարդկանց:

6. Դեպքերի ժամանակ շատ կին և երեխաներ կան գերված թուրքերի մոտ, որոնց հնարավորություն կա հետ ստանալու և դրանց թիվը շատ է և ահա այդ գերիներին պետք է օր առաջ հետ բերել, որով հնար տված կլինենք վերակենդանացնելու շատ

մարած օջախներ, դրա համար հարկավոր էր, որ գնար մի խառն հանձնաժողով, բաղկացած 3 հայից, 3 թրքից և մի անգլիացուց, որոնց պարտքը պետք է լինի: -

1) Աշխատել վերականգնել փոխադարձ հարաբերություն 2 հարևան ազգերի մեջ:  
2) Հետ բերել թուրքերի մոտ եղած կանանց, աղջկերանց և երեխաներին ըստ հնարավորության, տեղավորել իրենց գյուղերում:

3) Հայտարարել իրավակարգ երկու ժողովուրդների մեջ անխտիր վերականգնել նախկին փոխհարաբերությունը:

4) Հետ ստանալ հայերից խլված իրերը, եթե կգտնվեն թուրքերի մոտ:

5) Հանձնարարել տեղական վարչության հավասար վերաբերմունք անխտիր, և առանձին պաշտպանություն ցույց տալ հայ ժողովրդին, որպես ճնշված կողմի: Տեղական Իվանովկայի պրիստավի օգնականը նշանակել հայ, որը պետք է ընտրվի բազմաբնակ գյուղացիներից, և որի ներկայությունը վստահություն և հավատ կներշնչե գյուղական ժողովրդին պարապելով իրան շինարար աշխատանքով: Ընդունել տեղական ոստիկանության մեջ նաև հայ ծառայողներ: Ունենալ 5 հոգուց բաղկացած մի խումբ ստրաժնիկներ՝ երկու հայ երկու թուրք և մի մալական, որոնց պարտքը պետք է լինի հսկել գյուղերը, դաշտերը և ճանապարհները, հարձակումներից և թալաններից պաշտպանելու համար: Ապահովել երկաթուղու կայարաններից դեպի հայկական գյուղերի ճանապարհները, պատասխանատվության ենթարկել, այն գյուղերին, որոնց սահմաններում կպատահեն կողոպուտներ և սպանություններ:

Նախագահ կոմիտեի՝ **Մ.Խ.Մայիլյանց**  
Քարտուղար՝ **Ս.Գալստյան**

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 80, թթ. 35-39: Բնագիր: Ձեռագիր

### N 235

**ԲԱԳՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ՝ ԴԱՇՆԱԿԻՑ ՊԵՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԱՆԿԵՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

N 143

25 մարտի 1919 թ.  
Բաքու

Ձեր փետրվար ամսի 15 առաքած նամակը ստացել է հորիզորդս, որին շտապում ենք պատասխանել հետևյալը:

Այն մարմինը, որ ընդունում է Բագվի սեպտեմբերյան աղետից տուժածների վնասների ցուցակները, կոչվում է Դաշնակից պետությունների քննիչ հանձնաժողով: Նոյեմբեր ամսին (1918 թ.) անգլիացիները Բագու մտնելուց հինգ օր անցած, գեներալ Տոմսոնի անունից հայտարարում է Բագվի ազգաբնակչության, որ տաճիկ զորքի կողոպուտներից տուժածները ներկայացնեն դաշնակից պետությունների քննիչ հանձնաժողովին իրանց վնասների և կորուստների ցուցակները՝ Օտոմանյան պետության հաշվին հատուցում ստանալու համար:

Ահա չորրորդ ամիսն է արդեն, ինչ գործում է հիշյալ հանձնաժողովը անգլիակ[ան] հրամանատարության ցուցմունքներով: Այժմ աշխատանքները ավարտվելու վրա են արդեն: Բոլոր գումարները՝ մի ընդարձակ զեկուցագրով պիտի ուղարկվեն Լոնդոն՝ թերևս կոնֆերենցիային ներկայացվելու և նրա հավանությունը ստանալու համար:

Տուժածների ներկայացրած ցուցակները հասնում են մոտ 33000, իսկ ներկայացրած գումարները անցնում են մեկ միլիարդից:

Բացի դրանից Բազվի Հայոց Ազգային խորհրդին կից գործում է մի հատուկ Անկետային հանձնաժողով՝ անպաշտոն կերպով կյանքի կոչված դեռ անգլիացիների մուտքից առաջ: Այդ հանձնաժողովի նպատակն է հատուկ հարցաթերթերով բազմակողմանի տեղեկություններ հավաքել Բազվի հայ ազգաբնակչության մարդկային զոհերի և նյութական կորուստների վերաբերյալ (վերջին հարցում մենք գործում ենք կոնտակտ դաշնակիցների քննիչ հանձնաժողովի հետ): Մեր հանձնաժողովը ևս շուտով կավարտի իր գործը: Բոլոր արդյունքները մշակված կիրատարակվեն առանձին գրքով և կներկայացվեն Կոնֆերենցիային:

Տարաբախտաբար Ազերբեյջանի գավառներում կատարված վայրագությունների հետևանքներով ամբողջապես քայքայված հայ ազգաբնակչության վերջին փշրանքների հսկայական վնասները չեն ցուցակագրվել ոչ պաշտոնական և ոչ մասնավոր եղանակներով: Օբյեկտիվ պայմանները չափազանց աննպաստ են եղել այդ տեսակ աշխատանքի համար:

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 51, ք. 30: Պատճեն: Ձեռագիր

**N 236**

**ТЕЛЕГРАММА НУХИНСКОГО АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА ОБ ИЗБРАНИИ Б.БАЛАЯНА ЧЛЕНОМ АЗЕРБАЙДЖАНСКОГО ПАРЛАМЕНТА ОТ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ НУХИНСКОГО И АРЕШСКОГО УЕЗДОВ**

**N 466**

**26 марта 1919г.  
Нухи**

Нухинским Армянским Национальным советом Богдан Балаян избран членом парламента армянского населения Нухинского, Арешского уездов. Об этом сообщено Ганджинскому Национальному совету.

Председатель Национального совета **Туманян**

АИ РА ф.223, оп.1, д.80, л.43. Телеграфный бланк. Рукопись.

**N 237**

**УДОСТОВЕРЕНИЕ А.А.НАСИБОВА, ВЫДАННОЕ БАКИНСКИМ АРМЯНСКИМ НАЦИОНАЛЬНЫМ СОВЕТОМ О КОМАНДИРОВКЕ В ТЕРСКУЮ И КУБАНСКУЮ ОБЛАСТИ ДЛЯ ВЫЯСНЕНИЯ КОЛИЧЕСТВА И ПОЛОЖЕНИЯ БЕЖЕНЦЕВ**

**N 145**

**26 марта 1919г.  
Баку**

Дано сие Ашоту Абрамовичу Насибову в том, что он действительно командирован Бакинским Армянским Национальным советом в Терскую и Кубанскую области для выяснения количества и нужд беженцев-армян из гор. Баку.

Армянский Национальный совет убедительно просит всех правительственных лиц и учреждения и военные власти оказать А.Насибову содействие, как в передвижении, так и в исполнении возложенной на него задачи.

Удостоверение это действительно сроком на три недели со дня его выдачи.

Председатель  
Управляющий делами совета  
Секретарь-член совета

АИ РА ф.223, оп.1, д.65, л.64. Отпуск. Машинопись.

**N 238**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՀԱՐՑՈՒՄԸ ԱՂՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԻՆ՝ ԱՂՐԲԵՋԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**N 881**

**27 մարտի 1919 թ.  
Երևան**

Խնդրում եմ մանրամասն տեղեկություններ տալ Աղրբեյջանի սահմաններում գոյություն ունեցող հայ որբանոցների և հայ գաղթականներին և հայ կարոտյալներին օգնող հաստատությունների և մարմինների մասին:

Ի նկատի պետք է ունենալ, որ այն հայերը, որոնք Աղրբեյջանի քաղաքացիներ են, իրավունք ունեն պահանջելու, որ նույն այդ Հանրապետությունը հարկ եղած օգնությունը ցույց տա իրենց, այս մասին անշուշտ կաշխատեն Բազվի և Գանձակի Հայոց Ազգ. խորհուրդները: Ինչ վերաբերում է Աղրբեյջանի քաղաքացի չհաշվող կարոտյալ հայերին օգնելուն, այդ իր ուժերը ներածին չափ պատրաստ է անել Հայաստանի Հանրապետությունը: Խնդրում եմ, որ պարզեք, թե ովքե՞ր և ի՞նչ հիմունքներով են Աղրբեյջանի քաղաքացի համարվում:

Արտաքին գործերի մինիստր՝ **Ս. Տիգրանյան**  
Ընդ. քարտուղար՝ **Հակոբյան**

ՀՀ ՊԱ. ֆ. 200, գ. 79, թ. 113: Թողոն: Մեքենագիր:

**N 239**

**ПИСЬМО ПРЕДСЕДАТЕЛЯ АНКЕТНОЙ КОМИССИИ РЕДАКЦИИ ГАЗЕТЫ “БАКИНЕЦ” О НЕСООТВЕТСТВИИ ЦИФРОВЫХ ДАННЫХ ЖЕРТВ, ПОМЕЩЕННЫХ В ГАЗЕТЕ, С ДАННЫМИ АНКЕТНОЙ КОМИССИИ БАКИНСКОГО АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА**

**[31 марта 1919г.]  
Баку**

Господин редактор,  
Прошу не отказать дать место в редактируемой Вами газете следующему заявлению:

В N18 в газете “Бакинец” приведены некоторые цифровые данные относительно жертв, понесенных армянским населением от сентябрьских событий в гор. Баку.



Ввиду того, что газета приводит эти числа, как данные Анкетной комиссии при Бакинском Армянском Национальном совете, последняя заявляет, что означенные числовые данные не соответствуют действительности.

Прошу другие газеты перепечатать.

Председатель Анкетной комиссии при Бак.Арм.Нац.совете **Б.Ишханян**.

АИ РА ф.223, оп.1: д.65, л.68. Отпуск. Машинопись.

**N 240**

**ЗАКЛЮЧЕНИЕ ЧЛЕНА КОМИССИИ ПО ИССЛЕДОВАНИЮ НАСИЛЬСТВЕННЫХ  
ДЕЙСТВИЙ НАД АРМЯНАМИ ЗА ВРЕМЯ ВСЕМИРНОЙ ВОЙНЫ А.ЛОНГИНОВА  
ПРЕДСЕДАТЕЛЮ КОМИССИИ ПО ОПРЕДЕЛЕНИЮ ПОТЕРЬ АРМЯН В МИРОВУЮ  
ВОЙНУ**

**Март 1919г.  
Тифлис**

Работа Комиссии по исследованию насилий, учиненных мусульманами над армянским населением за время всемирной войны имеет не только большое практическое, но также историческое значение.

Практическое значение этой комиссии определяется необходимостью представить мирному конгрессу описание тех невероятных условий, в которых армянскому народу пришлось жить, действовать и бороться, стремясь к торжеству союзного оружия.

Планомерная и настойчивая работа турецких эмиссаров, руководивших организацией мусульманских масс с целью разрушить пути сообщения и прекратить доступ армянских войск на фронт; уничтожение мусульманами материальных средств армянского народа; истребление громадного количества армян, главным образом, призывного возраста, с целью парализовать мобилизацию живых сил народа; насилия над стариками, женщинами и детьми, оставшимися в тылу, с целью сломить стойкость духа доблестных бойцов на фронте - все это рисует величественную картину неравной борьбы, предпринятой армянским народом, который, не в пример слабым духом нациям, не останавливался даже перед угрозой своему физическому существованию, остался верен долгу, чести и принятым на себя перед союзником нравственным обязательствам.

Историческое значение труда, предпринятого комиссией, определяется необходимостью объективного изложения событий, которые несомненно получают одностороннее освещение в трудах аналогичной комиссии Азербайджанской республики, обремененной, к тому же, как я слышал, сенаторскими полномочиями, обильно снабженной необходимыми средствами исследования и также руководимой опытным лицом - тов.прокурора окружного суда Клуге - немцем по происхождению.

Всестороннее описание этих событий имеет громадное значение не только в настоящем, но и в далеком будущем, являясь памятником доблести и страдания, при накоплении с которым европейское общественное мнение должно будет преклониться перед величием духа небольшого народа, который, истекая кровью и умирая от голода и холода, не колеблясь, продолжал героическую борьбу, предпочитая смерть позорной капитуляции.

Несмотря на краткость времени и недостаточность средств, Комиссией, начиная с 5 декабря, закончен по настоящее время первый том, объемом свыше ста полулистов,

1). Армянское население, в особенности крестьянское, подверглось разгрому и разграблению в два периода: а) во время первого наступления турок в декабре 1914г., когда их войска совместно с бандами местного турецкого населения подвергли разгрому армянские селения пограничных с Турцией Карсской и Батумской областей одновременно с массовым истреблением местного армянского населения. Часть этого населения, спасаясь от резни с остатками своего имущества, обратилась тогда в бегство и нашла себе приют в смежных областях с Тифлисской и Эриванской губернии. Когда, затем, нашествие турок было отражено и наступило некоторое замирение в разгромленных турками местностях, уцелевшие беженцы, в 1916г. вновь вернулись на развалины своих пепелищ и стали восстанавливать разрушенные дома и разоренные хозяйства.

Однако, не прошло и года со дня их водворения на своих местах, как новая волна турецких полчищ, с отходом русских войск с Кавказского фронта, затопила снова те же разгромленные в 1914г. области и на этот раз пронеслась далее по всему Закавказью одновременно с повсеместным выступлением всего закавказского мусульманства, главным образом против армянского населения.

В этот второй период разгрома армянского населения, обнимающий 1917 и 1918гг., на всем пространстве Эриванской, Елисаветинской, Бакинской и частью Тифлисской губернии и Карсской и Батумской областей подверглись разгрому все те армянские селения и частные сельскохозяйственные и промышленные предприятия и города, которые оказались на пути движения турок, или очутились во власти местного татарского населения вследствие свое малочисленности.

2). О разрушительной силе этих погромов, произведенных турко-татарскими бандами, можно судить по тому, что эти банды не только увозили все, что можно было увезти с собой, начиная со скота и зерна и кончая досками, бревнами и оконными рамами крестьянских жилищ, но предавали уничтожению и то, что оставалось невывезенным, сравнивая с землей некогда цветущие селения. Можно сказать без преувеличения, что в этот период с неподдающиеся жестокостью были совершенно опустошены обширные провинции и уничтожены дотла сотни селений и население их либо было вырезано, либо обращено в паническое бегство, не менее гибельное, чем разгром и истребление.

3). Располагая пока данными лишь по 18 уездам и округам упомянутых выше областей и губерний можно принять с большим приближением, что всего в этих районах разгромлено 393 селений с общим числом хозяйств в 55076.

Кроме того подверглись разгрому армянское население городов Баку, Александрополь, Карс, Игдырь, Артвин, Нахичевань, Нуха и др.

Потери от разгрома, понесенные городским населением, а равно и частно-владельческими торгово-промышленными и сельскохозяйственными предприятиями в настоящее время подробно выясняются путем индивидуальной переписи.

По городам Баку, Шемахе, Кубе, Дербенту, м.Геокчаю и других ближайших к Баку районов, откуда беженцы стекались в г.Баку таких потерпевших хозяйств насчитывается до 30000; по другим городам Карсу, Александрополью, судя по выбранным в Тифлисском Бюро анкетным бланкам достигает цифры не менее 10000.

Всего, таким образом, число таких частных, не крестьянских хозяйств, разграбленных турко-татарами может быть исчислено не менее чем в 40000.

Таким образом, в общей сложности число всех категорий разоренных хозяйств с общим числом всего населения 600000, должно достигнуть более чем 100000 считая в среднем на каждое хозяйство по 6 душ обоего пола.

Следовательно, почти одна треть всего армянского населения Закавказья разорена дотла, влачит нищенское существование в положении беженцев, без крова, без средств существования, без всякой возможности собственными силами восстановить

свои разрушенные хозяйства и обречена на голод и болезни, вызывающие их рядов десятки тысяч жертв, обреченных на вымирание.

4). Данные о среднем крестьянском бюджете и о стоимости инвентаря среднего крестьянского хозяйства, собранные из различных источников, показывают, что инвентарь и запасы среднего крестьянского хозяйства, включая и постройки могут быть оценены в среднем для нагорной полосы в 3000 рублей, для низменной полосы в 5000 р., средний годовой доход крестьянского хозяйства может быть определен для нагорной полосы в 1000 рублей, для низменной поливной полосы в 1500 р. Наконец, средняя стоимость запасов может быть определена в 475 р. для нагорного хозяйства и в 680 р. для поливного района, считая, что в запасе у крестьян могло быть не менее половины всех продуктов их хозяйств, получаемых в течение года.

Если принять, что 3/4 всех разгромленных хозяйств находится в нагорной полосе и 1/4 в низменной поливной полосе, то в среднем для всех районов можно принять:

- а) Стоимость инвентаря в 3500 руб.
- б) - запасов 526 руб.
- в) - годового дохода 1125 руб.

Следовательно, стоимость всего среднего разгромленного хозяйства, не считая доходов от урожая и скотоводства, может быть определен в 4026 р. или в круглой цифре 4000р. по ценам 1914 года.

Данные непосредственного местного обследования выражают эту среднюю потерю разгромленного хозяйства почти в тех же цифрах:

- а) По Шушинскому уезду (19 сел.) 2371 руб.
- б) " Джеванширскому (10 сел.) 6369 "
- в) " Бамбакскому уч.Алек. (7 сел.) 4609 "
- г) " Лорийскому уч.Борч. уезд. (13 сел.) 2883 руб.

Для наших расчетов мы приняли в 4000р. среднюю стоимость одного разгромленного хозяйства.

Для всех 54933 разоренных крестьянских хозяйств общая потеря должна составить сумму около 219733000 - 220 миллионов рублей, считая по ценам 1914 года. Этой цифрой может быть определена стоимость разгромленного и расхищенного инвентаря и хозяйственных запасов.

5). На вопрос о том, во что могло бы обойтись восстановление разгромленных хозяйств в прежних размерах может быть дан ответ путем выяснения того, по каким ценам могли бы быть приобретены в данное время предметы, входящие в состав привнесенных инвентаря и запасов.

Из прилагаемых к сему докладу справочных цен 1914 и 1918г.г. видно, например, что:

	1914 году	1919 году
1 пуд пшеницы стоил	-р. 56к.	175 руб.
1 " ячменя " "	- " 60"	120 руб.
1 " сена " "	- " 15"	28 "
1 " соломы " "	- " 10"	24"
1 " картофеля " "	- " 50"	62 "
1 " сахару " "	- " 40"	1000"
1 корова " "	50р.	1000"
1 лошадь " "	90р.	1000"
1 вол " "	70р.	1200"
1 арба " "	75р.	800"
1 фургон " "	350р.	5000"
1 плуг стоил	35 р. - к.	450
1 коса "	1р. -к.	40"

Судя по этим данным, продукты вздорожали в 100-200 раз, предметы инвентаря в 10-20 раз,

Если переоценить по нынешним ценам крестьянский инвентарь с постройками, то стоимость запасов тоже минимум в 52600р. Стоимость всего выразится в 87600р. - Точная переоценка инвентаря даст большую цифру ее стоимости (см. приложение бюджэ) но мы остановимся на цифре 80000р. и тогда найдем, что по ценам 1919г. стоимость инвентаря, построек и имевшихся запасов у крестьян, расхищенных туркотатарами, выразится около 4 миллиардов рублей. Эту сумму в 4 миллиарда должна быть определена потеря разгромленных крестьянских хозяйств по ценам 1919г., так как только ценою затраты такой именно суммы было бы возможно хоть в некоторой степени компенсировать тот материальный ущерб, который причинен разгромами 1914, 1917 и 1918 годов армянскому крестьянству.

Но было бы ошибочно предполагать, что этой суммы окажется достаточно для восстановления крестьянских хозяйств в их былой производительности, так как к этой сумме для указанной цели надлежало бы прибавить содержание крестьянских семей в течение времени до получения урожая 1920г., ибо очевидно, нет ни малейшей надежды на то, что разоренные крестьяне, после 1-2 лет беженской жизни, смогли бы в наступившем году восстановить свои хозяйства и получить в текущем году какой-либо урожай, достаточный для их пропитания.

И действительно, по настоящее время значительная часть беженцев еще не смогла по тем или иным причинам вернуться в свои селения и нельзя предсказать, когда это возвращение состоится и когда крестьяне смогут приступить к полевым работам.

По этим причинам надо полагать, что в текущем году крестьяне, если и вернуться в свои селения, то все их работы будут произведены с расчетом на получение урожая лишь в 1920г. и потому для восстановления их хозяйства необходимо снабдить их продовольствием, хотя бы одним хлебом, в течение более года. Считая по 20 пудов всех видов зерна на душу, на каждое хозяйство в 6 душ, потребуется одного зерна не менее 120 пудов, что может обойтись не менее 20000 рублей на каждое хозяйство.

Если предположить, что только половина разоренных крестьянских хозяйств будет нуждаться в продовольственной помощи в течение еще 1 1/2 года до нового урожая, то и в этом случае на этот предмет потребуются еще суммы не менее чем в полмиллиарда рублей (25000 хозяйств по 20000 руб. на хозяйство).

Что касается потерь городского населения и частновладельческих, сельскохозяйственных, торгово-промышленных предприятий, то при том условии, что число потерпевших этой категории достигает 40000 и что средняя потеря одного такого предприятия или частного хозяйства отнюдь не должна быть менее средней потери крестьянского хозяйства, надо с большим вероятием допустить, что эта часть населения потеряла от разгромов не менее, если не больше всего крестьянского населения.

Следовательно, потеря всего армянского населения должна выражаться цифрой не менее 8 миллиардов рублей по ценам 1919г.

Вместе с тем не следует упускать из виду, что эта цифра материального ущерба армянского населения должна почитаться скорее значительно уменьшенно, чем увеличенно, так как в приведенных расчетах совершенно не учтены потери населения от болезней и невероятных лишений, связанных с беженской скитальческой жизнью. Сколько тысяч жизней загублено или искалечено навсегда, сколько народных сил надломлено и лишилось своего потенциального богатства, своей трудоспособности. Эти потери учесть нет никакой возможности. Между тем они составляют самую существенную потерю, способную на долгие годы и даже быть может в течении нескольких поколений намного уменьшить народное богатство, создаваемое производительностью народного труда.

Не учтены в приведенном расчете потери армянского населения и оттого, что десятки тысяч армян, главным образом в возрасте наиболее трудоспособном, подверг-

лись истреблению и десятки тысяч женщин и детей либо погибли от голода и болезней, либо поглощены мусульманскими гаремами, из которых им не вырваться никогда, так как жилища мусульман не доступны для взора иноверцев и за своими глухими, непроходимыми стенами скрывают тайну тысячи обращенных в мусульманство женщин и детей.

Какими цифрами может быть выражено число армян, погибших во время резни, от голода, лишений и болезней этого мы еще в точности определить не в состоянии, пока население не вернется на свои места и не подсчитает все свои потери.

Но и приведенных данных достаточно вполне, чтобы утверждать с полным убеждением, что потери армянского населения колоссальны и абсолютно и относительно. И ни один народ, принимавший участие в минувшей войне, в этом отношении не может быть поставлен наряду с армянским, так как ни один народ не может заявить, что одна треть всего его богатства подверглась разгрому и расхищению, что одна треть его населения в течение почти двух лет покинула свои родные села и города и живет изо дня в день и в зной и в суровую стужу под открытым небом, медленно вымирая от голода, холода и лишений и все еще не видя конца своим вековым страданиям...

Заведующ. экономич. отделом Вермишев

АИ РА, ф.278, оп.1, д.4, лл.40-43 об. Копия. Машинопись.

**N 359**

**ПИСЬМО ПРАВЛЕНИЯ НУХИ-АРЕШСКОГО ЗЕМЛЯЧЕСТВА ГЛАВЕ БРИТАНСКОГО КОМАНДОВАНИЯ НА КАВКАЗЕ О ЧИСЛЕ СИРОТ, БЕЖЕНЦЕВ, ПЛЕННЫХ, ОСТАВШИХСЯ В ЖИВЫХ ПОСЛЕ ПОГРОМОВ АРМЯН ЛЕТОМ 1918Г.**

**[январь, 1920]**

**Тифлис**

Еще летом 1918г. при наступлении турок на Баку, армяне названных уездов подвергались массовой резне, а их имущества полнейшему разграблению: уничтожено и превращено в груды развалин 48 богатейших армянских селений (из 51 села), перебито до 26700 человек, т.е. 50% населения, главным образом молодого и здорового элемента. Во многих селениях и до сих пор сохранились груды непохороненных черепов и костей этих жертва.

Положение спасшихся от резни армян, числом до 27000 в том числе и 10000 беженцев и сирот таково: большая часть их живет в трех уцелевших (по ошибке принятых турками за грузинские) селениях: Нидж, Варташен и Джалут, и в самом городе Нухе, и лишь незначительное число бежало в Елизаветполь и в Грузию. Несколько тысяч армян, особенно детей и женщин, в плену в татарских селениях. Многие из них насильственно обращены в магометанство; мальчики обрезаны, для подневольных работ. Армяне сел. Орабан, все без исключения, все под угрозой резни, приняли магометанство. Почти нет беженской семьи, у которой родной или близкий не находился в плену.

Списки многих пленных находятся у нас. Так, в сел. Моллалы, у бывшего Махмед Эфенди, руководившего грабежами, в плену два армянские девушки. У бывшего турецкого чавуша, ныне урядника поста Кюнгют, около Нухи, Ахмед Эфенди также в плену девушка Астхик Кейдарян.

В уцелевших селениях; Нидж, Варташен и Джалут, домашняя утварь, обстановка, сельскохозяйственный инвентарь и скот - все захвачено, у армян не осталось ни

одной лошади. Поля их не сжатые прошлым летом, взошли теперь, обещая обильный урожай, но крестьяне не могут отойти от села на версту, чтобы не быть убитыми, вследствие чего поля их остаются необработанными.

В самом городе Нухе все армянские дома подверглись разграблению. Грабежи и вымогательства, сопровождаемые убийствами, продолжаются и поныне. Армяне здесь живут под страхом ежедневных насилий в сознании своей несправедливости, им положительно воспрещается заниматься чем-нибудь, почему почти все они прожили свои последние крохи и обречены ныне на неминуемую гибель. Между тем имеются у них большие запасы скрытого от татар шелка (десяtkи тысяч пудов), вывести каковой не могут, так как сообщение между Нухой и ст. Евлах вполне свободное и безопасное для мусульман, совершенно закрыто для армян: движение по дорогам сопряжено с ограблением и убийством.

Вот уже более года армяне живут в полной оторванности от внешнего мира: еще недавно пытавшийся проехать убивались по дороге (число их по последнее время около 20-и).

Везде по деревням немало турецких агентов, которые собственно и возбуждают местных татар против армян, устраивая при удобном случае резню последних. Так, еще 29 мая с/г в Агдаше, в административном центре Арешского уезда, при явном попустительстве местных властей, были вырезаны все находившиеся там армяне-беженцы.

По только что полученным сведениям из высокоавторитетных источников предвидится более крупная резня остатков армянского населения во всех трех уцелевших селениях и городе Нухе, при чем определенно указывается, что участь 1000 молодых беженцев, взятых недавно мусульманами насильственно на полевые работы, в качестве жнецов, уже предрешена, если только не будут приняты срочные меры к спасению их от неминуемой гибели.

Такая же участь ждет и уполномоченных Армянского Комитета в Нухе и Варташене, вопящих также о немедленной помощи.

Находя тревогу Армянского Нухинского и Арешского уезда вполне основательной, в предвидении поголовной резни, Земляческий союз нухинцев и арешцев в Тифлисе, настоящим обращается с убедительнейшей просьбой к Союзному командованию не отказать немедленно послать в г.Нуху своего представителя для принятия мер к ограждению жизни и остатков имущества, едва уцелевшей горсти армянского населения означенных уездов.

Присутствие такого представителя оказало бы большое моральное воздействие на мусульман и удержало бы их от эксцессов. Равным образом присутствие сделало бы возможным дело освобождения многочисленных пленных вопрос о которых также нужно считать одним из самых волнующих.

При этом присовокупляем, что пребывание Вашего представителя могло быть и непродолжительным, впрямь до переселения армян указанных уездов в Армению, куда они готовы выехать немедленно, как только Союзное командование обезопасит им пути сообщения между Нухой и ст.Евлах ж.д. на каковое переселение имеется полное согласие Армянского правительства.

Председатель **Тер Авакян**  
Вице-представитель **Тер Осипян**

АИ РА, ф.245, оп.1, д.12, лл.11-12 и об. Подлинник. Рукопись.

**N 360**

**ОБРАЩЕНИЕ ПРАВЛЕНИЯ НУХИ-АРЕШСКОГО ЗЕМЛЯЧЕСТВА СОЮЗНОМУ  
КОМАНДОВАНИЮ В ЗАКАВКАЗЬЕ С ПРОСЬБОЙ О ЗАЩИТЕ ОСТАТКОВ  
АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ, О ВРЕМЕННОМ НАЗНАЧЕНИИ СВОЕГО  
ПРЕДСТАВИТЕЛЯ В УКАЗАННЫХ УЕЗДАХ ДО ПЕРЕСЕЛЕНИЯ АРМЯН  
В АРМЕНИЮ\***

[январь, 1920]  
Тифлис

В дополнение к докладу нашему от 28 июля 1919г. за N 292 о положении армян в Нухинском и Арешском уездах, имеем честь почтительнейше представить следующие цифровые данные:

I . Число беженцев обоого пола:

1. В гор. Нухе ...	1500
2. -,- армянск. селе Варташен	1000
3. -,- Ниджи	1400
4. -,- Джалут	155
5. -,- гор. Елизаветполь	2000
6. -,- пределах Грузии	1500

Итого 7105

II . Число зарегистрированных сирот:

1. В гор Нухе и его районах до	400
2. -,- сел. Варташен ...	200
3. -,- Джалут ...	100
4. -,- Ниджи ...	150
5. -,- Грузии ...	300

Итого 1150

III . Число пленных армян (рабов) находящихся  
в татарских селениях:

1. В сел. Самух и его районах до ...	1000
2. -,- Гейнюке ...	500
3. -,- Хачмаз ...	500
4. -,- Теркеш ..	300
5. -,- Моллалы ...	30
6. -,- Мехлековах ...	40
7. -,- Джорлы ...	200
8. -,- Бум ...	50
9. -,- Падар ...	100
10. Сел. Варданлы и его районах до	50
11. -,- Дегня ...	500
12. -,- Дзахлы ...	20
13. -,- Орабан ...	100
14. -,- Гаджалы ...	200
15. -,- Закатальском округе ...	800

\* Печатается с сокращениями (прим.сост.).



16. -,,- Прочих татарских селениях 400

---

Итого 4790

I V. Число армян, живущих в родных очагах, но совершенно лишенных свободы передвижения в течение 2-х лет:

1. В гор. Нухе ...	3000
2. -,,- армянск. селе Варташен	2500
3. -,,- Ниджи	4800
4. -,,- Джалут	1100

---

Итого до 11400 душ

Председатель правления  
Делопроизводитель

АИ РА, ф.245, оп.1, д.12, л.15 и об. Рукопись.

**N 361**

**ПИСЬМО К.Я.АВШАРОВА ДИПЛОМАТИЧЕСКОМУ ПРЕДСТАВИТЕЛЮ АРМЕНИИ  
В АЗЕРБАЙДЖАНЕ О СУДЬБЕ ЕГО СЫНА ВОЕННОГО ВРАЧА Н.К. АВШАРОВА  
И ОБ ОКАЗАНИИ МАТЕРИАЛЬНОЙ ПОМОЩИ ЕГО СЕМЬЕ**

**17 января 1920г.  
Баку**

Гражданина Шемахинского уезда Константина Яковлеви-  
ча Авшарова (адрес: Баку, Карантинная, д.№121 Тараева)

**ПОКОРНЕЙШАЯ ПРОСЬБА**

В связи с Сентябрьскими событиями младший сын мой Михаил погиб на фронте военных действий от вражеского снаряда, а в довершении этого несчастья было разгромлено все мое состояние в Армянокенде, оставшись без всякого добра.

Старший же сын мой, доктор, только за несколько время перед тем, лишь вернувшись с Германского демобилизованного военного фронта, временно находился на службе при Бакинском лазарете в здании Коммерческого училища, со вступлением в Баку турецкого командования, был лишен этого места службы. Впоследствии же с призывом в Армению для службы докторов сын мой, единственный кормилец всей нашей семьи, с великой охотой отправился в Армению и был принят на службу с назначением его в районы Ордубата-Акулисы, вслед за которым предполагался и мой с семьей моей отъезд в Армению - если бы я получил от названного сына моего уведомления.

Между тем долгое время по затруднительности отправки им мне писем, я никаких сведений от него не получал, почему и отъезд наш к нему и до сего времени не осуществился.

Между тем по последним сведениям о несчастных событиях, разыгравшихся в районе Акулис от названного сына моего Николая опять-таки не имею никаких сведений, что еще более огорчает родителей, и главное, что нет решительно никакой возможности распознать каким-нибудь путем о положении его.

Таким образом положение наше стало самым критическим, ибо поддержка нашей семьи, в составе меня, жены (уже в преклонных годах), двух взрослых дочерей и одной несовершеннолетней дочери всецело находилась единственно в этом сыне нашем Николае. от которого начиная с июня месяца 1919г. не имеем никаких сведений и никакой материальной помощи и в результате всего этого терпим форменную материальную нужду, живя впроголодь, не имея совершенно никаких средств.

Описывая Вам все сущее наше положение, я настоящим позволяю обратиться единственно к Вашей, г.Представитель, помощи, не отказать оказать мне в данном деле возможное содействие, путем сношения с правительством Армении, во первых, о доставлении мне возможно точных сведений о положении и состоянии названного сына моего - доктора Николая Константиновича Авшарова, а равно о месте его пребывания, и во-вторых, оказания мне возможной материальной помощи, дабы я имел возможность до поры до времени поддерживать существование наше, т.к. мы все находимся у порога голодной смерти, тем более, что я уже совершенно в преклонных годах, лишенный трудоспособности, не имею никакого источника заработка для прокормления означенной семьи моей.

Добавлю при этом. что третий сын мой Григорий Константинович Авшаров еще до демобилизации русских войск на Турецком фронте, нахожившись на военной службе при Армянской Дружине, также погиб геройской смертью при боевых стычках с турками, так что, как изволите усмотреть, я в течение незначительного промежутка времени потерял всех взрослых трех кормильцев-сыновей и очутившись ныне в самом критическом положении. Почему и надеюсь, г.Представитель, настоящую мою вполне скромную и насущную просьбу не оставите без сочувственного Вашего внимания к удовлетворению и по возможной скорости и о всяком результате распоряжений по сему обращению прошу не отказать сообщить мне по указанному выше моему адресу.

Մակագրություն. «Այս խնդրագրի պատճենը վերցնել, իսկ բնագիրը ուղարկել կառավարությանը, խնդրելով տեղեկություն տալ բժ. Նիկողայ Ավշարյանի վիճակի մասին ծնողներին և հայտնելու համար»: 17/1 Մ.Հարությունյան:

АИ РА, 200, оп.1, д.417, лл.64-65. Подлинник. Машинопись.

Կից գրություն Հայաստանի հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանին

Դիվանագիտական պրն. ներկայացուցչի կարգադրությամբ Կոնստանտին Հակոբյան Ավշարյանի սույն խնդիրը, իր որդի՝ բժիշկ Նիկողայոս Կոնստանտինյան Ավշարյանից տեղեկություն տալու և նյութական օժանդակություն ցույց տալու մասին, ուղարկվում է դիվանիդ ի տնօրինություն:

Հետևանքի մասին խնդրում ենք փութով մեզ տեղեկացնել, խնդրատուին հաղորդելու համար: Բագու, 21 հունվարի 1920 թ.

Միսիայի քարտուղար\*  
Գործավար՝ **Մ.Տեր-Գրիգորյան**  
Տես, նույն տեղում: Բնագիր: Չեռագիր:

\* Ստորագրությունը անընթեռնելի (ծանոթ.կազմ.):

**ՀԱՏՎԱԾ ԱՂԻՔԵԶԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՁԵԿՈՒՅՑԻՑ ՈՒՂԴՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝ ԻԹԹԻՀԱՏՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՂԻՔԵԶԱՆՈՒՄ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈւՈՐԴՐՈՊԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԶՐՈՒՅՑԻ ՍԱՍԻՆ**

N 132

30 հունվարի 1920 թ.  
Բաքու

Ամսույս 25-ին ես նորից այցելեցի Ուորդրոպին: Տեսակցության ժամանակ մեր խոսակցությունը դարձյալ Հայաստանի և Ադրբեջանի փոխհարաբերությունների շուրջն էր պտտում: Ես նրան պարզեցի, որ տարաբախտաբար Ադրբեջանի կառավարական շրջաններում խաղաղարար և բարեմիտ գործիչների դրությունը բավական խախտուտ է այժմ, իստիհատ կուսակցության պրոպագանդայի և գործունեության հետևանքով: Մասնավորապես Ուսուբեգովի դիրքը բավականաչափ խախտվել է ներկայումս և խնդրեցի Ուորդրոպին յուր ազդեցությունը գործ դնել իստիհատականների ազդեցությունը թուլացնելու և նոցա վարած ագրեսիվ քաղաքականությունը չեզոքացնելու: Ուորդրոպը խոստացավ բոլոր միջոցները ձեռք առնել կասեցնելու իստիհատականների ագրեսիվ գործողությունները: Նույն օրը Ուորդրոպը եկավ ինձ մոտ փոխայցելության, իսկ երեկոյան «Միտրոպոլ» հյուրանոցում կայացավ Ադրբեջանի կառավարության բանկետը, որին հրավիրված էի նաև ես:

Դիվանագիտական ներկայացուցիչ՝ **Տիգ.Բեզգադյան**  
Քարտուղար

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 417, թ. 57: Բնագիր: Ձեռագիր:

**ՔԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 1917, 1918, 1919 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ**

[1920 թ. սկիզբ]  
Բաքու

Համաեվրոպական պատերազմից և ռուսական հեղափոխությունից առաջացած բացառիկ պայմանների շնորհիվ Հայոց մարդասիրական ընկերության խորհուրդը հնարավորություն չէ ունեցել ոչ միայն յուր վերջին տարիների, այն է 1917, 1918 թվերի գործունեության հաշիվները յուր ժամանակին ներկայացնելու ընդհանուր ժողովի հայեցողության, այլև խորհրդի նոր անդամների ընտրություններ կատարելու:

Այդ տարիների ընկերության գործունեությունը բացառապես ծանրացած է եղել խորհրդի միայն մի քանի անդամների վրա, որովհետև ընտրված անդամներից Գ.Պապյան, Ն.Պատվականյան, Ա.Հակոբյան, Հ.Աղամիրզյան, Հ.Գյուլմսերյան, Ալ.Պարոնյան և Ռ.Ճգնավորյան զանազան ժամանակներում հեռացել են խորհրդի անդամությունից հեռավորության և քաղաքից հեռանալու պատճառով, իսկ 1918 թ. սեպտեմբերյան դեպքերով սպանվել է խորհրդի զանձապահ Ս.Գ.Այվազյանը: Այդպիսով մնացել են միայն նախագահ Հ.Բ.Տեր-Միքայելյանը, փոխնախագահ Ս.Ա.Ղազարյանը, անդամներ տիկ. Ե.Բեկնազար-Յուզբաշյան, Օ.Սապարյան, Ե.Տեր-Օհանյան,

Ա. Պահլավունի-Մելքունյան, պպ. Գ.Խանդամիրյան, Ա.Տեր-Յովհաննիսյան և հրավիրված պպ. Գ.Տեր-Ստեփանյան և Թ.Շեկ-Յովսեփյան: Իսկ այս վերջիններից էլ մի քանիսը 1918 թ. մարտի դեպքերից հետո երկար ժամանակ հեռացած են եղել քաղաքից:

1918 թ. գինվորական իշխանությունը խլել է ընկերության Ստանիսլավսկի փողոցի վրա գտնվող տները (Թունայանի կորպուսը) և այդ պատճառով ընկերությունը ստիպված է եղել փակել մտուրը և լվացքատունը: Նույն թվականին խլել են և Գիմնազիայի փողոցի վրա գտնվող տները, ուստի փակվել է և տների դահլիճը: 1918 թ. սեպտեմբերին, երբ տաճկական ռումբերը տեղում էին քաղաքի վրա, ընկերությունը ստիպված է եղել յուր որբերին վերահաս վտանգից ազատելու համար փախցնել նրանց Պարսկաստան:

Այդ օրերին տեղացող ռումբներից մեկը ծակելով գրադարանի կտուրը, պայթել է գրադարանում: Մի ռումբ էլ ընկել է և պայթել Գիմնազիայի փողոցի տան դահլիճի մուտքում:

Նույն այդ դեպքերով ընկերությունը կորցրել է երկար տարիների խորհրդի անդամ-գանձապահ Ա.Գ.Այվազյանին, Գրասիմիսկի ծառա Մելքոն Օհանյանին, Ստանիսլավսկի տների կառավարիչ Կ.Բ.Սուբաշյայանին և նույն տների դռնապան Ալեքսան Ապեր Դանիելյանին:

Այդ դեպքերով թալանվել են ընկերության հիմնարկությունների մթերքները և այլն: Ընկերության հասցրած վնասների մանրամասն ցուցակները ներկայացված են 8 Контрольную комиссию Союзных держав в Баку. Վնասների գումարը հասնում է 308777 ռ. 50 կոպ.:

Ջգալի վնաս է ունեցել և ընկերության գրադարանը: Բաժանորդներից շատերը, չնայած ձեռք առած միջոցներին, մինչև հիմա չեն վերադարձրել իրենց մոտ եղած գրքերը: Ենթադրվում է, որ նրանցից մեծ մասը փախել-հեռացել է Բազվից, իսկ մի մասը կոտորվել է և այդպիսով տարած գրքերը ևս կորել են:

Չնայելով տիրող բացառիկ անպաստ պայմաններին, այնուամենայնիվ ընկերությունն այս վերջին երեք տարիների գործունեության հաշիվները՝ անցյալ տարիների հետ համեմատած, ավելի արդյունավետ են:

Այսպես

1) 1917 թ. ընկերությունը ունեցել է նույն հիմնարկությունները, ինչ որ 1916 թ., նպաստներ է տվել Շամախու թեմի 16 ծխական-եկեղեցական դպրոցներին, հովանավորել է հայկական հիվանդանոցը և այլն:

Այդ թվականի հայկական երեկույթի փոխարեն ընկերության խորհուրդը հանգանակություն է կատարել և հավաքել հոգուտ ընկերության 34209ռ. 50 կ.:

2) 1918 թ. մինչև սեպտեմբերյան դեպքերը ընկերության որբանոցը, գրադարանը և կարուձևի արհեստանոցը դարձյալ գոյություն են ունեցել և այդ տարվա մուտքը և ելքը ավելի է, քան 1917 թ.:

Այդ տարի ևս հայկական երեկույթի փոխարեն ընկերության խորհուրդը հանգանակել է 17. 890 ռ.:

3) 1919 թ. մարտ ամսից ընկերության գրադարանը և կարուձևի արհեստանոցը նորից վերաբացվել են և շարունակում են իրենց գործունեությունը: Փակվել է միայն ընկերության որբանոցը: Փակելու պատճառն այն է, որ Պարսկաստանում Ազգային խորհուրդը ընկերության որբերին միացրել է մյուս վայրերից հավաքված որբերի հետ և բոլորի համար հիմնադրել մի ընդհանուր որբանոց յուր ղեկավարության տակ: Բայց երբ այդ որբանոցը դարձյալ տեղափոխել են Բազու, Մարդասիրական ընկերության խորհուրդը տասնյակ հազարներ է ծախսել և կարգի բերելով ընկերության որբանոցը յուր բոլոր ունեցածով դրել է Ազգային խորհրդի տրամադրության տակ: Այդ թվականին Ա.Ծննդյան և Ջատկի տոների առթիվ ընկերության խորհուրդը նվերներ է հավաքել 87150ռ., բացի դրանից նվեր է ստացել Անգլիայում Գլխավոր շտաբից 360000ռ., Թիֆ-

լիսից - Կովկասյան բարեգործական ընկերությունից 25000ռ. և «Եղբ. Նոբել» ընկերությունից 100 թերթ = 25փ. ծածկի երկաթ (փուլը հաշվելով 1000 ռ.) = 25000ռ.:

Սույն հաշվետարումն խորհրդի անդամները մեծ աջակցություն և եռանդ են ցույց տվել և Ազգային խորհրդի հետ միասին հավաքել հոգուտ սովյալների և որբերի 735000ռ.:

Այս թվականին ընկերության խորհուրդը աչքի առաջ ունենալով, որ քաղաքում այլուր օրեցօր թանձանում է և անհնար է որոշել, թե մինչև ուր է հասնելու այդ թանձանությունը, չի մերժել Ազգային խորհրդի առաջարկությունը և 450000 ռուբ. պարտք վերցնելով և 190000 ռուբ. էլ յուր միջոցներից ավելացնելով, յուր ժամանակին 2000 փուլ ցորեն է գնել, որից այժմ հաց է պատրաստում Ազգային խորհրդի որբանոցի համար:

1919 թվականին ծխական հոգաբարձությունը որոշել էր վերադառնալ հայոց դպրոցները, բայց որովհետև դպրոցներին հատկացրված ընկերության Գիմնազիչ փողոցի տները երկար ժամանակ զինվորանոցի էր վերածված, ուստի նախքան դպրոցները բաց անելը, անհրաժեշտ էր այդ տներում զգալի վերանորոգություններ կատարել: Ընկերության խորհուրդը ծախսելով 86550ռ., կատարել է անհրաժեշտ վերանորոգությունները և շինությունը հանձնել դպրոցին և այդպիսով մեծ աջակցություն ցույց տվել դպրոցների հոգաբարձությանը:

Տարիների ընթացքում այդ շինության դահլիճը, ի միջի այլոց, ծառայելիս է եղել իբրև մուտքի աղբյուր: Բայց շնորհիվ այն հանգամանքի, որ զուրկ է եղել հարմարություններից, շատ չնչին մուտք է տվել ընկերությանը, երբեմն էլ նույնիսկ չի ծածկել յուր ծախսերը: Այդ իսկ պատճառով ընկերության խորհուրդը Գիմնազիչ փողոցի տան երրորդ հարկում մի նոր շինություն-խոհանոց և բակի կողմից էլ սանդուղք է կառուցել և վարձով տվել Հայկական ակումբին: Այդ նոր շինության վրա խորհուրդը ծախսել է 171000 ռուբ.: Այդպիսի մեծ ծախս կատարելու պատճառներից մեկն էլ այն է եղել, որ ընկերության շինության դահլիճը վարձով տրվի մի այնպիսի հիմնարկության, որի նպատակներից մեկն էլ Ազգային հիմնարկություններին օգնելն է:

Պարտք են համարում հիշատակելու, որ մինչև 1920 թ. սեպտեմբեր ամիսը ընկերությունը ստանալու է ոչ միայն յուր կատարած ծախսի գումարը՝ 171 հազար ռուբլին, այլ նույնքան էլ ավելի:

1919 թվականին զանազան չքավորների և հիմնարկությունների նպաստներ է բաժանված փողով, ճաշերով, շորեղենով և այլն, գումարը մոտ 70000 ռ.

Նույն թվականին նպաստ է փոխադրվել Նուխու հայոց որբանոցին 5000 ռուբ.

Բացի այդ բոլորից Բազվի կենտրոնական ՏՆային կոմիտեի սննդատու կայաններից ընկերության հաշվին, նույն թվականին, հայ չքավորներին և հայոց դպրոցի չքավոր աշակերտ-ուհիներին 9450 ռ. ձրի ճաշ է բաժանված:

Ընկերության գրադարանը 1917 թ. սեպտեմբերի 13-ից մինչև դեկտեմբերի 7-ը փակ է եղել, կտուրը նորոգելու պատճառով: Այդ թվականին գրադարանի համար ձեռք է բերված 164 գիրք, որից նվեր Հ. Ք. Տեր-Միքայելյանից 43 գիրք, անհայտ անձնավորությունից 15 հատ:

Բազվի պաշարման տարին՝ 1918 թ. հուլիս ամսի 17-ից մինչև 1919 թ. մարտի 19-ը գրադարանը փակ էր: Այդ տարին գրադարանի համար ձեռք է բերված 142 գիրք, որից նվեր պ. Ռախմիլովիչից 5 գիրք:

1919 թվի մարտի 19-ից գրադարանը նորից բացվել է. այդ տարին ստացվել է 715 գիրք, որից իբրև նվեր՝ Գրիգոր քահ. Տեր-Գրիգորյանի ժառանգներից 440 գիրք, բժիշկ Գարեգին Սարգսյանից 240 գիրք և տիկին Աղեքսանդրյանից 16 գիրք:

1917/18 թթ. գրադարանից տարած գրքերից մնացել են բաժանորդների մոտ ռուսերեն 912 գիրք, կազմարարի մոտ, որն սպանվել է, 224 գիրք ռուսերեն և 100 գիրք հայերեն, ընդամենը 1236 գիրք:

1919 թ. բաժանորդների մոտ մնացել է ռուսերեն 248 գիրք և հայերեն 14 գիրք, գումարը 262 գիրք

Գրադարանի բաժանորդների թիվը և նրանց վերցրած գրքերի քանակությունը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Տարին Բաժանորդների թիվը Կարդացած գրքերի թիվը ռուսերեն հայերեն պարբերական հրատարակություններ

1917	983	48022	3761	2.262
1918	1973	37337	3062	1111
1919	582	28649	1017	1326
Գումարը	3538	114008	7840	4699

ՀՀ ՊԱ, ֆ. 27, ց. 1, գ. 338, թթ. 3-6: Բնագիր: Չեռագիր:

**N 364**

**СООБЩЕНИЕ АРМЯНСКОЙ ПАРЛАМЕНТСКОЙ ФРАКЦИИ “ДАШНАКЦУТИОН”  
АЗЕРБАЙДЖАНСКОГО ПАРЛАМЕНТА БАКИНСКОМУ АРМЯНСКОМУ НАЦИОНАЛЬНОМУ СОВЕТУ О ПРОПАЖЕ НА СТАНЦИИ КЮРДАМИР ТРЕХ АРМЯН**

**N 155**

**2 февраля 1920г.**

**Баку**

Армянская фракция имеет честь препроводить при сем Национальному совету копию сообщения Министерства внутренних дел по делу о пропаже на ст.Кюрдамир армян - Атагулянца, Лалаянца и Аванеса по фамилии неизвестного, сообщение о которых было сделано фракции Национального совета.

Пред.фракции **Малхазян**

АИ РА, ф.223, оп.1, д.103, л.96. Подлинник. Машинопись.

**N 365**

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԾՈՂՈՎԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ՀԱՆՁՆԱԾՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ԿՐԳԻ ԵՎ ՑՈՒՑԱԿՆԵՐ ՆԵՐՎԱՅԱՑՆԵԼՈՒ ԲՈՒՆ ՆՊԱՏԱԿԻ ՍԱՍԻՆ**

**N 16**

**4 փետրվարի 1920թ.**

**Թիֆլիս**

Ի պատասխան խորհրդիդ ամսույս 3-ից թվագրած N 51 գրության, Քննիչ հանձնաժողովս պատիվ ունի հաղորդելու, որ ցուցակները պետք են ոչ թե վիճակագրական տեղեկությունների համար, այլ իրենց բուն նպատակի համար: Գերագույն կոմիսարի խորհրդով Քննիչ հանձնաժողովս մեր կառավարության միջոցով դիմել է Պարիզի Կոնֆերանսին, որ այս գործի համար կոնտրոլային հանձնաժողով կազմվի օտարներից, բայց առայժմ ինքը - Քննիչ հանձնաժողովն է Հայաստանի կառավարության սանկցիայով քննություն կատարում անհատական հայտարարությունների վերաբերմամբ:

Լրագրական հայտարարություններից արդեն իմացած կլինեք, որ քննության գործը արդեն սկսվել է, և որոշ պայմանաժամ է նշանակված նոր հայտարարություններ տալու համար (մինչև սույն տարվա մարտ) և վճարների համար (մինչև մարտ):

Մենք խորապես համոզված ենք, որ հայ ժողովրդի կրած վնասները կհատուցվեն այնպես, ինչպես ֆրանսիացիների, բելգիացիների և ուրիշ տուժած ժողովրդների վնասները: Բայց իհարկե ՔՆՆԻՅ հանձնաժողովն ոչ ոքի ոչ մի խոստում տալ չի կարող, և ամեն մի վնասված անձնավորության իրավունքն է վարվել իր հայեցողությամբ:

Նախագահ ՔՆՆԻՅ հանձնաժողովի՝ **Յ. Թումանյան**  
Քարտուղար՝ **Ջալալ Տեր-Գրիգորյան**

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 103, ք. 107: Բնագիր: Չեռագիր:

**N 366**

**ՍԱՂԻՍԱ ԳՅՈՒՂՈՒՄ ՎԵՐԱԲՆԱԿՎԱԾ ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐ ԲԱՔՎԻ  
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ՄԻՋՆՈՐԴԵԼՈՒ ԽՆԱ-ՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ ՎԵ-  
ՐԱԲՆԱԿՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՑՈՐԵՆ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**4 մարտի 1920 թ.**

Մադրասա գյուղի ներկայացուցիչներ Հովհաննես Խաչ.  
Բաշիրյանցից և Գևորգ Ղարամանյանցից

Հայտնի պիտի լինի Ազգային խորհրդիդ, որ երբեմնի հարուստ ու բարեշեն Մադրասա գյուղի ավերումից հետո, այնտեղ այժմ երևանից գաղթած թուրքերի հետ իր խղճալի գոյությունը քարշ է տալիս 242 տուն հայություն 1400 շնչով: Չուզեմալով նկարագրել անցյալ ծնեռվա քաշած մեր սև օրերը բնակարաններ չունենալու ու քաղցի երեսից, պակաս գրկանքներ չենք կրել և այս ծնեռ քաղցից ու հիվանդություններից: Մինչդեռ մեզ հետ ապրող գաղթական թուրքերը, որ առանց այն էլ տեր են անասունների, օգտվում են մեր այգիներից, կառավարությունն էլ մյուս կողմից օգնություն է ցույց տալիս ցորեն բաժանելով: Մեր հարցին, թե ինչո՞ւ մեզ - հայերիս ևս չեն բաժանում, պատասխան են տալիս. ե՞րբ դիմեցիք և մերժեցիք: Հայտնելով այդ մասին, Մադրասայում վերաբնակված հայության կողմից խնդրում ենք միջնորդություն հարուցանել Ադրբեջանի խնամատարության մինիստրի առաջ մեզ ևս ցորեն բաց թողնելու համար: Մեր ներկայացուցչության փաստաթղթերը և համախոսականը կներկայացնենք ըստ առաջին պահանջման:

**Գ. Ղարամանյան**  
**Հ. Բաշիրյան**

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 103, ք. 125: Բնագիր: Չեռագիր:

**N 367**

**ԳԱՆՉԱԿԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԻՍՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱ-  
ՆԻ ՊԱՌԱՍԵՆՏԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱՅԻՆ՝ ԳԱՎԱՌՈՒՄ ՏԻՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ,  
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

**21 փետրվարի 1920 թ.**

Հայրենակցական միությունը ստանում է բազմաթիվ դիմումներ՝ գրավոր և բերանացի Գանձակի շրջանի հայ գյուղացիության ծանր դրության մասին:

Սոս ժամանակներս Միության Կարչությունը իր անդամներից մեկին ուղարկել է գավառ տեղն ու տեղը գյուղացիության դրության հետ ծանոթանալու համար: Շրջելով մի շարք գյուղեր և ստանալով բավականի ծանր տպավորություններ իրերի ներկա դրության մասին, Կարչությունն կարևոր է գտնում ամսույս 16-ին լսած զեկուցման հիման վրա ծանոթացնել Ադրբեջանի պառլամենտի հայկական ֆրակցիաներին գավառի ժամանակակից կացության հետ հույս ունենալով, որ պառլամենտի հարգո անդամները միջոցներ ձեռք կառնեն գավառի ծանր դրությունը հնարավորության սահմաններում թեթևացնելու:

I. Աչքի զարկող երևույթը գավառում ամենից առաջ) դա քաղաքական անցուդարձերից գավառի կատարելապես անտեղյակ լինելն է. քաղաքական բոլոր խոշոր դեպքերը գյուղացուն կամ բոլորովին անհայտ են, կամ հայտնի են անհեթեթ հաղորդագրություններով: Թողնելով մի կողմ համաշխարհային պատմական դեպքերը, գյուղացիության գիտակցության համար դեռևս չի պարզված Կովկասյան, մասնավորապես Ադրբեջանի նորածին պետության գոյության իմաստն ու պատմական մոտիկ անցյալը: Ինտելիգենցիան գավառից բոլորովին կտրված է և գյուղացին, որ առաջներում սովոր էր ինտելիգենցիայից լսել քաղաքական նորություններ, այժմ վարում է դրսի աշխարհից կատարելապես կտրված մի կյանք և որևէ հեղինակություն ունեցող մեկը չկա գյուղում. քաղաքից էլ ոչ ոք չի գնում նրան տեղյակ պահելու քաղաքական կյանքի դրության հետ:

II. Քաղաքի և գավառի կապը քանի գնում թուլանում է: Նույնիսկ առևտրական գործերով (վայտ, ճախ, ածուխ քաղաքում ծախելու, կամ հաց, մանուֆակտուրա և այլ կարևոր պիտույքներ քաղաքում գնելու) - գյուղացին քաղաք է գնում ամենածայրահեղ կարիքի դեպքում: Պատճառը մի կողմից ճանապարհների ապահովությունն է (բազմաթիվ հայերի թալանվելը, սպանվելը, վիրավորվելը, անհայտանալը գավառի և քաղաքի միջև եղած տարածության վրա), երկրորդ) քաղաքում ապօրինի և սանձարձակության հասնող կամայականությունն է, այսպես կոչված «подводная повинность»-ի հողի վրա: Սովորական երևույթ է, իբր քաղաք եկած գյուղացին իր սայլով բռնագրավման է ենթարկվում և օրերով ձրի աշխատեցնում է, ըստ որում շատ հաճախ կատարված աշխատանքները պետական աշխատանք չէ, այլ այս կամ այն պաշտոնական անձի մասնավոր գործ:

III. Ընդհանրապես ոստիկանության կամայականությունները գավառում չտեսնված չափերի են հասնում: Գավառը բառի իսկական իմաստով տնքում է գավառական ոստիկանի և իր հեծյալ ոստիկանների «պաշտոնական արշավանքներից»: Բռնություններ, ծեծ, ձերբակալություններ, սպանություններ, սպառնալիքներ և այլն և այդ պաշտոնական արշավանքների ժամանակ սարսափի են մատնում ամբողջ գյուղացիությանը: Ոչ ոք չի կարող բողոքի կամ գանգատի ձայն հանելու, որովհետև դրա հետևանքը բողոքողի և գանգատվողի համար շատ ծանր ու կորստաբեր է: «Պաշտոնական» ծեծի, բռնության հետ միաժամանակ մեծ չափերի է հասնում կաշառակերությունը և դրամաշորթությունը: Գյուղական պաշտոնատար անձինք շատ հաճախ միջնորդ ու մասնակից են այդ բոլոր սանձարձակություններին:

IV. Գյուղական տանուտերերը (старшина) նշանակովի են, ոչ ընտրովի: Դրա հետևանքն այն է, որ գյուղական старшина սովորաբար գյուղացիության իրավական շահերը պաշտպանելու տեսակետից ոչ միայն անհուսալի տարր է, այլև կատարելապես վնասակար: Կարչության հայտնի չէ, թե արդյոք գյուղական տանուտերերի նշանակովի լինելը հենված է որևէ օրենքի վրա, թե դա սովորական մի կամայականություն



է գավառական իշխանության կողմից նահանգական իշխանության հովանավորությամբ ու սանկցիայով:

V. Շատ մեծ հուզմունք է տիրում և ապագայում մեծ ու անցանկալի հետևանքներով հղի է գավառում թուրք գաղթականների բնակեցման խնդիրը: Գավառի մի շարք գյուղերում բնակեցրված են արդեն մեծ քանակությամբ թուրք գաղթականներ, ըստ որում - դոքա մեծ մասամբ ունևոր, մեծաքանակ գյուղական ինվենտար և անասուններ ունեցող գաղթականներ են՝ համարյա թե բոլորը զինված: Թեև գավառում նրանց բնակեցնելու ժամանակ հայ գյուղացիությանը հայտնել են, որ դա ժամանակավոր է, բայց ըստ երևույթին նրանք շատ ամուր են զգում իրենց դրությունը, միշտ խոսում են հայերի հետ հրամայողի ձայնով, իսկ շատերը նույնիսկ պատրաստում են սերմացու (թե ինչ հողեր են սերմելու՝ դեռևս չեն հայտնում, բայց հայերը գավառում երկյուղ են կրում, որ իրենց հողերն են խլելու): Ոչ մի իշխանություն դեռևս չի կարողացել անաչառ կերպով հարթել հայ գյուղացիության և թուրք գաղթականների փոխհարաբերությունները: Դրությունը երկուստեք լարված է և ոչ մի երաշխիք չկա, որ այս կամ այն պրովոկացիոն դեպքից գավառում չեն ծագիլ մասսայական անկարգություններ, որոնց հետևանքը հայ գյուղացիության համար Վարչության կարծիքով կարող է կորստաբեր լինել:

VI. Դպրոցների դրությունը գավառում նույնպես մխիթարական չէ: ուսուցչական կազմի և ժողովրդի մեջ սերտ կապ գոյություն չունի: Որևէ հսկողություն այդ դպրոցների մանկավարժական-ուսումնական մասի վրա համարյա բացակայում է:

Ընդհանուր գծերով պատկերացնելով Հայկական պառլամենտական ֆրակցիաներին գավառի դրությունը՝ Վարչությունս միաժամանակ կարևոր գտավ Ձեր հատուկ ուշադրությունը դարձնել հատկապես գավառի գաղթական թուրքերի վերաբնակեցման խնդրի վրա: Վարչությունս կարևոր է գտնում, որ օր առաջ Ձեր կողմից միջոցներ ձեռք առնվեն այդ խնդրի բարեհաջող լուծման համար, որովհետև շուտով գարուն է և տիրող պայմաններում հայ գյուղացիությունը հազիվ թե հնարավորություն ունենա իր ամբողջ ուժերը դնել գյուղատնտեսական աշխատանքների համար, քանի որ նրա աշխատանքի պտուղն անպատիժ կերպով վայելելու են թուրքերը, իսկ իշխանությունը կատարելապես մատը մատին չի խփի հայ գյուղացու շահերը պաշտպանելու:

Անկախ դրանից Վարչությունս կարևոր է գտնում, որ պառլամենտական դաշնակցական ֆրակցիան մոտիկ կապ հաստատեն գավառի հետ, գյուղացիությանը տեղյակ պահեն քաղաքական անցուդարձերին. պառլամենտի անդամն անձեռնմխելի է և գավառում նրա հեղինակությունը հարգանքով կվերաբերվեն իշխանությունները: Մեր գյուղացիությունը իր կողմից շատ մեծ ուշադրությամբ կլսի ինտելիգենտ քաղաքական գործչին և նրանից քաղաքական դասեր կառնի:

Գավառում տիրող կամայականություններին սանձ դնելը հնարավոր է, եթե տեղերում քննություն կատարվի հատուկ պառլամենտական հանձնաժողովի կողմից և հատկապես հայ պատգամավորի մասնակցությամբ: Վարչությունը խնդրում է ֆրակցիային, կառավարության նախագահին այս մասին դիմում արվի հատուկ մի պատգամավորության միջոցով, որին կմասնակցեն նաև Վարչությանս ներկայացուցիչները:

Ներկա դիմումի հետևանքների մասին Վարչությունս խնդրում է իրեն տեղեկացնել:

Գանձակի գավառի հայրենակցական վարչության նախագահ՝ **Մովսես Գրիգորյան**  
ՀՅԴ. պառլ. ֆրակցիայի քարտուղար՝ **Գ.Ս.-Շահնազարյան**

ՀՀ ՊԱ, ֆ.223, ց.1, գ.103, ք.110: Վավերացված պատճեն: Ձեռագիր:

N 368

**ПИСЬМО ПОЛКОВНИКА Т.И.БАХТАМОВА В НУХИ-АРЕШСКОЕ ЗЕМЛЯЧЕСТВО В ТИФЛИСЕ С БЛАГОДАРНОСТЬЮ ЗА ОКАЗАННУЮ ЕМУ ПОМОЩЬ И О ПРОСЬБЕ УСКОРИТЬ ЭВАКУАЦИЮ ОСТАВШИХСЯ В ЖИВЫХ АРМЯН ИЗ НУХИ**

**26 февраля 1920  
Тифлис**

Я, полковник Тигран Исаакович Бахтамов (уроженец гор. Шемахи Бак.губ.) был заключен быв. генерал-губернатором к трехмесячному заключению в Нухинской тюрьме, куда был выслан из гор. Баку. По окончании сроке ареста, очутившись в Нухе без знакомых, без средств - я был гостеприимно принят членами Нух. Комитета Аветис Аваковичем Григорьянцем, Константин Минаевичем Бабаджанянцем и Константин Тосаловичем, которые приняв участие в моей и поручика Колмакова судьбе, кроме того оказали нам материальную помощь в размере 2000 руб., чем дали возможность выехать из Нухи. Глубоко ценя гостеприимство, участие и помощь, я явился вторично выразить искреннюю признательность Нухинскому Землячеству, члены которого отнеслись столь благожелательно и отзывчиво ко мне. Вместе с тем они просили поспешить с эвакуацией оставшихся семейств, положение которых крайне тяжелое при создавшихся условиях.

**Полковник Т. Бахтамов**  
(бывший командир 279 запасного полка в гор.Баку)  
Мой адрес в Тифлисе: Коргановская 26, кв.6

АИ РА, ф.245, оп.1, д.15, ч.1, л.31. Подлинник. Рукопись. Автограф.

**N 369**

**ԱՊՐԲԵՋԱՆԻ ՊԱՌԱՄԵՆՏԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԳԱՆՉԱԿԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՍԻՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ, ԳԱՎԱՌԸ ՖՐԱԿՑԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԱՆՂԱՌԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՂ ՆՊԱՏԱԿՈՎ ԽՈՐՀՐԴԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 167**

**26 փետրվարի 1920 թ.  
Բաքու**

Գանձակի գավառի Հայրենակցական միությունը դիմել է ֆրակցիային մի դիմումով, որի բովանդակությունը վերաբերում է Գանձակի գավառի հայ գյուղացիության ծանր կացությանը: Այդ դիմումի պատճենը ընդամին ֆրակցիան ուղարկում է Ազգային խորհրդին ի գիտություն:

Միաժամանակ ֆրակցիան տեղեկացնում է Ազգային խորհրդիդ, որ իր 24-ին ունեցած նիստում քննության առնելով հիշյալ դիմումը, նրա բովանդակության համապատասխան մի շարք որոշումներ է ունեցել: Ի միջի այլոց որոշված է ֆրակցիայի երկու (կամ առնվազը մի) անդամի շրջագայությունը գավառում թե ինֆորմացիայի, թե որոշ նյութեր հավաքելու համաձայն դիմումի բովանդակությամբ:

Գտնելով, որ այդ որոշման իրականացումը ընդհանրապես մի հրամայական անհրաժեշտություն է և արձանագրելով, որ ֆրակցիայի տրամադրության տակ չկան հարկավոր գումարներ ծրագրվող շրջագայության ծախքերը հոգալու համար, պարլամենտական Դաշն. ֆրակցիան սրանով դիմում է Ազգային խորհուրդին խնդրելով նրա նյութական աջակցությունը: Նախագծված ծախքերի գումարը 50000 ռ. -ի է հասնում և

Ֆրակցիան յատնում է, որ բաց թողած գումարի ծախսման հաշիվները իր ժամանակին կներկայացնի Ազգային խորհրդին: Միևնույն ժամանակ գումարի ծախսման մանրամասնությունները ֆրակցիան թողնում է որոշել Ազգային խորհրդի:

Ներկա դիմումի հետևանքի մասին ֆրակցիան խնդրում է Խորհրդի հնարավորի չափ շտապ պատասխանել:

Ֆրակցիայի նախագահ՝ **Ա.Մալխազյան**  
Քարտուղար՝ **Գ.Ա.-Շահնազարյան**

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 103, ք. 108: Բնագիր: Չեռագիր:

**N 370**

**ԳԱՆՁԱԿԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՆԱՍԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝  
ՎԻՃԱԿՈՒՄ ՏԻՐՈՂ ՀՈՒՄԱՀԱՏԱԿԱՆ ՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՑ ԴԻՈՒԹՅԱՆ, ԳԱՆՁԱԿՈՒՄ ԵՎՐՈ-  
ՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՅԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**N 58**

**4 մարտի 1920թ.  
Գանձակ**

Հայրապետական դիվան Վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց  
Հայրապետական դիվանի անունով այս փետրվարի 20-ի, մարտի 4-ի, ք. 57 իմ  
հայտարարությունից պարզված է Գանձակի և նորա վիճակի հայության ծանր և տագ-  
նապալից ճգնաժամը, որը կար մինչև այսօր, այսօր այն հուսահատական է, վաղը ան-  
հայտ:

Տրվում են խոստումներ կառավարչական շրջաններից, բարեկամական հույսեր  
անհատ լավ թուրքերից, որ ոչինչ չի լինի, եղած դեպքերում կճնշվի ամեն մի փորձ, որը  
արված կլինի հայոց դեմ, սակայն միաժամանակ կատարված սպանությունները, հայե-  
րի անհետ կորչելը թուրքաց մասում, մինչև իսկ հայերի տների ավարառությունը, հայ  
ընտանիքի վերա արված այլ և այլ սրբապիղծ փորձերը հավատ չեն թողել, որ վաղը  
հայը վտանգված չէ ավելի մեծ չափով, որը մինչև իսկ կառավարությունը ուժ չունենա  
զսպելու:

Գալիս են պառլամենտի անդամները, նյութեր ծաղկաքաղում կատարվածից և  
հեռանում. անում են որոշ քայլեր այստեղ և Բաքվում, այնուհանդերձ դրությունը չի  
բարվորվում, արված քայլերն էլ մնում են անուշադիր բոլորովին և կամ աննշան արդ-  
յունք ունենում այս կամ այն անհատի տարրական իրավունքի պաշտպանության հա-  
մար: Այնպես որ, տեղական բոլոր հնարավոր միջոցները սպառված են հայ ժողովրդի  
բարվորման համար և արդյունք չեն ստացված:

Այս ամենը բացարձակ անհրաժեշտություն են ստեղծում, որ Գանձակում լինի  
եվրոպական պետությունների մի միսիա և որքան շուտ այդ միսիան մտնի Գանձակ և  
մնա այստեղ այնքան ժամանակ, որքան այդ կպահանջի հայ ազգաբնակչության բարի-  
քը, նույնքան ապահովված է հայոց կացությունը: Եվրոպական միսիան պահանջե  
Գանձակում նաև իբրև մի պետական կյանքի կենտրոնում, իբրև Ազրբեյջանի երկրորդ  
մայրաքաղաքում, որը, շնորհիվ իր դիրքի, թուրք տարրի բազմության, երբեմն ազդում  
է նաև պետական կյանքի ընթացքի վերա:

Ուստի հատուկ խնդրում են Հայրապետական դիվանից միջնորդել առաջի Նո-  
րին Վեհափառության, որ նա հաճի միջամտել հաջողեցնելու համար եվրոպական մի-  
սիայի մուտքը Գանձակում օր առաջ և ներկայությունը այստեղ, ի խուսափումն սար-  
սափներով լի անակնկալությանց:

Եվ ես վստահ եմ, որ ջանք չի խնայվի այս կենսական խնդրի հաջող լուծման համար, որը հայ ժողովրդի բարիքն է: Այլ և այս հարցը պիտի շուտով վճռվի անկախ հայկական հյուպատոս ունենալու պահանջից, որը երկար ժամանակ կքաշի:

Փոխանորդ **Լևոն վարդապետ**

ՀՀ ՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 216, ք. 3: Բնագիր: Ձեռագիր:

**N 371**

**ՔԱՂՎԱԾՔ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՎԱՐԳ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ԱՐԴԲԵՋԱՆԻ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ՎԱՆՁԱԿԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԽՈՒՆԱՊԱՅԻՆ ՏՐԱՄԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**8 մարտի 1920 թ.  
Բաքու**

«Ի Խոջայանը զեկուցանում է Գանձակի հայության դրության մասին: Վերջին շաբաթների դեպքերը խիստ հուզել են տեղական հայությունը և ստեղծել անօրինակ խուճապ՝ նկատվում է մասսայական փախուստ թե դեպի գյուղերը և թե Հայաստանի կողմը: Քաղաքի մոտ սպանել են հայեր, քաղաքում օրը ցերեկով 4 մարդ է անհայտացել. այդ դեպքերը պրովոկացիոն լուրերի հետ միասին հասցրել են հայությունը այնպիսի տագնապալի դրության, որ մարդիկ իրանց տուն-տեղը կես զնով վաճառում են և փախչում: Քննության առնելով կացությունը, Գանձակի Ազգային խորհուրդը որոշեց դիմում անել նահանգապետին և հատուկ պատվիրակություն ուղարկել Բազու նախարարապետի մոտ: Մենք եղանք նահանգապետի մոտ. նա չի ժխտում, որ թյուրքական մասսաների տրամադրությունը զրգոված է և այդ հանգամանքը բացատրում է նրանով, որ հայ գյուղերի մեջ ազիտատորներ են երևացել և կոչ են անում զինաթափ չլինել, թեև - նահանգապետի ասելով - կառավարությունը զինաթափության ծրագիր չունի, մյուս կողմից Հայաստանի թրջության տառապանքները հուզում և վրդովեցնում են թյուրք ժողովուրդը: Բացի դրանից պրովոկատոր-սպեկուլյանտներն էլ են աշխատում այնպիսի տրամադրություն ստեղծել, որ հայերը աժան զնով ծախստեն իրանց կայքերը: Նահանգապետը խոստացավ միջոցներ ձեռք առնել խուճապի առաջն առնելու համար և հավաստիացրեց, որ կառավարությունը թույլ չի տալ հայերի նկատմամբ որևէ մասսայական շարժման»:

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 104, ք. 12 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

**N 372**

**ЗАЯВЛЕНИЕ БАКИНСКОГО АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА БАКИНСКОМУ ГЕНЕРАЛ-ГУБЕРНАТОРУ ОБ ОСВОБОЖДЕНИИ ЗАДЕРЖАННОЙ ДЛЯ ПРИНУДИТЕЛЬНЫХ РАБОТ ГРУППЫ МОЛОДЫХ АРМЯН И ПРИНЯТИЯ МЕР К НЕПОВТОРЕНИЮ ПОДОБНЫХ НЕЗАКОННЫХ ДЕЙСТВИЙ**

**N 164**

**8 марта 1920г.  
Баку**

В дополнение к словесному моему заявлению, настоящим подтверждаю, что сегодня, 8 марта 1920г., в 12 часов дня на Балаханской улице. около Зеленого базара, неизвестными аскерами были забраны молодые армяне, числом от 12-15, которых повели насильно по Балаханской, и дальше по Шемахинской улицам, в направлении Сальянских казарм на принудительные, по заявлению аскеров, работы.

От имени Национального совета прошу Ваше превосходительство сделать распоряжение об освобождении задержанных для работ армян и принятии мер к неповторению в будущем подобных незаконных действий со стороны аскеров.

Председатель Бак. Арм.Нац. совета

АИ РА, ф.223, оп.1, д.103, л.148. Отпуск. Машинопись.

**N 373**

**ЗАЯВЛЕНИЕ БАКИНСКОГО АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА БАКИНСКОМУ ГЕНЕРАЛ-ГУБЕРНАТОРУ ОБ УСИЛЕНИИ СЛУЧАЕВ НАСИЛИЯ И УБИЙСТВ СРЕДИ АРМЯНСКОГО КРЕСТЬЯНСКОГО НАСЕЛЕНИЯ ГУБЕРНИИ**

**N 168**

**10 марта 1920г.**

**Баку**

По поступающим в Бакинский Армянский Национальный совет сведениям в Геокчайском уезде в последнее время сильно усилились случаи насилия и убийств среди армянского крестьянского населения.

Вследствие затрудненности сообщения с местами, полной картины положения вещей у нас не имеется, но мы имеем достоверные сведения о происшествиях, имевших место между 15-21 февраля с/г.

Случаи эти следующие:

1. Арестован и заключен в Геокчайскую тюрьму священник Александр Абраамянц, по подозрению в соучастии в убийстве одного армянина.

2. Бесследно исчезли в татарском сел.Кушимкеджа: жит. сел. Рушанашен Левон Тарифян, жит.сел. Нор-Шен Осеп Санамянц, его сын и братья Мирза и Петрос Коллугянцы, всего 4 человек.

3. Тобишене убито 2 человека.

4. В сел. Гандзак вырезаны Григор Авакянц, жена и шестеро детей.

5. В сел. Фатаклу убиты Месроп и Давид Саркисянцы и Аскерянц Николай.

Доводя до Вашего сведения изложенное, Бакинский Армянский Национальный совет просит Вас, господин губернатор, принять срочные меры к ограждению крестьянского населения Геокчайского уезда от насилий, увеличению которых сильно благоприятствует безнаказанность преступников.

Председатель

Секретарь

АИ РА, ф.223, оп.1, д.103, лл.150-151. Отпуск. Машинопись.

**N 374**

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻՆ՝ ԳԱՆՉԱԿԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴԻ ԽՆԴԻՐԸ՝ ՔԱՂԱՔՈՒՄ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՈՒ  
ՕՏԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՐՑԸ ԴՐԱԿԱՆ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱ-  
ԲԵՐՅԱԼ

Գանձակ քաղաքի և շրջակա գյուղերից գրավոր և բանավոր դիմումներ են լինում ինձ, նկարագրելով տեղի հայ բնակչության ծանր վիճակը, որ առաջանում է թուրք բնակչության և կառավարության այլևայլ ճնշումներից, որ նման են տաճկական կառավարության բարբարոսության՝ ինչպես կնկատեք գրությանս կցած Գանձակի փոխանորդի հայտարարության N 58 պատճենից:

Իբրև ազգի ընտրյալ հանուրց հայության հովվապետ անտարբեր չեմ կարող լինել իմ հոտի կրած տանջանքներին: Ուստի խնդրում եմ բարեհաճել հնարավոր միջոցներ ձեռք առնել դրանց առաջն առնելու: Գուցե հնարավոր կհամարեք օտար պետությունների ներկայացուցիչներ, միսսիա ուղարկել տալ Գանձակ՝ բնակչության մեջ անդորրություն ստեղծելու, մինչև անգամ եթե և ժամանակավոր լինի միսսիան:

Իմ դիմումին համաձայն Արտաքին գործոց մինիստրությանդ հայտնել էր համաձայնություն Գանձակում հայ հյուպատոս նշանակել, սակայն ցայսօր չէ նշանակվել. ժամանակ է այդ խնդիրն էլ ըստ կարելվույն շուտով կարգադրել և ապահովել ժողովուրդիս կյանքը և գործը:

Ողջ լինել մաղթեմ Ձեզ՝ ի **Տյառնե**

ՀՀ ՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 216, թ. 4: Բնագիր: Ձեռագիր:

**N 375**

**ԱՂՐԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԱՐՈՒԹՅԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝  
ՈՐԲԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայ. անր. Խնամատարության և Վերաշինության նախարարության 12 փետրվարի N 45 գրության, որոշված է Աղբեջանի սահմաններում գտնվող բոլոր որբանոցների հայ որբերի լրիվ ցուցակագրությունը կատարել:

Ներփակ ուղարկելով Ձեզ մի օրինակ վիճակագրական տախտակ, խնդրում եմք Ձեր հովանավորության տակ գտնվող որբանոցի որբերին ցուցակագրել համաձայն մեր ուղարկած տախտակի և ըստ հնարավորության շուտով ուղարկել մեզ մինիստրություն հասցնելու համար:

Հայաստանի Հանրապետության Խնամատարության մինիստրության ներկ. Աղբեջանում՝ **Ջ.Գեղամյան**  
Քարտուղար՝ **Բ.Միքայելյան**

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 103, թ. 128: Բնագիր: Ձեռագիր:

**N 376**

**ՔԱՂՎԱԾՔ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝  
ՔԱՂԱՔՈՒՄ ՏԻՐՈՂ ԽՈՒՆԱՊԱՅԻՆ ՏՐԱՍԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇՈՒՇԻ.ԵՎԼԱՆ ԳԾԻ  
ՎՐԱ ԿԱՏԱՐՎՈՂ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**19 մարտի 1920 թ.  
Բաքու**

II Պարոնյանը զեկուցանում է նախագահության պատվիրակության վարչապետ Ն.Ուսուբբեկովին արած այցելության մասին: Պատվիրակությունը նպատակ ուներ վարչապետի ուշադրությունը դարձնելու հետևյալ երևույթների վրա. ա) քաղաքում տարածված լուրերի հետևանքով հայ ազգաբնակչության համար ծանր կացություն է ստեղծվել՝ մարդիկ ինչ-որ դեպքերի են սպասում: Վարչապետը կարգադրեց, որ այդ մասին ներքին գործերի նախարարը հանգստացուցիչ հայտարարություն հրատարակի. այդ հայտարարությունը լույս է տեսել արդեն գեներալ-նահանգապետի ստորագրությամբ. բ) հիշատակվեցին այն բռնությունները, որոնց ենթարկվում են հայ քաղաքացիները զինվորների կողմից: Վարչապետը խոստացավ անհրաժեշտ կարգադրություններ անել և միաժամանակ առաջարկեց բռնության կոնկրետ դեպքերի մասին տեղեկացնել իրեն, գ) Շուշի-Եվլախ գծի վրա կատարված սպանությունները (հայերի) հայտնի են վարչապետին, խոստացավ վերահաստատել ճանապարհի ապահովությունը, - ասաց, որ կարգադրություն արված է. դ) քաղաքում ձերբակալված հայերի վերաբերմամբ վարչապետը խոստացավ արձակելու կարգադրություն անել մի պայմանով սակայն, որ արձակվելուց մի քանի օր հետո նրանք հեռանան Ազերբայջանի սահմաններից. ե) ինչ վերաբերում է հայկական բնակարանների ռեկվիզիցիային, այդ մասին վարչապետը առաջարկեց դիմել Ներքին գործերի նախարարության:

ՀՀ ՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 104, թ. 19 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

**N 377**

**ЗАЯВЛЕНИЕ БАКИНСКОГО АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА БАКИНСКОМУ ГЕНЕРАЛ-ГУБЕРНАТОРУ О ПРОТИВОЗАКОННЫХ ДЕЙСТВИЯХ ВОИНСКОЙ КОМАНДЫ И О НАСИЛИЯХ НАД НЕВИННЫМИ ЛЮДЬМИ**

**N 184**

**23 марта 1920г.  
Баку**

Бакинский Армянский Национальный совет считает своим долгом довести до сведения Вашего превосходительства о происшествии имевшем место 19 марта с/г на Гимназической улице.

19 марта с/г в 3 1/2 часа дня, в портняжную мастерскую Ханданянца, помещающуюся в доме Адамова по Гимназической ул. вошел неизвестный мусульманин, по сведениям мясник с Базарной улицы, заявил, что здесь происходит незаконное собрание, после чего выйдя на улицу он кликнул проезжающую мимо какую-то конную команду из 3-4 всадников и потребовал ареста и привода в «Штаб» участников собрания, в действительности мастеров и подмастерьев означенной мастерской Ханданова. При этом, он не только не предъявил ордера на право обыска и ареста, но даже не заявил о том, что кто он такой. Конная команда вывела мастеров на улицу и повела в «Штаб», оказавшийся канцелярией, оказавшейся частью Казачьей дивизии, помещавшейся на углу Телефонной и Ярмарочной улиц, в бывшей гостинице «Свет». По пути неизвестный мусульманин наносил побои арестованным, к чему призывал и всадников.

В “Штабе” после коротких расспросов арестованные, в виду очевидной и совершенной нелепости обвинения, были сейчас же освобождены. На обратном пути, на углу Красноводской и Гимназической ул., по явному чьему-то наущению, несколько аскеров, стоявших тут же, набросились на освобожденных только что мастеров и жестоко избili их. Находившийся на месте происшествия околоточный надзиратель, фамилия которого неизвестна, заявил о своем бессилии прекратить бесчинство и ограничился увещеванием аскеров прекратить избивание невинных людей. В конце концов, аскеры и избитые в окровавленном виде были доставлены в шестой полицейский участок, где без составления протокола аскеры были освобождены, а пострадавшие отпущены в больницу, с тем, чтобы они явились на следующий день для составления протокола. На следующий день пострадавшие явились в участок, но были возвращены милиционером обратно и таким образом протокол не был составлен.

Пострадавшие лица следующие: Левон Авакян, Самсон Багдасарян, Мкртич Бнаайроян, Оганес Адамянц, Григор Ханданянц, Ваган Тананянц, Аветис Бостанчянц и Исраиль Сариянц. Означенные лица имеют свидетельства врачей о серьезных травматических повреждениях, полученные ими вследствие побоев.

Доводя об изложенном до сведения Вашего превосходительства, Бакинский Армянский Национальный совет не может не обратить Вашего внимания на следующие обстоятельства:

1. Арест мастеров был произведен без ордера лицом не только недолжностным, но и неизвестным.

Указанное лицо за явно незаконное деяние не было призвано к ответственности, вследствие того, что не было попытки к его уличению.

2. Вооруженная воинская команда подчинилась требованию недолжностного лица и оказала содействие в учинении незаконного ареста.

3. Арестованные лица были поведены не в надлежащие по охране гражданского порядка учреждения, каковым являются учреждения полиции, а в канцелярию воинской части.

4. Виновники второго происшествия, в данном случае аскеры, приведенные в полицейский участок, были освобождены без протоколирования происшествия.

Национальный совет просит Ваше превосходительство не отказать в распоряжении о розыске виновных лиц и их наказании.

Председатель  
Секретарь

АИ РА, ф.223,оп.1, д.103, лл.157-158. Копия. Машинопись.

**N 378**

**ԱՂՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՁԵԿՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ՝ ԵՆԻՇՎԱ ԿՈՏՈՐԱԾԻ ԵՎ ՂԱՐՎԱԴՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԳԵԳԵՉԿՈՐՈՒ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**N 593**

**29 մարտի 1920 թ.  
Բաքու**

Ամսույս 29-ին նորից տեսակցի Գեգեչկորիի հետ, որին ես ասացի, որ թիֆլիզի լրագրներից արդեն երևում է, որ գործը բոլորովին այլ կերպարանք ունի, այսինքն, որ հարձակումն եղել է ոչ թե ժողովրդի կողմից, այլ ընդհակառակը Ադրբեջանն էր, որ ուզում է իրագործել յուր ծրագիրը՝ Ղարաբաղի և Ջանգեզուրի վերաբերմամբ, այդ իսկ պատճառով հարձակումն է սկսել ամեն կողմից: Բացի այդ, մեր ունեցած և դեռ



չստուգված տեղեկություններից երևում է, որ Նովրուզ-Բայրամի օրը Շուշում ասկյարները 16 հայ են սպանել և առհասարակ վերջին ժամանակներս սպանությունները, բռնաբարությունները և անապահովությունը Ղարաբաղի շրջանում մեծ չափերի են հասել: Այսպիսով իմ մտածողությունս այժմ բոլորովին ուրիշ ընթացք է ստանում:

Գեգեչկորի. - Ես նույնպես մոտիկ ծանոթանալով գալիս եմ արդեն այն եզրակացության, որ այդ դեպքերը Հայաստանի կողմից չէին կարող կազմակերպված լինել, քանի որ, ինչպես հենց իրանք են ասում, այնտեղ հայկական զորամասեր շատ քիչ են և մյուս կողմից բռնությունների և անկարգությունների փաստերը ինձ մտածել են տալիս, որ երևույթը զուտ տեղական բնույթ ունի: Երևում է, որ ժողովուրդը մի հուսահատական քայլ է արել, հարձակվելով զորամասերի վրա: Նաև պետք է ասեմ, որ Ադրբեջանի կողմից էլ դա կազմակերպված արշավանք չի կարող լինել, քանի որ այն դեպքում նոքա նախապես պետք է բռնեին ստրատեգիական կարևոր դիրքեր:

Հավանություն տալով կոնֆերենցիայի գումարվելու անհրաժեշտության, ես ասացի, որ իմ մտահոգությունն է այն խնդիրը, որ Ադրբեջանի ներսում - Բազու, Գանձակ հակահայկական շարժումներ տեղի չունենան:

Գեգեչկորի. - Ես էլ այդ ուղղությամբ քայլեր եմ արել և կարծում եմ, որ ոչ մի բան չի պատահիլ, որովհետև դա հենց Ադրբեջանի շահն է պահանջում: Ալչիբայան ավելացրեց, որ ինքն էլ միջոցներ է ձեռք առել այդ ուղղությամբ և Բազվի համար երաշխավորում է:

Մ.Հարությունյան. - Մի՞թե նրանք չէին տեսնում, որ երկու-երեք շաբաթ առաջ կամավորական բանակի դրությունը անհուսալի է, մեծամասնականների հաջողությունն անխուսափելի է, հանկարծ մի այսպիսի ժամանակ կռիվներ են սկսում հայերի դեմ:

Գեգեչկորի. - Դատողություններից երևաց, որ եթե Ադրբեջանը չմիանա՝ Վրաստանը միառժամանակ կկռվի բոլշևիկների դեմ և իհարկե վերջիվերջո կընկճվի:

Ի լրումն մեր նախորդ գրությունների պիտի հայտնենք, որ ամենաստույգ աղբյուրներից տեղեկություններ ունենք, որ բոլոր գավառապետներին շրջաբերականներ է ուղարկված անմիջապես տեղում կազմակերպել կամավորական խմբեր, վարժեցնել զինավարժության, որպեսզի ըստ առաջին պահանջի ճանապարհվեն ռազմաճակատը «դավադիր թշնամուն մի լավ պատժելու համար»: Դեռ լավ չվարժված զորամասերը քաղաք են բերում կարգը պահպանելու համար, իսկ վարժված զորամասերը ուղարկում են ռազմաճակատ: Ադրբեջանի թրջությանը կոչ է արված պատրաստվել հայրենիքը պաշտպանելու թշնամու դեմ:

Քաղաքում թեև տեղի են ունենում հայերի դեմ մանր էկցեսներ - ծեծ, հայիհյանք, կողոպուտ, գլխավորաբար ասկյարների կողմից, բայց խիստ միջոցներ են ձեռք առնված խոշոր երևույթներ թույլ չտալու համար:

Մ.Հարությունյան. - Դուք պետք է մտածեք մի փոքր էլ այն ուղղությամբ, որ սա կարող է լինել մի մտածված քայլ արդարանալու համար, թե ինչու չեն կարող այժմ Ձեզ հետ միասին մեծամասնականների դեմ կռվել: Մահմեդական հոգեբանության հետ լավ ծանոթ անձնավորություններ հաստատապես պնդում են, որ նախապես վճռած լինելով չդիմադրել բոլշևիկներին, Ադրբեջանը ստեղծել է այս ընդհարումը, որպեսզի օրինական պատճառաբանությամբ յուր զորքերն ուղղի դեպի Ղարաբաղ և ձեզ պատասխանի, որ շատ կուզենար ձեզ հետ միացած պաշտպանել Անդրկովկասը, բայց հայերն իրանց այս շարժումով զբաղեցնում են իրենց բոլոր ուժերը:

Գեգեչկորի. - Նոքա հենց այդպես էլ ասում են: Մի՞թե դուք կարծում եք, որ նոքա այդպես հեշտությամբ կզիջեին Բազուն: Այդ ժամանակ դա կորուստ կլիներ ամբողջ Անդրկովկասի համար:

Մ.Հարությունյան. - Ուրիշ ինչ կերպ բացատրել այն հանգամանքը, որ խոշոր կամավորական և պարտիզանական խմբեր են ուղարկվում ղարաբաղցիների դեմ: Չէ՞ որ հայերը Ղարաբաղում զորամասեր չունեն: Այնտեղ հայկական զորքեր չկան, թեև

անշուշտ դարաբաղցի հայերի համար դժվար չէր լինիլ, իսկույն իրանց սպաներին, ենթասպաներին, ֆելդֆեբելներին հրապարակ հանել և կազմել վաշտեր ու գնդեր, քանի որ իրանք բոլորը զինվորական ծառայությունն անցած ու այս պատերազմի ժամանակ ֆրոնտներում եղած մարտիկներ են: Ուրեմն այս զուտ ժողովրդական շարժման դեմ մի՞թե բավական չէր իրանց այնտեղի զորքը, որ ճիշտ տեղեկություններով 8-10 հազարի է հասնում և բազմաթիվ կամավորական ու պարտիզանական խմբերը: Այնինչ այստեղից շարունակ ուղարկում են ահագին քանակությամբ զորք և ռազմամթերք, Սալյանից բերել են 1500 զինվոր և այլն: Այս բոլորը կարծեք ավելի հաստատում են այդ տեսակետը:

Գեգեչկորի. - Այնուամենայնիվ որևէ կերպով պիտի վերջ տալ այդ կռիվներին: Ես պնդեցի, որ ապրիլի 1-2-ին կոնֆերենցիան հավաքվի Թիֆլիզ: Ի տեղեկություն հայտնում ենք, որ թե Բազվից և թե Ղուբայից ուղարկված են ռազմաճակատ բոլոր առձեռն եղած հրանոթները: Միով բանիվ ահռելի ուժ են կենտրոնացնում այս կռիվը ինչ գնով էլ ուզում է լինի շահելու:

Դիվանագիտական ներկայացուցիչ՝ Մարտ. **Հարությունյան**  
Քարտուղար՝

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 417, ք. 139-140: Բնագիր: Ձեռագիր:

**N 379**

**ՀԱՏՎԱԾ ԱՂԻԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՁԵԿՈՒՅՑԻՑ, ՈՒՂՂՎԱԾ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ՝ ՂԱՐԲԱՂՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ**

**29 մարտի 1920 թ.**  
**Բաքու**

ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին Վրաստանում

Ամսիս 27-ին Ձեզ ուղարկված են մի շարք ծրարներ հասցեագրված թե Ձեզ և թե Արտ. գ. մինիստրության: Բացի այդ՝ մի գլանաձև մեծ ծրար. բոլորի ստացման մասին խնդրեն մեզ տեղեկացրեք: Ավելորդ են համարում խնդրել, որ ուղարկած ծրարները, թե հինը և թե այսուհետև ուղարկվելիքը, անմիջապես պիտի ճանապարհեք Երևան: Եթե ուղարկածներս ստացել եք, ուրեմն գիտեք, թե ինչ է կատարվում այստեղ, բայցև այնպես համառոտակի գրեն: -

Ըստ կառավարական աղբյուրների՝ դա մի կազմակերպված, որոշ պլանով գործողություն է, որը ծավալվում է. հարձակումը հանկարծակի է եղել, առանց նախանշանների. կասկածում են, թե Հայաստանի կառավարության մատը մեջն է. կամ թե՛ կապ ունի բոլշևիկների հառաջխաղացության հետ:

Այսպես պատկերացնելով երևույթը, ամեն միջոց ձեռք են առնում շարժումը խեղդելու: Ուղարկում են կանոնավոր զորամասեր՝ հետևակ, ձիավոր և քնդանոթածիզ: Գավառներում կազմակերպում են կամավորական և պարտիզանական խմբեր, որոնք հետզհետե ուղարկում են ճակատ:

\* Ստորագրությունն անընթեռնելի է (ծանոթ.կազմ.):

Առաջին օրերը ամբոխի տրամադրությունը շատ գրգռված էր. հաճախանում էին անկարգությունների դեպքեր ու ծեծ, հայիոյանք, վիրավորանք, կանանց անպատվություն, կողոպուտ ևլն. եղան անգամ սպանության և վիրավորելու դեպքեր: Կառավարությունը նկատելի կերպով արտակարգ միջոցներ է ձեռք առնում ամբոխին զսպելու համար. ուժեղացրած ձիավոր և հետևակ պահակներ ցերեկ և գիշեր շրջում էին քաղաքը, մանավանդ հայկական մասը:

Այժմ ըստ երևույթին տրամադրությունը մի քիչ մեղմացել է. «Ազերճ.»-ն՝ էլ շատ գրգռիչ հողվածներ չի գրում, ավելի զուսպ և պաշտոնական լեզու է բանեցնում:

Ղարաբաղից տեղեկություններ չենք ստանում: Բոլոր ճանապարհները փակ են հայերի համար: Դժվարությամբ տեղեկություններ է ստանում նաև կառավարությունը. հեռագիրը և հեռախոսը ընդհատված են. թվում է թե բուն անցուդարձը, իր մանրամասնություններով, անգամ կառավարության համար պարզ չէ:

Ձորական նախարարը գնացել է ռազմաճակատ, բոլոր միտքը և ջանքը ուղղված է դեպի Ղարաբաղ:

Համաձայն չստուգած լուրերի՝ Շուշին և Խանքենդին, բացի Ասկերանից, նույնպես գտնվում են հայերի ձեռքին: Եվլախ հավաքված զորքը առաջ չի շարժվում, ասում են, որ չի ցանկանում կռվել:

Այսպես է ներկայիս դրությունը:

Թե ինչ է կատարվում Հայաստանում և ֆրոնտում, ես չգիտեմ, բացի այն, ինչ որ կարող եմ լրագիրներում: Ես այդ վայրերի համար ոչինչ անել չեմ կարող. դա ուրիշների գործն է: Իմ գլխավոր հոգսն է, որ Ադրբեյջանի հայությունը - Բագու, Գանձակ և այլուր, չտուժի Ղարաբաղի անցքերի պատճառով: Հայ ժողովուրդը կոտորածի մղձավանջի տակ է ապրում: Երկյուղ են կրում ժողովրդական բռնկումից և կազմակերպված կոտորածից: Ամեն տրամաբանության հակառակ է դա. բայց ո՞վ գիտե, ամեն բան սպասելի է: - Ուսուրբեկովը ամեն միջոց գործ է դնում, որ բան չպատահի: Այսօր Գեգեկյորին, մանավանդ Ալշիբայան նույնպես հավաստիացրին, որ բան չի պատահի. թեև մի քանի օր առաջ նրանց տրամադրությունը սաստիկ մռայլ էր:

Բայց և այնպես, ես չեմ կարող հանգիստ լինել:

Դուք պիտի միջոցներ ձեռք առնեք, պիտի հաջողեցնեք, որ Հասկելը, Ուորդոպը, Նոնանկուպը, Գաբբան և Հունաստանի ներկայացուցիչը նախազգուշացնեն Ադրբեյջանի կառավարության, որ չլինի թե Ղարաբաղի անցքերի համար տուժի Ադրբեյջանի անպարտ հայ ժողովուրդը:

Ողջույններով՝ Մարտ. Հարությունյան

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 417, ք. 205-206: Բնագիր: Չեռագիր:

N 380

**ЗАЯВЛЕНИЕ БАКИНСКОГО АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА ГЕНЕРАЛ-ГУБЕРНАТОРУ БАКУ О ПРОСЬБЕ ПРЕКРАЩЕНИЯ ПРЕСЛЕДОВАНИЯ ЛИЦ ПО ОБВИНЕНИЮ В УЧАСТИИ В МАРТОВСКИХ СОБЫТИЯХ**

\* Սկառի ունի «Ազերբայճան» թերթը (ծանոթ.կազմ.):

В личной беседе с Вами, я просил Ваше превосходительство обратить внимание на усилившиеся аресты по подозрению в участии в мартовских событиях. Согласно закону об амнистии, принятого Азербайджанским парламентом, преследование по указанным преступлениям прекращено. В большинстве случаев последних арестов, если не во всех, арестованные оказывались торговцы или ремесленники, далекие от участия в преступлениях и приписываемых. В силу исключительных условий переживаемого момента, многими недобросовестными элементами используется огульное обвинение в означенных преступлениях с явно корыстной целью.

Поэтому в дополнение к моей устной просьбе, я настоящим вновь прошу Ваше превосходительство в полном согласии с законом об амнистии сделать распоряжение по подчиненной Вам администрации о прекращении преследования лиц по обвинению в участии в мартовских событиях.

Председатель Бак. Арм. Нац. совета

АИ РА, ф.223, оп.1, д.103, лл.164-165. Отпуск. Машинопись.

### N 381

**ՆՈՒՒՆՈՒ ԵՎ ԱՐԵՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՁԵԿՈՒՑՈՒՄԸ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ՝ 6/IV-1919 - 4/IV-1920ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ**

4 ապրիլի 1920  
Թիֆլիս

Բաղկացած երեք անդամներից՝ Մ.Լալայանից, Ռ.Ավանյանից և Ա.Ստեփանյանից վերստուգիչ հանձնաժողովը իր մի շարք նիստերում ստուգելով Նուխու-Արեշի Հայրենակցական միության վարչության 1919 թվի ապրիլի 6-ից մինչև 1920 թվի ապրիլի 4-ը հաշիվներն ու գործերը, գտավ որ՝

1. Միության բոլոր հաշիվներն ու դրումները ճիշտ են և իր ժամանակին մուծված հաշվեմատյանը ի բացառյալ այն, որ հաշվապահական հմտության բացակայության պատճառով անխուսափելիորեն տեղի են ունեցել մի քանի ձևական բնույթ կրող սխալանքներ. ըստ որում այդ ժամանակամիջոցում եղել են մուտք՝ իննսունյոթ հազար ութ հարյուր վաթսուհինգ ռուբլի 74կ. (97865ռ.74կ.), ելք՝ իննսուն և վեց հազար հարյուր ութսուն և վեց ռուբլի 05կոպ. (96186ռ.05կ.), մնացորդ՝ մի հազար վեցհարյուրթանասուն և ինը ռուբլի 69 կոպ. (1679ռ. 69 կ.):

2. Վարչությունը, ինչպես պարզ երևում է արձանագրություններից, հակառակ Հայրենակցական միության մասին տիրող կարծիքի, հսկայական աշքատանք է կատարել հոգուտ հայրենակիցների: Այդ գործունեությունը ամփոփ կերպով կարելի է արտահայտել հետևյալ կերպ.՝ ա) վարչությունը ի նկատի ունենալով, որ հայրենակիցների փրկության միակ ելքն է նրանց արտագաղթը դեպի Հայաստան, մի շարք նախապատրաստական աշխատանքներ կատարելուց հետո, անմիջապես դիմել է Հայոց կառավարությանը իրագործել արտագաղթը, որը և ընդունել է ու կիրառում է այն մինչև այժմ:

Ծանոթություն. Արտագաղթի ձգձգման պատճառները եղել են անկախ վարչությունից, որը միշտ իր ժամանակին, հաճախ խիստ տոնով բողոքել է այդ

հանգամանքների դեմ բողոքագրերով, հեռագիրներով և հատուկ պատգամավորության միջոցով:

բ) Վարչության ժամանակին հարկ եղած դիմումների շնորհիվ, ուղղված անգլիական հրամանատարության Գերագույն կոմիսար Չասկելին, Չայոց կառավարությանը, Ամերիկական կոմիտեին և այլն. իր ժամանակին կանխվել են վերահաս կոտորածները մեր զավառներում տաճիկների գնալուց հետո. վարչության շնորհիվ, նույնպես Վրաստանում ապաստանած հայրենակիցները չեն ենթարկվել հալածանքների և բռնի արտաքսման, որը կարող էր ողբերգական հետևանք ունենալ:

գ) Վարչությունը կարողացել է համերաշխությամբ Միության նախկին վարչության գործերի և հաշիվների քննությանը հաջող ընթացք տալ, որի հետևանքով ի դիմաց հին հաշիվների ստացված են մի քանի գումարներ (7334 ռուբլի 34կոպ.):

դ) Վարչությունը կատարել է դիվանագիտական խոշոր աշխատանք, իր ժամանակին գրություններ ուղարկելով, ուր հարկն է, արձանագրություններ կազմելով, վկայագրեր տալով հայրենակիցներին, նրանց վնասների հազարավոր ցուցակները կանոնավորելով և այլն:

ե) Վարչության եռանդուն ջանքերով և միջնորդությամբ գաղթականներից պարեն են մատուցել Չայաստանի հնամատարության մինիստրության ներկայացուցչությունը Վրաստանում, Ամերիկական կոմիտեն՝ Նուխում և Վարդաշենում, Չայոց կառավարությունը՝ Չայաստանում: Բացի այդ նույնպես Վարչության միջնորդությամբ Ամերիկական կոմիտեի կողմից մի քանի հարյուր հազար արժողությամբ հագուստեղեն է բաշխվել գաղթականներին:

զ) Վարչության այդ բեղմնավոր գործունեությունը ավելի գնահատելի է և այն պատճառով, որ նա միշտ դրամական մեծ կարիքի մեջ է գործել:

3. Վերստուգիչ հանձնաժողովը եզրափակելով իր զեկուցումը գտնում է վարչության գործունեությունը միանգամայն բավարար և անսովորաբար, ուստի առաջարկում է ընդհանուր ժողովին հաստատել վարչության հաշվետվությունը:

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ

ՉՉ ՊԱ, \$ .205, g.1, q.599, թթ.26-27: Վավերացված պատճեն: Չեռագիր:

N 382

**ЗАЯВЛЕНИЕ БАКИНСКОГО АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА БАКИНСКОМУ ГРАДОначАЛЬНИКУ О ПРОДОЛЖАЮЩИХСЯ БЕЗЗАКОННЫХ ДЕЙСТВИЯХ В ОТНОШЕНИИ АРМЯН**

N 220

7 апреля 1920г.  
Баку

Два брата, Ширин и Акоп Акопянцы, проживающие по 1 Слободской улице, в д.№6, шантажируются неизвестным лицом, обвиняющим их якобы в участии в мартовских событиях, во время которых будто бы Акоп Акопянец был комиссаром в Кюрдамире. Вздорность такого обвинения нетрудно доказать. Однако, это неизвестное лицо вошло на квартиру Акоп Акопянцева и взяло оттуда самовар и пальто, якобы ограбленные у него в Кюрдамире. Причем, этот обыск был произведен без предъявления ордера, в отсутствие полиции и понятых. При обыске присутствовало другое неизвестное лицо, назвавшееся агентом сысской полиции, также не предъявившее никакого документа.

Для выяснения обстоятельств дела мы обратились в 9 полицейский участок, откуда ответили, что обыск произведен сыскной полицией без их ведома. Из сыскной полиции в первый раз ответили неведением, и лишь спустя час, в резкой форме заявили, что обыск действительно был произведен агентом полиции и вещи эти краденные.

Мы не можем не обратить Вашего внимания на незаконность порядка произведенного обыска и конфискации вещей, тем более, что [вину] Акоп Акопянц трудно доказать.

Председатель  
Секретарь

АИ РА, ф.223, оп.1, д.103, лл.169-170. Отпуск. Машинопись.

**N 383**

**ПИСЬМО ПРАВЛЕНИЯ НУХИ-АРЕШСКОГО ЗЕМЛЯЧЕСТВА ВЕРХОВНОМУ  
КОМИССАРУ ЗАКАВКАЗЬЯ ПОЛКОВНИКУ ГАСКЕЛЮ О ПРОДОЛЖАЮЩИХСЯ  
ПОГРОМАХ АРМЯНСКОГО И УДИНСКОГО НАСЕЛЕНИЯ В УКАЗАННЫХ УЕЗДАХ  
И О НЕОБХОДИМОСТИ ВЫЯВЛЕНИЯ ВИНОВНЫХ И УСКОРЕНИЯ  
ПЕРЕСЕЛЕНИЯ\***

**N 274**

**8 апреля 1920г.  
Тифлис**

Как известно, летом 1918 года при наступлении турок на Баку, последние вместе с азербайджанскими войсками уничтожили в Нухинском и Арешском уездах 48 селений, вырезав свыше 35 тысяч мирного армянского населения в них. Избегнуть этой участи тогда удалось лишь трем утинским селениям: Варташен, Нидж и Джалут благодаря той причине, что турками по ошибке названные селения были приняты за грузинские - ввиду общности языка утинцев - грузин и утинцев - армян, населявших эти селения (утиницы составляют особую ветвь армян).

Безоружное и окруженное со всех сторон в течение 2-х лет мусульманами, означенное армянское население ни разу не нарушало законопослушности Азербайджану, власти коего неоднократно свидетельствовали о полной его (этого населения) лояльности к своему правительству.

Между тем из писем грузин-утинец и ряда других лиц, адресованных своим тифлисским родственникам, черпаем следующие сведения о неслыханной по жестокости до сего времени резне мирных и покорных крестьян-армян упомянутых селений. 27 марта с/г татары соседних сел, руководимые местными полицейскими стражниками, напали на селения Варташен, Нидж, Джалут, перебили всех мужчин, вырезали детей и женщин и, вот уже более недели, расхищают имущества тонувших в крови невинных жертв.

Таким образом, положен конец существованию утинцев-целого ряда армянской нации и всему армянскому населению двух уездов, имевших свыше пятидесяти тысяч (50000) жителей.

Резне и грабежам 27-го марта подверглись и грузины-утиницы, от которых уцелело всего лишь около 50 дымов: в числе убитых называют брата грузинского священника Александра Джейранова.

\* Копии письма посланы: министерствам иностранных, внутренних дел и председателю правительства Грузии. См. АИ РА, ф.245, оп.1, д.15, л.75 (прим.сост.).

Нуха-Арешское Землячество в Тифлисе неоднократно обращало внимание Союзных миссий (в том числе Велико-Британского командования в лице генерала Бича), Верховного комиссара Закавказья полковника Гаскеля и Американского комитета помощи беженцам на трагическое положение остатков армянского населения в городе Нухе и уцелевших от резни 1918 года упомянутых выше трех селений. Оно в предвещении могущей быть новой резни и в целях предотвращения таковой, просило своевременно командировать в означенный район хотя бы одного представителя Великих союзников, который одним только своим присутствием мог бы предупредить наступившее бедствие и своевременно и безболезненно совершить эвакуацию этих армян в Армению.

Еще 15 марта с/г, когда возможность новой резни производилась почти с точностью, Землячество повторило свою просьбу перед Американским Комитетом и полковником Гаскелем об ускорении посылки в Нуху представителя, но, увы, и на сей раз его обращения и по сей день остается без удовлетворения.

Доводя об этом до сведения Вашего превосходительства и выражая бурный свой протест против устроителей резни мирных наших сородичей, покорнейше просим:

- 1) послать в Нуху и пострадавшие селения комиссию для расследования этих событий и спасения жизней и имущества пока невырезанных армян городов Нухи, Закаталы и Кахи, как равно беженцев уничтоженных селений и многочисленных пленных, томящихся в положении рабов вот уже два года у татар,
- 2) обеспечить безопасное и немедленное переселение остатков армянского населения указанного района в Армению.

Председатель Землячества **А.Тер-Авакян**  
Секретарь **А.Мкртчян**

АИ РА, ф.245, оп.1, д.15, лл.75-77 и об. Подлинник. Рукопись.

**N 384**

**ԱՊՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՎԱՐՈՒԹՅԱՆԸ: ԽԱՆԻԼ ՓԱՇԱՅԻ ԵՎ ԳԵՆԵՐԱԼ ՍԱԼԻՍՈՎԻ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՂԱՐԱՔԱՂԻ ԵՎ ԳԱՆՁԱԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐՆ ԱՎԵՐԵԼՈՒ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ԿՈՏՈՐԵԼՈՒ, ԴԵՊԻ ԶԱՆԳԵՋՈՒՐ ՇԱՐԺՎԵԼՈՒ ԵՎ ԱՊՐԲԵՋԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՅԱՆԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**N 654**

**9 ապրիլի 1920 թ.  
Բաքու**

Ամենախավաստի աղբյուրներից կարող ենք հաղորդել, որ Ղարաբաղի շրջանում կենտրոնացած Աղբյուրների գործառնությունը հալիլ փաշայի և գեներալ Սալիմովի գլխավորությամբ շարժվել են դեպի Ջանգեզուր: Միաժամանակ ուժեղ հարձակումն է սկսվել նաև Ջիվանջիրի հայկական շրջանի գյուղերի վրա:

Մասնավոր աղբյուրներից ստացված ստույգ տեղեկություններից երևում է, որ Ղարաբաղի շրջանի, գլխավորապես հաչենի հայկական գյուղերը սոսկալի ավերածության են ենթարկվել, ինչպես և Գանձակի շրջանի հայ գյուղերը: Ասում են ավերածությունն այնպիսի բարբարոսության է հասել, որ շատ տեղեր չի կարելի նշմարել, թե երբևիցե այդտեղ բնակություն է եղել: Գյուղերը հողին հավասարեցրել են մասնավոր-

րապես Գանձակի շրջանում, իսկ բնակիչների մնացորդները լեռների ու անտառների խորքերում ապաստան գտնելով՝ մասսայական կոտորածի սարսափի տակ են եթե ոչ ադրբեջանյան բաշիբոզուկներից, ապա տարափոխիկ հիվանդություններից:

Լուրջ ուշադրություն պիտի ամենել, որ Ադրբեջանը ոչ միայն յուր զինվորական բոլոր ուժերը, այլ և ահագին թվով զինված հրոսակախմբեր «կամավորների» անվան տակ կենտրոնացրել է Ղարաբաղի շրջանում, որպեսզի ինչ գնով էլ ուզում է լինի, այս անգամ Ղարաբաղն ու Ջանգեզուրը վերջնականապես գրավել, որից հետո Ղարաբաղի թրջացումը անխուսափելի պիտի համարել, Նուխու և Արեշի հայ ժողովրդի մնացորդները, կենտրոնացած լինելով գլխավորապես Վարդաշեն, Ճալեթ և Նիժ գյուղերում, մասսայական կոտորածի են ենթարկվել: Ադրբեջանի մամուլը այս բոլոր սուսկունների հանդեպ գաթարական լռություն է պահում: Հայերի դեմ սկսած հալածանքը, անհատական սպանությունները, կալանավորումները, բռնությունները և կողոպուտը սովորական են Ադրբեջանի ամբողջ տերիտորիայի վրա: Այդ տեսակետից Բագուն անգամ բացառություն չի կազմում: Հայերը ահաբեկված վիճակում են և երեկոները ժամը 7-8-ից հետո փողոց դուրս գալ շատ քչերն են վստահում:

Կարծում ենք, որ ամենակտրուկ կերպով պիտի բողոքել դաշնակիցների ներկայացուցիչների առաջ և պահանջել անհետաձգելի միջոցներ ձեռք ամենել Ադրբեջանի կառավարության հայահալած քաղաքականության վերջ դնելու: Երկաթուղով հայի համար երթևեկելը դադարել է, որովհետև ոչ ոք չի կարող երաշխավորել, թե ճանապարհին վագոնից չեն դուրս բերի և սպանի:

Ադրբեջանը որոշել է լուռ ու մունջ բնաջինջ անել յուր տերիտորիայի վրա ապրելու դժբախտություն ունեցող հայությունը:

Չի կարելի համաձայնել, որ դաշնակիցների ներկայացուցիչներից կազմված քննիչ հանձնաժողովի Ղարաբաղ գնալը հետաձգվի: Մեր ունեցած տեղեկություններով խոյսկին գրել է, որ այդ հանձնաժողովը չի ճանապարհվի մինչև յուր Թիֆլիզ գնալը: Մենք համոզված ենք, որ Ադրբեջանը յուր այդ գործելակերպով ուզում է ժամանակ վաստակել ու յուր բարբարոսական ծրագիրը լրացնել: Հանձնաժողովին պիտի հայտնել, որ յուր այցելության ժամանակ անպատճառ մահ Գանձակի շրջանն անցնի և ծանոթանա դրության հետ:

Դիվ. ներկ.՝ **Հարությունյան**  
Քարտ.՝ **Առաքելյան**

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 79, ք. 29-30: Պատճեն: Չեռագիր:

**N 385**

**ՇԱՄԱԽՈՒ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ  
ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԳԱՎԱՌԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՆԿԱՍՆԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**12 ապրիլի 1920**  
**Բաքու**

Ի գիտություն Ազգային խորհրդի պարտք են համարում հայտնել, որ վերջին ժամանակները հայերի կացությունը Շամախի գավառում կրկին ծանրացել է: Սպանությունները, թալանը և առևանգումը նորոգվել են: 10-12 օր սրանից առաջ սպանված են քերքինջեցիք Գրիգորյանցները՝ Ներսեսը 70տ. և Սիմոնը 17տ., 8-10 օր առաջ Քերքինջ գյուղում սպանված և թալանված են Բաբա Մոքոյանցը 23տ. և նրա



եղբոր կինը՝ Կատինը 21տ.: Ռեռ չստուգված լուր կա, որ առևանգել են Բարի կնոջը՝ Մարգարիտին՝ 18տ.:

Կոմիտեի նախագահ Ա.Սիրելյանյան

ՀՀ ՊԱ, ֆ.223, ց.1, գ.106, ք.7: Բնագիր: Ձեռագիր:

**N 386**

**ПРОШЕНИЕ БАКИНСКОГО АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА БАКИНСКОМУ ГРАДОНАЧАЛЬНИКУ О СУДЬБЕ С.МЕЛИК-ТАНГИЕВА, АРЕСТОВАННОГО ЗА УЧАСТИЕ В МАРТОВСКИХ СОБЫТИЯХ**

**N 221**

**7 апреля 1920г.**

29 марта с/г был арестован по обвинению в мартовских событиях Самсон Сарибекевич Мелик-Тангиев, проживающий в доме №49, по Ремесленной улице. 30 марта из 8-го полицейского участка, где находился Мелик-Тангиев, последний по неизвестным причинам был отправлен в Романы, во 2-ой Балаханский участок.

1 апреля я лично просил по телефону Балаханского полицмейстера сообщить где находится Мелик-Тангиев, потому что к этому времени родственники получили известие, что Мелик-Тангиев уже нет во 2-ом участке. Однако, сведения от Балаханской полиции до сих пор нами не получено, и родственники из частных источников получили тревожное известие о том, что Самсон Мелик-Тангиев убит.

Я прошу Вас не отказать сообщить об участи Самсон Мелик-Тангиева.

Председатель Бак.Арм.Нац.совета

АИ РА, ф.223, оп.1, д.103, л.171-172. Отпуск. Машинопись.

**N 387**

**ПИСЬМО ДИПЛОМАТИЧЕСКОГО ПРЕДСТАВИТЕЛЯ АРМЕНИИ В ГРУЗИИ ПРЕДСЕДАТЕЛЮ ДЕЛЕГАЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ НА ЗАКАВКАЗСКОЙ КОНФЕРЕНЦИИ О ПРОДОЛЖАЮЩЕМСЯ МАССОВОМ УНИЧТОЖЕНИИ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ В АЗЕРБАЙДЖАНЕ И КАРАБАХЕ**

**N 1424**

**14 апреля 1920г.  
Тифлис**

По полученным мною достоверным сведениям, в последние дни повсеместно в Азербайджане и Карабахе имело место массовое уничтожение армянского населения со стороны азербайджанских войск и банд, причем уничтожение это продолжается и поныне, несмотря на открытие Закавказской конференции.

В Елизаветпольском уезде уничтожены селения Карачинар, Парис, Манасбек, Верхний Агджгала, Нижний Агджгала, Эркедж, Аблах, Карадаглу, Сулук и отчасти большое село Геташен (Чайкенд). Жители этих селений, оставшиеся лояльными и сдавшие оружие, после сдачи оружия были вырезаны, за исключением небольших групп, спасшихся в лесах, а сами селения уничтожены до того основательно, что от некоторых из них не осталось никаких следов.

В Нухинском и Арешском уездах, где уцелевшие в количестве до 20000 человек от турецкого нашествия остатки армянского населения (до нашествия турок в этих уездах было 50000 армян) в течение двух лет находились в полном рабстве у местных татар и были безоружны, теперь частью вырезаны, небольшая же часть укрылась в горах и гибнет от холода и лишений. Большие и некогда богатые села Нижний Варташен и Джалут уничтожены целиком.

В Карабахе совершенно истреблено армянское население города Шуши, сожжена армянская часть этого города и разгромлены селения вокруг города. Уничтожены все селения от Аскерана до Шуши. Азербайджанские войска и банды во главе с бывшим турецким главнокомандующим на Восточном фронте Халилом-пашой и генералом Салимовым, двигаясь по направлению к Зангезуру, предают все на своем пути огню и мечу. В Хаченском районе разгромлены почти все армянские деревни, а жители, не имевшие оружия, массами вырезаны.

Хотя в городах Баку и Елизаветполе и не наблюдается массовых убийств, но ежедневные убийства отдельных армян, всякого рода насилия сделались обычным явлением.

Доводя об изложенном до вашего сведения, позволяю себе просить Вас поставить об этих фактах в известность Закавказскую конференцию.

За дипломатического представителя кн. **М.Туманов**

АИ РА, ф.200, оп.1, д.563, л.69 об. Заверенная копия. Машинопись.  
Опубл. Нагорный Карабах, с.423.

**N 388**

**ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՎԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԱՐՈՐԴՈՒՄ ԶՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՂԵՏԱԼԻ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԶԵՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

[ապրիլի առաջին կես] 1920  
Թիֆլիս

Մինիստրի հանձնարարությամբ հաղորդում են, որ Գանձակի գավառում սարսափելի դրություն է ստեղծվել: Ենթարկված հայկական գյուղերը զինաթափումից հետո դրկված են քաղաք և ճանապարհին կոտորածի ենթարկված: Կանայք տարված են, երեխայք կոտորատած ձեռքերով և ոտերով ուղարկված են չենթարկվող գյուղերը: Քաղաքացիք խուճապի մեջ ցանկանում են հեռանալ քաղաքից, թողնելով իրենց գույքը և ազատել միայն իրենց կյանքը: Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել Գանձակ ուղարկելու դրամական օգնություն և Գանձակի հայ ազգաբնակչությունից ընտրված պառլամենտի անդամներին:

Մեր կառավարությունը բաց է թողել կես միլիոն: N197:

Դիվանագետ.Ներկ. Թիֆլիսի

ՀՀ ՊԱ, ֆ.223, ց.1, գ.106, ք.6: Վավերացված պատճեն: Չեռագիր:

**N 389**

Մինչև օրս Ղարաբաղի դեպքերի մասին ոչ միայն պաշտոնական, այլև հայկական որևէ շատ թե քիչ վատահեղի աղբյուրներից տեղեկություններ չունենք: Մեր տրամադրության տակ գտնված մի շարք նամակներից, ստացված Շուշում գտնված և կռիվներին մասնակցած թաթար ասկյարներից կամ կամավորներից, բավականաչափ լույս են սփռում Ղարաբաղի շրջանում դեպքերի ու Աղրբեջանի գործերի ձեռքով կատարված սոսկումների վրա: Նամակներն ուղղված են իրանց հարազատներին ու ազգականներին, որոնք թեև համառոտ ու անպաճույճ լեզվով լինելով գրված, սակայն հարազատորեն նկարագրում են Շուշի քաղաքում ու շրջակա հայաբնակ գյուղերում տեղի ունեցած կոտորածներն ու թալանը: Նամակագիր թաթարները մի ավելորդ անգամ ևս ապացուցում են, որ թաթարները չեն կարող տարբերել իրանց դեմ զենքը ձեռքին մաքառող ուժերը՝ խաղաղ, անզեն ու անպաշտպան կանանցից, երեխաներից ու ծերերից: Երբ չի հաջողվում իրանց դեմ դուրս եկած զինված ուժերը ոչնչացնել և կամ նրանց կորովի թափը կտրել, նոքա վրեժ են լուծում խաղաղ քաղաքացիներից, բարբարոսաբար կոտորածի ենթարկելով նրանց, հրդեհելով տները և թալանի ենթարկելով ունեցվածքը:

Նմուշի համար մեջ բերենք մասնավոր նամակներից քաղվածքներ: Թաթար ասկյարը կամ կամավորը Շուշուց ապրիլի 2-ին գրում է իր մորը միամտացնելու համար, որ ինքը ողջ և առողջ է ու ավելացնում է. «Աղղամից դուրս եկանք և մինչև Շուշի-Ղալա գրավեցինք, ինչքան հայի գյուղեր կային՝ այրեցինք և իրանց էլ կոտորեցինք, մի հայի ականջ էի ուզում ուղարկել, բայց ծրարը փոքր եղավ: Շուշի-Ղալայում ինչքան հայեր կային՝ կոտորեցինք, կանանց բանտարկեցինք, որոնց շատ նեղություններ ենք տալիս»:

Մի այլ նամակ, հայրը որդրոց ուղղված: Գրողն ըստ երևույթին շուշեցի թուրք է. «Տեսածդ էրմենիստանը այրված է. հինգ կամ տասը տուն պահեցին: Չազարից ավելի հայեր գերի բռնվեցին, տղամարդկանց բոլորին կոտորեցին, մինչև անգամ ավետարանը, խալիֆին (եպիսկոպոսին), բոլոր մեծամեծ մարդկանց... կռվից հետո հայերի մեծ մասը ուսումնարան մտավ, սպանվածը սպանվեց, փախչողը փախավ, ուսումնարանի տուներն ու պատուհանները փշուր-փշուր եղան, ուսումնարանը այժմ չկա, խարաբա է: Նշանավոր հայերին գլուխները կտրած բազարներում պտտեցնել էին տալիս սպանելուց հետո»:

Շուշի քաղաքում թուրքերի կատարած թալանի ու ավարառությունների մասին նույն նամակագիրը շարունակում է. «Մեր կողմերում այլևս ոչ մի հայ չեք գտնիլ և ոչ էլ այնպիսի թուրքի կարող եք հանդիպել, որ հարյուր հազարից պակաս թալան բերած լինի: Այնպես մարդ կա, որ մեկ միլիոնից ավելի ապրանք է բերել, բոլորը եղան մեկ դասակարգի: Ոչ հարուստ կա, ոչ չունևոր, բոլորը հավասարվեցին: Այս ժամին գործը, թնդանոթները, գնդացիները, հալիլը - բոլորն այստեղ են, մտադիր են Գորիսի կողմը գնալ, տեսնենք այն կողմն ինչպես է լինում: Այս կողմերում մուսուլմանների գործը ամեն կողմից լավ էր... Չայերի մոտ ինչ ապրանք կար՝ մուսուլմանները թալանեցին. մուսուլմանների մեջ մի հատ չունևոր չկա, չունևորները բոլորն էլ միլիոնչի են դարձել, հայերի բոլոր ունեցածը թալանեցին տարան: ...10-15 տուն է մնացել, կառավարությունը չթողեց այրելու, որպեսզի ասկյարները բնակվեն: Քաղաքը ավերակ դարձավ: Չայերի ողջ հարստությունը քաղաքացի մուսուլմանները թալանեցին»...

Մի այլ նամակագիր ցավ էր հայտնում, որ հայերի կոտորածով և տների ու խանութների թալանով իրանք մի միլիոնի չափ կորուստ ունեն, որովհետև նրանց տված

ապրանքները չեն կարող հավաքել: Թեև հայերի թե խանութների և թե տների ունեցվածքը թուրքերը թալանեցին, բայց իրանց ձեռքը հագիվ չորսից մինը հասավ: Նամակագիրը նախագուշացնում է, որ Բագվում հայի խանութ չմտնեն, իսկ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում երեք-չորս հոգով գնան, որովհետև Շուշում մի հատ հայ չի մնացել: Շարունակում է դարձյալ կոտորածի, թալանի, ավերածությունների նկարագիրը և գովաբանում ասկյարների քաջությունը, որ Շուշու հայերին լավ պատժեցին դեպքերը սկսվելուց տասնհինգերորդ օրը: Ձորքը պատրաստվում է Շուշուց գնալ դեպի Գորիս, որովհետև լուր է տարածվել, որ տաճիկները արդեն վերցրել են...: Իգոիրը և գնում են Երևանի վրա, իսկ Աղրբեջանի գորքն էլ այստեղից է առաջ շարժվում:

Նամակներից երևում է, որ Աղրբեջանի գորքերի ձեռքով անասելի ոճիրներ են կատարվել: Ղարաբաղի հայկական շրջանների գյուղերն ավերված են, բնակիչները մի մասը կոտորված, իսկ մյուս մասը թափառական սարերի ձերբերում և անտառների խորքերում ապաստան գտած, ենթակա սովի ու զանազան հիվանդությունների:

Ամսույս 14-ին ցերեկվա ժամը 1-ին տեսակցություն ունեցա մինիստրների նախագահ Ոսուրբեգովի հետ: Խոսակցությունը Ղարաբաղի, Գանձակի, Նուխու և Գյոլչայի գավառներում տեղի ունեցած հայկական կոտորածների շուրջն էր պտտվում:

Ոսուրբեգովը չժխտեց Նուխու և Գյոլչայի գավառներում տեղի ունեցած հայկական կոտորածը, որը նա վերագրում է Երևանի շրջանից այդ մասերում տեղավորված թուրք զաղթականներին: Գալով Ղարաբաղի, Գանձակի շրջաններում կատարված դեպքերին, նա այդ էքսցեսները հետևանք է համարում հայերի ապստամբության: Բնական է, իհարկե, որ երբ երկու զինված կողմեր ընդհարվում են, ինչպես ներկա դեպքում հայերն ու թուրքերը, անխուսափելիորեն էքսցեսներով պետք է վերջանան: Տարաբախտաբար մենք դեռ այն դրության չենք հասել, որ ամեն մի զինված ընդհարում սահմանափակվի ռազմաճակատում տեղի ունեցող կռիվներով: Ես սկզբից էլ վախեցնում էի համատարած կոտորածների ուրվականից և ամեն կերպ աշխատում էի խուսափել հայ-թուրքական ընդհարումներից, որովհետև համոզված էի, որ Աղրբեջանի և Հայաստանի գորքերի ընդհարման դեպքում երկու ժողովրդական մասաների իրար կոտորելն անխուսափելի պիտի լինի: Ցավոք սրտի պիտի ասեմ, որ հակառակ իմ բուռն ցանկության այդ տեղի ունեցավ: Ղարաբաղի հայերը՝ դրսից եկած զրգռիչների դրդմամբ դավաճանորեն հարձակում գործեցին մեր գորքերի վրա, փակեցին Ասկերանը և առիթ տվին երկուստեք կոտորածի: Հետագա փաստերը եկան ապացուցեցին, որ դա նախապես մշակված ծրագիր է եղել միաժամանակ հարձակումն սկսել բոլոր վայրերում. Ղարաբաղ, Գանձակ, Ղազախ, Օրդուբաթ, Բեյլուք Վեդի: Այդ հարձակումը Ղարաբաղի շրջանում ղեկավարում էին այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Դալի-Ղազար, Ալեքսան-Դալի, Յապոն, որոնք կռվի ժամանակ ընկել են և որոնց մոտ գտնված են դուրբաններ, որոնք ապացուցում են, որ այդ շարժումները տեղի էին ունենում Հայոց Կառավարության անդամների գիտությամբ ու հրահանգներով: Գալով Ղարաբաղի շրջանի հայերի կոտորածին, Ոսուրբեգովը բացառում է: Նրա բացատրությամբ Ղարաբաղի գյուղերն օր առաջ դատարկված են եղել, բնակիչները քաշվել են հեռավոր թիկունքը, տանելով իրանց հետ նաև ունեցվածքը և մնացած են եղել միայն զինված ուժերը, որոնցից և սպանվածներ են եղել կռվի ժամանակ, ինչպես և մերոնց կողմից: Շուշու բնակիչները ևս հեռացած են եղել քաղաքից, իսկ մնացածները Սուլթանովի հովանավորության տակ պահվում են այնտեղ: Ոսուրբեգովը հայտնեց, որ ինքն այլևս չի կարող մնալ կառավարության մեջ, որովհետև այն աստիճան առողջությունը քայքայված է, որ կարիք է զգում կազդուրվելու: Այդպես էր բացատրում Ոսուրբեգով Ղարաբաղի դեպքերի պատճառները:

Իմ հարցումին, թե ճիշտ է արդյոք քաղաքում տարածված լուրը, որ կառավարությունը ամբողջ կազմով հրաժարական է տվել, որի հետևանքով մինիստրական կրի-

\* Անընթեռների է (ծանոթ.կազմ.):

զիս է, Ուսուրբեզով պատասխանեց, որ մինիստրական կրիզիս չկա: Պաշտոնական հրաժարական ես ինքս չեմ ներկայացրել, բայց հայտնել եմ, որ վերջնականապես թողնելու եմ և խնդրել եմ իմ փոխարեն մարդ գտնել: Իմ հարցումին, թե վերջնականապես թողնում է նա պաշտոնը, պատասխանեց, որ այո: Այս վերջին դեպքերն որ աստիճան ինձ վրա ազդել են, որ ես որոշել եմ առնվազն չորս ամիս ժամանակով հեռանալ ասպարեզից ու բժշկվել:

Վերջին պահուն տեղեկություն ստացանք, որ անդամնալի կերպով որոշել է հեռանալ մինիստրական պաշտոնից Ուսուրբեզով, Մեհմանդարով և Կապլանով: Այս լուրը ստուգության կարոտ է, հայտնում ենք միայն իբրև տեղեկություն: Սորան կցվում է NN 1, 2, 3, 4, 5, 6, և նամակները, նոցա հայերեն թարգմանությունները:

Դիվանագ. ներկ. Գարությունյան  
Քարտուղար ստոր.

ՀՀ ՊԱ, ֆ. 278, ց. 1, գ. 30, թթ. 1-2: Վավերացված պատճեն:  
Ձեռագիր:

N 390

**ԳԱՆՁԱԿԻ ՀԱՅՈՑ ՓՈՒՆԱՆՈՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԻՆ՝ ԳԱՎԱՌԻ ԱՋԱՏ ԳՅՈՒԴԻ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ, ԱՎԱՐԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱՀԱՆ ԱՆԵԼՈՒ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՎԱՆՈՒՄ ՊԱՏՄՊԱՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՕՐԴՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 136

21 ապրիլի 1920թ.  
Գանձակ

Վիճակիս Ազատ գյուղի հայությունը նահանգական կառավարության ուղարկած ավագակաբարո կամավոր զորքի ձեռքով զինաթափվելուց, ավարի մատնվելուց և ապա, որպես թե Գանձակ բերելու նպատակով, գյուղից տեղահան արվելուց հետո, կոտորվում է ճանապարհին՝ Հաջիքենդ ամարանոցից մինչև Գանձակի գավառի գերմանական էլենենդորֆ ավանը: Մնացորդը, մոտ 500 հոգի, մազապուրծ հասնում է Ելենենդորֆ, որի բնակիչներից ստանում է ամենաջերմ ընդունելություն, հյուրասիրություն և ապաստան երեք օր շարունակ:

Գերմանական այս համայնքը կերակրում է ողջանդամներին, հատուկ խնամք է տանում հիվանդների վերա, ժողովում է ճանապարհի վերա օրերով անթաղ մնացած տասնյակ դիակները և հանձնում տերերին:

Այլև այս համայնքը զիշեր-ցերեկ պաշտպանում է այս հայությունը կոտորվելուց, նորա կանանց և կույսերին՝ լլկվելուց հիշյալ և այլ տեղերից եկած հրոսակներից ամենամեծ անձնանվիրությամբ: Աղետյալ հայերը իրենք արտասուքը աչքերին պատմում էին այն գթառատ սերը, քրիստոնեական մարդասիրական վերաբերմունքը, որին նոքա արժանացել են գերմանական համայնքի կողմից և մխիթարվել:

Ջեկուցանելով այս մասին և ի նկատի ունենալով այս գաղութի կարևորությունը ըստ ամենայն մասանց ներկայիս դժնդակ օրերում, խոնարհաբար խնդրում եմ միջնոր-

\* Ստորագրությունն անընթեռնելի է (ծանոթ.կազմ.):

դել առաջի Վեհափառ կաթողիկոսի շնորհելու համար Ելենենդորֆ գաղութին օրհնության Սրբադաս կոնդակ:

Փոխանորդ՝ **Լևոն վարդապետ**

ՀՀ ՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 216, թթ. 12-13: Բնագիր: Ձեռագիր:

**N 391**

**ՊԱՆՉԱԿԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՐ ԱՐՄԵՆԻՆ՝ ՇՈՒՇՈՒ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՀԱՅ-ՎԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾԻ, ՎԱՀԱՆ ՍՐԲԱՋԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

**21 ապրիլի 1920 թ.**

Ղարաբաղից ստացված տեղեկությունները արդեն աներկբայորեն ասում են Շուշվա հայկական մասի ավերածության, հայ բնակչության կոտորածը, որի ժամանակ սպանվել են Վահան սրբազանը և քահանաները: Եվ ինչպես պատմում են ռուս բժշիկ, ինտելիգենտ ռուսներ, բարյացկամ զինվորական թուրքեր, այդ ավերածությունը և կոտորածը ամենասուսկալիներից են, որոնց ենթարկվել են և շրջակա հայ գյուղերը: Այստեղ երկար ժամանակ անհավատ մնացինք այս տեղեկությունների հանդեպ, որոնք ավելի և ավելի համառում են, համարելով դրանք պռովոկացիա՝ Գանձակի շրջակայքի հայ գյուղերի զինաթափությունը դյուրացնելու և հայ ժողովուրդը խեղճացնելու նպատակով: Անձնապես ինքս դեռևս չեմ ուզում հավատալ: Մինչև իսկ մի ռուս պաշտոնյա ինձ հանձնեց մի բանալի, ըստ երևոյթին եկեղեցու, որը նա գտել է հայոց մասում և տեսել մի հայ քահանայի դիակ՝ ի շարս այլ սպանվածների:

Այսօր ստացա Ղարաչինարի շրջանի գործակալից նամակ, որի մեջ նկարագրված է նոր տասը գյուղերի ավերածությունը, 10-12 հազար հայ ժողովուրդի սովի և հիվանդությունների մահը: Նամակի բովանդակությունը կտամ մյուս անգամ:

Խոնարհ. **Լևոն վարդապետ**

ՀՀ ՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 216, թ. 14: Բնագիր: Ձեռագիր:

**N 392**

**ԿՈՎԿԱՍՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՎԱՆ ԶԻՆՎՈՐԱՎԱՆ ՄԻՍԻԱՅԻ ՆԵՐՎԱՅԱՑՈՒՑԶԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՇՈՒՇՈՒ ՀԱՅՈՑ ԿՈՏՈՐԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄՔ՝**

**22 ապրիլի 1920 թ.  
Թիֆլիս**

Ձերդ Ս. Օծություն

Խորապես ցավում եմ, որ Ղարաբաղում տեղի ունեցած կոտորածների առթիվ հնարավորություն չունեցա անձամբ թե Ձերդ Ս. Օծության և թե պ. Խատիսյանին ցավակցությունս հայտնել: Առավելապես ցավում եմ, որ անակնկալ դիպվածոց հանգա-

\* Ֆրանսերեն մեքենագիր բնագիրը տես ՀՀ ՊԱ, ֆ.57, ց.5, գ.216, թ.10 (ժանոթ.կազմ.):

մանքով պետք է մեկնեն Փարիզ կառավարության պահանջումով և կարող չեն այցելել Ձեզ: Իմ պարտքս կլինի խորհրդում նպաստել Հայկական դատին, հույս ունեն որ շուտով կվերադառնամ և կատարելով պարտքս կայցելեմ սրբությանդ: Խնդրում եմ օրհնել ինձ և Ֆրանսիայի ժողովրդին:

Ձեր խոնարհ ծառա կապիտան Պուլադեբար, Հայաստանում ֆրանսիական զինվորական միսիայի ներկայացուցիչ:

ՀՀ ՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 216, ք. 11: Թարգմանություն ֆրանսերենից: Ձեռագիր:

N 393

**ԱՂԻԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՁԵԿՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝ ԳՅՈՎՀԱՅԻ ԳԱՎԱՌՈՒՄ ԱՊՐԻԼԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ**

N 710

24 ապրիլի 1920 թ.  
Բաքու

Գյուլչայի գավառի կոտորածների մասին մի ականատես ու վստահելի անձն հետևյալն է պատմում:

Ծաղկազարդի շաբաթ օրը Իվանովկա գյուղի բնակիչներին գավառապետի ավագ օգնականը նախազուշացրեց, որ երեք օր հայկական գյուղերը չգնան, որովհետև հայերի կոտորած է լինելու:

Ծաղկազարդի կյուրակի առավոտյան՝ պրիստավի կարգադրությամբ ստրաժնիկները կալանավորեցին Գիրք գյուղի քահանա Աբրահամյանցին և նորա փեսա Սուլթանիքենդ գյուղի ուսուցիչ Խոսրովին և տարան թրքական Աշըղ Բայրամլի գյուղը ու այնտեղ մորթեցին: Այդ ժամանակում գյուղումն էին դատական քննիչ Ադա էֆենդի, պրիստավ Մուստաֆա բեգ Ռուստամբեգով և կազի Սուլեյման էֆենդի՝ Դիալի գյուղի մուֆտիի եղբայրը: Սուլեյմանը հայերի կոտորածների նախածեռնողներից մինն էր և ինքն էլ մասնակցում էր հայ ժողովուրդի կոտորածին:

Աբրահամյան քահանայի աղջիկն ու հարսը թուրքերը տարել են, որոնցից մինը այժմ գտնվում է թրքական Կալինչակ գյուղում, իսկ մյուսը Կուրդ Մաշադ:

Ավագ երկուշաբթի, թե երեքշաբթի օրը Իվանովկա գյուղում պրիստավի կարգադրությամբ ստրաժնիկները հավաքեցին այնտեղ ապաստանած բոլոր հայերին, գլխավորապես կանանց ու երեխաներին, թվով 50 հոգի, գյուղի ծայրում գտնվող մի տնակում իբր թե ապահով պահելու, սակայն ճանապարհին, գյուղի մի նեղ փողոցում, հարձակվեցին նրանց վրա և բոլորին առվի մեջ մորթտեցին, նախապես հանելով նրանց զգեստները: Տղամարդկանց մեծամասնությունը թաքնված են անտառներում և գիշերները գալիս են գյուղ - ռուս գյուղացիներից հաց խնդրելու, որոնք հակառակ պրիստավի մահվան սպառնալիքի, այնուամենայնիվ նրանց օգնում են մեծ երկյուղով: Կոտորածներից հետո՝ գավառական իշխանության կարգադրությամբ մնացած բոլոր հայերին գլխավորապես կանանց և երեխաներին, հավաքել են Ուշտալ գյուղում և այնտեղ պահում են ստրաժնիկների հովանավորության ու պաշտպանության տակ: Մտադրություն է եղել դրանց ևս կոտորել, բայց երբ իմացվել է, որ կառավարական քննիչ կոմիսիա է գալիս կոտորածի մասին քննություն կատարելու, որոշել են պահել մնացած հայերին:

Ականատեսի վկայությամբ Գյոքչայի գավառի հայերի կոտորած կազմակերպելու նախաձեռնողներն են՝ արիստավ Ռուստամբեգով, կազի Սուլեյման էֆենդի և Կուսանջի գյուղացի Սիրաջի էֆենդի:

Անտառում ապաստանած հայերի մեջ է գտնվում նաև Վանք գյուղի քահանան: Պատմողի ասելով, իբր թե թուրքերը մի քանի անգամ հարձակումն են գործել Վանք գյուղի վրա և հետ են մղվել:

Կոտորածի են ենթարկվել Գեյոքչայի գավառի Քեշխուրդ, Թորի շեն, Գիրք և Բյալբանդ գյուղերի հայ բնակիչները, որոնց մնացորդները հավաքված են այժմ Ուշտալ հայկական գյուղում:

Հարկ ենք համարում այս նասին հայտնել Ձեզ ի տեղեկություն:

Դիվ. Հարությունյան  
Քարտ.

ՀՀ ՊԱ, ֆ. 278, ց. 1, գ. 32, թ. 23: Պատճեն: Չեռագիր:

N 394

**ՆՈՒՒՆՈՒ ԵՎ ԱՐԵՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ՀԻՇՅԱԼ ԳԱՎԱՐ-  
ՆԵՐԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ: «ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ»**

[ապրիլ 1920թ.]  
Թիֆլիս

1. Կովկասում ռուսական իշխանության քայքայումով և Անդրկովկասում ռուսական տարրի նվազումով սկսում է ուժգին աճել մահմեդականների հարձակողական քաղաքականությունը: Արեշի և Նուխու հայերը պաշարվում են թաթարների կողմի: Աճում են թալաններն ու սպանությունները: 1917թ. դեկտեմբերին սկսում են իրենց գործողությունները. Ջափարավադ, Չուխախու, Այդին-Բուլաղ, Գյոգ-Բեյլի, Մալղդ, Օրաբան, Օթմանլի, Ալիար, Վարդանլի, Ջովլան, Ախախլաքենդ (Նուխվա գավ.), Գավարլի, Քենդիկ, Մազուրդու, Արեշ, Մամաթ-Թավա և Խանավադ հայ գյուղերը շուտափույթ թալանվում են թուրքերի կողմից: Բայց մահմեդական ղեկավարները չբավականանալով դրանով, եռանդով շարունակում են պանիսլամիզմի ծավալումը և քրիստոնյաների կոտորածը. 1918թ. ապրիլին ամենուրեք սկսում են հարձակվել հայերի վրա: Բոլորովին ոչնչացվում են Մամաթ-Թավա, Արեշ, Խանավադ, Քենդիկ և Գավարլի հայ գյուղերը, որոնք չէին ընդունում բռնի մահմեդականությունը: Մազուրդու գյուղը կոտորածի սպառնալիքի տակ ընդունում է «իսլամը» բայց անձնատուր լինելուց հետո դարձյալ բնաջնջվում է: Միայն Քենդիկի և Գավարլու հայ բնակչության աննշան մասը կարողանում է ազատվել կոտորածից և «իսլամից» և ապաստանում է հարևան հայ գյուղերում: Այդ ժամանակ 12 մեծ-սեռգութվեցի հայ բանվորների կոտորում և այրում են թրքական Դամադարա գյուղում: Նուխի քաղաքում հունիսին սարքվում է մի «փոքր» կոտորած և 10-12 թուպետու շուկայում սպանում են 100 ավելի հայեր:

2. 1918թ. հուլիսի սկզբին տաճկա-ադրբեջանական կանոնավոր զորքերը ջարդում ու ավերում են Արեշի գավառի Գիրդաղուլ, Չանախբուլաղ, Քալա-Սունբաղ, Սիրթ-Ենգիջա, Բիլիդ, Բեզլիարքենդ, Ամիրվան և Սուլթան-Նուխի հայ գյուղերը,

\* Տպագրվում է որոշ կրճատումներով (ծանոթ.կազմ.):



բոլորովին բնաջնջվում են նույնպես Ջորլու ու Միրզաբեգլու գյուղերը, իսկ Ղայաբաշեն, Ջարաֆ, Թոփ, Ղոզլու, Մեժլիս, Սալիբեգլի, Սաբաթլու, Դաշբուլաղ, Չարդաթ, Թեարաքա-Գեոգբուլաղ և Սեոգուբլու, նախկին թալանված Ախալաբենդ, Այդինբուլաղ, Ջափարավաղ, Չոլախլու, Ալիար, Մալբղ, Ջուջամիշ, Յաղուբլու, Քենդիկ, Հավարիկ և մյուս գյուղերից եաղուբլուի կոտորածից հետո փախչում են դեպի Ալազան գետը, այստեղ էլ ճանապարհի վրա տերիտորիայում ենթարկում են հարձակման Ջաբաթալայի շրջանի թուրքերի և լեզգիների կողմից և մի կերպ նրանց ետ վանելով հասնում Սիզնախի գավառի Ցարսկիե-Կոլոդցի ավանը: Սակայն վրաց տեղական իշխանություններն էլ մի ամիս խեղճ գաղթականներին սովի բլրկադայի ենթարկելով, վերջը բռնի կերպով քշում են օգոստոսի 4-ին Շիրակի լայնատարած անջուր դաշտով Ալազանի անյուրընկալ ափերը, ուր նրանց սրտատրոփ սպասում էին թուրք ասլյարները: Նուրի փաշայի համաձայնությամբ և երաշխավորությամբ էր կատարվել այդ ետգաղթը, ըստ որում գաղթականները պիտի բոլորն էլ (10.000-ից ավելի հոգի) հավաքվեին ժամանակավորապես Սաբաթլու գյուղում:

Մինչև Սաբաթլու հասնելը, Ալազանի ափին գաղթականները ենթարկվում են թալանի, բռնաբարությունների, սովի ու հիվանդությունների ճիրաններում: Այդպես մնում են երկու շաբաթ: Այնուհետև նրանց տանում են Սաբաթլու գյուղը, ուր հավաքվում են շրջակա գյուղերից թուրքերը և այստեղ տղամարդկանց կոտորում, իսկ կանանց և օրիորդներին բաժանում իրար մեջ: Մի աննշան մասը ճողոպրելով կոտորածից փախչում է Նուխի քաղաք, որտեղից հետագայում տեղահանվում են Դաշբուլաղ գյուղը: Այստեղ էլ սովն է հնձում նրանց մեծագույն մասը, իսկ մնացածները դարձյալ վերադառնում են Նուխի, ծածկելով իրենց ճանապարհները անթաղ դիակներով:

3. 1918թ. Բագուն գրավելուց հետո, սեպտեմբերին իսպառ բնաջնջվում են և թալանվում Մեծ-Սեոգուբլուն, Խոշկաշեն, Փոքր-Սեոգուբլուն, Ենգիբենդ և կոտորած և թալան է սարքվում Նիժում: Իրենց գյուղերը վերադարձած ջորիվեցիք և միրզաբեգլվեցիք բոլորովին ջնջվում են: Տեղի են ունենում սպանություններ և թալան նույնպես Վարդաշենում և Ջալեթում ու Նուխի քաղաքում: Սակայն այդ երեք գյուղերը շարունակում են իրենց գոյությունը:

4. Աղդաշի մի կիսավեր քարվանսարայում հիշյալ գյուղերից գերած հայերին բաժան-բաժան են անում իրար մեջ. գեղեցիկ կանանց տանում են, իսկ մնացածներին անլուր տանջանքներից հետո շարում են կարգով և հրացանագարկ անում: Նրանց միջև կային և զառամյալ քահանաներ, որոնց մերկացնում են ամբողջովին, հեծնում նրանց վրա, փայտը ձեռքին և մի մեծ ծանրություն կախելով նրանց մորուքներից, ման են ածում նրանց շուկայում պռռալով «Ա՛յ էշակ ալան, ա՛յ էշակ ալան...»:

5. Այդ անօրինակ ողբերգությունների հեղինակները եղել են շատ շատերը, նրանցից ամենանշանավորները սրանք են՝ Մահմուդ-բեկ, Լյութֆալիբեկով (Արեշի գավառի 3-րդ մասի պրիստավը), Մաքսուդ Էֆենդին (տաճիկ), Իսմայել խան (Գանձակից), Մահմուդ բեկ Շիխալիբեկով (Բում գյուղից), Սեյունբեկ (Կուտկաշենցի), Ուսուբ բեկ (սուլթան Նուխեցի), Մուստաֆա բեկ՝ (ֆիրալովեցի), և Հաջի Յուսուֆ Մուլլա Ահմեդ Օղլի (Թարթաշ գյուղից):

6. Այսպիսով երկու գավառների 51 հայ գյուղերից մնում են միմիայն կիսավեր և թալանված երեք գյուղ՝ Վարդաշեն, Նիժ և Ճալեթ ու Նուխի քաղաքի հայությունը: Այդ գյուղերն են հավաքվում և կոտորածներից ազատվածները, բացի հայ գերիներից: 50192 հայ ազգաբնակչությունից (համաձայն Նուխվա հոգևոր կառավարության վիճակագրության) Նուխու և Արեշի գավառներում մնացած հայության թիվը հասնում է 15273 հոգու, որոնցից գաղթականները կազմում էին 5073 հոգի, իսկ 10200 հոգի ողջ մնացած գյուղերի բնիկ ժողովուրդը:

7. Ողջ մնացած գյուղերում տեղի են ունեցել բացի թալանից և բռնաբարություններից և սպանությունների. գիշերները հարյուրավոր երիտասարդների

և աչքի ընկնող անձանց տներից դուրս կանչելով, սպանում են: Այդ գոհերի թվին է պատկանում և վարդաշենցի գեներալ Յայրապետ Սիլիկյանը իր ընտանիքով, որին սպանել է տվել Նուխու կոմենդանտ Խերի բեյը:

8. Հազարավոր հայ կանայք մինչև այսօր էլ թուրք գյուղերում ենթակա են բռնաբարման... նրանց բռնի իսլամություն են ընդունել տալիս: Այդ գյուղերից Նուխի են գալիս «անպետքացած» հայ կանայք և օգնություն են խնդրում գաղթականական կոմիտեից. կոմիտեին հարցին՝ ամուսին ունեն արդյո՞ք, պատասխանում են, որ վաղուց են իրենց ամուսնուն կորցրել, բայց և այնպես բոլորն էլ հղի են լինում: Հայ կնոջ պատիվը արատավորված է և դեռ շարունակում է այդպես մնալ:

9. Նուխու գավառի Վարդաշեն գյուղի հայ ազգաբնակչությունը հետևյալ խնդրագիրն է ուղարկել Ադրբեջանի պառլամենտի հայկական ֆրակցիային:

«Ինչպես ձեզ հայտնի է, Նուխու և Արեշի հայկական գյուղերն ավերակների են վերածված, ազգաբնակչությունը կոտորվել և միայն Նուխու գավառի Վարդաշեն, Նիժ և Ճալեթ գյուղերն են, որ թեև ավերածությունների են ենթարկվել, սակայն ազգաբնակչության միայն մի մասն է կոտորվել: Թվում էր թե տաճկական զորքի հեռանալով ազգաբնակչությունը պիտի ազատ շունչ քաշեր, սակայն, ընդհակառակը, դրությունը ոչ միայն չլավացավ այլև վատթարացավ:

Օր. Նուխու գավառի ոստիկանական 3-րդ շրջանում, Վարդաշեն կենտրոնով, կարգը պահպանելու համար ոստիկանապետի տրամադրության տակ են դրված 30 ստրաժնիկներ, որոնք ոչ միայն իրենց պարտականությունները չեն կատարում, այլև թալանում են ազգաբնակչությանը, քաղցի մատնելով նրանց: Բողոքել չենք կարող, որովհետև բողոքողները սոսկալի պատժի են ենթարկվում: Ստրաժնիկների մեզ մոտ նշանակվելու օրից, նրանք ապրում են մեր հաշվին: Այսպես.

1. գյուղացուց պահանջում են խոտ, քուսպ, գարի, փայտ, հաց, ձու, յուղ, բրինձ, թռչուններ և այլն:

Ով կանուփի չի տալիս սոսկալի ծեծի է ենթարկվում:

2. Փոքրիշատե ունևորներից խոշոր գումարներ են պահանջում և չվճարողներին ծեծի ու բանտարկության ենթարկում, մինչև պահանջած գումարը ստանալը:

3. Գիշերները մտնում են բնակարանները և ամեն ինչ կողոպտելով, տանում հետները:

4. Սրան կամ նրան պատվիրում են փարթան խնջույք սարքել:

5. Կանանց և օրիորդներին բռնաբարում ու տանում են հետները:

6. Ուրիշ վայրերից եկած ստրաժնիկների տեղավորում են մասնավոր տներում, որպես հյուրերի, որոնք վերադառնալիս տանում են իրենց հետ ամեն ինչ:

7. Գյուղում աննպատակ հրացանածգություն են կատարում ազգաբնակչությանը ահաբեկելու նպատակով:

8. Լուրեր են տարածում, որ Վարդաշենը հրի ու սրի է մատնվելու, որով ազգաբնակչությանը խանգարում են իրենց աշխատանքները կատարելու, որովհետև նրանք չգիտեն, թե վաղն ինչ է լինելու:

9. Դատ են կայացնում և գործը վճռում հոգուտ կաշառատուի ու իրենց վճիռներն էլ ի կատար ածում: Կատարում են մի շարք քստմնելի գործեր ևս:

Այս ամենի մասին մենք բողոք ենք ներկայացրել պառլամենտին Նուխվա գավառի ներկայացուցիչ Ղարիբ Քերիմ-Օղլու միջոցով, հույս ունենալով, որ նա ևս իր ձայնը կբարձացնի հոգուտ մեզ:

Հաղորդելով վերոհիշյալի մասին, խոնարհաբար խնդրում ենք հանուն մարդասիրության գործակցեք ուր որ հարկն է, դիմելու ու վճռական միջոցներ ձեռք առնելու մեզ այս անելանելի դրությունից դուրս գալու, որպեսզի գյուղացիությունը կարող լինի զբաղվելու իր աշխատանքներով ու դատապարտված չլինի կորստյան: Իսկ եթե այդ անհնար է, աղաչում ենք գաղթեցնել մեզ մի ապահով վայր»:

(41 ստորագրություններ)

Վավերացրել է Վարդաշեն գյուղի տանուտերը իր ստորագրությամբ ու կնիքով: 1919թ. 25-ին ապրիլի:

10. Նուխվա և Արեշի կոտորածից ազատված և ներկայիս անտառներում պատսպարված կան շատ երիտասարդներ ու կանայք, որոնք ապրում են ողբերգական վիճակ: Թուրքերը նրանց տեղերը իմանալով խմբերով դարան են մտնում և երբ խեղճերը իրենց թագստից ուզում են դուրս գալ ու գյուղերը մտնել ուտելու բան որոնելու, իրենց դարանատեղից հարձակվելով նրանց վրա, շատերին բռնում են, իսկ փախչողներին էլ հրացանազարկ են անում: Այդպիսի թաքստից թուրքերը բռնել էին մի քանի ամիրվանցի և բլեդցի տղամարդի ու կանանց, որոնցից տղամարդկանց ու պառավ կանանց տեղնուտեղը սպանել, իսկ ջահել ու գեղեցիկ կանանց տարել են: Նրանք չբավականանալով ավերված հայ գյուղերից թալանած ու տարած հարուստ ավարով, մինչև այժմ կանգուն մնացած երկհարկանի ու գեղեցիկ տները քանդելուց ու իրենց կարևոր մասն էլ վերցնելուց հետո էլ մնացածները կրակում, այրում ու մոխիր են դարձնում: Թուրքերը շիշերով (շամփուրներով) ծակծկում էին ամեն բակի զանազան մասերը և իրեղեններ ու փողեր էին գտնում: Շատերին հաջողվում էր գտնել արծաթեղեններ, դրամներ, ցորենով լիքը հորեր և այլն:

Անտառում պատսպարվածների թիվը սկզբում հասնում էր մոտ 500 հոգու, առայժմ այդ թիվը ընկել է մինչև 90-ի, որոնց մեծագույն մասը տղամարդիկ են: Նրանք սուկալի դրության մեջ են եղել և նույն վիճակումն ողջ մնացածները շարունակում են ապրել: Կերարկրվում են անտառային զանազան հին ու փթած պտուղներով ու աշնանից հավաքված կաղիններով: Տղամարդիկ ու կանայք մերկ են բառիս ընդարձակ իմաստով, իրենք էլ համարյա կիսավայրենացած դրության մեջ:

Այս փախստականների մեծամասնությունը պատսպարված է Ամիրվանի «Ջալալ» կոչված մեծ ու խիտ անտառում, Վանքաշենի ու Առուշանաշենի խիտ անտառներում և այլն: Նուխի-Եվլախ խճուղու վրա տասնյակ տեղեր բոլոր կառքերին կանգնեցնում և «Էրմանի վա՞ր» հարցն են տալիս և հայ գտնելու դեպքում անհետ կորցնում, իսկ խալդանը կատարյալ սպանդանոց է դարձրել հայերի համար:

Բայց դա բավական չէ, 1919թ. մայիսի 29-ին, Աղբբեջանի հանրապետության տարեդարձին թուրք գյուղերում հայերին կոտորել են. օրինակ Աղդաշում տարեդարձի երկրորդ օրը կոտորել են եղած բոլոր հայերին, թվով 21 հոգի:

11. Նուխու հայոց հին թաղում Զ.Սուրադյանի տունը գրավման է ենթարկվել և ասկյարների կազարմա դարձվել: Այդ բանուկ փողոցով անց ու դարձ անող հայերին, մանավանդ հայ կանանց և օրիորդներին ամենալալիր խոսքերով վիրավորում էին: Երբ նկատեցին, որ այդ փողոցով այլևս հայ կին ու աղջիկ չի անցնում, ասկյարները իրենք սկսեցին շրջել հայոց մասը և տնետուն ընկնելով կին ու աղջիկ պահանջել: Շատերը պահանջում էին «մի քանի օրով», որից հետո խոստանում էին վերադարձնել: Ասկյարներից մեկը 1919թ. հուլիսի 30-ին հարձակվել էր Զովսեփյանի բաղնիսում հղի հայ կին 0-ի վրա, որից նա վիժել է մանուկը: Այդ առթիվ պառլամենտի անդամ պ. Բ.Բալայանի միջոցով բողոք է ներկայացվել վարչապետին և նա խոստացել էր խիստ քննություն կատարել տալ, սակայն մինչև այժմ ոչինչ չի կատարված: Տեղի ունեցավ մի նոր դեպք ավելի զազիր, ավելի խայտառակ: Ասկյարների ապրած փողոցի վրա ապրում էին նաև Թովմաս Տեր-Ավագյանի 2 աղջիկը՝ իրենց փոքր եղբոր հետ: Ասկյարների չավուշ Իսպենդիար Ջափար Կուլի-օղլին հավանում է օր. Տեր-Ավագյանին և բացարձակ ամեն տեղ ասում է, որ իրեն պիտի կին վերցնի: Զամարձակությունը հասնում է այնտեղ, որ նույնիսկ թույլ չի տալիս ուրիշ հայ տղամարդ գնան-զան Տեր-Ավագյանի մոտ: 1919թ. սեպտեմբերի 10-ին գաղտնի կերպով օրիորդը պսակվում է հայ երիտասարդ Գ.Տեր-Վարդանյանի հետ: Զետկյալ օրը չավուշ Իսպենդիարը այդ իմանալուց հետո, երեկոյան գաղտնագողի մտնում է Գ.Վարդանյանի բակը և պատուհանից մաուզեր ատրճանակից կրակում վերջինիս

վրա, սակայն բարեբախտաբար գնդակը վրիպում է, շորը խանձելով մտնում է պատը: Չարագործը ազատ շրջում է:

12. Նուխում ոչ մի հայ չի կարող մի րուպե վստահանալ, որ այսօր կամ վաղը իր տունը այսպես կոչված «րիկվիզիցիայի» չի ենթարկվի: Բուլդոզեր պետական և հասարակական հաստատությունները տեղափոխել են հայոց թաղը: Ոչ միայն մի սպա, պրիստավ կամ այլ պաշտոնյա իր քմահաճույքի համար գրավում է հայի տունը, այլև մասնավոր մարդիկ՝ «ղոչիներն» անգամ իրավունք են համարում գրավել հայերի տները, փաստերը բազմաթիվ են: «Րիկվիզիցիան» այնպիսի չափերի է հասել, որ պառլամենտի Նուխու հայերի ներկայացուցիչը բողոք է ներկայացրել կառավարություն, սակայն ապարյուն: Մի կողմից «Ջելլեթ Կոմիտասի» (Դահիճների կոմիտե), կայցրած հայտարարությունները, թե «ով հայից տուն գնեց, գլուխը մարմնից պոկվելու է, իսկ տունը կրակվելու», իսկ մյուս կողմից «րիկվիզիցիաները» անելանելի դրության մեջ են դրել Նուխվա դժբախտ հայությանը:

13. 1919թ. դեկտեմբերի 8-ին Նուխուց Հայաստան մեկնող երկրորդ հայ գաղթախումբը 16 սայլով Նուխի-Եվլախ խճուղու վրա Նալբանդի Դարա կոչված վայրում կողոպտվում է բոլորովին, իսկ գեղեցիկ կանայք ու աղջիկները բռնաբարվում են: Կողոպտողները և բռնաբարողները եղել են սրանց ճանապարհող ստրաժնիկները:

14. 1919թ. դեկտեմբերի 14-ին մեզ հայտնի է դարձել, որ մի քանի օրվա մեջ սպանված են ճանապարհին հետևյալ գաղթականները. չարդաթեցի Պատվական Ստեփանյան, սաբաթվեցի երկու եղբայր Բալայաններ սպանված են Գեոյնիգում: Դարաբաշեցիք՝ Բեյբուդ Ներսիսյան և Մամիկոն Դանախուլյան, սպանվել են Ջափարավադի և Նուխվա ճանապարհին: Մի հայ էլ սպանված է Դահնայից Նուխի ճանապարհի վրա, որի անունը և ազգանունը չգիտենք: Բացի վերոհիշյալներից Նուխի քաղաքի մեջ երեկոյան ժառ 6-ին, իր տանը կնոջ և երեխաների ներկայությամբ պատուհանից արձակված 4 հրացանային գնդակով սպանվում է ախալաբաճուցի երիտասարդ Արշակ Վարդանյանը: Վերջինիս սպանությունը պատճառաբանվում է հետևյալ կերպ: Քաղաքի Դշլաղ կոչված արվարձանում մի թուրքի տան գերության մեջ եղել է թեարաթեցի Միրզա Քոչարյանի գեղեցիկ աղջիկը: Վերջինս գերությունից փախչում է և ամուսնանում է Ա.Վարդանյանի հետ: Եվ ահա որպեսզի նորից տիրեն իրենց ցանկացած էակին՝ սպանում են ամուսնուն:

Դեկտեմբերի 2-ին երեկոյան Ժ.6-ին Նուխի քաղաքի թուրքաց մասում, դաշույնի մի քանի ծանր հարվածով գետին է գլորվում ազուլիսցի երիտասարդ Հարություն Թոփչյանը: Մեր Քրիստափոր Միքայելյանի քրոջ, հայտնի Թոփչյանի ընտանիքից էր այս պատանին, որ իր հեզ ու խոնարհ բնավորությամբ բոլորից հարգված էր:

16. 1920թ. հունվարի 13-ին Նուխուց Հայաստան է մեկնել հայ գաղթախումբը 244 հոգուց բաղկացած: Նուխուց մինչև Եվլախ կայարան այդ խմբին ուղեկցել է պետական պահակախումբը Սուչիմ-Դահնայի ուրադնիկի զխավորությամբ: Յուրաքանչյուր պահակ ամեն մի գաղթականից վերցրել է 50 ռուբլի, իսկ հիշյալ ուրադնիկը - 118 հոգուց՝ հարյուրական ռուբլի-11800ռուբ.: Այդ պահակներից մեկը՝ Մհամադ Օփիցեր Օղլին և Ջաքարյան (զիկզիթեցի-այդ գյուղը հայկական է եղել, որը դարեր սրանից առաջ հավատափոխ է եղել բռնի կերպով) մահվան սպառնալիքի տակ մեծխեցի գաղթական Բախչի Գափյանից վերցրել են մի հազար (1000) ռուբ.: Գաղթականներից Աղստափա կայարանում վերցրել են թուրքերը մի հազար (1000) ռուբլի և:

«Նուխու և Արեշի Հայրենակցական միությունը Թիֆլիսում պարբերաբար դիմումներ է արել Հայաստանի կառավարությանը ու նրա դիվանագիտական ներկայացուցչությանը, դաշնակիցներին, գնդապետ Հասկելին, Բրիտանական հրամանատարությանը և այլուր Նուխին և Արեշին գավառները ներկայացուցչություն ուղարկելու այստեղի հայության ֆիզիկական գոյությունն ապահովելու, նրան արտագաղթող Հայաստան փութացնելու համար: 1920թ. մարտի 15-ին կրկնվում է

դիմումը ամերիկացիների առաջ: Նկատի ունենալով սպասվող կոտորածը երեք ողջ մնացած գյուղերում և Նուխի քաղաքում: Սակայն անհետևանք և 12 օրից և նույն ամսի 27-ին կատարվում է կոտորածը»:

17. Նուխու և Արեշի Հայրենակցական միությունը 1919թ. հուլիսի 28-ին և ն/տ օգոստոսի 29-ին (NN 292, 384) պաշտոնապես դիմել է Կովկասի Բրիտանական հրամանատարության և Չերազույն կոմիսար գնդապետ Հասկելին հետևյալ գրությամբ: Ընդամին կցում ենք:

Նախագահ՝ **Տեր-Ավագյան**  
Փոխ-նախագահ՝ **Տեր-Հովսեփյան**  
Քարտուղար՝

ՀՀ ՊԱ, ֆ.245, ց.1, գ.12, ք.1-8: Պատճեն: Ձեռագիր:

N 395

**ИЗ СООБЩЕНИЯ ИНФОРМАЦИОННОГО БЮРО ПРИ ДИПЛОМАТИЧЕСКОЙ МИССИИ АРМЕНИИ В ГРУЗИИ О ПЕРЕВОРОТЕ В АЗЕРБАЙДЖАНЕ, О СОСТАВЕ ПРАВИТЕЛЬСТВА И ЕГО ОБРАЩЕНИИ ЗА ПОМОЩЬЮ К СОВЕТСКОЙ РОССИИ**

2 мая 1920г.  
Тифлис

К перевороту в Азербайджане. По поводу переворота в Баку редакцией получены следующие дополнительные сведения: 27 апреля состоялось чрезвычайное заседание азербайджанского парламента. Коммунистической партией был предъявлен парламенту ультиматум - передать ей власть. После повторения ультиматума парламент избрал комиссию в составе Расула Заде, Гаджинского, д-ра Карабекова, Кардашева, Сафикюрдского и Агамал-оглы. Комиссия вынесла решение выполнить ультиматум. Власть была сдана в 12ч. ночи”.

Председателем “Ревкома” назначен Нариман Нариманов, который в момент переворота находился в Кисловодске и на днях ожидается в Баку. Пока его замещает Гамид Султанов.

Баку, 29 апреля, Москва, Ленину. Временный военно-революционный комитет азербайджанской советской независимой республики, ставший у власти по воле революционного пролетариата гор.Баку и трудового крестьянства Азербайджана объявляет старое мусаватское правительство изменником народа и врагом независимости страны. Временный военно-революционный комитет прекращает всякие сношения с Антантой и с другими-врагами Советской России. Не имея возможности собственными силами удержать натиск соединенных банд внешней и внутренней контрреволюции, военно-революционный комитет Азербайджана предлагает правительству Российской Советской республики вступить в братский союз для совместной борьбы с мировым империализмом и просит немедленно оказать реальную помощь путем присылки отрядов красной армии. Воен.рев.ком.Азерб.республики Нариман Нариманов, Мирза Давит

\* Տե՛ս ՀՀ ՊԱ, ֆ.245, ց.1, գ.12, ք.8 շրջ.-10 (ծանոթ.կազմ.):

\*\* Ստորագրությունն անընթեռնելի է (ծանոթ.կազմ.):

Гусейнов, Мусабеков, Гамид Султанов, Алимов и Али Гейдар Караев. ("Борьба" №96 от 30 апреля).

По сведениям из Елисаветполя, азербайджанский парламент продолжает пока функционировать в прежнем составе. (Там же).

Военным советским комиссаром Султановым разосланы телеграммы по провинциям Азербайджана с предложением всем должностным лицам оставаться на своих местах и спокойно продолжать работу. (Там же).

Азербайджанская миссия в Тифлисе прекратила покуда всякие операции и выжидает инструкций из Баку. (Там же).

#### ТУРЦИЯ И БЛИЖНИЙ ВОСТОК

Союзники заключили соглашение о реорганизации Турции. Италия, Франция и Англия будут пользоваться равными экономическими условиями. Италии будут принадлежать исключительное эксплуатационное право в зоне от залива Адранити на юге до Ариум-Кара, Хисака, включая Конию, Айдин и Аданию. Италии достались угольные копи Гераклеи и за исключением бывших уже нейтральными копиями, не имеющих большого значения и предоставленных интересам союзников. ("Слово" №96 от 30 апреля).

Начальник Информационного Бюро **М.-Карамянц**

АИ РА, ф.276, оп.1, д.3, лл.184 об-185. Заверенная копия. Машинопись.

#### № 396

### СООБЩЕНИЕ ИНФОРМАЦИОННОГО БЮРО ПРИ ДИПЛОМАТИЧЕСКОЙ МИССИИ АРМЕНИИ В ГРУЗИИ О ПРОВОЗГЛАШЕНИИ СОВЕТСКОЙ ВЛАСТИ В БАКУ

№ 92

2 мая 1920г.  
Тифлис

Бюллетень №92, Информ.бюро при Армянс. Диплом. миссии в Грузии 29 апреля 1920г.

Из газеты "Борьба" №96, 30 апреля 1920г.

Отношение к большевикам. По поводу провозглашения в Баку Советской власти "Борьба" в передовице, между прочим пишет следующее: "Азербайджанская армия соединилась с советскими войсками. Торг, происходивший где-то в потемках, закончился. Сделка состоялась. Цена этой сделки - цена крови.

Соглашение, которое заключила советская власть с националистами Азербайджана куплено ценою крови армянского народа: объединенные советские и азербайджанские войска наступают на "Армению", "на армян", как с неподражаемым цинизмом заявил стоящий у власти в Баку "коммунист" Султанов. Советская политика на Востоке определяется союзом большевиков с силами панисламистской реакции, в Закавказье с силами турецкой реакции. Об этом мы говорили давно. Это опровергали с усердием, достойным лучшего применения, бошевитские лис...

Одной из первых мер "коммунистической" власти было продолжение военной кампании против армян. По заявлению Гамида Султанова "красные" азербайджано-советские войска наступают через Евлах "на армян". По заявлению того же Султанова,

---

\* Неразборчивое слово (прим.сост.)

целью этой антиармянской кампании является соединение советско-азербайджанских войск с Анатолией...”

АИ РА, ф.276, оп.1, д.3. лл. 183об-184. Копия. Машинопись.

N 397

**ՇՈՒՇՈՒ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԱՆՂԱՄ ԿԱՐԱՊԵՏ ՔԱՅԱՆԱ ՎԱՐՂԱՊԵՏՅԱՆՑԻ ԵՎ ԱՏԵՆԱ-  
ՂՊԻՐ ՄԻՐՁԱ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆԻ ՁԵԿՈՒՑՈՒՄԸ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՇՈՒ-  
ՇՈՒ ԿՈՏՈՐԱԾԻ, ԿՈՂՈՊԻՏԻ, ԿԱՆԱՆՑ ԳԵՐԵՎԱՐՈՒԹՅԱՆ, ՎԱՅԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՒ  
ԱՅԼ ՀՈԳԵՎՈՐԱՎԱՆՆԵՐԻ ՈՒ ՄՏԱՎՈՐԱՎԱՆՆԵՐԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ,  
ՀՈԳԵՎՈՐ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

15 մայիսի 1920 թ.  
Հաղորւթ

Նորին սրբության  
Ամենայն հայոց վեհափառ կաթողիկոս և մեծարյալ հայրապետ Տ.Տ.Գևորգ Ե.-ին  
Ամենախոնարհ զեկուցումն

Որդիական պարտականություն ենք համարում ամենախոնարհաբար հայտնել Ձերդ վեհափառությանը, որ տարվույս մարտի 10/23-ին Շուշում սկսած կռիվները խաչ դրին քաղաքի հայկական թաղի վրա: Այրվեց հայոց ամբողջ քաղաքամասը: 12-13 հազար հայության 6 հազար հոգին փախան գյուղերը, 4 հազար հոգին, մեծ մասը տղամարդ, սրի քաշվեցան, գնդակահարվեցան ու հրկիզվեցան և մոտ 3 հազար հոգի մնացին քաղաքում, գերի թուրքերի ձեռքին, որոնց մի մասը՝ 400 հոգի երիտասարդ ուժեր տներում և բանտում սրածվեցան, 700 հոգի կին ու երեխա, ծեր ու պառավ, արծակվեցան և հասան գյուղերը, իսկ մնացածը, սիրուն կանանց ու աղջկերանց հետ, գտնվում են թուրքերի տներում, նահանգապետ Սուլթանովի մոտ և բանտում: Մոտ 400 զեղեցկուհիներից կազմված 4 առանձին կանանոց, որտեղից բաժին են հանում սպաներին ու ասկյարներին: Քաղաքից մերկ ու դատարկ ազատված ժողովուրդը ցրված է Վարանդայի և Դիզակի գյուղերում, որի մի մասն ապաստան է գտել բարեկամների ու ազգականների տներում, մի շատ չնչին՝ վաճառական մասն ապրում է իր ազատած փողով և մեծ մասը թե՛ նպաստ է ստանում կառավարությունից և թե՛ մուրացկանություն անում:

Վահան եպիսկոպոսը սպանվեց առաջնորդարանում, չկամենալով դուրս գալ: Առաջնորդարանը, թե՛ն. դպրոցը, եկեղեցիները թալանված են, ապա այրված: Կռիվը սկսվելով առավոտվա ժամը 5-ին՝ հնարավորություն չի եղել կոնսիստորիայից ոչ մի դրկումենտ, ոչ մի գործ ու գանձ ազատել. նույնպես և եկեղեցիներից: Վահան եպիսկոպոսի սպանության մասին մեզանից հետո դուրս եկած հայ ոստիկանապետ Ավետիք Տեր-Ղուկասյանը պատմում է, որ նույն օրը երեկոյան ժամը 10-ին ինքը կարողացել է մտնել սրբազանի մոտ և հայտնել, թե այլևս հնար չկա մնալու, պետք է կամ փախչել, կամ մի կերպ ընկնել Սուլթանովի մոտ: Սրբազանը պատասխանել է, թե առաջնորդարան և կոնսիստորիա չեն թողնիլ և դուրս գալ. և վստահ, որ թուրքերն իրան ձեռք չեն տալ՝ համառում է ու նստում. - կես ժամ չանցած, ասում է, հանկարծ լսվեցան ոտնածայներ. ես երկյուղից անցա մյուս սենյակը և մի քանի րոպեից հետո լսեցի երեխաների լաց ու շիվան (այդտեղ էին կոնսիստորիայի դիվանապահն իր երեխաներով և եպիսկոպոսի որդին): Քաշվելով փողոցի կողմի սենյակը և մտածելով, թե ինչպես անեն, որ ազատվեն, տեսա, որ արդեն տունը վառվել է և ծուխն ինձ բռնել է, ես նրբափողոցի

լուսամուտով ինձ ձգեցի մոտիկ պարտեզը և գիշերը Քամու-ջաղացի քերծով իջա ներքև...

Կոնսիստորիայի կազմից սպանված են՝ անդամ Խորեն ա. քահ. Իսկանդարյանը, կարգապահ Անանիա Տեր-Դանիելյանը և դիվանապահ Յովհաննես Ղալաբեկյանը: Քահանաներից սպանված է Հարություն ա. քահ. Վարդապետյանը, իսկ Գարեգին ա. քահ. Յովհաննիսյանն ազատվել է բանտից կիսամեղ որության մեջ և միանգամայն մերկ սպանված են թեմ. դպրոցի տեսուչ Աղ. Ծատուրյանը, ուսուցիչ Գաբրիել Ղուլիք-խայանը, հոգաբարձու Անդրեաս բեկ Տեր-Հարությունյանը, Ղուկասյան ուսումնարանի տեսուչ բժ. Նիկողայոս Յարամիշյանը և այլն:

Այսպես ահա չկա հոգևոր վարչություն և մնացել ենք մի անդամ ու մի ատենադպիր մերկ ու քաղցած որության մեջ: Կոչված է ժամանակավոր մարմին գործերը վարելու:

Խնդրում ենք Վեհափառությանդ կարգադրությունը թեմի համար մի կառավարիչ ուղարկելու. որպեսզի հոգևոր գործերն ու գործակալությունները անիշխանության չմատնվեն:

Վեհափառ Տերությանդ ամենախոնարհ ժառայք՝  
կոնսիստորիայի անդամ՝ **Կարապետ քահանա**  
**Վարդապետյանց**  
ատենադպիր՝ **Միրզա Տեր-Սարգսյան**

ՀՀ ՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 216, քք. 16-17: Բնագիր: Ձեռագիր:

N 398

**ДОКЛАД СПЕЦИАЛЬНОГО УПОЛНОМОЧЕННОГО СОВЕТСКОЙ ВЛАСТИ  
АЗЕРБАЙДЖАНА, ЖИТЕЛЯ СЕЛА КУТКАШЕН ЯСИНА МОЛЛА МАМЕД ОГЛЫ  
НАРОДНОМУ КОМИССАРУ ВНУТРЕННИХ ДЕЛ АЗЕРБАЙДЖАНА  
О ПОЛОЖЕНИИ АРМЯН НУХИНСКОГО И АРЕШСКОГО УЕЗДОВ\***

20 мая 1920г.

Все армянское население Нухинского и Арешского уездов окончательно разорено: большая часть их вырезана, селения сожжены; до последних дней полууцелели из 31 села только 3 - Нидж, Варташен и Джалет, которые в качестве пленных жили на своих местах, но им тоже не было суждено продолжать свое существование и они подверглись нападению в первые дни Карабахских событий и вырезаны; жители Варташена и Джалета поголовно, а часть жителей Ниджа спаслись в лесах, где и до сих пор продолжают свое жалкое существование.

Почти во всех селах и городах этих двух уездов есть пленные армяне-мужчины, женщины, девушки и дети. Многие из них превращены в магометанство.

Организаторами резни были местные беки, кулаки из крестьян и административная власть. Большая часть награбленного имущества армян доставлялись бекам и властям. Беки, опасаясь своей будущей ответственности за свои зверства, ухитрились - обменяли скот и имущество армян в других уездах, дабы этим скрыть следы. Благодаря событиям беки, чиновники, даже и многие из полицейских стражников, сделались крупными миллионерами. Благодаря своей темноте и зависимости от беков и власти,

\* Копия доклада послана дипломатическому представителю Армении в Грузии. См. АИ РА, ф.278, оп. 1, д.41, л.17 (прим.сост.).



крестьяне-мусульмане тоже принимали участие в событиях, сознательная же часть крестьянства не могла протестовать в виду своей бессильности.

Зло не искоренилось и после объявления Советской власти в Азербайджане, так как во власти остались старые кровопийцы-чиновники. Старшины, которые сожгли живыми около 700 душ женщин и детей в помещениях и сейчас продолжают свою службу народу именем Советской власти.

Во всех селах власть старая и они продолжают свою старую политику. Ныне необходимо собрать разбросанных армян на свои места как можно скоро, тем более все ихние посева остаются без хозяина и сделаются опять достоянием разных кулаков.

Масса сирот детей, которых также необходимо собрать. Для приведения последнего в исполнение, необходима военная сила и участие сознательных товарищей на местах, иначе невозможно что-нибудь сделать.

Мне Агдашским Ревкомом дан был мандат для освобождения и водворения на свои места армян, но я ничего не мог сделать в пользу несчастных крестьян армян, т.к. все мусульманское население вооружено с ног до головы и пока не различает своих друзей и врагов; я был бессилён.

Из главных виновников мне известны следующие лица:

- 1) Мустафа бек Рустамбеков, жит. сел.Мамайлу
- 2) Махмуд бек, бывший пристав 4 Нухинского уезда
- 3) Паша бек Пашабеков - жит.сел. Куткашен
- 4) Исмаил бек Пашабеков - бывш.пристав 3-го уч.Агдашского уезда
- 5) Абузарбек - нынешний Комиссар Варташена
- 6) Баба-старший милиционер 4 уч. Нухинского уезда
- 7) Али Ашраф бек - жит. сел.Булут Нухинского уезда
- 8) Азиз Бек - жит. с.Енгиджа
- 9) Мустафа Мустафа оглы - жит. с.Кичик Алишли Арешск. уезда
- 10) Гули Юзбаши - старшина сел. Шамлу Арешск. у.
- 11) Джунейд Адил оглы - старшина сел.Вандали Нухинск. у.
- 12) Мустафа эфенди човуш (турок) в Агдашском районе
- 13) Джамаль човуш (турок) в Нухинском районе
- 14) Али човуш (турок) в Нухинском районе
- 15) Сеид Кули (лезгин)

16) Усубек Кязим оглы - жит. сел. Солтан-Нухи

Последние армянские три села Ниж. Варташен и Джалет предоставленные беженцам мусульманам, необходимо вернуть своим владельцам.

Сообщая Вам о действительном положении армян названных уездов, прошу от имени обездоленных крестьян приютить их и придти им на помощь как можно скорее.

АИ РА, ф.200, оп.1, д.250, л.12. Заверенная копия. Машинопись.

**N 399**

**ТЕЛЕГРАММА МИНИСТРА ИНОСТРАННЫХ ДЕЛ АРМЕНИИ ПЕРСИДСКОМУ КОНСУЛУ В БАКУ С ПРОСЬБОЙ ЗАЩИТИТЬ ДИПЛОМАТИЧЕСКУЮ МИССИЮ И ГРАЖДАН АРМЕНИИ В АЗЕРБАЙДЖАНЕ\***

25 мая 1920г.  
Ереван

Прошу Вас от имени моего Правительства принять на себя покровительство и защиту здания дипломатической миссии Армении в Баку, ее служащих и граждан республики Армении, проживающих в пределах Азербайджанской республики. О согласии Вашем прошу не отказать срочно поставить меня в известность. Персидское Генеральное консульство в Тифлисе одновременно извещено мною по существу настоящего ходатайства номер - 25 мая 1920г.

Министр Иностранных дел.

АИ РА, ф.200, оп.1, д.581, л.58. Копия телеграммы. Машинопись.

**N 400**

**ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՎԱԹՈՐԻԿՈՍԻՆ՝ ՇՈՒՇՈՒ ԿՈՏՈՐԱԾԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՌՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

**N 211**

**10 հունիսի 1920 թ.  
Թիֆլիս**

Ի հետևումն Ձերդ Վեհափառության դիվանի թ. 235 գրության և ի լրումն իմ համուն նույն դիվանի թ. 164 գրության, սրանով՝ ցավ ի սիրտ՝ անենախոնարհաբար զեկուցանում են Ձերդ Սրբության, որ՝ ինչպես ստուգեցի Շուշիից վերադարձած հաշտարար պատգամավորության անդամ պ. Աղեքսանդր Պապոյանից, հիրավի, տարվույս ապրիլի 6-ին, թուրքերը վերցնելով Շուշին, ավերել և ոչնչացրել են քաղաքի հայկական մասը, կոտորելով առանց սեռի և հասակի խտրության մոտ 5000 հայ, որոնց թվում թեմակալ առաջնորդ տ. Վահան սրբազան եպիսկոպոսին, որի զուխը կտրելով բարբարոսաբար շրջեցրել են քաղաքում ի տես զազանացած խուժանի: Սպանված են և բոլոր քահանաները, բացառությամբ տ. Գարեծին քահանա տ. Հովհաննիսյանի, որը բանտից փախչելով՝ մահվանից ազատվել է: Շուշիի մնացած հայ բնակչությունը, մոտավորապես 6000 հոգի, քաղաքից հեռանալով գյուղերը, ազատվել են կոտորածից: Շուշիի հետ մենք ներկայումս հաղորդակցություն չունենք և պ. Պապոյանը այստեղ եկել է Բազվի-Վլադիկավկազի վրայով: Նրա պատմածի համաձայն ինչպես Բազուն, նույնպես և Շուշին ու Գանձակը, ներկայումս իրապես գտնվում են ռուսների ձեռքում:

Ձերդ Վեհափառության խոնարհ որդի՝ **Մխիթար եպիսկոպոս**

ՀՀ ՊԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 216, թթ. 15-16: Բնագիր: Ձեռագիր:  
**N 401**

\* Другая тел.-Тифлис, Генеральному консулу Персии о вышеуказанной телеграмме 25 мая от министра ин. дел. Армении. См. АИ РА, ф.200, оп.1, д.581, л.58 (прим.сост.).

**ԱՂՐԲԵԶԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝ ԱՂՐԲԵԶԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍՍԻՐԻ ՀԵՏ ՀԱՅՏԵՐԻ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՍԱՍՏԿԱՑՄԱՆ, ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՄԻՍՍԱՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՆԵՑԱԾ ԶՐՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ**

**N 1039**

**28 հունիսի 1920 թ.  
Բաքու**

Ի լրումն մեր N 1027 գրության հայտնում ենք, որ երեկ, ամսույս 26-ին, ցերեկվա ժամը 1-ին մի քանի ընթացիկ խնդիրներ կարգավորելու համար տեսնվեցի արտաքին գործերի կոմիսար Գուսեյնովի հետ ու ի միջի այլոց նորից հարց բարձրացրի այն մասին, թե ինչու համար վերջին օրերս բազմաթիվ ձերբակալություններ են կատարվում հայերի շրջանում և ձերբակալվում են ոչ միայն կուսակցության հետ որևէ առնչություն չունեցող մարդիկ, այլև այնպիսիները, որոնք մասնակցություն անգամ չեն ունեցել մի որևէ հասարակական գործի. ե՞րբ պիտի վերջապես դադարեն այդ հալածանքները:

Այս անգամ Գուսեյնովը ավելի պարզ խոսեց և հայտնեց, որ Հայաստանից այստեղ ուղարկված են տեռորիստներ, պետք է նոցա գտնել: Մյուս կողմից մեզ հայտնի է, ասաց նա, որ այստեղ կան զենքի խոշոր պահեստներ, որոնք բոլորը պետք է գտնել: Ձերբակալությունները կապ ունեն այդ երկու հանգամանքների հետ:

Ես հայտնեցի իմ տարակուսանքս, և ասացի, որ այս տեղեկությունները երկի բղխում են Հայաստանի կոմունիստական շրջանից և անշուշտ այնքան արժեք ունեն, որքան այն լուրը, որ իբր թե Ալեքսանդրոպոլում երկու հազար բոլշևիկ է գնդակահարված:

Ոչ, պատասխանեց Գուսեյնովը, մենք ունենք դոկումենտալ ապացույցներ տեռորիստների գալու մասին, իսկ զենքերի պահեստների նկատմամբ խոստովանել են հենց բանտարկյալներից ոմանք և մի քանի պահեստի տեղ էլ ասել են: Ես ավելացրի, շատ էի խնդրել ձեզ փաստերով ինձ համոզել այդ բանում:

Գուսեյնովը ամսույս 26-ին երեկոյան մեկնեց Թիֆլիզ, Վիր-Աղրբեջանյան դաշնագրի ռատիֆիկացիայի համար, քանի որ վերջին օրերս նա խոսում էր Հայ-Աղրբեջանյան հարաբերությունները կանոնավորելու մասին, ես առաջարկեցի նրան, որ նա Թիֆլիզում աշխատի տեսնվել եթե այնտեղ կան Հայաստանի պատասխանատու գործիչների հետ և առաջին հերթին Տիգրան Բեգլարյանի հետ: Ես հայտնեց, որ անկախ իմ առաջարկից այդ ցանկությունն ուներ և կանի, և ցանկացավ, որ այդ մասին ես հեռագրեմ Հայաստանի կառավարության:

Դիվան. Երկ. **Հարությունյան**  
Քարտուղ.

ՀՀ ՊԱ, ֆ. 278, ց. 1, գ. 32, թ. 37 շրջ.: Վավերացված պատճեն: Ձեռագիր:

**N 402**

**ՔԱՂՎԱԾՔ ԱՂՐԲԵԶԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԻ ԶԵԿՈՒՅՑ-ՑԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԱՆՎԱՆ ՏԱԿ ՀԱՅՏԵՐԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅՂ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՅ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԴԵՐԻ, ԲԱՆՏԱՐԿԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

**N 1294**

**17 հուլիսի 1920 թ.**

\* Ստորագրությունն անընթեռնելի է (ծանոթ.կազմ.):

Հայերի ձերբակալությունները մասայական բնույթ առան: Ձարմանալի բարեխիղճ կերպով, շղթայազերծ ստրուկների նման այդ գործում եռանդ են թափում հայ կոմունիստները: Այսպես կոչված «Դաշնակցականների գործը» նրանց է հանձնված: դրանք են ձերբակալում ըստ իրանց հայեցողության, դրանցից է կազմված քննիչ հանձնախումբը Արտավազդ Յովհաննիսյանի նախագահությամբ: Ձերբակալվածներին հարց ու փորձ են անում, թե ովքեր են դաշնակցականները, որտեղ են պահված նրանց գեներերը, ինչ կապ ունեն դաշնակցության հետ և այլն: Քչերն են արձակվում, մեծամասնությունը տնքում է բանտերում անտանելի պայմանների մեջ: Դաշնակցական անվան տակ բանտարկված են հազարավոր բոլորովին անմեղ և անմասն հայեր: Թուրքի ատելությունը և ծրագիրը հայի վերաբերմամբ և հայ մեծամասնականի կուսակցական կիրքը այստեղ զուգադիպում են և եռանդով կրկնապատկում:

Օդի մեջ պտտվում է բանտարկյալների փոխանակության խնդիրը, որի մասին լսեցինք, որ Տփլիսում սկզբունքային համաձայնություն է կայացել Բեզգադյանի և Ղուսեյնովի մեջ: Ձեր հեռագրի համեմատ կիրովը դիմում արեց Ադրբեջանի ռեկոմիս, բայց թե ինչ վիճակի մեջ է այդ գործը ինձ անհայտ է: Բոլորս, թե մերոնք և թե մեծամասնական հայերը սպասում ենք Ար.Առաքելյանի վերադարձին, համոզված լինելով, որ նա մի հաստատուն որոշում է բերելու: Ինձ թվում է, թե փոխանակությունը ամենևին ցանկալի չէ թուրք կոմունիստների համար, քանի որ երկու կողմից էլ բանտարկվածները հայեր են, իրենց համար հավասարապես ատելի, հետևաբար գործը պիտի այնպես տանեն, որ տեղի ունենա ոչ թե փոխանակություն, այլ վրեժխնդրական փոխադարձ գնդակահարում: Ուստի պետք է ամեն ջանք գործ դնեք, փոխանակություն գլուխ բերեք: Երբեք չհամաձայնվեք փոխանակությունը կատարելու առանց իմ գիտության և հավանության: պայմանները հետևյալը պիտի լինի. 1) փոխանակությունը պիտի կատարվի Տփլիսում, 2) փոխանակության ենթարկվեն բոլորը, առանց հպատակության խտրության, 3) դաշնակցականներին որոշողը մենք պիտի լինենք և ոչ իրենք, 4) պիտի ազատվեն նաև բոլոր նրանք, որոնք բանտարկված են դաշնակցական անվան տակ, 5) ազատվածները եթե չեն ցանկանում այստեղ մնալ պիտի 3 օր ժամանակ ունենան իրենց գործերը կարգավորելու և ընտանիքն ու գույքն էլ իրենց հետ վերցնելու համար:

Այստեղ է գտնվում և շուտով ճանապարհվում է դեպի Հայաստան Սովետական Ռուսաստանի լիազոր դեսպանությունը Հայաստանում: Իբրև խորհրդական գալիս է Սահակ Տեր-Գաբրիելյանը, իբրև տեղեկատու բաժնի վարիչ Աշոտ Յովհաննիսյան. դեսպանն է Լեգրան, ապա նաև մի այլ խորհուրդական, քարտուղար-ռուսներ: Լեգրանի հետ ես չկարողացա տեսնվել, քանի որ նա իմ ցանկության ընդառաջ չգնաց: - Որքան ես կարողացա տեղեկանալ դոցա մտադրությունն է տեղումը ծանոթանալ Հայաստանի և Ադրբեջանի սահմանավեճին, գլխավորաբար Ղարաբաղի և Ջանգեզուրի խորքերում և իրենց կարծիքը գրել Սոսկվա: Առայժմ ընդունարվում է այդ հարցի լուծումը այսպես. Ղարաբաղը և Ջանգեզուրը ինքնուրույնաբար անկախ Հայաստանից և Ադրբեջանից կազմում է մի զոն Սովետական իշխանությամբ՝ ռուսական օրիանտացիայով: - Ի միջի այլոց ասեմ, որ այսօր «Կավրոստա»-ն հաղորդում է հետևյալ տեղեկությունը «Ինչպես հաղորդում են Կ. Պոլսից Հայաստանի և Սովետական Ռուսաստանի միջև խաղաղություն է կնքված, որով Ջանգեզուրի ռայոնը միացվում է Հայաստանին»:

Դիվանագիտական ներկ. Հարությունյան  
Ի.տ. քարտ. Տեր-Յովհաննիսյան

ՀՀ ՊԱ, ֆ. 278, ց. 1, գ. 32, թթ. 40-41: Պատճեն: Ձեռագիր:  
N 403

**ПИСЬМО ДИПЛОМАТИЧЕСКОГО ПРЕДСТАВИТЕЛЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ В  
АЗЕРБАЙДЖАНЕ В КОМИССАРИАТ ИНОСТРАННЫХ ДЕЛ АССР О СОДЕЙСТВИИ  
АРМЯНАМ, ЖЕЛАЮЩИМ ПЕРЕЕХАТЬ В АРМЕНИЮ**

**N 1361**

**28 июля 1920г.  
Баку**

Ввиду событий последних двух лет масса армянских селений Шемахинского, Шушинского, Нухинского, Арешского, Геокчайского и др. уездов и армянские кварталы некоторых городов подверглись разрушениям. Уцелевшее армянское население принуждено было искать приют в других городах Азербайджана, главным образом в Баку, и по мере возможности оно переселялось в Армению. Остатки разгромленного армянского населения, ныне находящееся на территории Азербайджана, также желают переселиться в Армению, тем более, что их селения и жилище заняты мусульманами.

С таковой же просьбой ежедневно обращаются в миссию армяне, бежавшие из пределов Закавказья и Турции в течение последних лет и временно поселившиеся в Баку, а также возвращающиеся через Азербайджан из России, Закаспийской области и Персии в Армению, задерживаются в Баку также, как и другие.

А потому Дипломатическая миссия Республики Армении в Азербайджане, согласно личному переговору от 26 июля с/г и получения принципиального согласия председателя Ревкома гражданина Нариманова, просит Комиссариат по иностранным делам сделать распоряжение соответствующим учреждениям на предмет беспрепятственной выдачи пропусков вышеназванным категориям армян для их возвращения в Армению.

Дипломатический представитель **М.Арутюнян**  
Секретарь **Тер-Ионнисян**

АИ РА, ф.200, оп.1, д.4, л.15. Заверенная копия. Машинопись.

**N 404**

**ԱՂՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՅՑԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՎԱՅԱՅ-  
ԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՅ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ, ԴԱՇՆԱԿ-  
ՑՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Հուլիս 1920 թ.  
Բաքու**

Խորհրդային Աղրբեյջանում հայ մեծամասնականների դրդումով կառավարությունն սկսել է իր հալածանքը Դաշնակցության դեմ: Այդ կուսակցությունը հայտարարված է անլեգալ, իսկ նրա շարքերում գործող անհատները՝ օրենքից դուրս: Գործի գլուխն են անցել Բազվում գտնվող հայ մեծամասնականներից Ա.Միկոյանը, Ավիս Նուրիջանյանը, Կոստանյանը և ուրիշներ: Նրանց նախաձեռնությամբ ու ցուցմունքներով բանտարկված են իբրև «Դաշնակցություն» կուսակցության պատասխանատու անդամներ Պողոս Չուբար, Աբգար Պապյան, Արշակ Մալխասյան, Գրիշա Պետրոսյան, Մովսես Գրիգորյան, Ջաղեթյան, Սարգիս Մանասյան, Խորեն Համասիյուռ (Գանձակից) և ուրիշները: Սկզբում կարծում էին, որ դա էլ մի «թյուրիմացություն» է հայկական

միսիայի ձերբակալության մասն, ինչպես ասել է միսիայի ներկայացուցչին Նարինանովը: Այդ հույսով էլ ամենքը հավատացած էին, որ դա միսիայի մասն մնացածներն էլ շուտով ազատ կարծակվեն և խորհրդային իշխանությունը հնարավորություն կտա դրանց եթե ոչ շարունակելու իրենց հեղափոխական աշխատանքը, գեթ ազատ ապրելու, սակայն դրությունը բոլորովին ուրիշ կերպարանք ստացավ:

Ձերբակալվածներից ոմանք շարունակում են տառապել Բազվի բանտերում, իսկ մյուսներն էլ, մեր ստացած ամենավստահելի տեղեկությունների հիման վրա, գնդակահարված են: Այդպիսիներից առայժմ տալիս են պարզ կերպով Պողոս Չուբարի, Գրիշա Պետրոսյանի, Աբգար Պասյանի, Մովսես Գրիգորյանի և Ջաղեթյանի անունները:

Չրապարակից վերացված այդպիսի «վտանգավոր» և «հակահեղափոխական» գործիչների փոխարեն բերում են նորերին և մասն են գալիս ուրիշներին: Հայ մեծամասնականներին կատաղեցրել է այն հանգամանքը, որ իրենց չի հաջողվել տապալել հայկական կառավարությունը ու նրա փոխարեն հաստատել իրենց ձևի հասկացած խորհրդային իշխանությունը: Խաղաղ պրոպագանդան նրանք փոխարինել են անխնա հալածանքի և դաժան պրովոկացիայի հաշմակցության դեմ:

Մանուլի մեջ և հրապարակային միտինգներում բացարձակապես հայտարարում են ի լուր աշխարհի, որ դաշնակցականները միացել են թուրք մուսաֆաթիստներին և նրանց հետ ձեռք ձեռքի տված՝ կազմել են մի ընդհանուր ֆրոնտ - տապալելու համար խորհրդային Ադրբեյջանը: Այդպիսի մի ֆրոնտ է ստեղծվել իբր թե Ղազախում: Խորհրդային Ռուսաստանը գործ չունի Հայաստանի հետ, բայց երբ հայ ժողովուրդն ուզում է Սովետական իշխանություն, ապա ուրեմն մենք պետք է աջակցենք նրան այդ գործում: Այդ տեսակետից ղեկավարվելով, գուցե և առանց կենտրոնի գիտության Բազվի իշխանությունները, կատարյալ իրավունք են տվել հայ մեծամասնականներին կազմակերպել Հայկական Կարմիր զնդեր և ուղարկել Հայկական սահմանները: Հայկական կարմիր զինվորները ուղարկվում են դեպի Ղազախ և Շամշադին, որտեղից և սկսելու են իրենց հետագա գործողությունները: Դրանք կազմելու են Կարմիր բանակի առաջավոր մասերը, որոնց թիկունքին կանգնած է Կարմիր բանակը: Առայժմ հավաքում են կամավոր զինվորներ, որոնց խոստանում են ամեն օր հաց տալ. նրանք ստանալու են ռոճիկ ու շոր, իսկ ընտանիքները ապահովվելու են խորհրդային Ռուսաստանի հաշվին: Այդպիսի կոչեր արդեն արված են Գանձակում, Ղարաբաղի ու Շամշադինի հայկական գյուղերում: Ձենքի տակ մտնող հայ կամավորը միանգամայն համոզված է, որ իրեն ուղարկելու են մուսաֆաթիստների և բեկերի դեմ կռվելու, որոնք հանգիստ չեն և պատրաստվում են դարձյալ կոտորածներ: Ֆրոնտ գնացող հայ զինվորը երբ տեսնում է, որ ինքը խաբված է ու ուզում է ետ դառնալ իր խաղաղ աշխատանքին - չեն թողնում՝ առաջարկելով, որ դու մոբիլիզացիայի ես ենթարկված և պարտական ես ծառայել:

Ղազախի հայկական այդպիսի «կարմիր» ու «կոմունիստ» դարձած գործերի հրամանատար է նշանակված ինչ-որ Թարխանյան, իսկ գործերի կազմակերպության գործը հանձնված է Դրաստամատ Տեր-Սիմոնյան մեծամասնականին, որը գտնվում է Ղազախում: Ղազախի ռեկոմը թուրք ամբոխի, թուրք ասկերների և կարմիր բանակի ռուս զինվորների ներկայությամբ գնդակահարել է երկու դաշնակցականի, որոնց անունը հայտնի չէ: Այդ մահապատիժը սրտի խորին բերկրանքով ընդունել են բոլոր ներկա եղողները, որոնց միացել են իբր թե նաև հայերը: Այս փաստը տպագրվեց Բազվում հրատարակվող ռուսերեն լեզվով «Կոմունիստ» թերթում և հողվածագիրն էլ ավելացնում էր՝ թե ինչու համար թուրքերը կոմունիստներին են հարում ու նրանց են հետևում: Այս բոլորը բավական չէ: Ադրբեյջանում հայ-մեծամասնականները ամենքին հավատացնում են, որ «մաուզերիստների» կուսակցությունը Հայաստանում անխնա կոտորում է հայ բանվորներին, գյուղացիներին, նրանց պաշտպան մեծամասնականներին, որոնց ընտանիքներին բռնաբարում են ու հալածում: Որպեսզի այս բոլորին վերջ

տրվի այդ մեծամասնականները միայն երկու օր ժամանակ են տալիս: Ուլտիմատումին ստորագրել են Նանեյշվիլի, Միկոյան Ադրբեյջանի կոմունիստական կուսակցության անունից, Կոստանյան՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության անունից և Ավիսը՝ Ռազմա-հեղափոխական կոմիտեի անունից: Միաժամանակ այդ պարունները հեռագիր են ուղարկում Մոսկվա՝ Չիչերինին, որ չլսի Հայաստանի պատվիրակներին, որոնք միայն մաուզերիստների ազենտներ են:

Վերոհիշյալ անձնավորությունների գնդակահարումից հետո հայ մեծամասնականները սկսեցին պրովոկացիա տարածել, որ իբր թե Դաշնակցությունը տեռորիստներ է ուղարկել Բագու բոլորին խփելու համար, և այդ պատճառով էլ զենքով ման են գալիս քաղաքում և սարսափի մեջ են պահում այն բոլորին, որոնք երբևիցե կապ են ունեցել Դաշնակցության հետ:

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թթ. 119 շրջ.-120: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 405

**ՔԱՂԱՃՔ ԱԴՐԲԵՅԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՁԵԿՈՒՅՑԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝ ՂԱՐԱՔԱՂԻ, ԶԱՆԳԵՁՈՒՐԻ, ՇԱՐՈՒՐԻ, ՆԱԽԻՉԵՎԱՆԻ ՈՒ ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԴՐԲԵՅԱՆԻ ՔԱՂԱՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԴ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՅ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԽԱՂԱՑԱԾ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ**

N 1294

31 հուլիսի 1920 թ.  
Բաքու

Ադրբեյջանի ներկա քաղաքականության գլխավոր ուշադրությունն ուղղված է դեպի ռուս-հայկական բանակցությունները: Ամենահեռավոր և թույլ հավանականությունը, որ Ջանգեզուրը և Ղարաբաղը կարողանա անցնել Հայաստանին, ոտքի է հանել ամբողջ Ռևկոնը և թրքական ակտիվ շրջանները, նաև հայ կոմունիստների մի ստվար մեծամասնություն, որոնք ռմբակոծում են Մոսկվան հատուկ պատվիրակություններով, դիվանագետներով և այլն: Այդ հավանականությունն էր, որ շտապեցրեց Ջանգեզուրի գրավումը: Այստեղ զուգադիպում են մի քանի նկատառումներ, ամենից առաջ համաթրքական ծրագիրն է, Տաճկաստանի հետ միանալու համար:

Նախիջևանի, Շարուրի և Սուրմալուի վրայով մի կորիդոր ստեղծել դեպի Տաճկաստան. այս ծրագիրը, որ մուսավաթական իշխանության վերջին օրերին կարծես թե բոլորովին լքված էր, այսօր հարություն է առել հսկայական ծավալով և շատ մեծ թափով: Անշուշտ Մոսկվայում և սոցիալիստական շրջաններում այդ ծրագրի իրագործումը պատճառաբանվում է անհրաժեշտությամբ ամբողջովին միանալու «Կարմիր» Անատոլիայի հետ: Այստեղ օժանդակում է նաև Ռուսաստանի և Տաճկաստանի դաշնը, իսկ գործողությունների համար բարոյական նեցուկ է հանդիսանում հայ կոմունիստների մի բավական ուժեղ հոսանք, որը տնտեսական նկատառումներով անհրաժեշտ է համարում Ղարաբաղի և Ջանգեզուրի միացումը Ադրբեյջանին: Ահավասիկ բոլոր այս հանգամանքները զուգորդված առաջ բերին Ջանգեզուրի գրավումը: Իսկ Մոսկվայում իրենց տեսակետը պաշտպանելու նպատակով ուղարկել են մի հատուկ պատվիրակություն, որի մեջ մտնում են գլխավորաբար այդ կոմունիստ ուժեր. Մամեդ Հասան Հաջինսկու նախագահությամբ: Այդ պատվիրակությունը հրահանգ ունի Մոսկվայում պահանջել իրենց տերիտորիալ ծրագրի իրագործումը՝ այն պատճառաբանությամբ, որ Ադրբեյջանի մուսուլմանության համակրանքը գրավելու միակ միջոցն է այն, որ Ադրբեյջանին կցվեն ոչ միայն Ղարաբաղը և Ջանգեզուրը, այլև Նախիջևանը, Շարուրը և Սուրմալուն: Այդ տեսակի քարտեզներ ներկայունս զարդարում են ռևկոմի նախագահի և

քարտուղարի սենյակների պատերը: Նույն այդ նպատակով էլ Գուսեյնովը անսպասելի կերպով մեկնեց Մոսկվա:

Դիվանագիտական ներկ.՝ Մարտ. Զարրությունյան  
Ի.տ. քարտուղարի՝ Տեր-Յովհաննիսյան

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 4, քթ. 2-3: Բնագիր: Չեռագիր:

**N 406**

**СООБЩЕНИЕ УПОЛНОМОЧЕННОГО ПРЕДСТАВИТЕЛЯ РСФСР В ГРУЗИИ  
ДИПЛОМАТИЧЕСКОМУ ПРЕДСТАВИТЕЛЮ АРМЕНИИ В ГРУЗИИ О  
ПРЕКРАЩЕНИИ РЕПРЕССИЙ В ОТНОШЕНИИ АРМЯН В АЗЕРБАЙДЖАНЕ**

**N 807**

**31 июля 1920 г.  
Тифлис**

В ответ на ваше отношение от 26-го июля за N 2606 имею честь сообщить, что по полученным мною официальным сведениям из учреждений Азербейджана с момента обмена нотами Чрезвычайного полномочного Представителя Азербейджанской Социалистической Советской Республики Мирза-Даут Гусейнова с вами о созыве мирной конференции, никаких репрессий, новых арестов членов партии „Дашнакцютюн,, ни в Баку, ни в остальном Азербейджане не было. Условия - же, в кои содержатся арестованные члены партии „Дашнакцютюн,, ничем не отличаются от тех, в кои поставлены все вообще арестованные по обвинению в контрреволюционной деятельности и пропаганде.

Примите уверение в совершенном моем почтении.

Полномочный представитель РСФСР в Грузии **С. Киров**

Մակագր. <<Հաղորդել Մին. Խորհրդին, 8/ VIII>>\*

АИ РА, ф. 198, оп. 1, д. 198, ч.1, л. 162; Заверенная копия. Машинопись.

**N 407**

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ  
ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ Հ. ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ՝ ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱԳՐԱՏ ԱՐՔԵ-  
ՊԻՍՎՈՊՈՍԻՆ ԲԱՔՎԻՑ ԷՋՄԻՍՑԻՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԿԱՊԱՎՑՈՒԹ-  
ՅԱՄԲ\*\***

**N 474**

**26 օգոստոսի 1920 թ.  
Էջմիածին**

\* Ստորագրությունն անընթեռնելի է (ծան. կազմ.)

\*\* Արտաքին գործոց նախարարությունը կաթողիկոսին 1920թ. հոկտեմբերի 13-ին ուղղված նամակում հայտնում է, որ հարցը դեռ լուծված չէ: Տե՛ս ՀՀ ՊԱ, ֆ.200, ց.1, գ.417, ք.243 (ծանոթ.կազմ.):



Նորին գերազանցության Հայաստանի Հանրապետության վարչապետ և արտաքին գործոց մինիստր պարոն Յ. Օհանջանյանին

Տարվույս փետրվար ամսի սկզբներին Շամախու թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոսին որ Բագվում էր բնակվում, ես նշանակեցի էջմիածնի Սինոդի անդամ, պատվիրելով իսկույն թողնել Բագուն և վերադառնալ էջմիածին ստանձնելու յուր նոր պաշտոնը: Սակայն անցան ամիսներ և նա տակավին չկարողացավ դուրս գալ Բագվից, որի ներկայությունն այստեղ ես անհրաժեշտ եմ գտնում: Սորանով խնդրում եմ Ձեզ, հարգելի վարչապետ, Ձեզնից կախված հնարավոր միջոցները գործ դնեք Բագրատ արքեպիսկոպոսին Բագվից ազատ արձակել տալու և ապահով մինչև մեր Հանրապետության սահմանը հասցնելու. կարգադրելով միաժամանակ նորանից խլված թե սեպիական և թե եկեղեցական հասարակական իրերը նորան վերադարձնելու:

Հետևանքի մասին կխնդրեի հայտնել ինձ:

Ողջ լինել մաղթեմ Ձեզ ի Տյառնե աղոթարար:  
**Գեորգ կաթ. Ամ. Հայոց**

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 417, թ. 244: Բնագիր: Ձեռագիր:

**N 408**

**ԱՂՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՁԵԿՈՒՅՑԸ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝ ԳՅՈՎԱՅԻ ՈՒ ՇԱՄԱԽՈՒ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՅԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍԱՍԻՆ**

**N 1785**

**2 սեպտեմբերի 1920 թ.  
Բաքու**

